Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Լէռ
2058

1999

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

ի պէտս

ԴՊՐՈՑԱՑ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՑ ԿՈՒՍԱՆԱՑ

յօրինեաց

Ն. ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆՑ

ՏՓԽԻՍ

Ի ՏՊ. ԳԼԽԱՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՐՔԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒ

1878

2.400

ԼՍԼ
2058

ԴԱՒԻԹ ՊՕՂՈՍԵԱՆ
ՏԷՐ-ԴԱՒԻԹԵԱՆՑ.

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

Ի պէտս

ԴՊՐՈՑԱՑ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՑ ԱԶԳԻՍ

յօրինեաց

Ն. ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ

ՏՓԽԻՍ

Ի ՏՊ. ԳԼԽԱՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՐՔԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒ

1873

Дозволено цензурою. Тифлисъ, 20 Сентября 1873 г.

42058-60

3β 2061

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՀՈԳԻՈՅ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԾՆՈՂԱՑ ԻՒՐՈՑ

ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ԵՒ ՀՌԻՓՍԻՄԷԻ

ՏՊԱԳՐԵՑԱՒ ԸՆԴ ԵՐՑԱՐԱՆՍ ԱՐԴԵԱՄԲՔ

ՎԻՃԱԿԱՒՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽՈՅ

ՏԵԱՌՆ ՍԱՐԳՍԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ջ Ա Լ Ա Լ Ե Ա Ն

ՅՕԳՈՒՏ ԵՒ Ի ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՋԱՒԱԿԱՑ ԱԶԳԻՍ

Գինն Ընթերցարանիս՝ յօգուտ և 'ի դաստիարակութիւն զաւակաց ազգիս, նշանակեցաւ կիսով չափ պակաս 'ի յիշատակ հոգւոյ հանգուցեալ ծնողաց Սարգսի Արք Եպիսկոպոսի Ջալալեան:

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔ

ԹԷ ԻՆՉ ԵՆ ԱՆՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄԸ

Արամը գնաց ուսումնարան, իսկ նորա քոյր Մարիամը մնաց տանը։ Երբոր եղբայրը վերադարձաւ տուն, քոյրը հարցրեց նորան թէ «դուք ի՛նչ էք անում ուսումնարանումը։» Եղբայրն էլ պատմեց ինչ որ տեսել էր և գիտէր։

«Աշակերտները ժողովւումեն,» ասաց, «ուսումնարան, նըստումեն իւրեանց տեղերը. յետոյ գալիս է վարժապետը, հարցնումէ նոցա դասը, և նոքա պատասխանումեն։ Երբոր վարժապետը սկսումէ պատմել նոր դասը, նոքա ուշադրութեամբ լսումեն։»

«Աշակերտաց առաջին կան երկայն սեղաններ, որ կոչւումեն գրասեղաններ։ Այս սեղանների վերայ աշակերտները դնումեն իւրեանց գրքերը և տետրակները ու կարդումեն կամ գրումեն։ Երբոր դասը վերջանումէ, նոքա դուրս են գնում և խաղում են ուսումնարանի սրահումը կամ բակումը։»

Ո՞ւր գնաց Արամը։ Նորա քոյրն էլ գնա՞ց ուսումնարան թէ ոչ։ Ի՞նչ էր նորա քրոջ անունը։ Երբոր Արամը վերադարձաւ ուսումնարանից քոյրն ինչ հարցրեց նորան։ Իսկ նա ինչ պատասխանեց։ Ի՞նչ է

անում վարժապետը ուսումնարանումը: Իսկ աշակերտները:—Կրկնեցէք ձեր բառերով այս պատմութիւնը եւ գրեցէք:

Ասացէք, ինչպէս են շինուած այս բառերը. «դրասեղան, ուշադրութիւն:» Ի՞նչ է «սրահը» եւ ինչ է «բակը»: Ամենայն տուն էլ սրահ կամ բակ ունենում է, թէ ոչ:

ՏԱՆԸ

«Քեզ համար ո՞րտեղ է լաւ,» հարցրեց միանգամ հայրը իւր փոքրիկ Արամին, «տանը թէ ուսումնարանումը:»

—«Ուսումնարանումը լաւ է,» պատասխանեց Արամը, «բայց տանը աւելի լաւ է: Տանը ես ունիմ հայր, մայր, և քոյր. նոքա ինձ սիրումեն ու միշտ փաղաքշումեն: Տանը ինձ ամենայն բան ծանօթ է. թէ սենեակները, թէ պահարանները և թէ մառանը, որտեղ մայրս պահպանումէ քաղցրաւենիք և անոյշ մրգեր:»

«Տանը ես ազատ և արձակ խաղումեմ թէ սենեակներումը, թէ բակումը և թէ պարտէզումը, որտեղ գեղեցիկ ծաղիկներ կան և սիրուն թիթեռնիկներ, որոց հետ ուրախ և անհոգ ժամեր եմ անցկացնում: Տանը ինձ պատիժ չկայ, հայրս ու մայրս ինձ շատ են սիրում: իսկ տատս՝ էլ խօսք չկայ, ինձ ա՛յնքան է սիրում, որ իմ ամենայն ուզածս իսկոյն կատարումէ. վատ օրերին չէ թողում, որ ուսումնարան գնամ, և եթէ տանը շատ եմ կարդում, ինձ միշտ ասումէ. «շատ մի կարդար, ո՛րդիս, գլուխդ կցաւի:»

Ի՞նչ հարցրեց հայրը իւր փոքր որդուն: Ի՞նչ էր նորա անունը: Ի՞նչ պատասխանեց որդին: Ինչու Արամի համար տանը լաւ է քան թէ ուսումնարանումը: Իսկ քեզ համար որտեղ է լաւ: Ո՞վ էր Արամին ամենից շատ սիրում: Ի՞նչ էր ասում նորան տատը, երբոր նա տանը շատ էր կարդում: Քո տատն էլ կամ մայրդ քեզ այդպէս է ասում թէ ոչ: —Կրկնեցէք բոլոր պատմութիւնը եւ գրեցէք:

Ասացէք այս բառերի նշանակութիւնը. փաղաքշել, սենեակ, մառան, քաղցրաւենիք, պարտէզ, անհոգ ժամեր, թիթեռնիկ, միշտ, իսկոյն:»

Ի՞նչ կնշանակէ «վատ օրեր» կամ թէ «վատ եղանակներ»։ Իսկ «սեւ օրեր» ի՞նչ կնշանակէ։ Ի՞նչ կնշանակէ այս առածը. «բարեկամը սեւ օրի համար է»։

ՈՐԲ ՄԱՆՈՒԿ

Պայծառ արեւը
Երգէն մայր մտաւ,
Լուսինն էլ շուտով
Գնաց թագկացաւ,
Փայլուն աստղերը
Ամպով ծածկուեցան.
Սեւ ցուրտ ու խաւար
Գիշեր էր աշնան։
Այն մարդ գնաց
Իր տունը հասաւ,
Այն երեխայ
Մօր գիրկը մտաւ։
Միայն խեղճ որբը
Չունի հայր ու մայր,
Չունի բարեկամ,
Ոչ քոյր ու եղբայր.
Անտէր մնացած
Աստուծոյ կամքին,
Խեղճը քնած է
Փողոցի միջին։

Ո՞ւմ ենք ասում «որբ»։ Ի՞նչ վիճակի մէջ է լինում որբ մանուկը։ Համեմատեցէք ձեր վիճակը նորա վիճակի հետ եւ ասացէք ինչ զանազանութիւն ունի։

Ի՞նչ կնշանակէ «պայծառ արեւ»։ Արեւ բառը ուրիշ էլ ինչ կնշանակէ։ (Կեանք)։ Ուրեմն ինչ կնշանակեն այս խօսքերը «արեւս վկայ, արեւդ ապրի, քեզ արեւշատութիւն լինի»։

ՈՒՍՈՒՄԸ ԱՄԵՆԻՍ ՀԱՐԿԱՒՈՐ Է

Իմ հասակակիցներս տղայ (երեխայ) են կոչւում, ուրեմն ես էլ տղայ եմ։ Տղայքը շատ բան չեն իմանում, ուստի պէտք է սովորին, կրթուին ու դաստիարակուին, որ խելացի ու ազնիւ լինին եւ մարդու կարգ անցկենան։ Ինձ ուսում են տալի ուսումնարանում, եւ քանի որ ուսում եմ առնում՝ ես աշակերտ եմ։ Ուսումնարանում ինձ ուսում են

տալի և դաստիարակումեն վարժապետները. ուրեմն պարտականեմ նոցա հնազանդ լինել և երախտագէտ։

Լաւ աշակերտը ուշադրութեամբ պէտք է լսէ վարժապետի ասածները, և իւր բոլոր ուշքն ու միտքը պէտք է կարդալու և ուսման վերայ ձգէ։ Լաւ աշակերտը պէտք է սիրով գնայ ուսումնարան, աշխատասէր լինի, կարգին, մաքուր, հանդարտ, խելօք և ամենայն ճշդութեամբ կատարէ իւր պարտքը, լաւ իմանալով որ բոլորը ինչ որ անումէ, իւր օգտի համար է և ոչ թէ ուրիշի։ Ինչ աշակերտ որ ուսումից փախչումէ, ծուլութիւն է անում, անհնազանդ է ու ինքնակամ, նա կմնայ տգէտ ու անխելք ինչպէս տանու անասունները, որ մտաց զարգացումն ու յառաջադիմութիւն չունին։

Ուսման սկիզբը թէ և փոքր ինչ դժուար է, ինչպէս և ամէն բանի սկիզբը, բայց գիտեմ որ համբերութեամբ և աշխատութեամբ ամենայն նեղութիւններ և դժուարութիւններ կյաղթեմ, և յետոյ ամենայն բան ինձ համար հեշտ կլինի ու թեթև։ Մարդս աշխատութենէ չպէտք է փախի. մենք աշխատելու համար ենք ծնուել, չաշխատողն և ծոյլն արժանի չէ, որ ապրի։

Տղայքը ինչու համար են ուսումնարան գնում: Ուսումնարանումը ով է նոցա ուսուցանում եւ դաստիարակում: Ամենայն տղայի համար էլ ուսումը հարկաւոր է, թէ ոչ: Ուսումից ինչ օգուտ են ստանում տղայքը: Ընչով են զանազանւում լաւ եւ վատ աշակերտները: Ուսման սկիզբը դժուար է թէ հեշտ: Ընչով կարելի է յաղթել այդ դժուարութեանը:—Կրկնեցէք ձեր խօսքերով բոլոր պատմութիւնը:

Ասացէ՛ք այս բառերի նշանակութիւնը: կրթութիւն, դաստիարակութիւն, ճշդութիւն, զարգացումն: Ի՞նչպէս են կազմուել «հասակակից, երախտագէտ եւ յառաջադիմութիւն» բառերը եւ ինչ կնշանակեն: Ի՞նչ զանազանութիւն ունին «մանուկ, երեխայ եւ տղայ» բառերը:

ԱՂՕԹՔ ՄԱՆԿԱՆՑ

Ամէն տեղ ներկայ ես դու, Աստուած իմ. ամէն տեղ

գտնուումես՝ լուսոյ, խաւարի ու բոլոր աշխարհիս մէջ։ Մի և նոյն ժամանակը, որ իմ խոնարհ աղօթքս լսումես, լսումես նաև հրեշտակաց քաղցրաձայն երգերը ու փառաբանութիւնները։ Դու, ուրեմն, որ Աստուած ես հրեշտակաց և իմ, որ մեր ձայնը լսումես, ինչպէս նաև թռչնոց երգն, ու ծաղկանց վերայ թռչտող մեղուների բզզանքը, ընդունէ նաև իմ աղօթքս ու պաղատանքս, շնորհք տուր ինձ, որ ուսմանս աշխատեմ, տգիտութեան խաւարից հեռանամ, քեզ 'ի բոլոր սրտէ սիրեմ և քո կամքդ կատարեմ. միտք տուր ինձ, որ երբէք չմոռանամ որ ամենատես աչքդ իմ վերայ միշտ նայումէ, և ամէն ժամանակ առաջևդ եղածի պէս շարժիմ և աշխատեմ բարի խորհել ու բարի գործել։

Ամէն ժամանակ դուք Աստուծուն աղօթք անում էք թէ ոչ։ Ո՞յք չեն միշտ աղօթք անում Աստուծուն, չար մարդիկը թէ բարի։ Ե՞րբ եւ ինչ տեղ կարելի է աղօթք անել Աստուծուն։

Ասացէք այս բառերի միտքը. ներկայ, մեղու, բզզանք, պաղատանք, տգիտութիւն, նայել, խորհել։

Սովորեցէք բերան այս աղօթքը, եւ ասացէք աղօթք անելիս։

ՄԵՐ ԴԱՍԱՏՈՒՆԸ։

Մեր դասատունը մի մեծ սենեակ է։ Այս սենեակը ունի առաստաղ (օձօրք), յատակ, չորս անկիւն և չորս պատ՝ երկուսը երկայն և երկուսը կարճ։ Երկայն պատերը միմեանց հանդէպ են ու իրար հաւասար. կարճ պատերը նոյնպէս միմեանց հանդէպն են ու հաւասար։ Մեր դասատան առաստաղը ներկած է սպիտակ, յատակը տախտակամած է և ներկած դեղին, իսկ պատերը սուաղած են կրով և ներկած են կանաչ։

Պատերումը շինած են պատուհաններ ու դռներ։ Դա-

տուհանները լոյսի համար են, իսկ դռները դուրս ու ներս անելու համար։ Դռները և պատուհանները շինած են փայտից, բայց պատուհանները ունին իւրեանց մէջ ապակի՝ լոյսը ներս թողնելու համար։ Մեր դասատանը կայ չորս պատուհան և երկու դուռը։ Բոլոր պատուհանները միմեանց հաւասար են. դռները նոյնպէս հաւասար են միմեանց։

Դասատան մէջ տեղը դրած են աշակերտաց համար նըստարաններ և գրասեղաններ։ Գրասեղանների առաջին դրած է մէկ փոքր սեղան և մէկ աթոռ վարժապետի համար։ Բոլոր գրասեղանները և նստարանները շինած են փայտից և ներկած են դեղին, բայց կան մի քանի հին գրասեղաններ, որ ներկած են սև։ Գրասեղանների միջին շինած են արկղներ, գրեանքը և թղթերը պահելու համար։

Դասատան մէկ անկիւնումը դրած է գրատախտակը, և նորա մօտ կաւիճը և սպունգը։ Կաւիճը կակուղ և սպիտակ քար է, որով գրումեն գրատախտակի վերայ. իսկ սպունգը տախտակի վերայի գրածը ջնջելու կամ սրբելու համար է, ուստի և կոչւումէ ջնջան։

Նկարագրեցէք սոյնպէս ձեր դասատունը եւ ասացէք, մեծ սենեակ է թէ փոքր. քանի դուռն ունի եւ քանի պատուհան: Ընչից են շինած դռները ու պատուհանները եւ ընչի համար են նոքա: Ի՞նչ գոյն են ներկած պատերը, առաստաղը եւ յատակը: Քանի գրասեղան կայ աշակերտաց համար ձեր դասատանը, եւ ինչ գոյն են նոքա ներկած: Ձեր դասատանն էլ գրատախտակ կայ թէ ոչ:—Գրեցէք ինչպէս որ պատմեցիք կամ նկարագրեցիք ձեր դասատունը:

Ասացէք այս բառերի նշանակութիւնը. առաստաղ, յատակ, անկիւն, հանդէպ, տախտակամած, սուաղած, կիր, ապակի, արկղ, սպունգ, ջնջան, կաւիճ:

Ի՞նչպէս են շինուած այս բառերը. դասատուն, գրատախտակ՝ պատուհան, տախտակամած: «Մած» ինչ նշանակէ: (Կպած, կպչող, թանձր): «Մածուն» բառը այս մի եւ նոյն բառիցն է շինուած, թէ ուրիշ բառից: Պատուհան բառի տեղ մենք ուրիշ էլ ինչ բառ ենք գործ ածում: (Լուսամուտ կամ լուսանցք): Ի՞նչպէս են շինուած այդ բառերը:

ՎԱՐԴ ԵՒ ՄԱՆՈՒՇԱԿ

Գարնան սկզբին վարդը գեղեցիկ բացուել էր դաշտումը և բարձր թփի վերայ ծածանւումէր օդի մէջ: Նայեցաւ չորս կողմը ու տեսաւ խեղճ մանուշակը թփերի տակին ծածկուած:

—«Ինչո՞ւ ես այդպէս թագնւում,» ասաց նորան պարծենալով վարդը, «դուրս արի ծաղկիր այս բաց տեղը, որ քեզ էլ տեսնեն մարդիկ ու զուարճանան:»

—«Համեստութիւնն է պահանջում», պատասխանեց խոնարհութեամբ մանուշակը, «ցանկացողները կարող են ինձ այս տեղ էլ գտնել:»

Մանուշակ

Ընձիւ, սիրուն մանուշակ,
Համեստութեան օրինակ,
Տուր մեզ ծաղիկ գեղեցիկ,
Քո քնքոյշ հոտ անուշիկ:

Վարդ

Կանաչ դաշտերում
Եւ այգիներում
Ծաղիկներ կան շատ.
Բայց չէ ոչ մինը
Վարդի նմանը.
Նա է բնութեան զարդ:

Ի՞նչ կնշանակէ «ծածանիլ». իսկ «զուարճանալ» ինչ կնշանակէ: Ի՞նչ զանազանութիւն ունին «թուփը» ու «ծառը»: Համեմատեցէք վարդը մանուշակի հետ եւ ասացէք, ինչ նմանութիւններ ունին նոքա եւ ինչ զանազանութիւններ: (Վարդը նման է մանուշակին, որովհետեւ երկուսն էլ ծաղիկ են, երկուսն էլ լաւ հոտ ունին եւ լաւ գոյն, երկուսն էլ դուրս են գալի եւ սնունդ են առնում գետնիցը եւ չեն կարող ապրիլ առանց ջրի: Երկուսն էլ ունին արմատ, ցօղուն (բուն, ծեղ) եւ տերեւ: Երկուսն էլ ծլումեն, ծաղկումեն եւ փոքր ժամանակից յետոյ թառամումեն եւ այլն: Բայց վարդը զանազանվումէ մանուշակից իւր հոտովը, մեծութեամբը եւ ձեւովը: Վարդը ըստ մեծի մասին լինումէ բաց կարմիր, իսկ մանուշակը ծիրանի գոյն ունի: Վարդը փուշ ունի, իսկ մանուշակը ոչ. վարդը թփի վերայ է բուսնում, իսկ մանուշակը ոչ եւ այլն:

ԹՈՒՂԹ ԵՒ ԳԻՐՔ։

Մեր տետրակները կարած են թղթից։ Այս թուղթը՝ որ ես ունիմ, սպիտակ է. բայց կան և զանազան գոյնի թղթեր. կարմիր, դեղին, կանաչ, կապոյտ, սև և այլն։ Թուղթը բարակ է և լինումէ թերթերով։ Թուղթը շինումեն կտաւի հին ու անպէտք կտորտանքից, որ հաւաքումեն ածում պղնձի մէջ և եփում այնքան, մինչև որ չփոթ է դառնում. և յետոյ բարակ սփռումեն ու մամուլով ճնշում և չորացնում։ Եթէ կամենումեն որ թուղթը գունաւոր լինի, օրինակ կարմիր կամ դեղին, չփոթի մէջը ածումեն կարմիր կամ դեղին ներկ։ Մեր կողմերը թուղթ չեն շինում, այլ բերումեն ուրիշ տեղերից։

Թուղթը մեզ հարկաւոր է գրելու, տպելու և կամ բան փաթաթելու համար. իսկ նկարած թղթով զարդարումենք մեր տան պատերը։ Թղթի վերայ գրումեն մատիտով կամ գրչով և թանաքով։ Հին ժամանակը թուղթ չկար, այլ թղթի տեղ գործ էին ածում մագաղաթ, որ շատ թանգ է և դժուար շինելու։ Մագաղաթը շինումեն ոչխարի, այծի կամ իշի կաշուից։ Մագաղաթը թղթից հաստ է լինում. բայց կայ և այնպիսի մագաղաթ, որ ամենանուրբ թղթի պէս բարակ է և ազնիւ։

Գիրքը տպումեն տպարանումը։ Յառաջ գիրք շինողը կամ հեղինակը գրումէ թղթի վերայ, յետոյ տալիս է տպելու։ Տպելուց յետոյ այն մէկ օրինակը կամ գիրքը դառնումէ հազարաւոր գրքեր։ Տպած թերթերը կազմարարը կարումէ միասին և կազմում է, որ չցրուեն։ Գիրքը կարդալու համար է։ Գրքի մէջ շատ թերթեր կան. ամենայն թերթ ունի երկու երես։ Ամէն երեսին շատ շարքեր կամ տողեր կան, և ամէն տողի մէջ շատ տառեր կամ գրեր։ Գրերը լի-

նումեն սովորաբար երկու տեսակ գլխագիր և մանրագիր: Բացի այս երկու տեսակը կան և ուրիշ տեսակ գրեր, որ կոչւումեն նոտր գիր կամ շղագիր, ծաղկագիր և այլն:

Ընչից ենք կարում մեր տետրակները: Թուղթը ինչ գոյնի է լինում: Թուղթը ընչից են շինում եւ ինչպէս: Թուղթը մեզ ընչի համար է հարկաւոր: Թղթի վերայ ընչով ենք գրում: Հին ժամանակը ինչ էին գործ ածում թղթի տեղ: Մագաղաթը ընչից են շինում: Գիրքը որտեղ են տպում եւ ինչպէս: Ում ենք ասում հեղինակ: Գիրքը ընչու համար են կարում եւ կազմում: Ո՞վ է կազմում: Քո գրքի մէջ քանի տեսակ գրեր կամ տառեր կան:—Կրկնէ բոլոր պատմութիւնը եւ գրէ:
Ասացէք այս բառերի միտքը. ճնշել, մամուլ, նկարած, մատիտ, մագաղաթ, տող, հեղինակ:

ԽՆԴԻՐ ՍՐԱՄԻՏ ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ:

Տիգրան և Արշակ հովիւները մէկ երեկոյ, երբոր իւրեանց փոքրիկ հօտերը առած վերադառնում էին տուն, միմեանց պատահեցան: Տիգրանը Արշակի ոչխարների վերայ նայելով ասաց. «Գիտես, Արշակ եղբայր, քեզ ի՞նչ պէտք է առաջարկեմ. քո ոչխարներէդ մէկն ինձ տուր, այն ժամանակ իմ ոչխարներս քո ոչխարներէն երկու անգամ աւելի կլինին:» Արշակը Տիգրանի ոչխարների վերայ նայելէն ու փոքր ինչ մտածելէն յետոյ ասաց. »Այդպէս չէ Տիգրան եղբայր, ես քեզ աւելի լաւ ու արդար առաջարկութիւն կանեմ. տուր ինձ քո ոչխարներէդ մէկն, այն ժամանակ երկուսիս հօտերը հաւասար կլինին:» Իմացէ՛ք թէ իւրաքանչիւր հովիւ քանի՛ ոչխար ունէր:

ԿԻՐԱԿԱՄՈՒՏ

Իրիկնաժամի զանգակը տուին,
Բարեպաշտ մարդկանց ժամ հրաւիրեցին.

«Վաղը կիւրակէ—Աստուծոյ օրն է,
Վերջացրէք գործերդ, հանգստեան ժամ է:»
Լսեց գիւղացին դաշտումն այս ձայնը,
Դէպի տուն քշեց եզն ու գութանը:
Գիւղական փոքրիկ պարզ եկեղեցին
Մարդիկը լցուած աղօթում էին.
Արդար վաստակով գնած մոմերը
Աստեղց պէս պայծառ փայլփայլում էին:

Ի՞նչպէս են շինուել «իրիկնաժամ» եւ «կիրակամուտ» բառերը: Ի՞նչ կնշանակէ «ժամ»: Ուրեմն ինչ կնշանակեն եւ ինչպէս են շինուած «ժամագիրք» եւ «ժամացոյց» բառերը:

Ի՞նչ կնշանակէ «գիւղական պ ա ր զ եկեղեցի»: Իսկ եթէ ասենք «պ ա ր զ երկինք» կամ «պ ա ր զ ջուր», այն ի՞նչ կ՚նշանակէ: Ի՞նչ կ՚նշանակէ «արդար վաստակ»: Իսկ «արեան քրտինքով վաստակած» ի՞նչ կ՚նշանակէ: Ո՞րն է անարդար վաստակը: Ո՞ւմ ենք ասում բարեպաշտ: Ինչու համար է կիւրակէն կոչւում «Աստուծոյ օր»:

ՍԵՂԱՆ ԵՒ ԳԻՐՔ:

(Համեմատութիւն)

Նմանութիւն: Սեղանը ունի քառանկիւնի ձև, գիրքը նոյնպէս ունի քառանկիւնի ձև: Սեղանը և գիրքը՝ երկուսն էլ ունին ծանրութիւն: Թէ սեղանը և թէ գիրքը ունին երկայնութիւն, լայնութիւն և հաստութիւն: Թէ սեղանը և թէ գիրքը երկայնութեամբ աւելի են, քան թէ լայնութեամբ: Թէ սեղանի և թէ գրքի հակադիր կողմերը միմեանց հաւասար են: Թէ սեղանը և թէ գիրքը հարկաւոր են մարդկանց: Երկուսն էլ մարդկան ձեռքով շինած են: Մեր դասատանը երկուսն էլ գտնւումեն: Երկուսն էլ յաւիտենական չեն, մաշւումեն, փչանումեն և կեղտոտւումեն: Երկուսն էլ կրակից ահ ունին. և այլն:

Զանազանութիւն։ Սեղանը շինած է փայտից, իսկ գիրքը թղթից։ Սեղանը շինել է հիւսը, իսկ գիրքը տպել են տպարանում և կազմել է կազմարարը։ Սեղանը աւելի ամուր է և ծանր, քան թէ գիրքը․ գիրքը աւելի հեշտ կարելի է պատառել և փչացնել, քան թէ սեղանը։ Սեղանը վերան գիր գրելու կամ հաց ուտելու համար է, իսկ գիրքը կարդալու։ Սեղանը ոտքեր ունի, իսկ գիրքը ոչ։ Գիրքը կազմ ունի ամրութեան համար, իսկ սեղանը ոչ։ Գիրքը փոքր է, քան թէ սեղանը։ Գիրքը կարելի է գրպանը դնել, իսկ սեղանը՝ ոչ։ Գիրքը կփչանայ ջրի մէջ, իսկ սեղանը՝ ոչ։ Սեղանը ունի իւր մէջ պահարան կամ արկղ, իսկ գիրքը ոչ․ և այլն։

Համեմատեցէք սոյնպէս սեղանը գրատախտակի հետ, դուռը պատուհանի հետ, սեղանը աթոռի հետ, գիրքը տետրակի հետ, գրիչը մատիտի հետ, թանաքը ջրի հետ, եւ ասացէք ի՞նչ նմանութիւն ունին նոքա եւ ի՞նչ զանազանութիւն։— Գրեցէք տանը այս առարկաների համեմատութիւնը եւ ցոյց տուէք ինձ։

ԱՌԱԾՔ ԵՒ ԿԱՆՈՆՔ ՈՒՂՂՈՒԹԵԱՆ

Ողորմած ու գթած մարդը խեղճերին միշտ ողորմութիւն կանէ ու կօգնէ։
Յամառ ու կամապաշտ մարդը կպահանջէ, որ միշտ իւր ուզածը լինի, իւր կամքը կատարուի ։
Կռուարար մարդը ոչ մէկի հետ սիրով չէ ապրիլ։
Խաղաղասէր մարդը, ոչ ոքի հետ կռիւ չէ անել։
Արուեստ իմացողը միշտ կարող է իւր գլուխը պահել։
Բան չգիտացողը պէտք է սովորի, որ տգէտ չմնայ։
Աշխատել չուզողը՝ ապրելու արժանի չէ։
Իւր ծնողացն ու վարժապետացը չհնազանդուողը պէտք է պատժուի։

Առողջ մնալ ուզողը պէտք է չափաւոր ուտէ ու խմէ:

Աղտոտը պէտք է լուացուի, որովհետեւ աղտոտութիւնը առողջութեան վնասակար է և մարդկան ատելի:

Լաւ քնել ուզողը պէտք է ցերեկը աշխատէ:

Ով կամենումէ իւր ծնողացը և ուրիշներին սիրելի լինել, պէտք է լինի քաղցրաբարոյ, խելօք, հնազանդ, կամարար և ճշմարտախօս:

Ով որ կամենումէ իւր հագուստը շատ դիմանայ, պէտք է միշտ մաքուր պահէ և անվայել խաղերից զգուշ մնայ:

Տուած բարի խորհուրդներին ու խրատներին ականջ չդնողը յետոյ կզղջայ:

Ասացէք այս բառերի նշանակութիւնը. գթած, յամառ, կամապաշտ, չափաւոր, քաղցրաբարոյ, պարկեշտ, կամարար, անվայել, զղջալ:

ՉՈՒ ԹՌՉՆՈՑ

«Մայր իմ, ինչո՞ւ ծիծեռնակները ձմեռը չեն երեւում,» հարցրեց միանգամ Գարեգինը իւր մօրը:—«Որովհետեւ նոքա ձմեռը գնումեն ուրիշ տեղ, որդեակ,» պատասխանեց մայրը: —Ո՞ւր են գնում, մայրիկ:—Եթէ կամենումես իմանալ, լսէ և ես կպատմեմ քեզ:

«Սեպտեմբեր ամսի վերջերին, երբոր ծառերի տերեւները սկսումեն թափուել, ոչ միայն ծիծեռնակները, այլ և մեր պարտէզների, դաշտերի ու անտառների մէջ անոյշ անոյշ երգող թռչնոց շատերը պատրաստուումեն մեզ թողնելու ու երթալու: Նոքա գնումեն մեզանից շատ հեռու երկիրներ, որ տեղ որ ձմեռ չէ լինում ու պատրաստ կերակուր կայ նոցա համար

«Ի հարկէ կզարմանաս Գարեգինս», ասաց մայրը որդուն,

«Թէ ի՛նչպէս այնպիսի հեռաւոր ճանապարհորդութիւններ են անում այն խեղճ թռչունները, այն ինչ մենք հանդերձ մեր խելքովը ու գործունէութեամբը չենք կարողանում այսպիսի երկար ճանապարհորդութիւններ անել, մինչև որ չենք գիտենում ճանապարհը, կամ քաջ առաջնորդ չենք ունենում,»

«Իրաւունք ունիս զարմանալու որդեակ», շարունակեց մայրը, «սակայն գիտացի՛ր հոգիս, որ Աստուած է նոցա առաջնորդը, Աստուած՝ որ արևը, լուսինը ու աստղերը ծագել է տալի երկնքումը, ու երկիրս զարդարում զանազան ծաղիկներով ու բոյսերով. ինքն Աստուած այն թռչնոց իւրաքանչիւրին ցոյց է տալիս երթալու երկիրն ու բնակելու ծառն ու տանիքը, և կերակուրն ու հատիկ գտնելու տեղը:»

«Աստուած է, ուրեմն, որ աշնանը նոցա առաջնորդումէ տաք երկիրները, գարնանը նոցա առնումէ և դարձնում մեր երկիրները, մեր անտառներին ու պարտէզներին կենդանութիւն տալու համար: Տեսնո՞ւմես այս ծիծեռնակը, որ պատուհանիդ առաջին բուն է շինել, անդադար երգումէ և իւր անխոնջ աշխատութեամբը քեզ բարի օրինակ է լինում: Այս ծիծեռնակը աշնանը հազարաւոր մղոն ճանապարհորդութիւն է արել, և գարնանը կրկին վերադարձել՝ գտել մեր տունը, և իւր հին բունը նորոգելով՝ այժմ պատրաստւումէ ձագեր հանելու: Այս ծիծեռնակը օտար ծիծեռնակ չէ, սա մեր հին ծանօթ ծիծեռնակն է, սա մեր անցեալ տարուայ հիւրն է, որ այս տարի ևս եկել է մեզ հիւր, տեսնելով մեր անցեալ տարուայ հիւրասիրութիւնը:»

Որ՞ թռչուններն են ձմեռը գնում տաք երկիրներ, եւ որոնք են մնում մեզ մօտ: Նոքա ընչո՞ւ են գնում: Ո՞վ է նոցա առաջնորդողը եւ կերակրողը: — Կրկնեցէք ձեր խօսքերով այս պատմութիւնը:

Ի՞նչպէս են շինուած այս բառերը. հիւրասիրութիւն, ճանապարհորդութիւն (հորդեմ-երթալ), առաջնորդ (առաջի-հորդել):

ԾԻԾԵՌՆԱԿ։

(Երգ պանդուխտ պատանեկի)։

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թռչնակ.
Դէպի ո՞ւր, ինձ ասա,
Թռչում ես այդպէս արագ։

Ա՜խ, թըռիր, ծիծեռնակ,
Ծընած տեղըս Աշտարակ,
Անդ շինի՛ր քո բունը
Հայրենի կըտուրի տակ։

Անդ հեռու ալևոր
Հայր ունիմ սգաւոր,
Որ միակ իւր որդուն
Սպասում է օրէ օր։

Երբ տեսնես դու նորա՝
Ինձնից շատ բարև արա՛,
Ասա՛, թող նըստի լայ
Իւր անբաղդ որդու վըրայ։

Դու պատմէ, թէ ինչպէս
Աստ անտէր ու խեղճ եմ ես.
Միշտ լալով, ողբալով
Կեանքս մաշուել, եղել կէս։

Ինձ համար ցերեկը
Մութ է շըրջում արեգը,
Գիշերը թաց աչքիս
Քունը մօտ չի գալիս։

Ասի՛ր, որ չի բացուած

Թառամեցայ միացած,
Ես ծաղիկ գեղեցիկ՝
Հայրենի հողից զրկած։

Դե՜հ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացի՛ր, Թռի՛ր արագ,
Դէպի Հայոց աշխարհը,
Ծնած տեղս Աշտարակ։

Այս ո՞վ է խօսում ծիծեռնակի հետ: Միթէ կարելի՞ է թռչնոց կամ առհասարակ անասնոց հետ խօսել: Ի՞նչու համար է նա ծիծեռնակին «զարնան թռչնակ» կոչում: Ի՞նչ է հարցնում նա ծիծեռնակին, եւ ինչ է նորանից խնդրում: Նա ինչու համար է իւր հօրը «սգաւոր» ասում: Նա իրանց տանն է, թէ օտար երկրում է: Առողջ է, թէ տկար:— Պատմեցէք ձեր բառերով այս երգի միտքը:

Ի՞նչ կնշանակեն այս խօսքերը. «Ես ծաղիկ գեղեցիկ, հայրենի հողից զրկած»: Իսկ այս խօսքերը. «Ասիր, որ չի բացուած թառամեցայ միացած»: Ինչպէս կասէք աւելի պարզ ձեր խօսքերովը այդ բոլոր տան միտքը: (Ասիր, որ ես իբրեւ գեղեցիկ ծաղիկ հայրենի հողից զրկուած, միայնակ թառամեցայ այստեղ, դեռ չ՛բացուած. այսինքն, ասիր, որ ես այս օտար երկրումը ահա՛ մեռանումեմ, դեռ հասակս չ՛առած:) Կարելի է ասել. «ծաղիկ հասակ»: Ինչ կ՛նշանակեն այս խօսքերը. «Խնայէ, ով մահ, ծաղիկ հասակիս»:

Սովորեցէք անգիր այս երգը: Սորա երգելու եղանակը կամ ձայնը գիտէք, թէ ոչ: Եթէ չ՛գիտէք, սովորեցէք:

ՄԵՐ ՏՈՒՆԸ

Մենք ունինք մէկ փոքր տուն։ Մեր տանը կայ հինգ սենեակ. դահլիճ, ընդունարան, սեղանատուն, ննջարան, և առաջնասենեակ։ Դահլիճը ամենից մեծ սենեակն է, իսկ առաջնասենեակը ամենից փոքրը։ Ընդունարանը մեծութեամբ դահլիճից երկրորդն է։ Ընդունարանը հիւրերի համար է, և աւելի է զարդարած, քան թէ միւս սենեակները. սեղանատունը ճաշելու համար է, իսկ ննջարանը հանգստանալու։

Ես և իմ փոքր եղբայրս մէկ սենեակում ենք կենում և ուսանում։ Մեր սենեակը բաւական մեծ սենեակ է, երկու դուռն ունի և չորս պատուհան։ Մեր պատուհաններն մեծ մեծ են, այս պատճառաւ և մեր սենեակը լաւ լոյս է։ Մեր սենեակի մէկ անկիւնումը հնոցն է, իսկ միւս անկիւնումը մեր գրեանց և թղթերի պահարանը։ Սենեակի մէջ տեղը մեր գրասեղանն է, որտեղ կարդումենք և պատրաստում մեր դասերը։ Սեղանի շուրջը շարած են աթոռներ նստելու համար։ Մեր սենեակի պատերը ներկած են կանաչ։ Պատերի վերայ կախած են զանազան պատկերներ, որոց մէջ կայ հօրըս, մօրս, պապիս և տատիս պատկերները։

Մեր տան մօտ առանձին կան ևս երկու սենեակ՝ խոհակերոց և մառան։ Խոհակերոցումը կերակուր են եփում, իսկ մառանումը պաշարեղէն են պահում։ Մեր կերակուրը եփում է խոհարարը։ Խոհանոցի կտուրը հողով է ծածկած, իսկ մեր տան կտուրը կղմինտով։

Նկարագրեցէք սոյնպէս եւ ձեր տունը։ Ասացէք, ձեր սեփական տա՞նն էք կենում, թէ վարձում էք։ Ձեր կեցած տունը մեծ տուն է թէ փոքր, քարէ տուն է, թէ փայտէ։ Քանի՞ յարկ ունի եւ քանի՞ սենեակ։ Ասա՛ սենեակների անունները։ Նկարագրեցէք ձեր սենեակը, որի մէջ դուք կենումէք։ Խոհանոց եւ մառան էլ ունի՞ք թէ ոչ։ Իսկ խոհարա՞ր։ Ընչո՞վ է ծածկած ձեր տան կտուրը։— Գրեցէք ինչպէս որ պատմեցիք կամ նկարագրեցիք ձեր տունը։

X. ԱՌԱՒՕՏԵԱՆ ԵՐԳ

Առաւօտն որ զարթնեցար,
Իսկոյն վեր կաց, մի՛ ծուլանար,
Գնա մաքուր լուացուէ,
Գլուխդ մի լաւ սանդրէ։
Ով որ գլուխը չէ սանդրած

Կամ երեսը լուացած,
Ամենուն է զզուելի.
Մաքրութիւնն է սիրելի։

Ձեռքերդ լաւ լուա,
Շորերդ հագիր, շուտ արա.
Այս ամէն բանից յետոյ
Աղօթք արա Աստուծոյ։

Շատ պառկելէն ի՞նչ օգուտ.
Վեր առ դասդ, սերտէ շուտ.
Որ դասդ որ լաւ չգիտես,
Գնա, որ շուտ պատրաստես։

Ո՞վ է ամենի համար զզուելի, եւ ինչն է ամենի համար սիրելի։

ՄԵՐ ԸՆՏԱՆԻՔԸ

Մեր ընտանիքը մեծ չէ. հայրս է, մայրս, երկու եղբայրս և քոյրս։ Իմ եղբայրներս և քոյրս մեծ են ինձանից. ես ամենից փոքրն եմ։ Մենք մի պապ էլ ունէինք, բայց նա մեռաւ։ Իսկ տատս, ասումեն, շատ ժամանակ է որ մեռել է. ես նորան չեմ էլ տեսել։

Մայրս մեզ շատ սիրում է, մեզ համար կերակուր է պատրաստում, շորեր է կարում, և ազատ ժամերին մեզ կարդալ ու գրել է ուսուցանում։ Իսկ հայրս անդադար աշխատում է, որ մեր տունը կառավարէ, մեզ կերակրէ և հագցնէ. Նա ոչ մի րոպէ հանգստութիւն չունի, և այս բոլոր աշխատութիւնը մեզ համար է։ Չգիտեմ մենք ի՞նչ պէտք է անէինք առանց մեր ծնողացը. ո՞վ պէտք է մեզ համար վաստակէր, ո՞վ պէտք է մեզ կերակրէր, հագցնէր և պահպանէր։

Տէ՛ր Աստուած, երկայն կեանք տուր իմ ծնողացս, որ մենք որբ չմնանք ու անտէր:

Մեծ եղբօրս անունը Արշակ է, իսկ նորանից փոքրինը Վաղարշակ: Երկուսն էլ կարդում են ուսումնարանումը: Հայրս ասաց՝ որ ինձ էլ պէտք է տայ շուտով ուսումնարան: Քոյրս տասն և մէկ տարեկան է. նա ուսանումէ օրիորդաց ուսումնարանումը:

Ես մէկ մեծ քոյր էլ ունէի, բայց նա վախճանեցաւ: Մայրս միշտ լալիս է նորա համար և ասումէ թէ «ափսոս, շատ խելօք աղջիկ էր»: Հայրս մի անգամ տարաւ ինձ գերեզմանատուն և ցոյց տուաւ քրոջս գերեզմանը: Պապիս և տատիս գերեզմաններն էլ այն տեղ նորա մօտ են: Ի՛նչպէս ծածկուել է պապիս ու տատիս գերեզմանները կանաչ խոտով. իսկ քրոջս գերեզմանի վերայ ծաղիկներ էլ են դուրս եկել: Այո՛, քոյրս ծաղիկ շատ էր սիրում:

Աստուած մօրս մխիթարելու համար, մեռած քրոջս փոխանակ մի որդի տուաւ նորան: Նա դեռ շատ փոքր է, չգիտեմ չորս ամսական է, թէ հինգ. նորա անունը Վարդանիկ է: Մայրս անչափ նորան սիրումէ, միշտ ծիծ է տալիս նորան և որորումէ: Ես էլ երբեմն մօրս օգնում եմ և օրօրում եմ եղբօրս օրօրոցը: Մայրս եղբօրս օրօրելիս և քնացնելիս միշտ օ՛ր օ՛ր է երգում: Ո՛հ, ի՛նչ գեղեցիկ և քաղցր երգ է մօրս երգածը. ես միշտ լսում եմ մօրս այդ քաղցր երգը, և համարեա՛ թէ բերան գիտեմ բոլորը: Մօրս երգած օրօրը այսպէս է սկսում. «Ննջէ՛, ո՛վ իմ սիրուն մանկիկ, ննջէ՛ տեսնեմ, դու գառնիկ»: Բայց ձայնով ես չեմ կարում այնպէս լաւ երգել, ինչպէս մայրս է երգում:

Նկարագրեցէք սոյնպէս եւ ձեր ընտանիքը եւ գրեցէք:

Ասացէք, ում ենք ասում տատ, պապ, Թոռն, քեռի, խնամի, սան, կնքահայր, աներ, զոքանչ, տագր, սկեսր, որբ, այրի:

Ի՞նչպէս է շինուած «գերեզմանատուն բառը: Ի՞նչ զանազանու-

Թիւն կայ «գերեզման եւ «գերեզմանատուն»: «Գերեզմանաքար» ինչ կնշանակէ, եւ ինչպէս է շինուել այդ բառը:

ՕՐՕՐՔ ՄԱՆԿԱՆ

Ննջէ՛, ո՛վ իմ սիրուն մանկիկ,
Ննջէ տեսնեմ, դու գառնիկ,
Անոյշ անոյշ ննջէ հանդարտ,
Հանգստացիր մի քիչ արդ:

Օր օր ասեմ քեզ որդեկիս,
Շատ օր տեսնես, շատ ապրիս,
Օր օր ասեմ սիրուն տղուս,
Օրեր մաղթեմ սիրելւոյս,
Օր օր ասեմ մատաղ մանկանս,
Որ ունենայ երկար կեանս:

Ա՛հ, ե՞րբ ես քեզ պիտի տեսնեմ,
Զերդ մէկ տղայ գեղադէմ,
Գնալ, վազել ու վազվզել,
Հասակակցացդ հետ խօսել:

Օր օր օր օր իմ տատրակիս,
Օր օր ասեմ զաւակիս.
Օր օր օր օր իմ գեղեցկիդ,
Քեզ, իմ հոգւոյս հատորիդ,
Օրեր մաղթեմ քեզ յԱստուծոյ,
Քեզ, իմ որդւոյդ միայնոյ:

Եւ երբ լինիս հսկայ կորիճ,
Լինելու չես խարդախիչ

Հայոց ազգին, մեր հայրենեաց,
Եւ Հայերու բարեկամաց:

Օրեր, օրեր քեզ շատ մաղթեմ,
Որ Հայրենիք մեր վսեմ,
Գեղածիծաղ ժպիտներովն
Եւ իւր օրհնեալ անունով,
Արծարծէ յիս բարի յոյսեր.
Եւ 'ի քեզ էլ լաւ զգացումներ:

Միթէ այն օրն տեսնե՞մ պիտի,
Որ ծերութիւնս քեւ սփոփի,
Եւ երբ խիստ շատ ես ծերանամ,
Ըզքեզ նեցուկ ունենամ:

Օր օր ասեմ, օր օր օր օր
Որ շնորհէ Հայրն երկնաւոր.
Օրեր մաղթեմ, որ շատնայ օրդ,
Յետոյ նեցուկ լինիս մօրդ,
Որ այն օրեր շատ շատ օր, օր
Մաղթեմ քեզի բոլոր օր:

Ասացէք այս բառերի նշանակութիւնը. արդ, մաղթեմ, մատաղ, զերդ, գեղադէմ, տատրակ, սփոփիլ, նեցուկ, արծարծել, ժպիտ, վսեմ, հսկայ, շնորհել: Ի՞նպէս են շինուած «գեղադէմ, գեղածիծաղ եւ հասակակից» բառերը:

Ի՞նչ կ'նշանակէ «հոգւոյս հատոր». իսկ «դառնիկ կամ դառնուկ» ինչ կնշանակէ: Այսպիսի սիրոյ կամ փաղաքշական բառեր էլ գիտե՞ս ուրիշ: (Այո՛, մենք ասումենք միմեանց. «աչքիս լոյս, հոգիս, արեւս, արեւիդ մեռնիմ, հոգուդ մեռնիմ, քեզ մատաղ (զոհ) լինիմ, գլխովդ պտոյտ գամ, քո ցաւը տանեմ. եւ այլն):

Ի՞նչ կ'նշանակէ «շատ օր տեսնես»: Այսպիսի ուրիշ օրհնանք էլ գիտե՞ս: (Այո. «ծերանաս, ծլիս, ծաղկիս, զօրանաս, շատ ապրիս, իմ տարիս հասնես, կարմիր կապենք, քեզ արեւշատութիւն, քեզ արքայութիւն, ապրի արեւդ եւ այլն:)

Սովորեցէք բերան այս օրօրոցի երգը:

ՆԱՄԱԿՆԵՐ ՓՈՔՐԻԿ ԱՐԱՄԻ ՎԵՐԱՅ

Նամակ առաջին։

Իմ սիրելի Արամ։

Թէպէտ քեզանից ես շատ հեռու եմ կենում, ու շատ ժամանակ է, որ քեզ չեմ տեսել, բայց այսու ամենայնիւ ես քեզ շատ եմ սիրում ու քեզ վերայ միշտ մտածում եմ։ Ես քեզ այն ժամանակը սիրեցի, երբ որ առաջի անգամ տեսայ. այն ժամանակը դու շատ փոքր երեխայ էիր և նստած էիր քո մօր գոգումը։ Մարդ ճանաչելու համար դու դեռ շատ փոքր էիր, քո բարերար մօրն էլ չէիր ճանաչում. Նա քեզ համբուրում էր ու իւր սիրելի փոքրիկ Արամ էր կոչում։ Յետոյ ես քեզ նորա ձեռիցը առայ. դու աչքերդ բաց էիր անում, երեսիս նայում և խնդում էիր։ Այո, ես քեզ այն ժամանակը սիրեցի, ու աղօթք էի անում իմ սրտի մէջ, որ Աստուած օրհնէ քեզ, որ դու լինիս քո մօր համար բարի զաւակ և բարի յիշատակ։

Սորանից յետոյ ես քեզ էլ չեմ տեսել, մինչև քո երկու տարեկան դառնալը. այն ժամանակը դու կարողանում էիր վազել և խաղալ ու մէկ փոքր էլ խօսում էիր. այն ժամանակը դու ուրախ և երջանիկ էիր երևում, բայց քո ամեն բարեկամները շատ տխուր էին։ Դու սևեր ունէիր հագած, բայց չէիր իմանում թէ ինչու համար, և դու զարմանում կ'լինէիր, թէ ինչու ամէնքս տխուր էինք։ Մեր տխրութեան պատճառն այն էր, որ քո բարերար մայրը մեռել էր, տարած էր հանգստարան և թաղած էր խոր գերեզմանի մէջ։ Մենք գիտէինք, որ դու նորան էլ չես տեսնել, այս էր պատճառը, որ մենք այնպէս շատ տրտմած էինք։ Բայց դու չէիր կարողանում հասկանալ մեզանից, երբ որ քեզ ասում էինք, թէ քո մայրը մեռել է։ Դու շատ անգամ հարցնում էիր

մեզանից, թէ ո՞ւր է գնացել նա և ե՞րբ յետ կ'դառնայ։ Դու չէիր իմանում թէ նա երբէք էլ յետ չի գալ։

Այժմ քո սիրելի հայրն էլ մեռած է. դու այն ցաւագին օրը կարո՞ղ ես միտդ բերել, երբ որ դու նորան տեսնում էիր նեղ դագաղի մէջ և համբուրում էիր նորա սառը թշերը։ Նա քեզ չէր նայում, ոչ էլ կարողանում էր խօսել, որովհետև նորա հոգին այնտեղ չէր. դու միայն նորա մարմինն էիր տեսնում, բայց նորա մարմինը առանց հոգու քեզ չէր կարողացել տեսնել, ո՛չ քեզ հետ խօսել և ո՛չ սիրել քեզ։ Մարմինը մեռնում է և դնւում է նեղ դագաղի մէջ, բայց հոգին Աստուած առնում է, և նորա համար նա չէ մեռնում։

Իսկ այժմ իմ սիրելի որդի, դու ես փոքր և անօգնական որբ։ Որբը նա է, որ հայր ու մայր չունի. որբ լինելը շատ տխրալի է։ Ի՞նչպէս կարող է փոքր մանուկը իւր վերայ հոգս անել, կամ կերակուր գտնել ուտելու, կամ շոր հագնելու, կամ տուն իրան պահպանելու համար անձրևից և ցըրտից։ Թէ որ որբը չունենար բարերար բարեկամներ, որք հոգս անէին նորա վերայ, երբ որ նորա ծնողքը մեռած են, նա շուտ կըմեռնէր պակասութենից։ Սակայն Աստուած տուել է քեզ բարերար բարեկամներ, որք յոյս ունին, որ դու կ'մեծանաս և բարի ու հնազանդ տղայ կ'դառնաս։

Բայց մէկ բարեկամ էլ կայ, որ նոցանից աւելի մեծ է և զօրեղ։ Այս բարեկամը կ'պահպանէ քեզ քո բոլոր կենաց մէջ. նա միշտ պատրաստ կ'լինի օրհնել քեզ, որ դու բարի լինիս. նա չի թողուլ, որ քեզ մի վնաս պատահի. նա կ'ըսիրէ քեզ քո հօրից ու մօրից աւելի, և այս ամէնը նա կանէ, թէ որ դու նորանից կ'խնդրես։ Այս բարեկամը մեր Տէր Յիսուս Քրիստոսն է, որն որ ստեղծեց բոլոր երկինքն ու երկիրս։ Ո՛հ, աղօթք արա դու նորան և խնդրէ

նորանից, որ քո բարեկամը լինի. այն ժամանակը դու միշտ առողջ և բախտաւոր կ՛լինիս։ Քո ուրիշ բարեկամները կարող են մեռնիլ, ինչպէս քո սիրելի հայրը և մայրը. բայց Յիսուսը երբէք չի մեռնիլ, որովհետև նա Աստուծոյ որդին է։ Նա միշտ քեզ հետ կ՛լինի և երբէք քեզ չի թողուլ, եթէ դու կ՛սիրես նորան և կ՛պահես նորա պատուէրները։

Քեզ սիրող մօրաքոյր։

Ո՞վ է մեր ամենամեծ բարերար բարեկամը: Քրիստոս սիրո՞ւմ էր մանկանց թէ ոչ: Ո՞ւստի գիտէք: (Քրիստոսի խօսքերից, որ ասաց. «Թողէք մանուկներին, որ գան ինձ մօտ, եւ արգելք մի լինիք նոցա, որովհետեւ նոցա պէտքէ ժառանգեն Աստուծոյ արքայութիւնը:)

ԻՄ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐԸ։

Թէ ե՛րբ ինձ ճանաչեցի, թէ ե՛րբ սկսայ խօսել, ինձ չէ յայտնի։ Միայն այսքանն է մտքիս, որ երբ աչքս բաց արի, ինչ որ տեսայ՝ կարծում էի թէ Աստուած ինձ համար է ստեղծել։ Մէկ կողմն՝ իմ օրօրոցն էր, իսկ մէկ կողմն՝ իմ խաղալու բաները. աչքս նոցա առնելիս՝ այնպէս էի իմանում, թէ ինձանից աւելի աշխարհումս բախտաւոր չկայ. և այնպէս էի կարծում թէ աշխարհիս թագաւորը ես եմ։

Ով ասես, ինձ էր սիրում և գրկում։ Իմ մէկ դատարկ խօսքն էլ ամենին հաւանական էր։ Իմ մէկ յիմար ծիծաղս էլ ամենի սիրտը ուրախացնումէր և մխիթարում, Ինձ էր ծնողացս գիրկը. հայրս էր նեղանում՝ մօրս էր տալիս, մայրս էր նեղանում՝ հօրս էր տալիս։ Վարդի պէս հոտ էին առնում, խնձորի պէս խաղացնում։ Մէկ տեղս ցաւելիս հազար անգամ գրկում և համբուրում էին ինձ, որ սիրտս առնուն և ուրախացնեն։

Մեր տան իշխանը ես էի. ասածս ասած էր, ուզածս ուզած, արածս արած։ Առաւօտը լուսանումէր՝ թէ իրիկունը մթնում, իմն էր խաղալը, կռուիլը, դէս ու դէն վազելը, շորերս պատռելը։ Փայտէ ձիս իմ հոգիս էր. բոլոր օրը նորա վերայ փողոցները չափում էի, ու էլ ո՛չ հաց, ո՛չ ջուր բնաւ միտքս չէին գալիս։ Այնպէս իմանումէի թէ երկնքի այն գեղեցիկ աստղերը, այն պայծառ արեգակը և լուսինը, դաշտերի այն գոյնզգոյն ծաղիկները ինձ վերայ են այնպէս խնդում և ծիծաղում։ Այնպէս էի կարծում, թէ միշտ այս ուրախութիւնը կունենամ, այս սիրուն օրերը կքաշեմ։

Բայց ա՜խ, փոքր ինչ մեծացայ թէ չէ, կորցրի այս ոսկէ ժամերը, թռան գնացին ինձանից այս քաղցր և անհոգ օրերը։ Ինձ տուին ուսումնարան. իսկ ուսումնարանումը հազար ու մէկ պահանջմունք կայ, պէտք է, ասումեն, խելօք կենաս, չարութիւն ու ծուլութիւն չանես, քիչ խաղաս և շատ կարդաս, դասերդ սովորիս, քո մեծերին հնազանդ կենաս և ընկերներիդ հետ սիրով, քո կամքին չլինիս ու քո ուզածըդ չանես, էլ ո՛ր մէկն ասեմ, ես ո՛ր մէկն անեմ։ Ա՜խ, իմ անմեղ և անհոգ մանկութիւն, քո քաղցրութիւնը էլ յաւիտեան չեմ առնուլ. բայց և քո քաղցր յիշատակն էլ չեմ մոռանալ։

Դուք էլ այսպէ՞ս էք անցկացրել ձեր մանկութեան օրերը, թէ ոչ: Կրկնեցէք այս պատմութիւնը եւ գրեցէք:

Ի՞նչ կ՚նշանակէ այս. «ասածս ասած էր, ուզածս ուզած, արածս արած»: Իսկ այս ի՞նչ կ՚նշանակէ. «իմն էր ծնողացս գիրկը. իմն էր խաղ ու պարը»: Ի՞նչ կ՚նշանակէ «աչքս նոցա առաւ, նոցա աչքը ինձ առաւ»: Ի՞նչ կնշանակէ «սիրտս» առնում էին, ես նորա սիրտը առայ»: Ի՞նչ կնշանակէ «ոսկէ ժամեր, ոսկի դար, ոսկեբերան: Ուրեմն ինչպէս պէտք է հասկանանք այս խօսքերը. «մանկութեան ոսկի ժամերն անցել են անդառնալի»:

ԵՐԳ ՏՂԱՅՈՒԹԵԱՆ

Ո՞ւր դուք, մանկութեան գեղեցիկ օրեր,
Ո՞ւր հեռացաք դուք, երջանիկ ժամեր,
Եւ ո՛չ սար, ո՛չ ձոր, ո՛չ ջուր, ո՛չ դաշտեր
Մեզ չեն մխիթարում վարդ մանուշակներ։

Աչքս բաց արի ինչպէս երազում,
Ամէն բան ինձի քաղցր էր երեւում։
Բայց ինչքան մեր չափը հասնումենք, առնում,
Այնքան օրէ ցօր տխրումենք, տրտմում։

Ո՞ւր մեր այն սրտի ուրախութիւնքը
Գնացին, հեռացան այս աշխարհքումը։
Եւ ո՛վ մեզ կտայ այն ազատութիւնը,
Եւ ո՛վ մեզ կտայ այն երջանկութիւնը։

Պատմեցէք այս երգի միտքը ձեր խօսքերով։

ՄԵՐ ԿԵՐԱԿՈՒՐԸ, ԸՄՊԵԼԻՔԸ ԵՒ ՀԱԳՈՒՍՏԸ

Մեր ամենահարկաւոր կերակուրը հացն է և ըմպելիքը ջուրը. առանց հացի և ջրի մենք չենք կարող ապրել։ Հացը թխումեն խմորից, իսկ խմորը հունցումեն ալիւրից և ջրից։ Ալիւրը և ջուրը շաղախելիս ձգումեն նոցա մէջ աղ և թթու խմոր։ Ալիւրը աղումեն ջրաղացումը ցորենից կամ հաճարից։ Ցորենը և հաճարը բուսնումեն դաշտումը։ Դաշտը հերկումէ և սերմանում երկրագործը։ Առանց հերկելու և սերմանելու դաշտը մեզ հաց կամ պտուղ չէ տալի, հարկաւոր է աշխատութիւն։

Առանց անձրևի կամ ջրի դաշտումը ոչինչ չէ բուս-

նում։ Ջուրը հարկաւոր է ամէնի համար, թէ բոյսերի, թէ անասունների և թէ մարդկանց։ Ջուրը բղխում է գետնի տակից. առաջ փոքր աղբիւր է լինում, յետոյ միանալով ուրիշ աղբիւրների հետ մեծանում է և գետ է դառնում։ Գետերը գնում են թափւում ծովերի մէջը։ Ծովի ջուրը չեն խմում, որովհետև դառն է լինում և աղի. ամէնից համեղ և առողջարար ջուրը աղբիւրի կամ գետի ջուրն է։ Եթէ գետինը խոր փորում ենք՝ ջուր է դուրս գալի, և այդպիսի ջուրը կոչւում է ջրհորի ջուր, իսկ փորած գետինը կոչւում է ջրհոր։ Շատ տեղ ջրհորի ջուր են խմում։

Մեր հագուստը կարում են մահուդից, կտաւից, չթից, ապրեշումէ գործուածքից, քաթանից, մորթուց և կաշուից։

Մահուդը գործում են թելից։ Մահուդի թելը մանում են բրդից, իսկ բուրդը խուզում են ոչխարից կամ ուրիշ անասուններից։

Կտաւը և չիթը գործում են նոյնպէս թելից. կտաւի թելը մանում են բամբակից, իսկ բամբակը բուսնում է տաք դաշտերումը մանր թփերի վերայ։

Ապրեշումէ գործուածները շինում են ապրեշումի թելից, իսկ ապրեշումը շինում է չերամը (ապրեշումի որդը)։ Քաթանը շինում են վշէ թելից. վուշը բուսնում է դաշտումը.

Կաշին շինում են կովի, եզան, ձիու, ոչխարի, այծի մորթուց։ Կաշուից կարում են կօշիկ, մաշիկ, տրեխ և այլն. Մուշտակը (քուրքը) կարում են ոչխարի, արջի, գայլի, աղուէսի կամ ուրիշ գազանների մորթուց, իսկ գդակը կարում են գառան մորթուց.

Մեր շորերը կարում է մեր մայրը կամ դերձակը. Նա յառաջ վեր է առնում մեր չափը, այսինքն մեր բարձրութիւնը, հաստութիւնը, ձեռների և ոտների երկայնութիւնը

և այլն. յետոյ մահուդից, չթից կամ մի ուրիշ բանից ձև-ումէ և կտրատում առանձին առանձին շորի ամէն մի մասը, զորօրինակ փեշերքը, թևքերը, մէջքը և այլն, և այս կտոր-ները իրար հետ կարումէ:

Ո՞րն է մեր գլխաւոր կերակուրը եւ ըմպելիքը: Հացը ընչից են շի-նում եւ ինչպէս են շինում: Ջուրը ինչ տեղից է գալի եւ ո՞րն է լաւ ջուրը: Մեր հագուստը ընչից ենք կարում: Մահուդը, կտաւը, չիթը եւ քաթանը ընչից են գործում: Իսկ ապրեշումէ գործուածները: Կաշին ընչից են շինում: Կաշուից եւ մորթուց ինչ հագուստներ ենք կարում: Մեր շորերը ո՞վ է կարում, եւ ինչպէս է կարում: — Կրկնեցէք բոլոր պատմութիւնը եւ գրեցէք:

Ասացէք այս բառերի նշանակութիւնը. «ըմպելիք, շաղախել, հաճար, հերկել, երկրագործ, բղխել, շերամ, կօշիկ, մուշտակ:»

Ի՞նչպէս են շինուել այս բառերը. «ջրհոր, ջրաղաց, երկրագործ, առողջարար»: Ի՞նչ զանազանութիւն կայ «մորթի» եւ «կաշի»:

X ԵՐԳ ԱՇԽԱՏԱՍԻՐԻ

Ե՜յ, բարեկամք, շուտ արէք,
Պայծառ արև ծագեցաւ.
Սիրով գործի ձեռք տուէք,
Մ՚ինչ ժամանակը չանցաւ:

Աղօթք արա, աշխատէ,
Ծուլութիւնը հեռու քշէ.
Անկարօտ կեանք կանցնես,
Եւ լաւ հունձ կըժողովես:

Թէ բարիք տեսնել կուզես,
Պէտք է ջանաս անդադար.
Ամէն բան ինքդ անես,
Նեղութիւն այլոց մի՛ տար:

Ով սէր ունի գործելոյ,

Նա բնաւ չունի հոգ, վնաս.
Նորա տանից Աստուծոյ
Օրհնութիւնն է անպակաս:

Ո՞վ չունի ամենեւին հոգս ու վնաս, եւ ում տանիցն է Աստուծոյ օրհնութիւնը անպակաս:

ՁՄԵՌՆ

«Մտածէ՛, ո՛րդեակ», ասաց մայրը իւր փոքրիկ Ներու-անդին, երբոր ձմեռն եկաւ, «մտածէ՛, թէ ո՛րչափ խեղճ կլի-նէիր, եթէ այս խոր ձմերուան մէջ քեզ տաքացնելու հա-մար ոչ հագուստ ունենայիր, ոչ փայտ, ոչ ածուխ և ոչ ան-կողին: Ցերեկը տաքանալու համար ամեն հարկաւոր բան ունիս. գիշերն ևս պատուական անկողին և վերմակներ (ծած-կոց) Ո՛րչափ պարտական ես Աստուծոյ գոհութիւն մատուցա-նելու, երբոր մտածես որ հազարաւոր բիւրաւոր խեղճներ ոչ կրակ ունին տաքանալու, ոչ անկողին պառկելու, վրայի հա-գուստները ևս, եթէ տեսնես, մաշուած, պատռուած, որով չկարողանալով պաշտպանուիլ ցրտից՝ սաստիկ մրսումեն, դող-դողումեն. և մի տաք կերակուր էլ չունին, որ ուտեն ու մի փոքր տաքանան: Ո՛րչափ երջանիկ կլինէին նոքա, թէ որ քո հագուստներից կէսը, քառորդն ունենային, քո կերած կե-րակուրներից մէկն ուտէին: Ուրեմն մի՛ դադարիր, ո՛րդեակ, գոհութիւն մատուցանելու Աստուծոյ, որ մեր հայրն է և որ այսպէս ողորմած է քեզ վերայ:

Ի՞նչ ասաց մայրը իւր փոքրիկ Ներուանդին, երբոր ձմեռն եկաւ: Դուք էլ զգումէք ձեր բարեբաղդ դրութիւնը, թէ ոչ:—Կրկնեցէք բոլոր պատմութիւնը եւ գրեցէք:

Ասացէք այս բառերի նշանակութիւնը. ածուխ, անկողին, վերմակ, բիւրաւոր, պաշտպանուիլ, քառորդ:

ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ՀԱՅՐՆ Է

Ո՛վ Տէր Աստուած, կը զիջանի՞ս,
Եւ իբրև Հայր զիս կընդունի՞ս
Քեզի որդեակ տկար՝ տգէտ,
Դու, որ մեծ ես և՛ ամենագէտ։

Իբրև իմ Հայրս կարե՞ս լսել,
Ու աղօթքիս պատասխանել.
Քանզի չնչին տղայ մի եմ,
Ու ամէն օր կը մեղանչեմ։

Դուն Հայրս ես, ինձի օգնէ,
Ու հեզ խոնարհ մի սիրտ շնորհէ,
Որ միշտ ջանամ պարտքս անել,
Խօսքով, գործով քեզ ծառայել։

Պատմեցէք այս աղօթքի միտքը ձեր խօսքերով:
Ասացէք այս բառերի նշանակութիւնը. զիջանիլ, ընդունիլ, ամենագէտ, չնչին, մեղանչել, ջանալ:

ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ՋՐՕՐՀՆԷՔԸ

(Մանկական կեանքից:)

Ես փոքր երեխայ էի, բայց միշտ հօրս կամ մօրս հետ գնումէի եկեղեցի, և նոքա ինձ ամէն բան հասկացնումէին։ «Այսօր բարեկենդան է», ասաց մի երեկոյ հայրս, «էգուց ծննդեան պահքն է»։ Որքան ուրախացայ ես, երբ իմացայ որ ծնունդը մօտացել է։ Բոլոր շաբաթը ես ուրախութեամբ պահք պահեցի, և երբ եկաւ ծննդեան օրը՝ հագայ նոր շորերս և գնացի հօրս հետ եկեղեցի։ Ինչպէս լաւ լուսա-

ւորած էր այն երեկոյ եկեղեցին, և ի՛նչքան մարդիկ կային, էլ տեղ չկար կանգնելու. եթէ վերևիցը ասեղ էիր վայր ձգել՝ գետինը չէր ընկնիլ: Շատ գրքեր կարդացին ու շատ աղօթքներ, յետոյ ինձ պէս մի փոքր երեխայ բարձրացաւ սեղանի վերայ և կարդաց բարձր ձայնով մէկ երկար գիրք: Հայրս ասաց, «այս Դանիէլի գիրքն է»: Ի՛նչքան ցանկանումէի ես էլ նորա պէս կարդալ իմանալ:

Ժամից յետոյ եկանք տուն, և այն երեկոյ եկան տիրացուները ժամաշապիկներով և մոմերով մեր տունը ու երգեցին: Հայրս ասաց, «այս Քրիստոսի ծննդեան երգն է և կոչւումէ Խորհուրդ մեծ»:

Միւս օրը վաղ վերկացանք և գնացինք ժամ. ժամից յետոյ մեծ հաղէսով, խաչով, խաչվառով և մոմերով գնացինք գետը ջուրը օրհնելու: Գետի վերայ շինած էր քահանայից համար կանգնելու և խաչը ջուրը ձգելու տեղ: Այնտեղ քահանայքը շատ աղօթքներ կարդացին և երգեցին: Վերջը խաչը ջուրը ձգեցին և ջուրը օրհնեցին: Բոլոր բազմութիւնը վրայ ընկաւ օրհնած ջուրը խմելու և ամաններով տուն տանելու: Ես էլ մի փոքր ամանով օրհնած ջրիցը բերի տուն և նորանով մեր սենեակները և մեր ամանները սրսկեցինք: Հայրս ինձ պատմեց, որ ջրօրհնէքը Քրիստոսի մկրտութեան օրինակն է: Մի փոքր ժամանակից յետոյ քահանայն էլ եկաւ և մեր տունը օրհնեց: Այն օրը ես բոլոր ժամանակը ուրախութեամբ անցկացրի:

Պատմեցէք տեսնեմ այսպէս էք դուք էլ անցկացրել Ծնունդը եւ Ջրօրհնէքը թէ ոչ: Ծնունդը ու Ջրօրհնէքը ամառն է լինում, թէ ձմեռը: Ո՞ր ամսին եւ ամսի քանիսին է լինում միշտ:—Կրկնեցէք այս բոլոր պատմութիւնը եւ գրեցէք:

Ի՞նչպէս են շինուել այս բառերը. ջրօրհնէք, ժամաշապիկ, բարեկենդան կամ բարեկենդանութիւն, էգուց (այգուց):

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՂՕԹՔ

Ամենասուրբ Երրորդութիւն, մի Աստուած յերիս անձինս, հաւատում եմ որ այստեղ ներկայ ես. ամենայն խոնարհութեամբ պաշտում եմ քեզ, բոլոր սրտով փառաւորում եմ, և բիւր շնորհակալութիւն եմ մատուցանում քեզ, որ այս գիշերս անվտանգ և խաղաղութեամբ անցկացրիր և արժանացայ տեսնելու այս օրս։

Ողորմած և մարդասէր Տէր իմ Յիսուս, չնաշխարհիկ օրինակ կատարելութեան, ամենայն ջանք պիտի անեմ քեզ նմանելու, և պիտի լինիմ քեզ պէս քաղցր, խոնարհ, հլու, հնազանդ, առաքինի, աշխատասէր, բարի, ողորմած և գթած և մանաւանդ պիտի ջանամ մեղք չգործել և իմ պակասութիւններս ուղղել։

Տո՛ւր, ուրեմն, ինձ՝ քո սուրբ շնորհդ, Աստուած իմ Յիսուս, և զօրացրու ինձ ընդդէմ ամենայն փորձութեանց չարին, որ չխաբուիմ նորանից և մեղք չգործեմ և քեզ չբարկացնեմ, և ամենայն սրբութեամբ և երկիւղածութեամբ անցկացնեմ այս օրս՝ բարի օրինակ լինելով եղբարցս և ընկերացս, հնազանդելով ծնողացս և վարժապետացս։

Սովորեցէք այս աղօթքը բերան եւ ամենայն առաւօտ աղօթք անելիս ասացէք: Ասացէք այս բառերի նշանակութիւնը. «անվտանգ, չնաշխարհիկ, հլու, առաքինի, գթած, երկիւղածութիւն»:

ՆԱՄԱԿՆԵՐ ՓՈՔՐԻԿ ԱՐԱՄԻ ՎԵՐԱՅ

Նամակ երկրորդ:

Իմ սիրելի Արամ։

Այս նամակը քեզ կ'հասնէ քո ծննդեան օրը, երբ որ դու ութ տարեկան կ'լինիս։

Ամեն տարի, քանի որ դու կ'մեծանաս, այնքան աւելի լաւ և խելօք կ'լինիս: Դու գիտես, որ այս քո ութ տարուան կեանքի մէջ շատ բան ես սովորել. դու ոչ թէ մենակ խօսել և վազել ես սովորել, այլ և Աստծուն աղօթք անել առաւօտները և երեկոյները, և անգիր էլ շատ տաղեր և ոտանաւորներ գիտես. բացի այս սովորել ես դու կապելով կարդալ ու գրել. և երբ որ դու մի փոքր էլ կ'մեծանաս, աւելի շատ բաներ կ'սովորես:

Բայց մէկ բան կայ, որ դու պէտք է սովորես, որն որ ուրիշ բաներից աւելի է հարկաւոր. որովհետև առանց նորան ոչինչ բարի գործ չես կարող անել: Ես կամենում քեզ ասել մեր բարերար Արարչի և նորա պատուիրանքների մասին:

Դու պէտք է սովորես սիրել Աստուած և պահպանել նորա պատուիրանքները. այս է ճանապարհը բարի և բախտաւոր լինելու համար: Ի՞նչպէս կարող ես դու սովորել Աստուծոյ պատուիրանքները և ո՞վ կ'օգնէ քեզ, որ դու բարի լինիս: Սորա համար կայ մի սուրբ գիրք, որ Աստուած մեր սովորելու համար գրել է տուել, և այս գիրքը կ'ուսուցանէ քեզ, թէ ի՞նչ են Աստուծոյ պատուիրանքները: Այս սուրբ գիրքը, որ Աստուծոյ շնչովն է գրուած, բոլոր գըրքերից լաւ է. ուրիշ գրքերը լաւ են և կարող են մեզ ուսուցանել շատ բան. բայց Աստուածաշունչը ամենից լաւ է, որովհետև նա մեզ ուսուցանումէ երկնքի ճանապարհը:

Ամեն բարի ազգ սիրում է այս սուրբ գիրքը. մեծ թագաւորները ուրախ էին նորա կարդալով, և սուրբ մարդիքը աւելի լաւ էին համարում մեռնիլ, քան թէ սուրբ գիրքը ուրանալ: Սա խօսում է Աստուծոյ վերայ, որ ստեղծել է երկիրս, արեգակը և աստղերը. սա խօսում է մեզ հետ լուսափայլ, թևաւոր և փառաւոր հրեշտակներու վերայ, որք

իւրեանց տաւիղներով գովում են և փառաբանում Աստծուն՝ նորա աթոռի բոլորի շուրջը կանգնած. բայց սորանից աւելի լաւը այն է, որ նա մեզ հետ խօսում է մեր բարերար Փըրկչի վերայ, որ եթող իւր ամեն փառքը և եկաւ խաչի վերայ մեռնելու, որ մեր հոգիներն դժոխքից ազատէ:

’Ի հարկէ իմ փոքրիկ Արամը կ'պատուէ և կ'սիրէ Աստուածաշունչ սուրբ գիրքը, որ ես այս յուսով ուղարկում եմ քեզ այս նամակի հետ՝ քո ծննդեան օրը յիշատակելու համար, և ցանկանում եմ, որ ամեն օր կարդաս, որ դու կարողանաս իմանալ Աստուծոյ սուրբ կամքը և պատուիրանքները:

Բայց դու միայն մէկ խեղճ մեղաւոր երեխայ ես, և ունիս շատ չար մտքեր և ցանկութիւններ. և դու չ'ես կարող դառնալ բարի: Արդեօք ո՞վ կ'օգնէ քեզ բարի լինիլ: Դու պէտք է դիմես մեր բարերար Փրկչին, որ քո աւելի լաւ բարեկամն է: Նա սիրում է փոքր երեխանց, նա լինում է ցաւակից ձեր թուլութիւններին, և պատրաստ է լսել ձեր աղօթքը. նա կ'օգնէ քեզ բարի լինել:

Բոլոր գրքերիցը ո՞րն է ամենալաւը: Ինչո՞ւ համար:

ԵՐԱԶ

Ես լսեցի մի անուշ ձայն,—
Իմ ծերացած մօր մօտ էր:
Փայլեց նշոյլ ուրախութեան,
Բայց ափսո՜ս, որ երազ էր:
Արկաչահոս աղբիւր այն տեղ
Թաւալումէր մարգարիտ.—
Նա յստակ էր որպէս բիւրեղ,

Այն երա՜զ էր ցնորամիտ։
Եւ տխրագին երգն մայրենի
Յիշեց մանկութեանս օրեր.
Մօրըս համբոյրն ես զգացի.—
Ա՜խ ափսո՜ս, որ երազ էր։
Կուրծքին սեղմեց կարօտագին,
Աչքերս սրբեց—շատ թաց էր,—
Բայց արտասուք գնո՜ւմ էին.
Ա՜խ, այդ ինչո՞ւ երազ էր։

ՄԵԾ ՊԱՀՔԸ ԵՒ ԶԱՏԻԿԸ

(Մանկական կեանքից։)

Մեծ պահքը ես բոլորը պահեցի և համարեցի որ ընդամէնը եօթն շաբաթ է։ Լուսաւորչի շաբաթին հաղորդուեցայ հօրս հետ միասին, և այն օրը տօն պահեցինք։ Հայրս ինձ պատմեց մեր Գրիգոր Լուսաւորչի կեանքը և չարչարանքը։ Ի՛նչպէս վատ և անաստուած մարդիկ են եղել առաջուայ թագաւորները, որ քրիստոնէական հաւատի համար այնպիսի սարսափելի տանջանքներ են տուել մարդկանց։

Լուսաւորչի շաբաթից յետոյ Ծաղկազարդի կիրակին էր. շատ երեխայք կային այն օրը ժամում մոմերը և ուռի ծառի ճիւղերը ձեռներին բռնած, որին որ տէրտէրը օրհնել էր և բաժանել նոցա։ Ես իմ ուռին բերի տուն և պատկերի առաջին դրի. մինչև այժմ էլ այնտեղ է՝ չորացած։ Հայրս ինձ պատմեց թէ այս տօնը Քրիստոսի Երուսաղէմ մտնելու օրինակն է, և կոչւում է Ծ ա ղ կ ա զ ա ր դ այն պատճառաւ, որ Քրիստոսի Երուսաղէմ մտնելու ժամանակը հետը

գնացող ժողովուրդը ծառերի ճիւղերը կտրատելով նորա ճանապարհի վերայ տարածում էին 'ի պատիւ։

Վերջի շաբաթին հայրս ամէն օր ինձ ժամ էր տանում և ասումէր թէ այս շաբաթը Քրիստոսի չարչարանաց շաբաթն է։ Աւագ հինգ շաբթի օրը ճաշին շատ երկար ժամ էր, և շատ մարդիկ հաղորդուեցան. իսկ երեկոյեան՝ ոտնալուայի կարգը կատարեցին և ժողովրդեանը օրհնած իւղ բաժանեցին։ Ուրբաթ գիշերը Քրիստոսի սուգն էր, բայց հայրս ինձ չտարաւ ժամ, ասելով թէ փոքր ես, չես կարող երկար մնալ անքուն և կանգնիլ ժամումը։

Շաբաթ օրը մայրս կարմիր ձու ներկեց, և երեկոյեան ժամ գնալիս մէկը ինձ տուեց. դրի գրպանս, հագայ նոր շորերս և հօրս հետ գնացի ժամ։

Այս երեկոյ էլ եկեղեցին այնպէս լաւ լուսաւորած էր, ինչպէս և ծննդեան գիշերը և շատ մարդիկ կային ժամումը։ Ժամից յետոյ կճպեցի գրպանիս ձուն և կերայ։ Երբոր եկանք տուն միմեանց շնորհաւորեցինք Քրիստոսի յարութիւնը և նստեցինք իրիկնահացի։ Այս երեկոյ էլ, ինչպէս և ծննդեան երեկոյին, մենք միս չկերանք, որովհետև նաւակատիք էր։ Հայրս ինձ ասաց որ մենք տարին ունինք հինգ նաւակատիք, որք լինումեն ծննդեանը, զատկին, վարդավառին, Աստուածածնայ տօնին, և սուրբ խաչին։

Միւս օրը վաղ վերկացանք, և փոքր եղբօրս էլ որ երկու տարեկան էր տարանք ժամ. պատարագից յետոյ տէրտէրը հաղորդեց նորան և եկանք տուն։ Այս օրը ամենեքեան թէ մեծ և թէ փոքր, թէ հարուստ և թէ աղքատ ուրախ էին և լաւ հագնուած։ Միւս օրը, որ էր երկուշաբթի, հայրս ինձ տարաւ գերեզմանատուն և ասաց. «այսօր մեռելոց է, պէտք է քո պապի, տատի և քրոջ գերեզմանները օրհնել տանք»։ Քահանայն եկաւ և օրհնեց։ Ինչպէս հնա-

ցել էր նոցա գերեզմանները. բոլորը ծածկուել էր կանաչ խոտով և ծաղիկներով։

Դուք էլ այսպէս անցկացրիք ձեր մեծ պահքը եւ զատիկը, թէ ոչ, Զատիկը երբ է լինում, գարունքը, թէ աշունքը։—Կրկնեցէք բոլոր այս պատմութիւնը եւ գրեցէք։

Ի՞նչպէս են շինուած այս բառերը. «ծաղկազարդ, ոտնալուայ։»

ՏԱՐԱԲԱԽՏ ՀԱՅ ՄԱՆՈՒԿԸ

Անօթի ծարաւ, գլուխը քաշ գձած,
Իւր ծնողներից վաղուց որբացած,
Հօր տանից տեղից արդէն հեռացած,
Շրջումէր մանուկն մտքով մոլորուած։

Շրջում էր բոկոտն, շորերը պատռտած,
Աղի արցունքով աչքերը լցուած.
Ի՛նչպէս անզգայ սիրտ պէտք է լինէր,
Որ այս թշուառին տեսնէր, չցաւէր։

Իւր բնիկ երկրից, ծնողներից զրկուած,
Օտար աշխարհում գերի մատնուած,
Անգութ մարդերից հալածուած, տանջուած.
Խեղճ մանկանն այս էր ճակատին գրուած։

Շատ տեղ նա եկաւ, շատերին խնդրեց,
Իւր սրտի ցաւերն շատերին պատմեց,
Բայց նորա խնդիրն 'իզուր անցկացաւ,
Սրտի զգացմունքն ոչ ոք չիմացաւ։

Ասացէք այս բառերի միտքը, «բոկոտն, արցունք, անզգայ, թշուառ, բնիկ, անգութ, զգացմունք։»— Ի՞նչ կնշանակէ «աղի արցունք»։ Իսկ «դառն արտասունք» ի՞նչ կնշանակէ։ Ի՞նչ կնշանակէ «բնիկ երկիր»։ Ո՞րն է ձեր բնիկ երկիրը կամ հայրենիքը։

ԺԱՄԱՍԷՐ ԵՐԵԽԱՅ

Որդին։ Հա՛յր իմ, ի՛նչպէս սիրումեմ ես քեզ հետ միշտ եկեղեցի գնալ, մոմ վառել և ծունր դնել. բայց, սիրելի հայր, ասա՛ ինձ աղաչեմ, այս որ մարդիկ եկեղեցի են գնում և ծունր են դնում, ի՞նչ է նոցա միտքը։

Հայրը։ Որդեակ իմ. ես կամ մայրդ երբոր քեզ մէկ բան ենք բաշխում, կամ քո համար նոր շոր ենք կարում, դու քո մէջը մէկ ուրախութիւն չե՞ս զգում, քո մէջը չէ՞ զարթնում մէկ սէր, մէկ երախտագիտութիւն առ քո ծնողս, ու չե՞ս գալի քո սրտի ուրախութիւնը մեզ յայտնում։

Որդին։ Այո՛, հայր. այդ ժամանակը սիրտս մի ուրախութիւն է զգում, և ինձ դրդումէ, թէ գնա՛ հօրդ ձեռքը համբուրէ, շնորհակալութիւն արա նորան, որ նա քեզ համար այսպէս հոգս է անում, քեզ այսպէս սիրումէ։

Հայրը։ Այնպէս էլ և մենք, որդեակ, և բոլոր մարդիկը զգումենք այն բարերարութիւնները, որ մեր ամենիս Հայրը՝ մեր Ստեղծողը անխնայ առատ ձեռքով մեր վերայ սփռել է և սփռումէ։ Տեսնո՞ւմես ի՛նչպէս գեղեցիկ է արեգական լոյսը, ո՛րքան քաղցր են ծառերի պտուղները, ի՛նչպէս գեղեցիկ են և անուշահոտ ծաղիկները։ Այս բոլորը մեր համար է. մեր համար է ստեղծել մեր բարի Հայրը՝ մեր Աստուածը, և մենք ենք վայելում այս բոլորը։ Ապա ուրեմն մենք չպէ՞տք է սիրենք մեզ կերակրողին և մեզ պահպանողին, չպէ՞տք է շնորհակալութիւն անենք նորան, որ մեր վերայ այսչափ խնամք, սէր և ողորմութիւն ունի։

Եւ ահա այս է պատճառը, որդեակ, որ մենք գնումենք մեր Հօր Աստուծոյ տունը՝ եկեղեցին, որ նորան շնորհակալութիւն և գոհութիւն մատուցանենք, և խնդրենք որ

իւր շնորհը և խնամքը մեզանից անպակաս անէ, մեր սիրտը մաքուր պահէ ամենայն չարութենէ, որ միայն բարի մտածենք, և բարի գործով արժանանանք մեր ամենաբարի Հօր Աստուծոյ որդի կոչել և նորա արքայութեան ժառանգ։

Ծունր դնելովը կամենումենք ցոյց տալ, որ մենք մեր Արարչի ոտի հողն ենք, նորա ծառայքն ենք. ինչպէս նորա սուրբ կամքն է, պատրաստ ենք այնպէս կատարելու. նորա ոտքն ենք ընկնում, որ մեր պակասութեան, սխալանաց և յանցանաց համար մեր վերայ չբարկանայ, մեզ ներէ և ողորմած լինի մեզ։

Եւ որովհետև շատ մարդիկ ոչ կարդալ գիտեն և ոչ աղօթքներ, որ բերան ասեն, վասն որոյ քահանայքը և միւս հոգևորականները նոցա բերանից և նոցա փոխանակ Աստծուն փառաբանութիւն են տալիս։ Բայց լաւ կլինէր, որ մենք ամէնքս էլ հասկանայինք, ինչ որ նոքա ասումեն. այն ժամանակը մենք աւելի ջերմեռանդ սրտով կաղօթէինք։

Ի՞նչ է պատճառը, որ մենք եկեղեցի ենք գնում, ծունր ենք դնում եւ աղօթք ենք անում Աստծուն:

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔ

Երկրպագանեմ քեզ, Աստուած իմ և Տէր, և բիւր շնորհակալութիւն մատուցանեմ, որ ինձ ողջ առողջ հասուցիր այս երեկոյիս։ Ով Աստուած իմ, այսօր և բոլոր կենացս մէջ արած մեղքերուս մեղա՛յ գոչելով թողութիւն եմ խնդրում. ներէ՛ ինձ իմ մեղքերս, և իմ պահապան հրեշտակը ուղարկէ, որ թէ՛ այս գիշեր, և թէ բոլոր կենացս մէջ ինձ մօտ մնալով զգուշացնէ և հեռացնէ ինձ այն ամէն բաները, որ անհաճոյ են քեզ. որովհետև իմ միակ ջանքս ու

բաղձանքս է և միշտ պիտի լինի այն, որ ես ամենայն ժամ քո սուրբ կամքդ ու հաճոյքդ կատարեմ:

Ասացէք այս բառերի նշանակութիւնը, բիւր, գոչել, անհաճոյ, բաղձանք, հաճոյք:

Սովորեցէք այս աղօթքը բերան եւ ամենայն երեկոյ աղօթք անելիս ասացէք:

ԵԿԵՂԵՑԻ

Երբոր մէկ քաղաք ես մտնում կամ մէկ գիւղ, ամէն բանից առաջ ի՞նչ ես տեսնում:—Եկեղեցին:—Եկեղեցին ամէն տներից բարձր է շինած, այնպէս որ նորա զանգակատունը շատ հեռուից կարողես տեսնել: Եկեղեցին միւս տներիցը մեծ է, և նոցանից հեռու է շինած. նա միւս տների նման չէ: Ոչ մէկ տուն չէ մտնում գիւղի բոլոր ժողովուրդը, բայց եկեղեցումն ամէն մարդ տեղ ունի՝ մեծն էլ, փոքրն էլ, հարուստն էլ, աղքատն ել, հիւանդն էլ և առողջն էլ: Բոլորն էլ հաւասար են Աստուծոյ առաջին:

Քեզ երեխայ ժամանակդ եկեղեցումն են մկրտել, եկեղեցումը կպսակեն քեզ, երբոր մեծանաս: Երբոր մեռնիս, նմանապէս եկեղեցին կտանեն քեզ, և եկեղեցու մօտ կթաղեն: Եկեղեցու մօտ են լինում թաղած նմանապէս քո հայրը, մայրը և պապերդ:

Ուրեմն եկեղեցին և հասարակ տները միևնոյն չեն: Հասարակ տանը դու կարող ես բարեկամ էլ ունենալ, թշնամի էլ: Բայց եկեղեցումը, Աստուծոյ տանը, թշնամիքդ էլ հանումեն իւրեանց սրտի ոխը և ատելութիւնը, մոռանումեն չարութիւնը և բարեկամանումեն քեզ հետ:

Եկեղեցին ընչով է զանազանւում միւս տներից: Ասացէք ո՞րն է եկեղեցւոյ բեմը, խաչկալը, աւազանը, խորանը, գմբէթը: Կրկնեցէք բոլոր պատմութիւնը եւ գրեցէք:

ԵՐԳ ՔՐԻՍՏՈՆԵԱՑ ՄԱՆԿԱՆՑ

Աստուած իմ, Տէր իմ, մատաղ օրերս
Քեզ կը վայելէ որ մատուցանեմ.
Փառաբանութեամբ սկսեմ կեանքս
Փառաբանութեամբ զայն վերջացնեմ:

Կը խոստովանիմ՝ քու մեծ շնորհքդ է
Որ քրիստոնէից մէջը ծըներ եմ.
Ուր ողորմութեան գետը կը բղխէ
Անհուն փրկութեան ձայնը կը լսեմ:

Ո՛րչափ կը խղճամ կռապաշտները,
Որ տգիտութեան խաւարի մէջ են.
Ոչ արքայութեան ցանկալի փառքը
Եւ ոչ դժոխքի տանջանքը գիտեն:

Քոյին փառաւոր խոստմունքներդ՝ Տէր,
Յոյս ու սէրս սաստիկ կը վառեն.
Քո Սուրբ Գրքերուդ երկնային խօսքեր
Առ քեզ մերձենալ զիս կը յորդորեն:

Ասացէք այս բառերի նշանակութիւնը. ոխ, մատաղ, անհուն, բղխել, մերձենալ:

Ի՞նչպէս են շինուած այս բառերը. կռապաշտ, փառաբանութիւն, բարեկամ:

ՆԱՄԱԿՆԵՐ ՓՈՔՐԻԿ ԱՐԱՄԻ ՎԵՐԱՅ

Նամակ երրորդ:

Իմ սիրելի Արամ:

Իմ առաջի նամակումը աշխատեցի մեկնել քեզ, որ քո ամենալաւ բարեկամը մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսն է:

Այժմ ես նորա վերայ աւելի եմ ուզում խօսել քեզ հետ, որ դու իմանաս, թէ ինչքան նա բարի է և բարերար, որ դու նորան քո բոլոր սրտով սիրես։

Աշխարհի ստեղծելուց առաջ, Յիսուսը կենում էր իր հօր հետ փառքի մէջ, հրեշտակներու և ամեն երկնային արարածներու հետ. ‘‘Սկզբում Նա Աստուծոյ հետ էր և Նա էր Աստուած. ամեն բանը նորանով ստեղծուեցաւ և առանց նորան ոչինչ չ'է ստեղծուած,, Զարմանալի չ'էր, որ այն ժամանակ նա եթող իւր մեծ կարողութիւնը և փառքը աշխարհ գալու և մարդկանց հետ կենալու համար, և այն էլ ո՛չ թէ հարուստներու և մեծատուններու, այլ խոնարհներու և աղքատներու հետ։ Ես կ'ասեմ քեզ ինչու համար մեր Փրկիչը երկնքիցը եկաւ մարդկանց հետ բնակուելու և վերջապէս խաչի վերայ մեռնելու։

Դու կարդացել ես քո սուրբ գրքի մէջ, որ երբ Աստուած ստեղծեց Ադամին և Եւային, բնակեցրուց նոցա մէկ գեղեցիկ այգու մէջ, ուր նոքա շատ բախտաւոր էին, մինչև որ սատանէն եկաւ և նոցա մեղանչել տուաւ։ Նոքա այն ժամանակը մեղք արին, երբ որ կերան ծառի պտուղը, որ այգու մէջ դուրս էր եկել և որ Աստուած Ադամին արգելել էր ուտելու։ Երբ որ Ադամ և Եւայ մեղք արին, նոքա էլ բախտաւոր չ'էին. Աստուած նոցա վերայ բարկացաւ և այգիցը դուրս արաւ և չէր կարող համբերել, որ նոքա այլ ևս այնտեղ կենային, որովհետև իւր պատուիրանը չպահպանեցին. և այս պատճառաւ նոցա հոգիները պէտք է գնային դժոխքը, այն զարհուրելի տեղը, որ պատրաստած է սատանայի և նորա չար հրեշտակաց համար, որտեղ որ նոքա յաւիտեան ողորմելի վիճակի մէջ պէտք է լինէին։ Բայց Յիսուս խղճալով նոցա վերայ, ուզեց կրել այն չարչարանքները, որոց նոքա արժանացան. նա կամեցաւ նոցա համար մեռնել, որ նոքա դժոխ-

քից ազատուին։ Այժմ դու տեսնում ես պատճառը թէ ի՞նչու համար նա եթող երկնային աթոռը և եկաւ խաչի վերայ մեռնելու. այս էր նորա մեծ սէրը խեղճ մեղաւորների համար, որ նա կարողանար ազատել նոցա հոգիները դժոխքից։

Ադամ և Եւայ մեռած են և թաղած շատ հազար տարի առաջ. բայց մի՞ թէ նոցանից յետոյ ո՛չ ոք մեղք չէ արել, և աշխարհիս վերայ միայն նոքա էին մեղաւորներ։ Աա՛յ, դու կ՚ասես, որ այժմ շատ մարդիք կան, որք մեղք են անում. և կարելի է, որ դու կարծես շատ փոքր երեխանց վերայ, որոց դու ճանաչում ես, որ ուշադրութիւն չեն անում սուտ խօսելիս, կամ վատ խօսքեր գործածելիս։

Բայց ես չեմ ուզում, որ դու մտածես միմիայն քո ընկերներու վերայ, այլ կամենում եմ որ դու մտածես նախ քեզ վերայ, և ապա նոցա։ Ո՛հ, փոքր Արամ, մի՞ թէ քո սիրտը ոչինչ բան չէ զգում, թէ դու մեղաւոր ես, և թէ դու շատ անգամ չարութիւն ես արել և արժանի ես, որ Աստուած քո վերայ բարկանայ։ Այս մի ցաւալի ճշմարտութիւն է։ Բայց Յիսուս մեռաւ, որ ազատէ մեղաւորներուն և նմանապէս փոքր երեխանցն, ինչպէս դու։ Ուրեմն թէ դու զղջում և ցաւում ես քո մեղքերու համար, Աստուած թողութիւն կ՚տայ քեզ՝ իւր որդու սիրոյ համար։

Դու ունիս չար սիրտ, որ սիրում է մեղք անել. և չարութիւնը շատ անգամ միտք ունի, որ մտնէ քո սրտի մէջ և խաբէ քեզ, որ դու չար լինիս։ Բայց մեր Փրկիչ Յիսուսը կ՚փոխէ այդ չար սիրտը, թէ որ նորան կ՚խնդրես։ Նա կ՚ուղարկէ իւր սուրբ հոգին, որ նորոգէ քո սիրտը, և առաջնորդէ առ բարին. և նա կ՚ջնջէ քո ամեն մեղքերը և քո անունը կ՚գրէ կենաց գրի մէջ։

Ո՛Հ, ընտրէ նորան քեզ բարեկամ և փրկիչ, որ դու յաւիտեան բախտաւոր լինիս։

Ի՞նչու համար Քրիստոս խաչուեցաւ եւ մեռաւ:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ԵՒ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

(Մանկական կեանքից:)

Զատկից յետոյ մինչև համբարձումը՝ քառասուն օր, բոլորը ուտիք էր. չորեքշաբթի և ուրբաթ էլ պահք չէինք պահում։ Համբարձմանը բոլոր ծառերը կանաչել էին և դաշտերը ծաղիկներով լցուել։ Շուշանը ծաղկել էր և վարդը բացուել։ Գառները թռչոտում էին ծաղիկների վերայ, իսկ թռչունները ծառերի և թփերի մէջ քաղցր երգում։ Կանաչ արտերը բաւականի բարձրացել էին, և արտուտիկը անոյշ երգում էր նոցա մէջ։ Օդը գեղեցիկ բուրում էր և արեգակը պայծառ ծագել էր պարզ երկնքումը։ Հայրս ասաց որ համբարձումը միշտ հինգշաբթի օր է լինում և գարունքին, և այս տօնը Քրիստոսի երկինքը վերանալու կամ համբառնալու յիշատակն է։

Առաւօտը գնացինք ժամ, իսկ ժամից յետոյ քոյրս ինձ տարաւ վիճակ հանելու դաշտը, ուր հաւաքուել էին շատ հարսներ ու աղջկերք։ Արդէն մի շաբաթ էր, որ նոքա պատրաստում էին, վիճակ ձգելու։ Սարերից և դաշտերից շատ ծաղիկներ էին քաղել, և ամէն մարդից մի մի բան էին առել վիճակ ձգելու, մէկից մատանի, մէկից ականջի օղ, միւսից ոսկէ կոճակ և այլն։ Բոլորը ժողովել էին մի մեծ ամանի մէջ, և այն տեղ ածել էին ջուր և ցանել շատ ծաղիկներ և բերանը ծածկել մի մեծ ծածկոցով, և դրել էին այն գիշերը վարդի թփի տակ։ Նոցա միջի փոքրը ես էի. ինձ նստա-

ցրին ամանի մօտ, որ հանեմ վիճակը։ Ամեն մի վիճակ հանելիս մի մի երգ էին ասում։ Շատ երգեր ասացին, բոլորը միտս չէ, միայն մի քանիսն է մնացել մտքիս և ահա սոքա են։

Իմ ախպէրս ծառի տակին, ջան գիւլում՝ ջան ջան,
Սաղմոսը կռան տակին, ջան ծաղիկ՝ ջան ջան.
Սաղմոսը անգիր է արել, ջան գիւլում՝ ջան ջան,
Լեզուն բիւլբիւլ է դառել, ջան ծաղիկ՝ ջան ջան։

Մեր դրանը ուռի ծառ, ջան գիւլում և այլն։
Ոսկէ կաքաւ վրէն թառ.
Երթայր ու գայր օրօր տայր,
Ալան ծաղիկ տանիլ տայր։

Անձրև եկաւ շաղալէն,
Ուռու տերև դողալէն.
Հրէս եկաւ իմ ախպէրն,
Ալ ձին տակին խաղալէն։

Մեր դրան առաջին մի դարան,
Աղջկերքն եկան, նի՛ դառան.
Շատ խաղացին ու շարուեցան,
Շարած մարգարիտ դառան։

Այ օրօն, օրօն ծաղիկ,
Կամիր ու տորոն ծաղիկ
Հարսն ու աղջիկ մեծրել եմ
Որ գան ու քաղեն ծաղիկ։

Սարի խոտը ծեղումէ ծեղ,
Ախպէր երթանք միատեղ.
Որ թշնամին վրայ տայ
Գոլուխս տամ գլխիդ տեղ։

Ճալէն 'իվեր ծնեբակ,
Շաղակօլօլ արեգակ.
Արեգակին թեր ախպէր
Շաքար կոտրեմ կեր ախպէր։

Վիճակը հանելուց յետոյ նստեցանք դաշտումը ծաղիկ-ների վերայ և ճաշ կերանք: Ճաշից յետոյ հարսները ու աղ-ջիկները շատ խաղացին և իրիկունը եկանք տուն: Ո՜հ, ինչ-պէս գեղեցիկ էր այն օրը, և ես ինչպէս ուրախ ժամանակ անցկացրի. երբէք չեմ մոռանալ:

Ե՞րբ է լինում համբարձումը, ծմեռը թէ գարունքը: Բնութիւնը, այ-սինքն դաշտերը, ծառերը, թռչունները ինչ դրութեան մէջ են լինում համբարձմանը: Պատմէ տեսնեմ ինչպէս են վիճակ հանում հարսները ու աղջիկները համբարձմանը կամ վարդավառին: Ասա, ինչ երգեր գիտես վիճակ հանելու: Նոցա երգելու եղանակն էլ գիտես թէ ոչ:

Ասացէք այս բառերի նշանակութիւնը. արտուտիկ կամ արտոյտ, շու-շան, բուրել, թառ, շաղ, տորոն, ծեղ, ծնեբեկ: Ի՞նչ կնշանակէ «մեծ-րել»: Այս բառը ո՞ր բառից է շինուել: («Մեծարել,» որ կնշանակէ պա-տուել:)

ՊՍԱԿՆԵՐ:

(Մանկական խաղ):

Մէկ սիրտ լինինք
Ու մէկ հոգի
Օհ միութիւնն
Գեղեցիկ զարդ է կեանքի:
Լա, լա, լա, (4 անգամ:)

Վարդէ պսակ:

Վարդ ծաղկին լինինք նման
Ու օրինակ հեզութեան

Թո՛ղ վարդը հանգստանայ
Մեր մատաղ սրտի վրայ։
Լա, լա, լա, և այլն։

Մանուշակէ պսակ։

Ազնիւ, սիրուն մանուշակ,
Համեստութեան օրինակ,
Տուր մեզ ծաղիկ գեղեցիկ
Քո քնքոյշ հոտ անուշիկ
Լա, լա, լա, և այլն,

Շուշանէ պսակ։

Օրինակ անմեղութեան,
Դաշտի սիրուն դու շուշան,
Եկ, զարդ եղի՛ր մեր պարին
Եկ, միացիր մեր երգին։
Լա, լա, լա, և այլն։

Կաղնի պսակ։

Կանաչ խոտը դաշտերի
Մեր սրտին է սիրելի.
Թո՛ղ ճիւղը կաղնի ծառին
Պսակ լինի մեր գլխին։
Լա, լա, լա և այլն։

Բոլորը միասին

Սիրուն կանաչ պսակին,
Թող միանանք բարեկամք
Եւ յոյսերը անբաժան
Մնան մեզնից յաւիտեան։

Երեխաները փոքր խմբերով բաժանվում են չորս տեղ պսակների թուով, եւ իւրաքանչիւրը մի պսակ է ներկայացնում առանձնապէս, կարգով երգելով իւրեան յարմարացրած երգը եւ միեւնոյն ժամանակ շրջանակ կազմելով իւր դրութեամբ: Վերջին տանը հասնելով բոլոր խմբերը միանում են, մի ամբողջ շրջանակ կազմելով եւ պտոյտ գալով միմեանց ձեռք բռնած, եւ երգում են «Սիրուն կանաչ պսակին եւ այլն:

ՔԱՂԱՔ ԵՒ ԳԻՒՂ

Քաղաքի տները մեծ են, գեղեցիկ, ըստ մեծի մասին քարաշէն, երկու երեք կարգ սենեակներով, ուղիղ մէկ գծի վերայ կանգնած են և իրարու կպած: Տների մէջ տեղերից փողոցներ են անցկենում, սովորաբար ուղղագիծ, հարթ հաւասար, քարայատակ ու մաքուր: Փողոցներու մէջ շատ անց ու դարձ անողներ են երևում, ըստ մեծի մասին վաճառականներ, արհեստաւորներ և տէրութեան պաշտօնեայք: Համարեա թէ ամէն փողոցի վերայ խանութներ ու շտեմարաններ կան, որոց մէջ զանազան տեսակ ապրանքներ են ծախւում. տեղ տեղ էլ կան զանազան գործարաններ: Անտառ, դաշտ, արօտ չկան քաղաքի մէջ. միայն մի քանի տների մօտ պարտէզներ են գտնւում: Քաղաքի մէջ կան հրապարակներ, որ տեղ գիւղացիքը բերում են դասում իւրեանց վաճառելիքը: Քաղաքումը շատ եկեղեցիք կան՝ քարաշէն և գմբէթաւոր: Քաղաքի բնակիչքը աւելի հարուստ են, լուսաւորեալ և մաքուր հագնուած: Քաղաքի մէջ ուսումնարաններ կան, դատարաններ, զինուորք և շատ պաշտօնեայք տէրութեան:

Քաղաքի մէջ սակաւ կտեսնես ամառը կանաչ ու ծաղիկ. և այդ պատճառաւ շատ քաղաքաց բնակիչների մեծ մասը ամառը ցրւում են գնում ամարանոցներ ու գիւղեր: Քաղաքից դուրս ո՛ր կողմն որ աչքդ դարձնում ես, ամէն կողմը

տեսնում ես դաշտ, արօտ, ծառատունկներ և անտառներ։ Շատ քաղաքների մօտ ամարանոցներ կան, այսինքն մօտիկ տներ կան, ուր քաղաքացիքը անց են կացնում ամառը, որովհետև այնտեղ օդը աւելի մաքուր է լինում և առողջարար։ Բայց այն տեղ բոլորովին քաղաք չէ, և ոչ էլ բոլորովին գիւղ. այն տեղ երկրագործ գիւղացիք սակաւ են կամ ամենևին չկան։ Բնակիչների կեանքը աւելի նման է քաղաքացւոց կեանքին։

Բայց քաղաքից աւելի հեռաւոր տեղերը սկսում է արդէն բուն գիւղ կոչուած տեղերը։ Այն տեղ կերթաս երկու, երեք, շատ անգամ մինչև տասը վերստ, և բաց ի դաշտերը ու անտառները ուրիշ ոչինչ չես տեսնել։ Միմեանցից մի քանի վերստ հեռու առաջդ դուրս կգան գիւղեր, աւաններ ու ագարակներ, որ գիւղացւոց տներից են ձևացած։ Բայց այս տները, որ խրճիթ կկոչուին, քաղաքի տների հետ նմանութիւն չունին, այլ ուրիշ ձևով են, փոքր, ցած, գետնի մէջը ու շատ անգամ ծառերով կամ ցանկով պատած. նոցա պատուհանները փոքր են, և շատ անգամ տանեաց վերայ են շինած. իսկ տանիքը կամ կտուրը տափարակ են և ծածկած են ը̅ մեծի մասին հողով կամ ծղնօտով։

Ամէն գիւղացու խրճիթի մօտ բանջարանոց կայ, և խրճիթիցը փոքր ինչ հեռու՝ կալ, համբար, մարագ, կամ ուրիշ մէկ շինուածք։ Կենդանեաց գոմը սովորաբար խրճիթի յետևի կողմն է լինում կամ կողքին։ Գիւղացւոց տների մէջը և իւրեանց վերայ կտեսնես անմաքրութիւն, խեղճութիւն ու աղքատութիւն։ Նոքա ը̅ մեծի մասին ուսումնարան չունին, ուստի նոցա որդիքը մնում են տգէտ, անկիրթ ու անուսում, իւրեանց ծնողաց պէս։

Համեմատեցէք գիւղը քաղաքի հետ, եւ ասացէք, ինչ տարբերութիւն ունին, եւ ինչ նմանութիւն. ինչ մասնաւոր բան կայ գիւղի մէջ, որ քաղաքում չկայ, եւ ընդհակառակն. ինչ կայ քաղաքումը որ գիւղում չկայ։

Կրկնեցէք այս պատմութիւնը ձեր խօսքերով եւ գրեցէք։

Ասացէք այս բառերի նշանակութիւնը. տարբերութիւն, գիծ, ուղղագիծ, հարթ, քարայատակ, խանութ, շտեմարան, գործարան, արօտ, հրապարակ, գմբէթ, դատարան, զինուոր, պաշտօնեայ, ամարանոց, աւան, ագարակ, խրճիթ, տանիք, մարագ։

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԵՐԳ ՇԻՆԱԿԱՆԱՑ

Այ մարդ՝ այսօր շատ քընեցար նընջեցիր,
Առաւօտեան հով ժամանակն անցուցիր.
Արեգակը ծովի ծայրէն ծագեցաւ,
Ջերմութիւնը ձորն ու դաշտը սփռեցաւ։

Ընկերներըդ վաղ արտերը գընացին,
Ցորեն գարին երգ երգելով հընձեցին,
Խուրձ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը,
Նըստան հանգչիլ կաղնիներու հովումը։

Այ մարդ՝ վերկաց, սառը ջրով լուացուիր,
Գօտիդ կապէ, գերանդիդ ա՛ռ, դաշտ հասի՛ր,
Քանի հով է՝ հունձըդ արա՛ արտումըդ,
Հունձըդ հընձէ, մի ծուլանար գործումըդ։

Հունձըդ կապէ՛, բարդըդ բարդէ՛, տուն արի,
Հանգըստացիր, երբ քո հունձըդ կատարի,
Ընե՛ր գերանդիդ, կախէ՛ պատին քո տանը,
Ես իրիկուան կըպատրաստեմ սեղանը։

Այ մարդ՝ հերիք ինչ որ այսօր քընեցար,
Աչքըդ մէկ բա՛ց, տե՛ս թէ ո՞րչափ ուշացար.
Ողջ աշխարհը ոտի վերայ բանումէ,
Ձմեռուայ պաշար նա իւր համար հոգումէ։

Ի՞նչ ես պառկել, ի՞նչ ես քնել, սիրական,

Արեգական շողը հասաւ մեր դըրան,
Մի՛ ծուլանար, ժամանակըդ խընայէ՛,
Ան պիտի մեզ բոլոր ձմեռը կերակրէ։

ԱՌԱԾՔ ԵՒ ԽՐԱՏՔ

Աշխատասէր մարդու տանից Աստուծոյ օրհնութիւնը անպակաս է։

Ամէն բանի հոգին աշխատութիւնն է, ինչպէս և բոլոր մարդուս հոգին Աստուածպաշտութիւնն է։

Մարդս աշխատելու համար է ծնուած։

Աշխատել չուզող մարդը վնասակար է ընկերութեան։

Առանց աշխատութեան աշխարհիս վերայ եղած բան չկայ։

Ամենայն պտուղից քաղցր աշխատանքի պտուղն է։

Առողջութեան դեղը աշխատանքն է։

Աշխատասէր մարդու դռնիցը կնայէ անօթութիւնը, ու չի համարձակուիր ներս մտնել։

Ժամանակը գանձ է աշխատասէր մարդու համար, և ծանըր բեռն գործատեաց և ծոյլ մարդու համար։

Ծուլութիւնը մէկ բոյն է, ուր չարութիւնը ածում է իւր ձուանը։

Սկսելը՝ գործի կէսն է։

Գործիդ մէջ ժիր կաց. զի ծոյլ մարդը սատանայի մշակն է, որոյ հանդերձը մերկութիւն է, կերակուրը սով և վարձքը նախատինք։

Աշխատասէր և բարեպաշտ մարդը միշտ երջանիկ է։

Ծոյլը կուզէ նուշն ուտել, բայց կճեպը կոտրելու աշխատանքից կփախչի։

Մի՛ ասեր «էս էգուց կանեմ» էգուցն իւրեան գործն ունի։

Ծուլութիւնն ու անգործութիւնը դուռն են և բանալի աղքատութեան։

Ուշադրութեամբ կարդացէք այս խրատները եւ ձեր միտքը պահեցէք։

ԽՍՏԱՍԻՐՏ ՏՂԱՅ

Գարեգինը։ «Մա՛յր իմ, մա՛յր», ասաց Գարեգինը տուն վազելով, «տես ի՛նչ սիրուն թռչուն եմ բռնել. ի՛նչ գեղեցիկ թևեր ունի և ի՛նչ սիրուն փետուրներ. տես մայր իմ, այնպէս չէ՞, որ շատ սիրուն է»։

Մայրն։ «Ո՛վ տուաւ քեզ այդ թռչունը, սիրելի որդեակ». ասա ինձ, դո՞ւ ես բռնել՝ թէ ուրիշը։

Գարեգինը։ Այո՛, մայր իմ, ես բռնեցի. մեր պարտէզի պատումը այսօր մի բոյն գտայ, և այնքան սպասեցի, մինչև որ թռչունը եկաւ մտաւ բոյնը. իսկոյն վազեցի և բռնեցի։

Մայրն։ Եւ ի՞նչ կար բոյնի մէջը

Գարեգինը։ Նորա ձագերն էին, սիրելի մայր իմ. ա՜յս ինչպէս փոքր թռչնակներ էին, դեռ ևս ոչ փետուր ունէին և ոչ թևեր։

Մայրն։ Այժմ ի՞նչ ես կամենում անել այդ թռչունը։

Գարեգին։ Պահեմ վանդակի մէջ և մեր պատուհանումը կը կախեմ, որ երգէ և մեզ ուրախացնէ։

Մայրն։ Այո՛, մեզ կուրախացնէ, բայց դորա ձագերն էլ կուրախանա՞ն արդեօք։ Եթէ քո մայրը տանէին դնէին բանտի մէջ, և քեզ ոչ ոք կերակրող, հագցնող և պահող չլինէր, քո համար ուրախութիւն կլինէ՞ր, թէ սուգ։

Գարեգինը։ Ի՜ հարկէ սուգ կլինէր, մայր իմ, Նա-

տուած մի՛ արասցէ, որ այդպիսի մի բան լինի. ես առանց քեզ իսկոյն կմեռնիմ, մի օր չեմ կարող ապրիլ:

Մ ա յ ր ն: Ուրեմն ինչ որ չես կամենում, որ քեզ հետ պատահի, այն մի ցանկանար և ուրիշներին, մանաւանդ այն խեղճ և տկար թռչնակներին, որոնք այժմ մնացել են ան-տէր, անօթի, և անհանգիստ են լինում իւրեանց մօր ուշանա-լու համար. և գուցէ՝ եթէ փոքր ինչ էլ ուշացնես և մնաս այդպէս անգութ, այն ողորմելիքը մի փորձանքի պատահին կամ անօթութենէ սատակին:

Գ ա ր ե գ ի ն ը: Ո՛չ, ո՛չ, սիրելի մայր իմ, էլ չեմ ու-շացնել, ահա թողնումեմ թռչունը, թո՛ղ շուտով երթայ և ազատէ մահից իւր ձագերը: Ներեցէ՛ք ինձ մայր, որ ես այսպէս անգթաբար վարուեցայ այն խղճալի անասնոց հետ. ես չմտածեցի ամենևին, և ես երբէք էլ չեմ անել այս ան-գթութիւնը:

Մ ա յ ր ն: Այդպէս, որդեակս, շատ ապրիս: Մի՛ մոռա-նար որ անասուններն էլ՝ ինչպէս մարդս, Աստուծոյ ստեղ-ծած են, և նոքա էլ են զգում մեզ պէս ցաւ և նեղութիւն:

Ի՞նչպէս էր կարծում, լա՞ւ բան էր Գարեգնի արածը: Ի՞նչ պատճա-ռաւ էր վատ: Մայրն ինչ ասաց նորան այդ բանի համար: Դուք էլ հե-տեւելո՞ւ էք Գարեգնի օրինակին, թէ ոչ: Ի՞նչ կնշանակեն այս բառերը. վանդակ, փետուր, անգութ, անօթի, բանտ: Ի՞նչպէս են շինուած այս բառերը. անգութ, տկար, տգէտ, անմիտ, անասուն:

ԲԱՐԵՍԻՐՏ ԵՐԵԽԱՅ

Համբարձման օրը, ճաշի ժամանակը, մէկ հարուստ մարդու որդի՝ անունը Լևոն, խաղում էր դուրսը իւրեանց հարևանի որդու հետ: Նոցա հարևանը շատ աղքատ և խեղճ մարդ էր, այնպէս որ օրական հացի կարօտ էր: Մի

փոքր ժամանակից յետոյ ծառայն դուրս եկաւ ու Լեւոնին կանչեց ճաշ ուտելու։

— Դարձեալ եկ ասաց Լեւոնին իւր աղքատ ընկերը. ես այստեղ կըսպասեմ քեզ, որ գաս և խաղանք։

— Ապա դու ճաշ ուտելու չե՞ս երթար, հարցրեց նորան Լեւոնը։

— Ո՛չ, ոչ. պատասխանեց միւսը հառաչելով, մենք ոչինչ չունինք ուտելու մեր տանը։

Լեւոնը գնաց տուն, փաթաթուեցաւ հօրը և ասաց. սիրելի հայր, խնդրեմ ասացէք ինձ, ո՛րքան արժէ այն շորերը, որ կամենում էք ինձ համար գնել էգուց տօնիս պատճառաւ։

— Քսան մանէթ, պատասխանեց հայրը. բայց ընչի՞ համար ես հարցնում։

— Սիրելի հայր, ես խնդրումեմ, եթէ կարելի է շորերիս փոխանակ այն քսան մանէթը տաք ինձ, որովհետև շատ հարկաւոր է, իսկ շորեր ես շատ ունիմ։

— Ընչի՞դ է հարկաւոր, հարցրեց հայրը։

— Մեր հարևանի որդին, որի հետ ես երբեմն խաղումեմ, ոչ թէ շոր, այլ հաց անգամ չունի ուտելու, ես կամենումեմ նորան բաշխել այդ փողը։

Հայրը տեսնելով որդու այս բարերարութիւնը համաձայնեցաւ ուրախութեամբ։ Լեւոնը ստացաւ փողը թէ չէ, ճաշը չկերած դուրս վազեց ուրախ ուրախ, տարաւ այն փողը և տուաւ իւր խեղճ ընկերոջ ծնողացը։

Ո՞վ կասէ որ Լեւոնի արածը վատ է: Իսկ եթէ ձեզ պատահէր, կանէի՞ք այդպէս: Ամենայն մարդ էլ պարտական է Լեւոնի օրինակին հետեւելու եւ իւր ընկերը սիրելու եւ օգնելու, թէ ոչ:— Կրկնեցէք այս պատմութիւնը եւ գրեցէք:

Ի՞նչ կնշանակէ «ուրախ ուրախ»: Իսկ եթէ ասէի «ուրախ» միեւնո՞յնը կնշանակէր: Ուրեմն, ինչ կնշանակէ. տխուր տխուր, մեծ մեծ, մա-

նր մանր, շատ շատ, վատ վատ, լաւ լաւ, սիրուն սիրուն: Ասացէք մի մի օրինակ այս բառերի վերայ: (Մեր անտառումը մեծ մեծ ծառեր կան եւ սիրուն սիրուն ծաղիկներ եւ այլն):

ՆԱՄԱԿՆԵՐ ՓՈՔՐԻԿ ԱՐԱՄԻ ՎԵՐԱՑ

Նամակ չորրորդ:

Իմ սիրելի Արամ:

Այս մօտիկ ժամանակ, երբ որ քո հօրեղբայրը եկաւ ինձ տեսնելու, քո մասին մէկ բան պատմեց, որ ինձ շատ ուրախացրուց. նա ինձ ասաց, որ դու միշտ ճշմարիտ ես խօսում: Ո՛հ, ինչպէս ուրախացայ ես, երբ որ այս բանը լսեցի: Փառք տո՛ւր Աստծուն, սիրելի որդի, որ քեզ պահպանեց մեծ մեղքից. և խնդրէ նորան, որ քեզ իւր ողորմութիւնը տայ, որ դու կարողանաս միշտ սիրել և խօսել ճշմարտութիւն:

Ես գիտեմ որ կան այնպիսի տղայք, որք սուտ են խօսում և խաբում, ծածկելով իւրեանց սխալմունքները և չարութիւնները: Բայց Աստուած լսում է և տեսնում է նոցա չար ստախօսութիւնը, և գրում է իւր գրքի մէջ՝ վերջի դատաստանի օրուան համար:

Երբեմն Աստուած պատժում է ստախօսին իսկոյն, երբ որ սուտ է խօսում:

Այսպէս մէկ անգամ պատահեց մէկ մարդու և նորա կնոջը, որք երկուսն ևս յանկարծակի մեռան ստախօսութեան համար. նոցա անունն էր Անանիա և Սափիրայ: Թէ որ դու նոցա վերայ չես կարդացել, նայիր քո Աստուածաշնչումը. այնտեղ Գործք Առաքելոցի հինգերրորդ գլխումը կ'տեսնես նոցա տխրալի պատմութիւնը: Թէ որ այս գլուխը կար-

դացել ես, անցկացիր յառաջ, որ դու կարողանաս եւս աւելի ատել ստախօսութիւնը և փախենաս նորանից։

Իմանալով քո լաւութիւնը, որն որ ինձ համար ուրախալի է, ես քեզ ուղարկում եմ մի փոքր պարգև, և այս ընդունէ ինչպէս իմ սիրոյ և հաճութեան նշան։ Այս արկղի մէջը կայ Հայաստանի աշխարհացոյցը, փոքր տախտակի կտորտանքներու վրայ կպցրած։ Դու գիտես, որ այդ երկրի անունը, որ տեղ որ կենում ես, Հայաստան է։ Ես կարծում եմ, որ քեզ համար ախորժ և զուարճալի խաղ կըլինի փոքր կտորտանքները միասին միաւորել, երբ որ ձմեռուան գիշերները քո մօրաքեռ կարի սեղանի մօտ նստած կը լինիս. այսպիսի եղանակով դու կը սովորես Հայաստանի զանազան նահանգների դրութիւնը և քաղաքների տեղը, և երբոր կգտնես քո փոքրիկ աշխարհացոյցի վերայ Մասիս սարը, Արմաւիր, Արտաշատ, Վաղարշապատ և Անի քաղաքների տեղը, չմոռանաս մտածել նոցա վերայ։

Քեզ սիրող մօրաքոյր։

ԱՌ ՄԱՅՐՆ ՀԱՅԱՍՏԱՆ։

Ինչո՞ւ ես տխրած, մայր իմ Հայաստան,
Իմ սիրուն աշխարհ, Հայոց բնակարան.
Թափիր քեզանից տխրութեան փոշին,
Նորոգ պճնուիր պարզով թանկագին։

Երբ քո ցաւերը աչքս տեսնում է
Դառը կսկիծով սիրտս այրւում է.
Քեզ եմ աղաչում, մայր իմ ծերացած,
Բարձի՛ր քեզանից ամպեր սևամած։

Սրբազան հողդ քաղցր է ինձ համար,
Պառաւեալ մայր իմ, Հայաստան արդար.
Երբեմն օտարաց կոխան է եղած,
Բայց էլի Հայոց քաղցր է անկասկած:

Աչքս բաց անեմ, Մասիսին նայեմ,
Ախ, իմ կարօտս քեզանից կառնեմ.
Կարօտ սիրավառ, կարօտ մայրական,
Որ որդւոց սրտից կբղխէ աննման:

Իմ սո՛ւրբ Հայաստան, քեզ շատ եմ սիրում,
Ամէն րոպէում քեզ չեմ մոռանում.
Երբոր տեղիցս ես վեր եմ կենում,
Քեզ համար յԱստուած աղօթք եմ անում:

ՄԱՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Ես գիտեմ, որ մարդավարութիւնն ևս գիտութեանց պէս մարդուս ամէն հասակին ու ամէն վիճակին հարկաւոր է. ուստի ես պէտք է ջանք անեմ, և այժմ իսկ տղայ ժամանակս ուշք դարձնեմ իմ պակասութիւններիս, ուղղեմ նոցա, կըրթուիմ և մաղավարութիւն սովորիմ, որ անկիրթ տղայոց պէս չամաչիմ մարդկանց առաջին իմ պակասութիւններովս:

Անկիրթ տղայի պակասութիւնները:

1

Առաւօտը երբոր զարթնումէ՝ երեսը ու ձեռքերը լուանալու և գլուխը սանդրելու հոգս չէ անում:
Եղունգները կրծում է, և կամ մարդու առաջին նոցա կըտրում մաքրում է:

Ի՛նչ որ ձեռքն է ընկնում, գրիչ, թուղթ, ձեռնոց, ծաղիկ, իսկոյն բերանն է տանում:

Երեսի, ձեռքի կամ հագուստի վերայ ունեցած կեղտը թուքով հանումէ, և այն ամէնի առաջին:

Եղունգներովը գլխի և երեսի ուռոյցքները կամ վէրքերը քերելով արիւն է վազեցնում ուրիշների դիմացը:

Եղունգներովը ատամները ու ականջը մաքրում է:

Ձայնով քիթը սրբում է, ու յետոյ թաշկինակը բացում նայում է. թէ որ անմարդավարութիւնը մի փոքր էլ առաջ է տանում, քիթը ձեռքով սրբում է և տեսնողների սիրտը խառնում:

Անդադար մատները քիթն է տանում, ու խառնում մաքրում է քիթը այլոց առաջին:

Ամէն տեղ թքում է. կարծես թէ թաշկինակի ընչի համար լինիլը չգիտէ:

Բերանը թուղթ է առնում, ծամում է ու անդադար շրթունքների վերայ երևեցնում, և կամ կլորում այս կողմը այն կողմը ձգում:

Նստած աթոռը անդադար շարժում է:

Խօսելու ժամանակը միշտ գլուխը շարժում է:

~~Նստած ժամանակը ծունկը ծնկան վերայ է դնում, և վերջինը անդադար շարժում է:~~

Ամէնի առաջևը անձնահաճութեամբ նայումէ հայելուն, և իւր վերայ ունեցած համարումն իւր երեսի վերայ յայտնում է:

Ուրիշի դիմացը անդադար մազերը, գդակը, շապիկը և կամ փողպատը ուղղում է:

Ոչինչ բաների վերայ անմտաբար բարձր ձայնով ծիծաղում է, և կամ բերանաբաց զմայլած նայում է:

Մօտի խօսողի ձեռքերը, երբեմն կոճակները, երբեմն օձիքը և երբեմն գօտին բռնում է:

Սիրում է աւելորդ պճնասիրութիւն, և կամենում է ամենին յայտնել նորանով իւր խելքը և շնորհքը։

Երբոր երգի կամ նուագարանի ձայն է լսում, յանկարծ սկսում է ինքն էլ երգել, ոտքերով գետինը հարկանել գլուխը շարժել։

Ոտքով մօտի նստածների աթոռը շարժում է առանց մտածելու, որ նոցա անհանգիստ է անում։

Երբոր մէկ բան հաւանում է, սկսում է ձեռքերով ծափ տալ, թռչոտել և գլուխը շարժել.

Երբոր մի բանից ձանձրանում է, կամ քունը որ գալիս է, սկսում է այլոց առաջևը երկար երկար յօրանջել այլանդակ ձայներով առանց ձեռքով բերանը փակելու, երբեմն ևս ոչ միայն յօրանջում է, այլ ձեռքերը այս կողմն այն կողմն է ձգում, տարածում։

Սաստիկ ու բարձրաձայն փռնգում է, և բերանը թաշկինակով չծածկելով՝ թէ իւրեան և թէ մօտի նստողի շորերը թքով լցնում է։

Մ՝էկի հետ խօսելու ժամանակը՝ քիթն է մտնում ու թքով երեսը լցնում է, և կամ երեսն 'ի վեր հազում է առանց բերանը ձեռքով փակելու։ Ցած ձայնով խօսելու տեղ, բարձր ձայնով գոռում է։

Այս պակասութիւնները դուք էլ ունիք, թէ ոչ։ Եթէ ունիք աշխատեցէք ուղղելու։

Ասացէք այս բառերի նշանակութիւնը. վէրք, թաշկինակ, շրթունք, անձնահաճութիւն, փողպատ, զմայլած, օձիք, նուագարան, ձանձրանալ յօրանջել, այլանդակ, փռնգալ

Ինչպէս են շինուել այս բառերը. փողպատ, անձնահաճութիւն, անկիրթ, անդադար, հայելի, բանալի։

ԿԱՄԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Տիգրանը և Տրդատը միմեանց հարևան էին և ընկեր։ Նոքա միշտ 'ի միասին էին գնում ուսումնարան և գալիս։

Բայց նոցա բնաւորութիւնները շատ տարբեր էին իրարից: Տիգրանը շատ բարի և կամարար երեխայ էր, և միշտ աշխատում էր ամենայն մարդու իւր ծառայութիւնը և խոնարհութիւնը ցոյց տալ. իսկ Տրդատը ընդհակառակը կամապաշտ և խռովասէր տղայ էր, և ոչ ոքի չէր կամենում բարութիւն անել:

Մէկ օր ուսումնարանումը Տիգրանը խնդրեց Տրդատին, որ մէկ գրիչ փոխ տայ, որովհետև իւր գրիչները տանն էր մոռացել: «Իմ գրիչները ինձ են հարկաւոր», պատասխանեց սառը դէմքով Տրդատը. «գնա՛ քո համար գրիչ ճարէ»:— Մէկ անգամ էլ Տիգրանը խնդրեց նորան, որ իւրեան օգնէ ծաղիկները ջրելու: «Ես քո հօր մշակը չեմ» ասաց բարկութեամբ Տրդատը, որ քո ծաղիկները ջրեմ, գնա քո համար մշակ վարձէ»:

Անցաւ մի քանի օր, Տիգրանը տեսաւ ուսումնարանումը որ Տրդատը մոռացել է իւր գրիչները տանը, և տրտում նըստած նայում է այլոց գրիչների վերայ, բայց և չէ վստահանում ուզելու: Այս որ նշմարեց Տիգրանը՝ իսկոյն ասաց նորան սիրով. «սիրելի եղբայր, ինչի՞ ես այդպէս տխուր նստել, ահա իմ գրիչները, ո՞րն ես կամենում, ընտրէ և վեր առ, երևի քո գրիչները տանն ես մոռացել»:

Մի կիրակի օր էլ Տրդատը տեսաւ՝ որ Տիգրանը մէկ փունջ ծաղիկ էր քաղել իւրեանց պարտէզից, և իւր մօր համար տանում էր տուն: Տխուր տխուր մօտեցաւ նորան և ասաց հառաչելով. «Ախ, ի՞նչ կլինէր, որ ես էլ մեր պարտէզումը ծաղիկներ ունենայի և մօրս համար քաղէի»: «Եթէ կամենում ես», ասաց իսկոյն Տիգրանը, «արի գնանք մեր պարտէզը, և որքան կամիս քաղէ իմ ծաղիկներից և տար քո մօր համար: Ինձ համար մեծ ուրախութիւն է քո ցանկութիւնը կատարել և քեզ օգտակար լինել»:

Տրդատը ամաչեցաւ Տիգրանից, տեսնելով նորա բարեսրտութիւնը, և այն օրից սկսաւ թողուլ իւր վատ բնաւորութիւնը, և ջանալ լինիլ Տիգրանի նման բարի և կամարար երեխայ.—

Ի՞նչպէս էք կարծում, սիրո՞ւմ էին Տրդատին իւր ընկերները, թէ ոչ՝ ի՞նչ պատճառաւ: Կրկնեցէք այս պատմութիւնը եւ գրեցէք:

Ասացէք այս բառերի նշանակութիւնը: Բնաւորութիւն, տարբեր, վարձել, նշմարել, ընտրել, փունջ, ջանալ, վստահանալ:

Ասացէք, ինչպէս են շինուել եւ ինչ կնշանակեն այս բառերը. կամարար, խռովասէր, կամապաշտ:

ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄ ԵՐԵԽԱՅ

Արշամը մի քանի երեխայից հետ խաղում էր դաշտումը: Մի անծանօթ ճանապարհորդ եկաւ և հարցրեց նորան. նոցա մօտի գիւղի ճանապարհը, ուր որ նա կամենում էր գնալ:

Արշամը իսկոյն յառաջ եկաւ և ուրախ դէմքով ասաց նորան. «Ես կարող եմ գալ և ձեզ այն գիւղի ճանապարհը ցոյց տալ, պարոն, որ չմոլորիք:» Յետ այնորիկ գնաց օտարականի հետ և հեռուից ցոյց տուաւ նորան, ուր էր գիւղն:

Ճանապարհորդը քաղաքավարութեամբ շնորհակալ եղաւ, և կամենում էր բարի երեխային իւր աշխատութեան համար փող բաշխել, բայց Արշամը ոչինչ չառաւ և ասաց. «Ինձ համար մեծ ուրախութիւն եղաւ, պարոն, որ կարողացայ ցուցանել ձեզ այս իմ փոքրիկ ծառայութիւնս: Մնաք բարեաւ և գնաք խաղաղութեամբ:»

Ո՞վ կը կամենայ Արշամին նմանիլ: Ուրեմն նա լաւ տղայ էր: Պատմէ տեսնեմ նորա արած լաւութիւնը կամ բարի գործը:— Գրեցէք այս պատմութիւնը ձեր խօսքերով:

ՍՏԱԽՕՍ ՏՂԱՅ

Մէկ որկրամոլ տղայ տեսնում է հօր սեղանի վերայ եփած խնձոր, առնում է և ուտում է: Հայրը երբ որ տուն է գալիս, տեսնում է որ խնձորը չկայ, հարցնում է տղային. «Խնձորն ի՞նչ էլաւ, չլինի՞ թէ դու առած կերած լինիս:»— «Ոչ, հայր, ես առած չեմ:»—«Շատ լաւ, որդիս, շատ ուրախ եմ. որովհետև ես մէջը թոյն էի դրել մկները ջարդելու համար:» Այս որ կլսէ տղայն, երեսի գոյնը կերթայ, գլուխը կպտըտի և վայր ընկնելու պէս կլինի: «Ի՞նչ է, որդիս, ի՞նչ պատահեցաւ քեզ:»— «Ո՜հ, հայր, թունաւորուած եմ:»— «Ուրեմն դո՞ւ ես առել կերել խնձորը. մի՛ վախենար, թունաւորուած չես. կամենում էի միայն գողը բռնել, և սորա համար ասացի թէ խնձորի մէջ թոյն կար:»

Ձեզ հետ էլ պատահո՞ւմ են այսպիսի ստախօսութիւններ, թէ ոչ: Ասացէք, ինչպէս է կազմուել և ինչ նշանակէ «որկրամոլ.»

ՆԱԽԱՆՁՈՏ ՔՈՅՐ

Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր,
Հոգւով դեռ արի, գլխով ալեւոր.
Մեծ ծով էր պատել նորա աշխարհը,
Ոսկի ասացին գիտունք այն դարը:
Ունէր նա երկու մատաղահաս աղջիկ,
Մինը խիստ տգեղ, միւսը գեղեցիկ.
Մի օր տգեղը ասաց միւսին»:
«Երթա՛նք ծովի ափ, քուրիկ միասին»:
Սիրունը գընաց առաջից տրտում,

Տրդեղը ետնից ոխ պահած սրտում.
Հազիւ թէ ծովի ափին էր հասած,
Իւր սիրուն քրոջ գըլորեց նա ցած:
Կանչեց կիսամեռ սիրունը ջըրից·
«Քուրի՛կ իմ, քուրի՛կ փրկէ ինձ մահից.
Ես ունիմ տանը գեղեցիկ մանեակ,
Ա՛ռ, էն քեզ լինի, պարգեւէ՛ ինձ կեանք».....
—Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ:—
«Քուրի՛կ, թէ այդ էլ քեզ չէ բաւական
Կտամ քեզ ոսկի պըսակ պատուական».
—Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ:—
«Քուրի՛կ, մի՛ թողուլ դու ինձ անտէրունչ,
Քեզ սիրուն փեսաս կուտամ անտրտունջ»:
Տրդեղի սիրտը դարձել էր ժեռ քար,
Քրոջ խնդիրքը թողուց անկատար:
Ձկնորսը ծովը ձըգեց մեծ ուռկան,
Ուռանից մարմինը սիրուն աղջկան.
Ջըրիցը հանեց, դրեց ափի մօտ,
Շատ ծաղիկ ցանեց վըրան ու շան խոտ:
Մի աշուղ անցաւ, տեսաւ աղջկան,
Լացեց ու առաւ, դըրեց ուսի վրան·
Տարաւ իւր տուն այդ անգին գիւտը.
Չորացուց նորա մարմնու դիփ հիւթը:
Գեղեցիկ տաւիղ շինեց ոսկերից,
Քաղցրաձայն լարեր հիւսեց մազերից.
Երբ որ ամեն բան պատրաստեց կարգին,
Գընաց արքունիք տաւիղը ձեռքին.
Երբ մըտաւ դահլիճ շըքեղ զարդարած,

Տեսաւ տըգեղին փեսի մօտ կանգնած.
Բացեց բերանը, լարերին խըփեց,
Հիւրերի առջեւ քաղցրաձայն երգեց.
«Հընչէ՛ իմ տաւիղ, հնչէ՛ համարձակ,
«Հարազատ քոյրըս խըլեց իմ պըսակ.
«Լըսէ՛ իմ ծընող, լըսէ՛ սիրական,
«Հարազատ քոյրըս խըլեց իմ փեսան.
«Լսէ՛ ժողովուրդ, լըսէ՛ անխըռով,
«Հարազատ քոյրըս գըլորեց ինձ ծով»:
Միւս օր դահիճքը խարոյկ շինեցին,
Մահապարտ քըրոջ մէջը գլորեցին.
Հուրը պըլպըլաց, աղջիկը կանչեց.
«Իմ մեղաց համար Աստուած ինձ պատժեց»:

Պատմեցէք այս երգի միտքը ձեր բառերով եւ գրեցէք: Այս երգի եղանակը գիտէք թէ ոչ: Եթէ չգիտէք սովորեցէք:

Ասացէք այս բառերի նշանակութիւնը. մատաղահաս, գիւտ, հիւթ, տաւիղ, լար, հիւսել, շքեղ, հարազատ, դահիճ, խարոյկ, գլորել:

Ի՞նչպէս են շինուած այս բառերը. կիսամեռ, մատաղահաս, տգեղ, անտէրունչ, անտրտունջ, անկատար: Ի՞նչ կնշանակէ «կատար»: (Ծայր, վերջ): Կարելի է ասել «կատար լերին»: Ուրեմն ինչ կնշանակէ «կատարել, կատարած». իսկ «անկատա՛ր»: Ի՞նչ կնշանակէ, «կատարեցաւ նա առ Աստուած»:

Ի՞նչ են նշանակում եւ երբ ենք գործ ածում այս բառերը. քուրիկ, մայրիկ կամ մարիկ, հայրիկ, մանկիկ, գառնիկ, հոգեակ, աղաւնեակ, Թռչնակ եւ այլն:

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱԾՔ

1

Ագռաւի տեսած սերմը չի կանաչիլ:
Ահը դժուար է, քանց մահը:
Աղուէսի գունչը խաղողին չհասաւ, ասեց խակ ա:
Աղքատ ու հպարտ:
Ամէն բանը իրա տեղն ունի:

Ամէն ջուր գերան չի բերիլ:
Ամէն փորձանքին մին մին խրատ:
Ամէն օր կուժը ջուր չի բերիլ:
Ամէն օր տատը գաթայ չի ուտիլ:
Ամպ օր գէլը կուրախանայ:
Այսօրուան գործդ վաղուան մի թողուր:
Անբանը հաց ուտելիս առողջ ա, բանելիս հիւանդ:
Անէծքը անիծողին կդառնայ:
Անհունար մարդի լեզուն երկար կլինի:
Անձրև օրը հաւերին ջուր տուող շատ կլինի:
Անջուր մի բոբիկանալ:
Անցկացած օրին օր չի հասնիլ:
Առաջ մտածէ, յետոյ սկսէ:
Ասել են ա՛ռ ու տո՛ւր, ոչ թէ ա՛ռ ու կո՛ւլ:
Աստուած հալալին կտայ:
Աստուած չկամենայ, մարդ չի կարենալ:
Աստծու պահած գառը գէլը չի ուտիլ:
Աստուած փլաւն ո՛ւմ ա տուել, իշտահն ո՛ւմ:
Արջն իր ահէն կը դողայ:
Բանը շինելով կը հասնու:
Բանն արա, յետոյ պարծեցիր:
Բարեկամի հետ կեր ու խում արա, առուտուր մի անիլ:
Բարկացող մարդը շուտ կը պառաւի:

ՇՐՋԱԳԱՅՈՒԹԻՒՆ ՄՕՐ ԻՒՐ ՓՈՔՐԻԿ ԴՍՏԵՐ ՀԵՏ:

Մայրն: Ի՛նչպէս քաղցր ու ախորժելի է երևում մայիս ամիսը այն սաստիկ ձմեռէն յետոյ: Այս կաղնու տակը կանաչ խոտի վերայ ես մի փոքր կնստիմ ու կհանգստանամ,

իսկ դուն աղջիկս, որ ծաղիկ շատ ես սիրում, գնա քաղէ ինչքան կամենաս:

Գուստրն. Ա՛հ, այս ինչ գեղեցիկ գոյնզգոյն ծաղիկներ են. երկու մեծ փունջ կշինեմ, մայր, մէկը քեզ համար և միւսն ինձ համար:

Մայրն: Տե՛ս ահա, այս վայրի վարդենու տակը ինչ սիրուն մանուշակներ կան: Նոցա անոյշ հոտը մինչև այստեղ է գալի:

Գուստրն: Այո՛, ինչպէս անոյշ հոտ ունին, ես կարծում էի որ դոքա միայն պարտէզումն են դուրս գալի: Մայրիկ, այս մանուշակների միջի սպիտակ ծաղիկների անունը ի՞նչ է. սոքա էլ լաւ հոտ ունին:

Մայրն: Գարնանածաղիկ են կոչւում:

Գուստրն: Իսկ սոքա՞:

Մայրն: Յակինթ և մարգարտածաղիկ են ասւում:

Գուստրն, Ի՜նչպէս գեղեցիկ ծաղիկներ են. ոմանք բոլորովին բացուել են, միւսները դեռ կիսաբաց են: Մայրիկ, ինչո՞ւ ծաղիկները իւրեանց շուրջը մի կանաչ պատեան ունին:

Մայրն: Ծաղիկը պաշտպանելու համար է այն պատեանը, և կոչւում է բաժակ: Խիստ քիչ ծաղիկ կայ, որ բաժակ չունենայ, որդեակ:

Գուստրն. Ո՜հ, մայրիկ, խելքս գնում է այս ծաղկների վերայ. այս ինչ շատ ծաղկներ կան այստեղ. սպիտակ, դեղին, կարմիր, կապոյտ, կանաչ, մանուշակագոյն. ամէն գոյն կայ, ոմանք մեծ, ոմանք փոքր. սոցա անունները ի՞նչ է, մայր:

Մայրն: Ես ինքս էլ չգիտեմ, որդեակ. ամենիցն էլ առ ու իրիկունը ցոյց տուր հօրդ, որ անունները քեզ ասէ, և միտքդ պահէ, որ ինձ էլ սովորեցնես:

Գուստրն: Արդէն շատ ծաղկի անուն գիտեմ. վարդ,

մեխակ, յասմիկ, մարգարիտ, մանուշակ, յակինթ, շուշան . . . և եթէ նոցա տեսնեմ՝ կճանաչեմ։ Բայց այս անտառի եզերքին գտնուած սպիտակ ծաղիկները ի՞նչ են, մայրիկ։ Ա՛հա տեսնում ես՞, նոքա նման են մարգարտին, միայն աւելի խոշոր են։

Մայրն։ Նոցա մի՛ քաղեր, նոքա ելակենւոյ ծաղիկներ են, որ ամառը պէտք է ելակ (մորի) դառնան, որ դուն սիրում ես։

Դուստրն։ Ի՞նչ ես ասում մայր. ուրեմն այն փայլուն և կարմիր ելակները յառաջ այսպէս սպիտակ ծաղի՞կ են լինում։

Մայրն։ Այո, զաւակս, ինչպէս որ կանայքն էլ յառաջ փոքր աղջկերք են լինում։ Ինձ որ այսպէս մեծ ես տեսնում, ժամանակով ես էլ քեզ պէս մի փոքր աղջիկ էի, և մօրս հետ ման էի գալի, նորան սիրում էի և նորա խօսքից դուրս չէի գալի։

Դուստրն։ Դաշտի միւս ծաղիկնե՞րն էլ պէտք է ելակի պէս պտուղ տան և յետո՞յ ուտուին։

Մայրն. Ոչ, նոքա չեն ուտուիր։

Դուստրն։ Ուրեմն մի բանի օգտակար չե՞ն նոքա։

Մայրն։ Նոցա մէջը ոչ մի անօգուտը չկայ, որդեակ իմ, մեղուները գալիս են նոցա մէջից ծծում ու հաւաքում իւրեանց քաղցրահամ մեղրը։

Դուստրն։ Իսկ ծաղկանց տերևնե՞րը ինչի են պէտք, մայրիկ, կարծեմ ոչ մէկ բանի նոքա օգտակար չեն։

Մայրն։ Ինչպէս օգտակար չեն. նայէ տես այս կովերը որպիսի՛ ախորժակով նոցա ուտումեն. նոքա նոցանից կաթն են շինում, իսկ մենք այն կաթը խմումենք, այն կաթնից, սեր, մածուն, իւղ, պանիր, կաթնապուր և ուրիշ համեղ կերակուրներ ենք շինում և ուտում։

Դուստրն: Ես չէի իմանում, որ կաթը բոյսերով, և մեղրը բոյսերի ծաղիկներով են շինուելիս եղել:

Մայրն: Բոյսերն ու տունկերը ուրիշ շատ օգուտներ էլ ունին. մեղուները նոցանից միմիայն մեղր չեն շինում, այլ և մոմ, որ իսկ մեղրամոմ է կոչւում. ոչխարները նոցանով կերակրուելով մեզ կաթն ու բուրդ են տալիս, և հաւերը նոցա հունտերն ուտելով ձու են ածում:

Դուստրն: Բայց այս բոյսերն ու տունկերը ո՞վ է շինել, մայր իմ:

Մայրն: Աստուած, աղջիկս:

Դուստրն: Ի՞նչպէս են նոքա այս դաշտումը դուրս գալի և մեծանում. նոցա այստեղ ցանող և ջրող չկայ, նոցա վերայ նայող և հոգացող չկայ, ինչպէս որ մեր պարտէզի ծաղիկների վերայ նայում է և հոգացողութիւն ունի պարտիզպանը:

Մայրն: Արևը նոցա տաքացնում է, որդեակ իմ, անձրևը ջրում է, ու քամին նոցա սերմերը այս կողմը և այն կողմը ցրուելով, կրկին նոցա սերմանում է, որ միւս տարին էլ դուրս գան:

Դուստրն: Ո՛հ, ինչպէս ճարտար ու իմաստուն է Աստուած:

Մայրն: Այո, սիրելի զաւակս, Նա է ստեղծել արևը, քամին, անձրևը ու բոյսը. նա է ստեղծել այն մեղուն, որ ծաղիկներիցը մեղր է շինում և մեղրամոմ, այն կովը՝ որ խոտից կաթն է շինում, ինչպէս նաև մարդիկը, որ բոլոր այս բարիքը վայելումեն, և շատ անգամ ապերախտ են գտնւում իւրեանց ստեղծողին, փոխանակ նորա սուրբ անունը միշտ օրհնելու և նորա սուրբ պատուիրանքը պահելու:

Դուստրն: Ո՜հ ինչպէս բարի է Աստուած, որ ոչ միայն մարդկանց, այլ և անասուններին և բոյսերին խնամումէ. բայց թէ որ Աստուած չլինէ՞ր, մայրիկ:

Մայրն։ Այն ժամանակը ոչ տունկ, ոչ բոյս, ոչ ծաղիկ, ոչ պտուղ, ոչ մեղու, ոչ հաւ, ոչ ոչխար, ոչ կով, ոչ փոքրիկ աղջկերք, ոչ հայր, ոչ մայր չէր լինէր. որովհետև Աստուած է նոցա ստեղծեր։

Դուստրն։ Ի՞նչպէս կուզէի Աստըծուն տեսնել ու ճանաչել, մայրիկ։

Մայրն։ Թէ որ ուզումես մի օր նորան տեսնել, նորա օրինակին հետևէ, ու բարեգործ եղիր։

Դուստրն։ Բարեգործութեան համար տարիքս դեռ փոքր են։

Մայրն։ Որդեակ իմ, այդ քո փոքր տարիքեդ կարող ես բարեգործութիւն անել, եթէ կամենաս։ Ո՞վ քեզ կարգելէ որ քո ձեռքդ եկած փողը աղքատներին տաս, քո հին կամ աւելորդ շորերդ՝ մերկերին, քո աւելորդ կերակուրը կամ հացը՝ քաղցելոց, Ո՞վ քեզ կարգելէ, որ ժամասէր լինիս, Աստուածասէր, եղբայրասէր և ընկերասէր։ Բայց ժամանակ է, անոյշ զաւակս, որ վերադառնանք տուն, որովհետև մթնումէ. և հայրդ կգայ յոգնած տուն, և մեզ տանը չգտնելով միայնակ կմնայ։

Ի՛նչ ծաղիկների անուն գիտէք: Ո՞վ է խնամում, եւ պահպանում ծաղիկներին եւ բոյսերին դաշտումը: Ի՛նչ են շինում ծաղիկներիցը եւ բոյսերիցը մեղուն, կովը, ոչխարը եւ հաւը: Իսկ սոքա ամէնը, թէ բոյսերը եւ թէ կենդանիքը ում ծառայելու համար են ստեղծուած: Եւ մեք այսչափ բարեաց փոխարէնը ինչ պէտք է հատուցանենք մեր Ստեղծողին: Փոքր տղայքն էլ կարող են Աստուծոյ գոհութիւն մատուցանել, նորա սուրբ պատուիրանքը պահել եւ բարեգործութիւն անել: Ի՛նչ բարեգործութիւն կարող են նոքա անել: — Կրկնեցէք երկուսով այս (մօր եւ դստեր) խօսակցութիւնը, մէկդ մօր տեղակ, միւսդ դստեր:

Ասացէք ինչպէս են շինուել այս բառերը. բարեգործութիւն, շրջագայութիւն, գոյնզգոյն, կաթնապուր, մեղրամոմ, ապերախտ:

Ի՞նչ զանազանութիւն ունին «ծաղիկ եւ բոյս, ծառ եւ կաղնի, մարդ եւ կենդանի» բառերը: «Ծառ բոյս եւ կաղնի» բառերիցը որն է ցուցանում հասարակ սեռը, եւ ո՛րն է ցուցանում նորա տեսակը:

ՌԵՀԱՆ

Ռեհան մի կար ժամանակաւ
Դաշտ բուսած ու բացուած.
Խեղճ յանկարծ թօշնեցաւ,
Ուժն ու շընորհքը գընաց,
Ծըռեց գըլուխը մէջքին,
Չորանալուն կըսպասէր,
Մէկ կողմանէ էլ զեփիւռին
Գանգատելով այս կասէր.
«Ա՜հ ինչ կլինէր իմ բաղդէս
Շուտով ծագէր արևը,
Դաշտերը նորէն քաղցր ի տես
Զարդարուէին լուսովը.
Գուցէ ինձի էլ բաժին
Հանէր կարմիր լուսիկէն,
Ինձի էլ տար այն հոգին,
Կենդանանայի նորէն»:
Եղէգ մի կար նոյն տեղը
Իրան գործին ըզբաղած,—
Ծաղկին սիրտ տալուն տեղը,
Նայէ, խեղճին ինչ ասաց.
«Շա՜տ միամիտ ես եղեր
Դուն էլ՝ Ռեհան դըրացիս.
Արեգակին խիստ հո՛գն էր,
Որ դու ծաղկիս կամ թօշնիս:
Խօսքիս դու լաւ նըշան դիր.
Արեգակը այդ բանին
Չլինիր երբէք ուշադիր.
Մե՛ղք էլ է իւր ատենին:

Թէ ինձի պէս թըռչէիր
Մէկ աշխարհէն մէկալը,
Աչքովդ կը տեսնէիր
Թէ այն մեծ ինքնակալը
Որքան լեռներ ու դաշտեր,
Ծառոց ծաղկանց ժողովը
Կը դարմանէ կենսաբեր
Իւր պատուական շողովը։
Նորա տակ ճառագայթէն
Մեծ մեծ նոճեր կաղնիներ
Կուռճանան և ոյժ կառնեն,
Կարձակեն ճիւղեր ոստեր.
Ի՜նչ անոյշ հոտով ծաղկունք
Արևէն հիւթ կըծըծեն,
Իբրև գոյնըզգոյն ակունք
Պարտէզներ կը զարդարեն.
Բայց խեղճուկ Ոեհանը ո՞ւր,
Եւ այն ծաղկանց բանը ո՛ւր։
Ի՞նչպէս ասեմ, բարեկամ.
Նոցա յարգն այնքան մեծ է,
Որ ժամանակն անգամ
Զուգենալով կը հընձէ.
Իսկ դուն ո՛չ տեսք մի ունիս,
Եւ ոչ հոտ մի կարգէ դուրս.
Ուստի լաւ է որ դադրիս,
Արևն էլ հանգիստ թողուս։
Դուն մի՛ յուսար որ վըրադ
Նա մէ՛կ նըշոյլ մի ձըգէ.
Ինձմէ քեզի ա՛ռ խըրատ,
Զայնդ քաշէ ու թոռմէ»։

Բայց արեւիկը ելաւ բացուեցաւ,
Ծաղկանց դարաստը լուսով լցուեցաւ,
Եւ խեղճ Սեհանն էլ, որ յոյժ թօշներ էր՝
Նորա երկնային աչքէն ողջացաւ։

Ով մեծամեծք եւ իշխանք,
Որոց Բարձրեալըն Աստուած
Բարձր աստիճան է տըւած,
Իմ արեւէս առէք ձեզի օրինակ.
Նայեցէք արեգակին.—
Ո՛ւր որ հասնի արեւիկը,
Թէ՛ ձընծաղկին թէ՛ նոճին.
Հաւասար կանէ բարիքը.
Նովաւ ամէն արարած
Կուրախանայ կը ցընծայ,
Ամէն բան զըւարթացած
Յիրաւի կերջանկանայ։
Ուստի նորա սիրովը
Կը վառին սիրտք ամենայն,
Ինչպէս փայլուն լուսովը
Բիւրեղներն արեւելեան,
Եւ ամէնքը մէ՛կ բերան
Նորա օրհնանքը կըտան։

ՄԵԾ ՍԵՂԱՆ։

Մէկ վարժապետ հնձի ժամանակը ասաց իւր աշակերտացը. «Ես մտադիր եմ այսօր ձեզ մէկ մեծ սեղան ցոյց տալ, որոյ վերայ ամբողջ տարին ուտումէն ու կշտանումէն ոչ մի-

այն մի քանի քաղցած մարդիկ, այլ հազարաւոր ժողովուրդներ ու կենդանիք»։ Այս որ ասաց, առաւ աշակերտները և տարաւ մի բարձր լերան գլուխ, որտեղից երևում էր մէկ ընդարձակ, կանաչազարդ ու պտղալից դաշտ, ուր ցորենի, հաճարի և միւս պտղոց անթիւ արտերը ոսկեգոյն փայլում էին, այգիների, պարտէզների և անտառների ծառերը կարմրափայլ պտուղներով ծանրաբեռնած էին, և Աստուծոյ ամենառատ ձեռն սփռել էր անխնայ իւր ամենայն բարութիւնը։

«Ահա տեսէք, սիրելի աշակերտք, ասաց նոցա, վարժապետը ցուցանելով դաշտի վերայ. ա՛յս է այն մեծ սեղանը, որ ամէն օր ամէն արարածոց համար պատրաստումէ մեր ամենաողորմ Հայրն՝ որ երկնքումն է, և առատապէս լցնումէ նորան կերակուրներով։ Մենք ամէնքս նորա հիւրերն ենք, և նա իւր անհուն ողորմութեամբը կշտացնումէ ոչ միայն մեզ մարդկանցս, այլ և անթիւ անհամար թռչուններին, գեռուններին, սողուններին և գազաններին։ Այս պատճառաւ երբեք չմոռանաք խորին շնորհակալութեամբ միշտ դարձնելու ձեր աչքը մեր այն բազմախնամ և անտեսանելի բարերարին։»

Վարժապետի խօսքերը տղայոց սրտի մէջը շատ խոր տպաւորուեցան, և երբ սարից իջանում էին՝ աշակերտներից մէկն ասաց. «Այժմ ահա լաւ հասկացայ այն աղօթքի միտքը, որ ասումէ. Աչք ամենեցուն 'ի քեզ Տէր յուսան, և դու տաս նոցա կերակուր 'ի ժամուն, բանաս զամենառատ ձեռն քո և կերակրես զամենեսին աստուածային կամովք քովք։ Քանի՛ քանի անգամ այս խօսքերը իմ բերանից դուրս են եկել, բայց ես նոցա միտքը չեմ հասկացել։»

Այս մեծ սեղանիցը դուք էլ վայելումէք թէ ոչ։ Իսկ նորա պատրաստողին էլ յիշում էք արդեօք։— Կրկնեցէք այս պատմութիւնը եւ գրեցէք։— Ասացէք այս բառերի միտքը. գեռուն, սողուն, սփռել։

Ի՞նչպէս են շինուած այս բառերը. մտագիր, պտղալից, կարմրափայլ, ծանրաբեռնած, ամենառատ, անխնայ, բազմախնամ:

Ի՞նչ զանազանութիւն կայ այս բառերի մէջ. «հազար եւ հազարաւոր, հարիւր եւ հարիւրաւոր, բիւր եւ բիւրաւոր»:

ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒՈՒՄ Է ԻՒՐ ԳՈՐԾՔԵՐԻՑԸ:

Ինչո՞ւ այնչափ շքեղ ու փառաւոր են Աստուծոյ գործքերը: Ինչո՞ւ մեր շրջակայ անթիւ անհամար առարկաները մէկը միւսից գեղեցիկ են ու զարմանալի: Անշուշտ նորա համար է, որ չդադարինք երբէք հիանալէն ու պաշտելէն այն Մեծ Էակը, որ բիւր անգամ աւելի գեղեցկագոյն է, շքեղագոյն, փառաւորագոյն և վսեմագոյն մեր բոլոր տեսած առարկաներիցը, որ կարողանանք միշտ մեզ ասելու: «Եթէ գործքերը այնպէս փառաւոր են ու կատարեալ, ապա ի՞նչ պիտի լինի նոցա գործողը և ստեղծողը: Եթէ արարածները այսպէս գեղեցիկ են ու հիասքանչ, ապա ի՞նչ պիտի լինի Արարչի գեղեցկութիւնը:

Եթէ արեւի լոյսը այնչափ պայծառ ու սաստիկ է, որ չենք կարում նայել նորա վերայ, ապա ո՞րչափ և ո՞րպիսի անմերձենալի և անիմանալի լոյս պիտի լինի նորա ստեղծողը և նորան լոյս պարգեւողը: Պիտի զարմանա՞նք ուրեմն, թէ ինչու մինչև ցայսօր ոչ ոք 'ի մարդկանէ չէ տեսել Աստուծոյ երեսը և երբէք պիտի չկարողանայ տեսնել: Մ՝ի թէ Ստեղծողը իւր ստեղծեալներիցը աւելի սքանչելի պիտի չլինի՞: Թ՝է որ կարող լինէինք հասկանալ բոլոր նորա մեծութիւնը, նա էլ Աստուած չէր լինիր, և մենք էլ մարդ չէինք լինիր, այլ մէկ մէկ Աստուած կլինէինք:

Ուրեմն այսուհետև աշխարհիս կամ բնութեան գեղեցկութեան վերայ զարմանալիս, միտներդ բերէք նոցա Արա-

րէնը, օրհնեցէք նորա սուրբ անունը, գոհութիւն մատուցէք նորան, որովհետև մեր Արարիչն ևս նա է, որոյ ողորմութեամբը մենք ապրում ենք, և որոյ անչափ բարութիւնը մենք վայելում ենք։

Կրկնեցէք ձեր խօսքերով այս պատմութեան միտքը։ Ասացէք այս բառերի նշանակութիւնը. շքեղ, հիասքանչ, անմերձենալի, սքանչելի, փայլել, կատարեալ, շրջակայ, անշուշտ, փառք, հիանալ, էակ։

ՆԱՄԱԿՆԵՐ ՓՈՔՐԻԿ ԱՐԱՄԻ ՎԵՐԱՅ

Նամակ հինգերորդ։

Իմ սիրելի Արամ

Իմ առաջուան նամակներիցս, որ քեզ վերայ գրեցի, կարծեմ դու լաւ հասկացար, որ իմ գլխաւոր ցանկութիւնն այն է, որ դու կարողանաս սիրել մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսին և լինել մեր Հօր Աստուծոյ որդի։ Եւ ինչու եմ ես ուրիշ բաներից այս աւելի կամենում. որովհետև միայն սա է քեզ համար բարի և բախտաւոր լինելու ճանապարհը։ Դու չես կարող լինել բախտաւոր, թէ ոչ չես լինիլ բարի, և բացի Աստուած ո՛չ ոք չէ կարող քեզ բարի անել։

Ի՞նչով կարող ենք մենք իմանալ, թէ երեխայն սիրում է կամ չէ սիրում իւր Փրկիչ Յիսուս Քրիստոսին։ Մենք կարող ենք իմանալ նորա գործքերից. երեխայն, որն որ սիրում է Յիսուսին, աշխատում է, որ նորան դուր գայ ամէն իւր արարմունքներովը։ Նա գիտէ, որ Փրկիչը նորան կարող է տեսնել ամէն ժամանակ. նմանապէս գիտէ, որ Յիսուսը ատում է մեղքերը և չար գործերը։ Այս պատճառաւ ամենայն երեխայ պէտք է աշխատէ, որ վատ խօսքեր գործ չածէ, հնազանդէ իւր ծնողներին և չվարուի նոցա հետ անմարդի

և թշնամաբար. չպէտքէ կռուի և ո՛չ վատ անուններ տայ նոցա. այլ պէտք է լինի խոնարհ, քաղցր և ամենի հետ սիրով: Ուրեմն այսուհետև յոյս ունիմ, որ դու կ՚աշխատես խօսել և գործել այն, ինչ որ ճշմարիտ է, լսել և հնազանդ լինել բարեկամներիդ, որք Աստուածանից տուած են քեզ ծնողաց տեղ, լինել շնորհակալ և երախտագէտ նոցա, որք քեզ համար բարերարութեամբ հոգս են անում, տալ ողորմութիւն աղքատներուն և օգնել նոցա՝ ինչքան որ կարող ես, լինել ժամասէր, բարեպաշտ և երկիւղած Աստուածանից:

Մէկ անգամ կար մէկ բարի և սուրբ երեխայ, որն որ չգիտէր և չէր գործում մեղք ո՛չ մտքով, ո՛չ խօսքերով և ո՛չ գործով: Նա սիրում էր Աստուծուն և պահպանում էր նորա օրէնքը, և նմանապէս սիրում էր իւր երկրային ծնողաց և էր խոնարհ ու բարի: Նորա բերնիցը երբէք չէ դուրս եկած վատ խօսք. նորա ձեռը երբէք չէ եղել մեղաւոր ոչինչ գողութեան մէջ, և նորա ոտը երբէք չէ եղել դրած չարութեան ճանապարհի վրայ: Ո՞վ էր այս սուրբ երեխայն. ի՞նչ էր նորա անունը և ո՞րտեղ էր կենում: Նա էր մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսն, որն որ մարդացաւ, եղաւ փոքր երեխայ և կենում էր իւր ծնողաց հետ Նազարեթումը, որ Հրէաստանումն է: Դու կարող ես կարդալ նորա պատմութիւնը քո կտակարանումը: Ո՛հ, կարդա՛ միշտ և աղօթք արա՛, որ Նա, որն որ մէկ անգամ քո սիրու համար փոքր երեխայ դառաւ, օրհնէ և սրբէ քեզ:

Քեզ սիրող մօրաքոյր:

ՈՐԴԵԿՈՐՈՅՍ ԾՆՈՂ.

Աստղիկ ունէի ես իմ երկնքում,
Փայլում էր լուսով իւր շրջապատում:

Երբ գալով գիշերը, ծածկումէր խաւար,
Սիրուն գեղեցիկ էր այն իմ գոհար։

Թռչնիկ ունէի իմ մութ անտառում,
Ոչ մինը չկար այնպէս կարկաջուն.
Ծառերի տակին, հովիկ ստուերում,
Սիրումէր նա միշտ երգել իւր գարուն։

Ծաղկիկ ունէի իմ անապատում,
Խնդութիւն կեանքիս տխուր և տրտում.
Նորա քաղցր ժպտման, զուարթ երեսին
Կ՚նախանձէր վարդը Եդեմայ դրախտին։

Բայց խաւարեցաւ աստղիկս երկնային,
Սոխակս թռաւ իւր բունը մթին,
Խլեց իմ վարդը սառն հիւսիսային,
Խոր խոցոտելով ծնողիս հոգին։

ԱՄԱՌՈՒԱՅ ՇՈԳ

Ամառուան շոգ օրերից մէկն էր։ Սաթինիկը քրտինքը սրբելով սկսաւ տրտնջալ ու գանգատիլ մօրը, որ շոգից շատ նեղանում է, ու դժուարանում է մինչև անգամ շունչ առնուլ։— Այժմեան շոգի պատճառը, պատասխանեց նորան մայրը, ես քեզ կասեմ մի քանի շաբաթից յետոյ. իսկ այժմ այսչափ միայն կարող եմ ասել քեզ, որ այդ Աստուծոյ կամքն է, և Աստուած ոչ մի բան չի անէր, որ մեզ վնասակար լինի։

Սաթինիկը լուռ կացաւ հաւատալով մօր խօսքերին, որոյ բերանից միշտ ճշմարտութիւններ էր լսում։ Ամէն ջանք արաւ որ համբերութեամբ և առանց տրտնջալու տա-

նի ամառուան շոգը, որ դեռ բաւական ժամանակ շարունակուեցաւ:

Անցաւ Օգոստոս ամիսը ու շոգն էլ վերջացաւ: Աշնան հով ու գեղեցիկ օրերը կասես թէ հրաւիրում էին Սաթենիկին գնալ այգի, ուր հասած կարմիր պտուղները փայլում էին ծառի տերեւների մէջ, ու խաղողի քաղելու ժամանակն էր: Սաթենիկի ուրախութիւնը անպատմելի էր, երբոր տեսաւ կարմիր խնձորները, սեւ ու սպիտակ խաղողի ողկոյզները, հասած դեղձն ու տանձը:

«Ահ, մայր իմ, ի՜նչ սքանչելի պտուղներ է պարգեւել մեզ Աստուած, կանչեց Սաթենիկը հիացած:— Այո՛, աղջիկս, պատասխանեց մայրը. բայց մէկ միտքդ բեր, որ դու ժամանակաւ նեղանում էիր Աստուծոյ վերայ, որ քեզ կամենում էր այս պտուղներս պարգեւել: Գիտացիր ուրեմն, որ մեր այս պտուղներին գեղեցիկ գոյն ու քաղցր համ տուողն այն շոգն էր, որ դուն մի քանի շաբաթ առաջ գանգատում էիր նորա վերայ, և չէիր կամենում համբերութեամբ տանել:

Կրկնեցէք այս պատմութիւնը ձեր խօսքերով եւ գրեցէք: Ի՞նչ կնշանակէ «ողկոյզ»: Ասացէք, ինչ պտուղներ գիտէք, որոնք դուրս են գալի պարտէզներումը ու այգիներումը:

ԱՐԵՒ ԵՒ ԱՆՁՐԵՒ

«Ահ, երանի՜ թէ միշտ պայծառ արեւ լինէր» ասում էին Մարգուհին ու Շողակաթը մէկ տխրագին, մրրկալից և անձրեւային օր: Նոցա ցանկութիւնը շուտով կատարուեցաւ. երկու ամիս շարունակ երկնքի երեսին ամպ չերեւաց: Բայց այն երկարատեւ չորութիւնը շատ վնաս տուաւ արտերին և պարտէզներին. ամէն տեղ ծաղիկներն ու արօտը ցա-

մաքեցան, դաշտերի ցորեանը, գարին, հաճարը և միւս ցանքը չորացան, առուները և աղբիւրները կտրուեցան: Բոլոր ժողովուրդը մեծ նեղութեան և յուսահատութեան մէջ էր:

«Տեսնո՞ւմ էք այժմ, ասաց մայրը իւր աղջկանցը, որ անձրևն ևս արևի պէս շատ հարկաւոր է և օգտակար իւր ժամանակին:»

Ի՞նչ էին ասում Վարդուհին ու Շողակաթը մէկ անձրեւային օր: Կատարուեցա՞ւ նոցա խնդիրքը: Յետոյ մայրն ինչ ասաց նոցա:— Կրկնեցէք բոլոր պատմութիւնը եւ գրեցէք:

Ի՞նչ կնշանակեն եւ ինչպէս են շինուած այս բառերը. մրրկալից, երկարատեւ, յուսահատութիւն: Ասացէք, ինչ անուններ գիտէք, որ տալիս ենք աղջկանցը: (Վարդուհի, Տիրուհի, Թագուհի, Հայկանոյշ, Շողակաթ, անթառամ, Վարդիթեր): Ի՞նչպէս են շինուել այդ անունները:

ԻՆՉՊԷՍ Է ԳՈՅԱՆՈՒՄ ԱՆՁՐԵՒԸ

Բագրատն ու Լևոնը կէսօրին ուսումնարանից եկան տուն: «Այսօր ի՞նչ սովորեցաք», հարցրեց նոցա հայրը:

—«Շատ բան, հայր», ասաց Բագրատը. «միայն մի բան ես չկարողացայ պարզ հասկանալ: Վարժապետը մեզ պատմեց թէ ինչպէս է գոյանում անձրևը, երկու, երեք անգամ կրկնեց, բայց ոչ ես, և ոչ Լևոնը պարզ չհասկացանք»:

—Երևի լաւ չէք լսել պատմելու ժամանակը, կամ վարժապետը ձեզ օրինակով չէ հասկացրել:

—«Մենք ուշադրութեամբ էինք լսում, հայր, բայց դժուար հասկանալու բան է, և վարժապետն էլ օրինակ չասաւ:»

—«Առանց օրինակի դժուար է պարզ հասկանալ այդ բանը, որդիք: Այօր մեր պարտէզումը օղի (արաղ) են քաշում. գնանք այնտեղ և ես ձեզ պարզ հասկացնեմ: Տեսնո՞ւմ

էք այս օղու պղինձը. ահա բանամ, նայեցէք տեսէք ինչ կայ մէջը։ Սորա միջինը գինի է. բայց գիտէ՞ք ինչպէս են գինուցը օղի քաշում։»

—«Գիտեմ, հայր», պատասխանեց Բագրատը. «գինին տաքացնում են կրակով, նորանից բարձրանում է գոլորշին, որ սառը ջրի միջով անցկենալով օղի է դառնում ու ջրի պէս վազում։»

—«Այդպէս է, որդիս, և այդպէս էլ գոյանում է անձրևը. միայն թէ անձրևի պղինձը մեր օղու պղնձից շատ և շատ մեծ է։ Անձրևի պղինձը աշխարհս է. գինին, որից մենք օղի ենք քաշում, ծովերի ջուրն է. կրակը՝ արեգակն է, որ տաքացնում է ծովերի ջուրը, գոլորշի է դարձնում ու բարձրացնում ամպի նման երկինքը. սառը ջուրը, որով մենք պղնձի գոլորշին սառցնելով խտացնում (թանձրացնում) ենք՝ ու ջրի պէս հեղուկ օղի ենք շինում, երկնքի սառնամանիքն է, որ այնտեղ ժողովուած գոլորշին, որ ամպ ենք ասում, սառցնելով խտացնում է ու մանր կաթիլներ դարձնում. այդ մանր կաթիլները դարձեալ միանում են ու խոշոր կաթիլներ դառնալով թափւում են երկնքից՝ ոչ թէ մեր քաշած օղու պէս բարակ կաթկաթելով կամ ծորալով, այլ հեղեղի պէս, որից գոյանում են ահագին գետեր։ Այժմ հասկացա՞ք, որդիք, թէ ինչպէս է անձրևը գոյանում։

—«Այո՛, հայր, շատ լաւ հասկացայ», ասաց Բագրատը։

—«Ես էլ հասկացայ», ասաց Լևոնը. «բայց ծովի ջուրը աղի է, հապա ինչո՞ւ անձրևի ջուրը ծովի ջրի պէս աղի չէ եթէ նորանից է բարձրանում։»

—«Այդ շատ պարզ բան է, որդիս, ինչպէս մեր պղտոր ու կարմիր գինուցը պարզ ու սպիտակ օղի է գոյանում, այն-

պէս էլ պղտոր ու աղի ծովի ջրիցը պարզ ու համեղ անձրեւի ջուրն է գոյանում, որովհետեւ թէ գետ ու թէ ջրի աղը կամ աղը գոլորշի չէ դառնում, այլ մնում է տեղը։

Պատմեցէք տեսնեմ ինչպէս է գոյանում անձրեւը։— Կրկնեցէք այս պատմութիւնը եւ գրեցէք։

Ասացէք այս բառերի նշանակութիւնը. օդի, գոլորշի, խառնել, սառնամանիք, ծորալ։

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱԾՔ

2

Գիժը գնաց հարսանիք, ասաւ էս մեր տանիցը լաւ ա
Գժին խրատն ինչ անէ, սեւին սապոնն ինչ։
Գժի ալուրը Աստուած կաղայ։
Գէլի գլխին աւետարան կարդացին, ասեց շուտ արա ոչխարը գնաց։
Գող՝ սրտումը դող։
Գողը մէկի մեղքը տարաւ, կորցնողը հարիւրի։
Գողը գողէն գողացաւ, Աստուած վերեւէն զարմացաւ։
Գողն ի՞նչ կուզէ, մութը գիշեր։
Դարդակ կարասը մեծ ձայն կտայ։
Դեռ չծնած երեխին շոր մի՛ կարեր։
Դրուստ խօսողի գտակը ծակ կըլի։
Երազումը սոված հաց կը տեսնէ, ծարաւը ջուր։
Երկաթը տաք տաք կըծեծեն։
Խօսքով փլաւ չի եփուիր. եղ ու բրինձ է հարկաւոր։
Երեխին բան դիր, հետը գնա,
Երեխէն մեծանայ, մէրը կշտանայ։
Երկու գժին մի խելօք։
Եօրղանիդ գէօրայ ոտդ մեկնիր։

Էշան միսը համ չի ունենայ։
Էծն ինձի համար լաւ ա, քանց մի սուրու ոչխարը։
Էն ջուրը վախեցի՛ր, որ ոչ թշշում ա, ոչ խշշում ա։
Էն վաղ էր, որ էշը կաղ էր։
Էշն ինչ գիտէ նուշն ի՛նչ ա։
Էշն իշի մօտ որ կապես, կամ տուսը կառնի կամ փառսը։
Ընչանք երեխէն լաց չըլի, մէրը ծիծ չի տալ։
Ընչանք չի գայ յետինը, չի յիշուիլ առաջինը։

ԱՐԵԳԱԿՆ ԵՒ ԼՈՒՍԻՆ

Մէկ գեղեցիկ օր Աշոտն ու Գագիկը իրենց պարտէզումը ման էին գալի, ու դատողութիւն էին անում արեգական վերայ։ Երկար դատողութիւն անելուց յետոյ նոքա սկսան վիճել ու կռուել։ Հայրը, որ փոքր ինչ նոցանից հեռու էր, լսեց նոցա կռուի ձայնը, կանչեց ու հարցրեց պատճառը։—«Հայր իմ», պատասխանեց առաջացած Աշոտը. «ես ասում եմ որ արեգակը մէկ կալի չափ է, բայց Գագիկը չէ հաւատում և ինձ ուզում է համոզել, որ մէկ ջրաղացի քարի չափ է»։—«Երկուսդ էլ սխալ էք, որդիք», ասաց հայրը, «և 'ի զուր տեղն էք վիճում ու կռւում իրար հետ։ Արեգակը ոչ թէ մէկ ջրաղացի քարի կամ մէկ կալի չափ է, այլ շատ և շատ աւելի մեծ է քան թէ մեր երկիրը»։—«Հապա ինչո՞ւ արեգակը այնքան փոքր է երևում», հարցրեց Աշոտը։—«Որովհետև շատ հեռու է մեզանից», շարունակեց հայրը, «եթէ թնդանօթի ռումբը, որ սաստիկ արագութիւնով, այս մեր երկրից թռչէր գնար դէպի արեգակը, քսան տարումը հազիւ թէ հասնէր արեգական մօտ»։ Աշոտն ու Գագիկը բերանները բաց նայում էին զարմացմամբ իրենց

հօր վերայ։ «Տեսնում էք, որդիք», ասաց այն ժամանակը հայրը, «չգիտէք քանի էութիւնը, բայց վիճում էք ու կռուում իրար հետ 'ի զուր տեղը»։—«Արեւն որքան աւելի մեծ պէտք է լինի լուսինը, հայր իմ, ասաց Աշոտը»—«Ին-չի՞ցն ես այդպէս կարծում», հարցրեց նորան հայրը։—«Որով-հետեւ աւելի մեծ է երեւում»—«Ճշմարիտ ես ասում, աւելի մեծ է երեւում,» պատասխանեց հայրը, «բայց իրօք արեգա-կիցը շատ եւ շատ փոքր է, նա փոքր է նաեւ մեր երկրից. միայն նա մեզ նորա համար է արեգակիցը աւելի մեծ ե-րեւում, որ նորա պէս երկրից շատ հեռու չէ, այլ մօտ է»։

Կրկնեցէք այս պատմութիւնը եւ գրեցէք։

ԼՈՒՍԻՆ ՊԱՏԿԵՐ ՄԱՐԴԿԱՑԻՆ ԿԵՆԱՑ

Լուսինը հանգարտութեամբ կապուտակ երկնքի երեսին գնումէր մէկ երեկոյ. որդիքը ցոյց տուին նորան իւրեանց հօրը. «Տես՛, հայր, ի՜նչպէս գեղեցիկ է, ինչպէս սիրուն է եւ պայ-ծառ, ասում էր Սուրէնը, միշտ այդպէս չէ լինում»—«Այո շատ ժամանակ չէ որ ծնուել է, որդիք,» պատասխանեց հայրը, «այսուհետեւ երթալով պիտի աճի, եւ նորա լոյսը օր է օր պիտի աւելանայ, մինչեւ որ բոլորովին բոլորակ պիտի տեսնենք նո-րան։ Երբեմն կպատահի որ ամպերը կգան կծածկեն նորան, եւ աներեւոյթ կանեն մեր աչքերից։ Մի փոքր ժամանակից յետոյ կսկսի կամաց կամաց նուազել, վերջապէս բոլորովին կանհետանայ, եւ այնպէսով մարդկային կենաց մէկ կատա-րեալ պատկեր կձեւացնէ»։—Ես չեմ հասկանում ասածդ, հայր, կանչեց Խորէնը։—Իսկ ես իմացայ, ասաց Սուրէնը, թէ ի՞նչ էք կամենում դորանով հասկացնել։ Մարդս նոյնպէս ծնանում է, սնանում է իւր կատարեալ հասակը, փոքր

ինչ ժամանակ առոյգ կեանք է անցկացնում աշխարհիս վերայ և յետոյ ծերանում է, մեռնում է ու անյայտանում գերեզմանի մէջ։—Այդպէս է, որդիս, ասաց հայրը․ բայց լուսինը ծածկող ամպերն ի՞նչ են։—Այդ արդէն իմ կարողութիւնից վեր է բացատրելը, պատասխանեց Սուրէնը։—Ամպերը դժբաղդութիւններն են, ասաց հայրը, որ մարդուս կենաց մէջ պատահում են․ մարդ չկայ որ միշտ երջանիկ ու խաղաղ օրեր անցկացնէ․ ամէն մարդ իւր ցաւերը ու նեղութիւնները ունի։ Բայց համեստ, առաքինի և մաքուր սիրտ ունեցող մարդու կենաց մէջ նոքա կանցանեն, կերթան առանց նորա սրտի խաղաղութիւնը պղտորելու։ Երբ որ այնպիսի մարդը մեզ համար անհետանում է, նա ամենևին չէ ոչնչանում կորչում, այլ մի լուսաւոր տեղ անմահութեան անթառամ պսակովը փառաւորւում է։

Պատմեցէք տեսնեմ լուսինն ինչպէս է ձեւացնում մարդկային կենաց պատկերը: Գրեցէք ձեր պատմածը:

Ի՞նչ կնշանակեն այս բառերը․ անթառամ, բացատրել, դժբախտութիւն, առոյգ, նուաղիլ:

ՎԱՅՐ ԸՆԿՆՈՂ ԱՍՏՂԵՐ

«Հայրիկ, ասաց դուստրը հօրը,
Կապոյտ երկնքի վերայ
Ո՞րքան աստղեր փայլումեն վառ,
Նոցա համար, թիւ չը կայ.
Ասումեն որ ամենայն մարդ
Աստղիկ ունի երկնքում.
Ճշմարի՞տ է, սաա՛, հայրիկ,
Իմը ո՞ր տեղ է փայլում»։

—Այո՛, դստրիկ, այդ աստղերը
Ունին հաշիւ ու համար,
Եւ մեզանից իւրաքանչիւր
Մի աստղ ունի իւր համար։

«Հայրիկ, տես տես, աստղը թռաւ,
Յետքից պայծառ գիծ թողեց,
Աստղեկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերեւեց»։
—Ո՛վ իմ դստրիկ, հանգիստ կացիր,
Դա մեծատան մի աստղ էր,
Որ իւր օրում, իւր կեանքումը
Խիղճ ասածը չը գիտէր.
Աղքատները նորա դռնից
Գիշեր ցերեկ հալածուած,
Մի մարդ չը կար նորան ծանօթ,
Որ չը լինէր վշտացած։

«Հայրիկ, տես տես, աստղը թռաւ,
Յետքից պայծառ գիծ թողեց,
Աստղեկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերեւեց»։
—Ո՛վ իմ զաւակ, մի՛ վրդովուիր,
Դա պատանու մի աստղ էր,
Որ իւր հօր ու մօր խօսքը
Իւր կեանքումը յարգած չէր.
Նա թողել էր իւրեանց տունը,
Ուշք չէր դարձնում տան վրայ,

Իւր ծնողքը լացուցել էր,
Ինչքը վատնել անխնայ։

«Հայրիկ, դարձեալ թռաւ մի աստղ,
Վայր ընկաւ նա երկնքից.
Հայրիկ, ո՞վի աստղն էր արդեօք,
Որ զրկուեցաւ իւր տեղից»։
—Ո՛հ դստրիկս, հանգիստ կացիր,
Կեղծաւորի դա աստղ էր,
Որ իւր օրում ուղիղ մի խօսք
Մարդու երբէք ասած չէր.
Փարիսական իւր ձեւերով
Աշխարհք խաբեց, զարմացուց,
Եւ պատճառով Աստուած նորա
Աստղի լոյսը խաւարեցուց։

«Հայրիկ, տես տես, աստղ թռաւ
Եւ գիծ անգամ չը թողեց,
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերեւեց»։
—Ո՛հ, սիրական խաղաղ մնա՛,
Բռնակալի դա աստղն էր,
Որ աշխարհը իւրեան գերի
Ծնած օրից կարծել էր.
Շատ հալածանք, շատ նեղութիւն,
Պատճառեց նա իւր կեանքումը.
Շատ տուն քանդեց, շատ մարդ զրկեց,
Գութ չունեցաւ իւր սրտումը։

«Ապա այն ի՞նչ աստղ է, հայրիկ,
Որ այնպէս պարզ վառվումէ,
Նորա մաքուր պայծառ լոյսը
Զորս կողմը բակ բռնել է»։
—Ո՛հ իմ դստրիկ, աղօ՛թք արա,
Դա ծերունու մի աստղ է,
Որ իւր կեանքում ոչ մի մարդու
Ոչինչ վնաս տուած չէ.
Այն լուսաւոր բակն է նորա
Առաքինի գործքերը.
Աղօթք արա, որ երկարուին
Նորա կեանքի թելերը։

Շատ օր չանցաւ, երկնքիցը
Մի այլ վառ աստղ պակասեց.
Ո՞վի աստղիկն էր որ ընկաւ,
Բան հարցանող չերևեց։
Մինչ դեռ լուսինը արծաթափայլ
Լոյս էր տալիս գիշերին,
Խորհրդաւոր մինչ տիրել էր
Անվրդով խոր լռութիւն,
Մի սրտաթափ, մազերն արձակ
Վազեց աղջիկ սգաւոր,
Դէպ ի գեղի գերեզմանքը,
Ծունկ չոքեց մի շիրմի մօտ։
«Հայրիկ, աստղիկդ չէ փայլում,

Դու յաւիտեան քնեցիր.
Ո՛ւր ինձ քո մօտ, քո ծոց, քո գիրկ,
Ինչո՞ւ անտէր թողեցիր։
Իմ աստղիկն ասա՛ նոյնպէս
Որ չը փայլի, հերի՛ք է.
Այս աշխարհը ինձ առանց քեզ
Մութն ու խաւար մի բանտ է»։

Մի մարդ չը կար, որ նկատէր,
Որ հետեւեալ գիշերին
Պակասեցաւ երկնքիցը
Մի պայծառ աստղ խնդագին։
Երրորդ օրը շատ սգաւորք
Փորեցին մի գերեզման,
Ուր թաղուեցաւ իւր հօր մօտին
Մարմինը խեղճ աղջկան։

«Հայրիկ, տես տես, աստղը թռաւ,
Յետքից պայծառ գիծ թողեց,
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերևեց....»

ՆԵՐԿԱՅ ԵՒ ԱՊԱԳԱՅ

«Որդեակ», ասաց մի անգամ ծերունի հայրը իւր որդուն, «անց է կենում մարդկանց կեանքն ծաղկանց պէս, որ առաւօտը բացւում են և երեկոյեան ժամանակը թառամում

ու ընկնում ոտքի տակ փչանում: Սրընթաց գետի պէս վազում են, անց են կենում մարդկանց սերունդները. չկայ աշխարհիս վերայ այնպիսի բան, որ կարողանայ ժամանակի ընթացքը բռնել կանգնացնել, որ իւր հետ քաշում է տանում նաև ամենահաստատուն և անշարժ երևեցած բաները»:

«Դու ես, որդեակ, դու ես, որ արդ մի գեղածիծաղ և զուարճալից մանկութիւն ես վայելում, գիտացիր որ այս զուարթագեղ հասակդ քնքուշ ծաղիկ է, որ բացուած չբացուած պիտի թառամի, թարշամի, չորանայ. անզգալի կերպինքդ քեզ փոխուած պիտի տեսնես. գեղատեսիլ շնորհքդ, քաղցր զուարճութիւններդ, հեշտալի բերկրութիւններդ, ույժդ, առողջութիւնդ, ուրախութիւնդ, սոքա ամենքն երազի պէս պէտք է ցնդին անհետանան, և նոցա միմիայն տխուր յիշատակը պիտի մնայ քեզ մօտ: Հիւանդոտ ծերութիւնը, որ թշնամի է ամենայն զուարճութեանց և բերկրութեանց, պիտի գայ երեսդ կնճռելու և թառամեցնելու, մարմինդ ծռելու կորացնելու, անդամներդ տկարացնելու, սրտիդ մէջ ուրախութեան և խնդութեան աղբիւրը ցամաքացնելու, և ամէն բանի անզգայ անելու՝ բաց ի ցաւերից»:

«Այս ժամանակը քեզ շատ հեռու է երևում. աւա՜ղ, խաբւում ես, որդեակ. ահա շտապում է, վազում է նա ու հասնում. և ներկայն որ փախչում է՝ արդէն շատ հեռացաւ, որովհետև խօսած ժամանակնիս անհետանում է, էլ չէ կարող վերադառնալ ու մօտենալ: Ուրեմն, որդեակ իմ, ներկայի վերայ ամենևին մի վստահանար, և մի՛ դներ քո յոյսը նորա վերայ, այլ ապագային սպասելով առաքինութեան ծանր ու դժուարին ճանապարհի միջովը շարունակէ միշտ քո կեանքը, ո՛րքան կարող ես բարութիւն ու բարեգործութիւն արա, միշտ ապագայ կեանքդ ունեցիր աչքիդ առաջին

և բարի վարքովդ, բարի գործքովդ ու արդարասիրութեամբ քեզ համար տեղ պատրաստէ արքայութեան մէջ։

Նկարագրեցէք ձեր ներկայ եւ ապագայ կեանքը:

ՆԱՄԱԿՆԵՐ ՓՈՔՐԻԿ ԱՐԱՄԻ ՎԵՐԱՅ

Նամակ վեցերորդ:

Իմ սիրելի Արամ։

Դու գիտես, որ մենք ամենքս՝ թէ մեծ և թէ փոքր, պէտք է մեռնինք։ Ոմանք շատ են ապրում և ծերանում, և ոմանք մեռնում են դեռ հասակը չառած։ Բայց միայն մարմինն է մեռնում, և հոգին, ինչպէս ես քեզ ասացի առաջ, պէտք է յաւիտեան կենայ։

Կայ մի այնպիսի լուսափայլ և փառաւոր աշխարհք, ուտեղ որ Յիսուսն է կենում փառքի մէջ, և որն որ ո՛չ աչքն է տեսած, ո՛չ ականջն է լսած և ո՛չ մարդու մտքով է անցկացիլ, որ կարողանայ երևակայել այնպիսի փառքի պայծառութիւնը. այնտեղ ամենի արտասուքը սրբած է, այնտեղ ո՛չ կայ մեղք, ո՛չ մահ, ո՛չ տրտմութիւն, ո՛չ նեղութիւն: Այնտեղ հազարաւոր և տասն հազարաւոր բախտաւոր հոգիք միաւորած են նոր երգով, որով գովում են և փառաբանում են Յիսուսին, Աստուծոյ Գառին, որն որ ջնջեց աշխարհքի մեղքերը. այնտեղ կան հրեշտակներ, որքածում են իւրեանց ոսկէ տաւիղներու վերայ և երգում. «Մեծ և սքանչելի են քո գործքերը, Տէր Ամենակարող Աստուած, քո դատաստանը արդար և ճշմարիտ է, ո՛վ սրբոց Թագաւոր»։ Այս բախտաւոր տեղը անուանւում է արքայութիւն։ Ես քեզ չեմ կարող ասել ամեն փառաւոր բաները, ինչ որ

արքայութեան համար ասած է. բայց շատ բան դու կարող ես կարդալ քո Աստուածաշընչումը, որտեղ էլ արքայութիւնը անուանւում է Նոր Երուսաղէմ, Երկնային Սիօն, Աստուծոյ Քաղաք:

Այս բախտաւոր տեղը Յիսուսը ընդունում է միայն նոցա հոգիները, որք սիրում են Նորան, և երբ որ նոցա մարմինը մեռնում է: Փոքր երեխայքը կարող են գնալ այնտեղ և միշտ երգել գովութեան և փառաբանութեան երգը: Դու միտդ չունի՞ս, որ Յիսուսը ասաց. «Թողէք երեխանցն և մի արգելէք դոցա, որ իմ մօտ գան, որովհետև դոցապէսներու համար է Երկնային Արքայութիւնը»:

Բայց վա՜յ, կայ էլի մէկ սարսափելի տեղ, ուր պէտք է չար հոգիները գնան, որք չեն սիրում Փրկչին և չեն թողում իւրեանց մեղքերը. այս յաւիտենական նեղութեան և տարաբախտութեան տեղն է, և նոքա պէտք է կենան այնտեղ սատանի և նորա չար հրեշտակների հետ: Նոքա, որք չեն նորոգել իւրեանց սիրտը Աստուծոյ սիրով, նոքա, որք արհամարհում են Աստուածաշունչն և ուրիշ սուրբ գրքերը և չեն պահում Աստուծոյ պատուիրանքները, նոքա, որք չեն խոստովանում և չեն ցաւում իւրեանց մեղքերու համար —նոքա պէտք է հեռանան Աստուծոյ երեսիցը և գնան այն զարհուրելի տեղը, որտեղ նոքա չեն կարող խնդրել ողորմութիւն, և որտեղից երբէք էլ չեն կարող դուրս գալ:

Իմ որդի, ուրեմն դու աղօթք արա, որ պահպանուիս այսպիսի տանջանքի տեղէցը: Խնդրէ Յիսուսին, քո բարեկամին, որ ազատէ քեզ մեղքերից և դժոխքից: Խնդրէ Նորան, որ ուղարկէ իւր Սուրբ Հոգին քո սրտի մէջը, որ դու կարողանաս ծառայել Աստուծոյ մինչև կենդանի ես, և գնաս երկինքը, երբ որ կը մեռնիս:

Այս նամակները քեզ այն յոյսով գըրեցի, որ մօտենաս քո սիրելի Փրկչին։ Ես քեզ տուի Աստուածաշունչը, որ դու կարողանաս կարդալ և իմանալ երկնքի ճանապարհը։

Քեզ սիրող մօրաքոյր։

ԻՆՁ ՀԱՄԱՐ ՉԷ

Ինձ համար չէ՛ գարնան գալը,
Ինձ համար չէ՛ ծառի ծաղկելը,
Ուրախութեան սրտի գրգիռը,
Ո՛չ մի բերկրանք չեն ինձ համար։

Ինձ համար չէ՛ կենաց բաղդը,
Ինձ համար չէ՛ երջանկութիւնը,
Եւ զաւակաց քաղցր սէրը,
Աւաղ բախտիս, չէ՛ ինձ համար։

Ինձ համար չէ՛ փայլուն լուսինը,
Անտառ ու սար լուսաւորելը,
Գարնան վարդի երգչի տաղերը,
Սոխակ ու վարդ չե՛ն ինձ համար։

Ինձ համար չէ՛ բարեկամաց
Մէկտեղ սիրով տօն կատարելը,
Զատիկ օրուայ ուրախ ասելը
«Քրիստոս յարեաւ»՝ չէ՛ ինձ համար։

Ինձ համար չէ՛ ծնողաց լացը,
Ինձ համար չէ՛ եղբարց տըխրիլը,
Գերեզմանիս վրայ արտասուելը
Բարեկամաց՝ չէ՛ ինձ համար։

Բայց ինձ համար կըգայ ժամը,
Կ'երթամ թըշնամեաց պատերազմը,
Եւ մահառիթ սպանիչ գընդակը
Որ պատրաստած է ինձ համար։

Այս երգի եղանակը գիտէք, թէ ոչ։

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱԾՔ

3

Թրի կտրածը կը սաղանայ, լեզուինը չի սաղանալ։
Թունդ քացախը իր ամանը կը ճաքցնի։
Ժամից ես եմ գալի, ողորմի Աստուածը դու ես ասում։
Իմաստունի հետ քար կրէ, յիմարի հետ փլաւ մի' ուտեր։
Իմ ու քունը տուն ա քանդում։
Ինչ էծն արաւ թըխմին, թըխմն արաւ իծին։
Ինչ կասես, էն կըլսես։
Ինչ կը ցանես, էն կըհնձես։
Ինչտեղ հաց, ընտեղ կաց։
Ինչ տեղ պանիր, ընտեղ բանիր։
Ինքն ըստեղ չի, իրայ փայ Աստուածն ըստեղ ա։
Իշի քացուցը բեդամաղ մի' լինիր։
Լաւ եզը լծան տակին կերեւայ։
Խոփդ սուր ա, ամա հանդը բաժանովի ա։
Խօսքը մեծին, ջուրը պստիկին։
Ծառը քանի շատ պտուղ ունենայ, այնքան գլուխը կը-
կռացնէ։
Ծերանաս, ծերի ղադրն իմանաս։
Կաշառը մութը տեղը լիս կտայ։
Կատուին խաղ ա, մկանը մահ ա։
Կեսուրդ մեռաւ, տեղդ լէնացաւ։

Կարմիր ձուն զատկին կը սազի։
Կճուճը թօլ էլաւ խուփը գտաւ։
Կուշտը սոված՚ին մանր կը բրթէ։
Կորած հացը չի սաղանալ։

Մեկնեցէք այս առածը. «Ինչ էծն արաւ Թրիմին, Թրիմն արաւ իծին»։—«Թրիմն» ի՞նչ է։ (Մի տեսակ ծառ է, որոյ տերեւները շատ կսիրէ այծը, եւ որոյ կեղեւը կամ փայտը գործ են ածում կաշի ներկելու համար։)

ՄԱՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Անկիրթ տղայի պակասութիւնները։

2

Սիրում է մէկի, միւսի հետ ընկնիլ, ու անհամ, անվայել կատակներ անել։
Յանկարծակի ձայներով, կամ այստեղ այնտեղ թագչելով, մէկին միւսին վախեցնում է, ու մեծ զուարճութիւն է զգում։
Մէկի յօրանջելն որ տեսնում է, մատը բերանն է կոխում։
Մէկի քիթը սրբելը որ տեսնում է, յանկարծ թաշկինակը ձեռքից քաշում է։
Երբոր տեսնում է որ մէկը աթոռի վերայ պիտի նստի, յետեւից թագուն աթոռը քաշում է, խեղճին վայր ձգում, ու վրան խնդում ծիծաղում։
Եթէ մէկին քնած տեսնում է, գնում է կողը խտղտում, կամ քթի ծակը յարդ, փետուր խցկում։
Սրբազան բաները և մինչև անգամ Աստուծոյ սուրբ անունն անդադար բերանն առած, նոցանով երդնում է։
Ստէպ ստէպ բերանիցը անվայել խօսքեր ու յիշոցներ է հանում, ոչ Աստըծուցը վախելով և ոչ մարդկանցից ամաչելով։

«Աչքս քոռանայ, արևս սևանայ, ես մեռնիմ, դագաղս տեսնես, ինձ Աստուած փչացնէ.....» և սոցա նման անմիտ խօսքերով երդմունքներ է անում։

Ընկերներին կսմթում է, դրդում է, ճանկռում է, և կարծես թէ նոցա տանջելով է միայն զուարճանում։

Ձեռքերով, աչքերով կատակներ է անում ու մարդկանց ծիծաղեցնում։

Խաղի մէջ միշտ իւր կամքն է ուզում յառաջ տանել։

Միշտ իւր սիրած խաղն է ուզում որ խաղան, և չէ մտածում որ երբեմն ուրիշների ուզածն էլ պէտք է անել.

Խաղի մէջ անդադար վէճ, կռիւ է հանում։

Ամէն տեսակ խարդախութիւն ու խաբէութիւն գործ է դնում, որ խաղի ընկերներին յաղթէ։

Իրանից փոքրերի հետ գոռոզութեամբ է վարւում, ու չէ մտածում, որ եթէ իրանից մեծերն էլ իւր հետ այնպէս վարուէին՝ բանն ո՛ւր կհասնէր։

Յանցանքը յայտնուած ժամանակը փոխանակ «սխալուեցայ» ասելու, կամ ներողութիւն խնդրելու, լրբաբար աշխատում է իւր գլուխը արդարացնելու,

Երբոր ուզածը չեն տալի կամ չեն կատարում, մեծասրտում է ու քիթը կախում.

Իւր արած յանցանքի համար անմեղ ընկերոջ պատժուիլը տեսնում է, ու անխիղճ վատութեամբ ձայն չէ հանում։

Մի ուտելու բան որ ունենում է, ամենևին ընկերներին բաժին չէ տալիս. անողորմաբար նստում նոցա առաջևը ուտում է, չմտածելով որ նոքա էլ իրան պէս տղայ են, կարելի է սիրտներուն ուզում է։

Եթէ նոցա մի բան տալու ես որ լինի, Կայենի պէս անպիտաններն կընտրէ ու կտայ։

Ընկերներու վերայ մի լաւ բան տեսած ժամանակը, փոխանակ ուրախանալու՝ նախանձից տրտմում է։

Սաստիկ ոխակալ ու վրէժխնդիր է լինում։
Մի դատարկ բանի համար յանկարծ տաքանում է բարկանում է, ու ինչ կրքի տէր լինելը ամենին յայտնում է։
Լրբաբար ծուխ կամ ծխախոտ է քաշում, ու հասակիցը չէ ամաչում։
Խաղութեան մէջ մտած ժամանակը մէկին միւսին հրում է, դրդում է, որ ինքը առաջ երթայ, ու առաջին տեղը կանգնի։

Հաւանում էք անկիրթ տղայի վարքին, թէ ոչ: Ուրեմն աշխատեցէք որ դուք նորան չնմանիք:

Ասացէք այս բառերի նշանակութիւնը. կատակ, խտղտել, յարդ, ստէպ, դրդել, վէճ, ոխակալ, վրէժխնդիր, կիրք, հրել:

ՊԱՏԻՒ ՏՈՒՐ ԾՆՈՂԱՑԴ ԵՒ ՍԻՐԷ ՆՈՑԱ

«Սիրելի Տիգրան», ասաց մօրաքոյրը մի անգամ իւր քեռորդուն. «Նախախնամութեան բարերարութիւններից մէկն էլ այն է, որ բարեսիրտ և որդեսէր ծնողք է պարգևել քեզ: Մի՛ մոռանար որ մայրըդ ինն ամիս քեզ իւր արգանդի մէջ պահեց, և ցաւերով ծնաւ. Ծնողքդ քեզ գիշեր ցերեկ կրռների վրայ խտըտած պահել են, և շատ անգամ գիշերները օրօրոցիդ մօտ անքուն լուսացրել են: Մերկ էիր՝ շոր հագցրին, տկար և անզօր էիր և միշտ օգնութեան կարօտ երբ որ ծնար՝ իսկոյն սկսան քեզ համար հոգս քաշել և խնամք տանել: Եւ այս հոգսը և խնամքը ոչ թէ օրէ ցօր պակասեցրին, այլ որչափ որ դու տարիքով մեծանում էիր՝ այնքան էլ նոքա քո վերայ աւելի հոգս և խնամածութիւն ունէին: Մի՛տքդ բեր, որ երկու ամիս առաջ երբոր հիւանդ էիր, քեզ ի՛նչպէս էին մտիկ անում. մայրդ ոչ գիշերը քուն ունէր և ոչ ցերեկը հանգիստ, անկողնիցդ համարեա թէ

չէր հեռանում, մինչև որ ինքն էլ հիւանդացաւ. Նմանապէս և Հայրդ՝ որչափ որ նորա գործքերը ներում էին՝ քո մօտդ էր լինում. ուրիշներին չըհաւատալով՝ ոչ ոքի հոգաբարձութեան տակ չէին թողում քեզ: Միշտ մտածում էին, որ դու բարի կըրթութիւն ստանաս, լաւ ուսումն առնուս, և լաւ պահպանես քո առողջութիւնդ, չխնայելով ոչ իւրեանց աշխատութիւնն և ոչ ծախսը: Լա՛ւ մտածիր թէ այժմ էլ ի՛նչ կըլինէիր՝ եթէ ծնողքդ ձեռք վեր առնէին քեզանից: Ուրեմն շնորհակալ կա՛ց Աստծուց, որ քեզ այդպիսի բարի ծնողք է տուել. բայց մի՛ մոռանար քո պարտքդ, որ նոցա պէտք է սիրես, հնազանդ լինիս և միշտ շնորհակալ. բարեբարութիւնը կըվճարուի շնորհակալութեամբ, իսկ սէրը սիրով: Նոյն իսկ բնութիւնը այս է ուսուցանում, և օրէնքը սոյն իսկ պարտաւորութիւնն է դնում քո վերայ: Ծնողաց չըսիրող որդին ոչ այլ ինչ է, եթէ ոչ հրէշ, իսկ սակաւ սիրողը՝ ապերախտ: Ապա ուրեմն պատիւ տուր քո ծնողացդ, որ բարի լինի քեզ, և երկայնակեաց լինիս երկրի վերայ:»

Պատմէ տեսնեմ, ի՛նչ ասաց մօրաքոյրը իւր քեռորդի Տիգրանին:

ՍԻՐԷ ՔՈ ՀԱՅՐԵՆԻՔԴ ԵՒ ՔՈ ԱԶԳԴ

«Սիրելի՛ Արամ», ասումէր միշտ հայրը իւր որդուն, «Ծնողքից յետոյ քեզ ամենից մերձաւոր և ամենից սիրելի քո ազգդ է: Այս պատճառաւ ինչպէս որ պարտական ես քո ծնողքդ սիրել, մեծարել և նոցա ծառայել, նոյնպէս էլ պարտական ես քո ազգդ և քո հայրենակիցներդ սիրել, և քո չափով և կարողութեանդ համեմատ նոցա օգնել: Այս պարտքերը քեզ սովորեցնում է հայրենասիրութիւնը՝ որն որ կարծես թէ նոյն իսկ բնութեան մէջ տնկուած է. որովհետև վայ-

րենի ազգաց, և մինչև անգամ անբան անասնոց մէջն էլ է գտնւում։ Այժմ լաւ մտածիր, սիրելիդ իմ, թէ ո՛րչափ մեծ ամօթ և նախատինք կըլինէր քեզ, եթէ որ այսպիսի մեծակշիռ բանի մէջ նոցանից պակաս գտնուէիր, կամ քո հայրենասիրութիւնդ նոցա հայրենասիրութիւնից աւելի մեծ և աւելի ազնիւ չըլինէր։ Հայրենասիրութիւնը կրթուած մարդու վերայ աւելի մեծ պարտքեր է դնում, քան թէ վայրենի կամ անկիրթ մարդու վերայ, և այս պարտքերը օրէ ցօր աւելանում են. և որչափ որ տարիքդ աւելանան՝ այնչափ էլ հայրենեացդ համար աւելի կատարելու պարտքեր կ՚ունենաս։ Աշխատի՛ր, որ ամէն գիտութիւնից առաջ բարոյական առաքինութիւններ (բարեգործութիւններ) սովորես, առանց որոց կարելի չէ նոյն պարտքերը լաւ կատարել. նոյնպէս զգո՛յշ կացիր այն չար գործքերից, որք կարող են քեզ արգելք լինել նոյն պարտքերդ կատարելու։

Բայց ամենից առաջ այս լաւ հաստատի՛ր մտքիդ մէջ, թէ ազգասէր մարդու ամէնից մեծ և առաջին պարտքը այն է, որ հետևի միշտ որ ինքը բարի, առաքինի, կրթուած և պատուաւոր լինի։ Ինչպէս որ բարի զաւակը պատիւ է իւր ծնողացը, նմանապէս էլ բարի մարդը պարծանք և պատիւ է իւր ազգին։ Եւ ինչպէս որ մէկ հայր իւր անպիտան որդու վերայ, որ նորա պատիւը նուաղացնում է և նախատինք է լինում նորան, իրաւունք ունի տրտնջալու, այսպէս էլ ազգը իւր անպիտան անդամների վերայ իրաւունք ունի տրտնջալու և գանգատելու, որ նոցա անարգութեանը պատճառ են լինում։ Ահ, սիրելի՛ որդեակ, չը լինի թէ քո վերայ քո ազգդ և հայրենիքդ նոյն տրտունջը և նոյն գանգատն անէ։ Ուրեմն ազգիդ պատիւ և պարծանք լինելու համար՝ հետևի՛ր միշտ առաքինութիւն գործել և չարութիւնից հեռանալ։»

ԳԵՐԻ ՅՈՅՆ ԲԱՆՏՈՒՄԸ

(Երգ:)

Հայրենիք սրբազան,
Իմ սիրուն աշխարհ,
Թռչումեմ դէպի քեզ
Հոգւովս անդադար:

Բայց աւա՜ղ, այս բանտում
Փակուած եմ անտես,
Պատերազմի դաշտում
Չեմ կռւում և ես:

Հանապազ տանջուեցայ
Քո ճակատագրով,
Սրտումս շղթաների
Ձայներ կրելով:

Թող այստեղ չարչարուեմ,
Ընծանօթ կապուած,
Միայն քեզ, հայրենիք,
Տեսնեմ ազատուած:

ԻՏԱԼԱՑԻ ԱՂՋԿԱՅ ԵՐԳ 1859 ԹՈՒԱԿԱՆԻՑ

«Մեր Հայրենիք թշուառ, անտէր,
Մեր թշնամուց ոտնակոխ,
Իւր որդիքը արդ կանչումէ,
Հանել իւր վրէժ, քէն ու ոխ:»

«Մեր Հայրենիք շղթաներով
Այսքան տարի կապկապած,

Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատուած:»

«Ահա՛, եղբայր, քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքով լուացի:»

«Նայի՛ր նորան, երեք գունով,
Նուիրական մեր նշան,
Թո՛ղ փողփողի թշնամու դէմ,
Թո՛ղ կործանուի Աւստրիան:»

«Ինչքան կին մարդ, մի թոյլ էակ,
Պատերազմի գործերում
Կարէ օգնել իւր եղբօրը,
Զանց չարեց քո սիրուն:»

«Ահա՛ իմ գործ, ահա՛ դրօշ,
Տուր ձի հեծի՛ր քաջի պէս,
Գնա՛ փրկել մեր հայրենիք,
Պատերազմի վառ հանդէս:»

«Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ՛ մեռնէ.
Բայց երանի՜, որ իւր ազգի
Ազատութեան կը զոհուի:»

Գնա՛, եղբայր, Աստուած քեզ յոյս,
Ազգի սէրը քաջալէր,
Գնա՛, թէ և չեմ կարող գալ,
Բայց իմ հոգին քեզ ընկեր»:

«Գնա՛ մեռիր դու քաջի պէս,
Թող չտեսնէ թշնամին
Քո թիկունքը, թող նա չասէ
Թէ վատ է Իտալացին:»

Ասաց. տուեց օրիորդը
Իւր եղբօրը մի դրօշ,
Մետաքսից էր, ազնիւ գործած,
Ուր երեք գոյն կար որոշ:

Եղբայրն առաւ և ողջունեց
Իւր սիրական քնքոյշ քոյր.
Առաւ զէնքը, սուր, հրացան,
Հեծաւ իւր ձին սևաթոյր:

«Քուրի՛կ,» կանչեց քաջ պատանին,
«Մնա՛ս բարեաւ, սիրական,
Այս դրօշակին պիտի նայի
Ամբողջ բանակ իտալեան:»

«Սա սո՛ւրբ է ինձ, երբ մկրտուած
Արտասուքով ու կնքած,
Դու յանձնեցիր ինձ յիշատակ,
Հայրենիքի նուիրուած:»

«Թէ մեռանիմ, դու մի՛ սգար,
Իմացի՛ր որ տարեցի
Դէպ ի մահու արքայութիւն,
Իմ հետ քանի թշնամի:»

Ասաց. վազեց դէպ ի հանդէս
Աւստրիացւոց յանդիման,
Իւր արիւնով գնել յաւէժ
Ազատութիւն իտալեան:

Ո՛հ, իմ սիրտը կտրատուումէ
Տեսանելով այսպէս սէր.
Դէպ ի թշուառ մի հայրենիք,
Որ ոտնակոխ եղած էր։

Ո՛հ....արտասուք ինձ խեղդումեն,
Այլ չեմ կարող բան խօսել.
Չէ՛....թշուառ չէ Իտալիան,
Եթէ կանայք այսպէս են։

ՈՒՍԻ՛Ր ԱՌԱՋ ՔՈ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ

Ամէն ուսման հիմը և գիտութիւն ստանալու միակ միջոցը լեզուագիտութիւնն է. և եթէ ոք կամենում է, որ կարգաւ և հեշտ ուսանի ուրիշ լեզուք՝ առաջ պիտի սկսէ իւր մայրենի լեզուն սովորել։ Լեզուն ազգայնութեան առաջին և գլխաւոր նշանն է. լեզուն միակ կապն է ազգայիններին իրարու հետ կապելու. այս պատճառաւ կարելի է ասել, թէ իւր մայրենի լեզուն չիմացողը համարեա թէ իւր ազգայնութիւնից հրաժարած, և իւր ազգից օտարացած է։ Այսպէս բնական և պատշաճական է, և պարտաւորութիւն է մարդուս՝ որ ամէնը իւր ազգի լեզուն սովորի։ Ահա ձեզ օրինակ անկիրթ ազգերը՝ որոնք թէ՛ և ունենան անկիրթ, աղքատ և չըմշակուած լեզու, միշտ նոյն լեզուն են սովորում. ուրեմն ո՛րչափ անպատշած բան կը լինի, թէ որ մէկը ազնիւ, հարուստ, հին և մշակած լեզու ունենայ և չըկամենայ սովորել։ Բայց մայրենի լեզուի գիտութիւնը բացի օգտակար լինելուց՝ միանգամայն պարտք էլ է. ամէն մարդ պարտաւոր է իւր հայրենեացը և ազգին ծառայել, և նորա յառաջադիմութեանը օգնել. բայց այս պարտքը մարդ կարող չէ

լաւ կատարել՝ եթէ իւր լեզուն լաւ չիմանայ։ Այս պատճառաւ ուսեալ և կրթեալ ազգաց մէջ մեծ ամօթ և նախատինք է իւր լեզուն չիմանալը, և շատ անգամ ընկերութեան մէջ՝ նորա երեսին չեն մտիկ տալ, ով որ իւր մայրենի լեզուն չիմանայ։ Ուրեմն ամենայն մարդ իւր ազգութեան պարտքը վճարելու համար պէտք է ուսանի իւր մայրենի լեզուն, որով որ կարողանայ իւր ազգի հետ միանալ, պիտանի և օգտակար անդամ լինիլ ազգի և հայրենեաց։

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ, ՄԱՅՐԵՆԻ ԲԱՐԲԱՌ

Մայրենի՛ լեզու, մայրենի՛ բարբառ.
Ախորժ, ընտանի իմ հոգու համար՝
Առաջին դու խօսք, ականջիս հասած,
Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած,
Մանկական լեզուիս թոթովանք տըկար,
Հընչումես իմ մէջ դու միշտ անդադար։

Գեղեցի՛կ լեզու, հրաշալի՛ լեզու,
Այդ ի՛նչպէս քաղցըր հընչումես ինձ դու.
Կամիմ աւելի քաջ ծանօթանալ
Քո ճոխ գանձերին, հոգւով հայանալ.
Ասես թէ ահա գանչումէն ինձ
Պապերս ու հայրերս խոր գերեզմանից։

Հընչէ՛ր դու հընչէ՛ր այժմ և յաւիտեան
Մայրենի լեզու, բարբառ սիրական,
Արի՛, բարձրացի՛ր հնութեան փոշուց,
Դու իմ հայ լեզու, մոռացած վաղուց.
Ըզգեցի՛ր նոր կեանք սուրբ գրուածներով,
Որ ամենայն սիրտ վառուի քո սիրով։

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱԾՔ

4

Հազար բարեկամ ունիս՝ քիչ է, մի չարակամ ունիս՝ շատ է։
Հազար լսէ՛, մէկ ասա։
Հալալ ապրանքը գէլը չի տանիլ։
Հայի յետի խելքն իմն ըլի։
Հանաքը չհանաք կըդառնայ։
Հաստ ու բարակը մի գին ա, վա՛յ բարակ մանողին։
Հարևանիդ մի կով ուզի, որ Աստուած քեզ երկուսը տայ։
Հաց ու պանիր, կեր ու բանիր։
Հացը հացարարին տուր, մէկն էլ աւել տուր։
Հենց արա, որ ոչ շամփուրն էրվի, ոչ խորովածը։
Հետևակը ձիաւորին մասխարայ կանէ։
Հիւրն եկաւ, հիւրը գնաց, տեղը դարտակ չմնաց։
Ձիուցը վէր եկաւ, իշի վրէն նստեց։
Ձմեռուայ վարդը կրակն ա։
Ձուկը ջրումը գին չի ըլիլ։
Ձուի գողը ձիու գող կդառնայ։
Ճամփից դուրս եկողի աչքը դուրս կգայ։
Ճուտը ձուումը մաշուր կըլի, մանուկն օրօրոցումը։
Ճրագն իր տակին լիս չի տալ։

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

«Սիրելի Գարեգին», ասում էր միշտ հայրը որդուն, «պատուի՛ր աշխատասիրութիւնը, որ աղքատութիւնն ու կարօտութիւնը քո դրան շեմքին ոտք չըդնեն։»

«Գնա՛ նայէ մրջիւններին, տե՛ս նորա ճանապարհները և

սովորիր նորանից աշխատասիրութիւն. գնա՛, նայէ նորան, որ թէև հողագործութիւն չգիտէ, իշխան հարկադիր կամ տիրող չ՚ունի, բայց նա իւր կերակուրը ամառուանից է պատրաստում, իւր ապրուստը հունձի ժամանակն է ժողովում։ Կամ գնա նայէ մեղուին և սովորիր աշխատասիրութիւն. տես ի՛նչպէս աշխատասէր է նա, և նա իւր գործը ի՛նչպէս պարկեշտութեամբ է գործում, որոյ վաստակը թագաւորները և ռամիկները բժշկութեան համար են գործ գնում։ Թէպէտ նա տկար է ուժով, բայց ցանկալի և մեծարելի է ամենին. պատճառ որ պատուեց նա աշխատութիւնը, իմաստութիւնը և պատուեցաւ ինքն։»

«Ո՛րդեակ մինչև ե՞րբ պիտի պառկիս, քնիցդ ե՞րբ պիտի զարթնուս։ Եթէ փոքր ինչ կըքնես, փոքր ինչ կընստես, փոքր ինչ կըննիրհես, փոքր ինչ կըհանգստանաս, այն ժամանակը քո աղքատութիւնը ճանապարհորդի պէս կըգայ, և կարօտութիւնդ սպառազինեալ մարդու պէս։ Բայց եթէ աշխատասէր կըլինիս, քո ամառը առատ աղբիւրի պէս կըհասնի քեզ, և կարօտութիւնդ ինքնահալած կըլինի չար մարդու պէս։»

«Անցկացած օրերը անդարձ են, և ապագայ օրերն էլ չը լինի թէ քեզանից խլուին. ուրեմն հետևիր, որդեակ, գործ դնել ժամանակդ, որ ձեռքիդ է, մի՛ տրտնջար անցկացած կորուստիդ վերայ, և ոչ էլ մեծայոյս կաց ապագայի վերայ։»

«Քո ձեռքին է այս վայրկեանս. իսկ էգուցը ապագայի արգանդի մէջն է, և չես իմանում թէ ինչ կըծնանի։ Ինչ որ մտքումդ դրիր որ գործես, գործէ՛ շուտով, և ինչ որ առաւօտը կարող ես կատարել՝ էլ մի յետ ձգիր մինչև արեգակի մտնելը։»

«Ծուլութեան ծնունդը խեղճութիւնն ու նեղութիւններն են. իսկ աշխատանքը ուրախութիւն է բերում։»

«Աշխատասէր ձեռքը կարօտութիւնը կըբառնայ և գործունեայ մարդու վիճակը բարօրութիւն է և յաջողութիւն։»

«Աշխատասէրը առաւօտը վաղ է վերկենում, և գիշերը ուշ է քնում, նա կրթում է իւր միտքը խորհրդածութեամբ, և իւր մարմինը աշխատանքով։»

«Ծոյլ մարդը իւր անձին բեռն է, նորա ժամերը ծանր և ուշ են անցկենում։»

«Ամպի շուաքի պէս են անցկենում նորա օրերը. որոյ հետքը կամ յիշատակը անցկենալուց յետոյ էլ կարելի չէ գտնել։»

ԵՐԳ ԱՐԹՆՈՒԹԵԱՆ

(Օրօրոցի երգ)։

Զարթի՛ր սիրո՛ւն դու իմ մանկիկ,
Քանի՜ ննջես հեծելով,
Զքնաղ դէմքիդ լոյս Արեգին
Ճաճանչել է խայտալով։

Շատ օրօրներ ես երգեցի
Տխուր աչացս արցունքով,
Բա՛ց քո պայծառ արտևանունք,
Հրեշտակի վեհ նայուածքով։

Ծնած օրից քո ճակատիդ
Դրոշմեցի Փրկչին Խաչ,
Որ դու լինիս միշտ անվեհեր,
Հոգւով ազատ, սրտով քաջ։

Թէ վատ բախտի Թշուառութեան
Գերել են քեզ տեսիլներ,
Մի՛ սարսափիր գունատ դէմքով,
Շուտ սթափի՛ր, ե՛լ ի վեր։

Օրօրներով շատ ննջեցիր,
Ժա՛մ է արդէն զարթնելոյ.
Զարթի՛ր, զարթիր իմ քաջ զաւակ,
Ժամ է արդէն գործելոյ։

Ձգի՛ր հեռու քեզնից դու նինջ,
Դիւցազնի պէս կաց յոտին.
Պարտքդ արա ու կատարէ,
Ապա հանգիր քաղցրագին։

Շարունակ նինջ վատ է մահից,
Կ՚սիրէ կեանք արթնութիւն.....
Զարթիր հայպա՜, իմ քաջ հոգեակ,
Քանի՞ քնես զօրն ի բուն։

Թէ կախարդներ սրսկեցին
Ի քեզ փոշի թմբրութեան,
Դրախտահոս գետոց սուրբ ջուր
Կըտայ քեզ կեանք արթնութեան։

Ով դու անմահ երկնից Արքայ,
Իմ որդեկիս տուր զարթնել,
Քո Խաչ և Սէր ազատ գրկած
Յառա՜ջ, յառա՜ջ միշտ դիմել։

ԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆ

Առողջութիւնը, իմաստութիւնը, հոգւոյ անդորրութիւնը երկնատուր պարգևներ են, որք աւելի մօտացնում են մարդուն երանութեանը այս աշխարհքումս։

Եթէ սոցա ստացար և կամենումես պահպանել քեզ

մինչև քո ծերութեան հասակդ, հեռացուր քեզանից հեշտութեան և զուարճութեան սուտ հրաւէրը, և նոցա յորդորանքից փախիր։

Որովհետև ցանկալի հեշտութիւնները (քէֆը) շուտով զանազան ցաւեր կըբերեն քեզ, և կեանքդ մաշելով միշտ դէպ 'ի մահը կըտանեն։

Մտիկ տուր քո բոլոր 'ի շուրջը, և տես նորա կոչունքի հրաւիրուածներին. Տես, ինչպէս հաշուած ու մաշուած են մարմնով, ցաւագար կեանքով և վեհերոտ (վախկոտ) սրտով զզուած տանջւում են։

Նեղութեան դժուարատար օրերը և տառապանաց ժամանակը գալիս է հեշտութեան վաղանցուկ հրճուանքի ետևից. խանգարւում է և պակսում է քաղցը և կերակրոյ փափագը. անուշահամ կերակուրները այնուհետև էլ չեն թւում նոցա համար ախորժելի։

Եւ որովհետև իւրեանք իւրեանց զգայազուրկ արին, իրաւամբք կժառանգեն պատիժը՝ որն որ բարձրեալն Աստուած հաստատեց բնութեան պարգևների մէջ՝ նոցա խրատելու համար. որովհետև նոքա այն երկնատուր պարգևները չարաչար են գործ անում։

Բայց ո՞վ է դա, որ զուարթ դէմքով և սիրուն ընթացքով ճեմում է դաշտի այն կողմը։

Գոյնզգոյն վարդերը փայլումեն նորա դէմքի վերայ, անոյշ բուրումն առաւօտին ծաւալում է նորա շրթունքից, բերկրութիւնը և անմեղութիւնը փայլում է նորա աչքերի մէջ, և նորա ուրախ սրտից երգերի քաղցրաձայնութիւն է հնչւում, և հանդարտ ընթացքով է ման գալի։

Առողջութիւն է նորա անունը, և ժրութեան դուստրը է, որ ծնաւ չափաւորութիւնից. նորա որդիքը արի զաւակներ են, ժրագլուխ և կայտառ. ամէն վայելչութիւնով և առաքինութիւններով զարդարած, ինչպէս և նոցա քոյրերը։

ԳԹՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՂՈՐՄԱԾՈՒԹԻՒՆ

Ինչպէս որ գարունը սփռում է երկրի երեսին կանաչագեղ տունկ և նորաբոյս ծաղիկ, ինչպէս որ բարերեր ամառուայ առատութիւնը պարարտացնում և առատացնում է հունձը, այսպէս էլ գթութեան ձիրքը բարի պարգևներ է ցօղում մարդկային ազգի վերայ։

Ով որ կարեկից է լինում նեղացածին՝ նա սիրելի կըլինի ամենին. իսկ ով որ անկարեկիցն է, նա կարող չէ սիրելի կամ հաճոյ լինիլ։

Մսագործը (ղասաբը) չէ նայում գառան մանչելուն, և ոչ էլ անգութ սիրտը ցաւում է ուրիշների նեղութեան վերայ։

Բայց գթոտ մարդու արտասունքը քաղցր է ցօղի հատիկներից՝ որ վարդերի ծայրերից կաթում են երկրի վերայ։

Ականջդ մի փակեր նեղացածի և տնանկի լացի ձայնը լսելիս, և սիրտդ մի խստացուցաներ տեսնելով նոցա թշուառ դրութիւնը։

Երբ անտերունչ որբը աղերսանքով ձայն տալիս լինի քեզ, երբ քաղցած և ցաւալից աղքատը խնդրում լինի քեզանից օգնութիւն, բաց արա քո սրտի դուռը, օգնէ նոցա, և կապրի քո անձը։

Երանի նորան, որ իւր սրտի մէջ տնկեց գթասիրութեան սերմը. սէր ու ողորմութիւն կըգտնէ նա։

Բարութեան գետեր կըբղխեն նորա սրտի աղբիւրից, և առատ առատ կըվազեն վտակները մարդկանց օգտի համար։

Ողորմած մարդը ձեռք է տալիս և մխիթարում է նեղացածներին թշուառութեան ժամանակը. և ուրախանում է, երբ օգնում է նոցա

Ներում է այլոց անիրաւ արարմունքները և նոցա երախտամոռութիւնը ջնջում է իւր մտքից։

Վրէժը և ոխակալութիւնները նորա սրտի մէջ տեղ չ՚են գտնում։ Եթէ նորա թշնամին քաղցած է, հաց է տալի, եթէ ծարաւ ջուր։

Փոխարէն չարին չար չէ հատուցանում, և մինչև անգամ իւր թշնամեացն էլ չէ ատում, այլ նոցա անիրաւութեանց դէմը սէր է ցոյց տալիս։

ԱՂՔԱՏ

Ցուրտը փչեց. ձմեռ սաստիկ.
Ձիւնը ծածկեց գետինը,
Ամենայն մարդ մտաւ իւր տուն,
Պատսպարուիլ ցրտիցը։
Ժամի զանգում դողդողալով
Կանգնած է մի աղքատ ծեր,
Նորա հանդերձը պատառ, պատառ
Չունի շապիկ, կօշիկներ.
Անհամարձակ նա իւր ձեռքը
Պարզումէ անց կացողին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։

Ձեզ, սիրելիք, ասե՞մ ով էր
Այս խղճալի աղքատը,
Այն ցրտումը, ոտաբոբիկ
Կանգնած, ժամի զանգումը.
Շատ ժամանակ դեռ չէ անցել,
Երբ նա փառքով ու պատւով
Ման էր գալիս փողոցներում

Իւր սեպհական կառքերով.
Այժմ վախով նա իւր ձեռքը
Պարզում է անց կացողին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»:

Ամենայն օր նորա դռնում
Կանգնած էին շատ կառքեր.
Միշտ հացկերոյթ, ընթրիք, գինի,
Նուագարան ու տաղեր.
Ամենայն ոք ցանկանում էր
Լինիլ նորան բարեկամ.
Ամենայն ժամ նորան բաց էր
Շռայլ քսակը մեծատան.
Այժմ զրկած ամեն բանից,
Չունի անգամ հացի գին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն անտէր աղքատին»:

Ժամի դռնում նա կանգնած է,
Աչքերը կոր, վիզը ճուկ.
Նորա նախկին բարեկամքը
Չեն ասում նորան, «խղճուկ,
Եկ դու մեր մօտ, մեք կ'ամոքենք
Քո վիճակի դառնութիւն,
Կը թուլացնենք ճակատագրիդ
Խիստ հարուածի սաստկութիւն.»
Նա տանում է տառապելով
Այս սոսկալի վշտերին—
Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին:»

ՓՈՔՐԻԿ ԱՆՈՒՇԱՒԱՆԻ ՄՏԱԾՄՈՒՆՔԸ

«Ցանկալի՛ է ինձ քո վիճակը, սիրելիդ իմ Անուշաւան» ասաց նորան մեծ եղբայրը, «քո օրերը անց են կենում հանդարտութեան եւ ուրախութեան մէջ, տրտմութիւնը, ցաւը եւ հոգսերը դեռ եւս քեզ յայտնի չեն. ոչ մէկ բան չէ տրտմացնում քեզ. միշտ ուրախ ես, միշտ հանդարտ: Ա՜հ, ոսկէ ժամանակ..»: Այս խօսքերը շատ խոր տպաւորեցան բարեսիրտ երեխայի սրտի մէջ, որ միշտ իւր փոքր հասակից սկսած, ամէն բան սովորում էր հիմնաւորապէս և ոչինչ չէր թողում առանց ուշադրութեան: «Այո, ասաց Անուշանը ինքն իրան, ի՛նչ գեղեցիկ է արդարև և նախանձելի իմ դրութիւնը, իմ օրերը: Ես մեծ մեծ գործքեր չունիմ, չգիտեմ նմանապէս ի՛նչ է տրտմութիւնը և հոգսը, ամենայն տեղ միայն իմ ցանկութիւններն եմ տեսնում, ամենքը կանչում են ինձ ուրախանալու, ամէն մարդ ասում է ինձ անդադար. «ուրախացի՛ր քանի քո մանկութեան ժամանակն է:»

«Բայց թէ միշտ կլինի՞ այս. ա՜խ, ո՛չ: Ես կարծեմ որ շուտով կկորչի այս ամէնը»:

Ես տեսնում եմ շատերին, որոնք առաջ ինձպէս ուրախանում էին, բայց աժմ չեն ընկերանում իմ ուրախութեանցը: Նոցա խաղալու և ուրախութեան ժամանակը անց է կացել. շուտով իմն էլ կ'անցկենայ և կգայ ժամանակ աշխատանաց և հոգսերի: Ես էլ ուրիշների պէս ժամանակով կհարկադրուիմ զանազան պարտաւորութիւններ կատարել, որոց համար պէտք է ունենամ աշխատասիրութիւն և շատ գիտութիւն:

«Եթէ այսպէս է. ուրեմն ես շատ անխելք կլինիմ, եթէ այս մանկութեան օրերս կատարեալ թեթևամտութեամբ անց կացնեմ և բոլորովին չմտածեմ գալոց բաների վերայ: Եր-

կնաւոր Հայրը ինձ զանազան շնորհքներ է տուել, որ պէտք է գործ դնեմ, և ոչ թէ իմ բոլոր ժամանակը անցկացնեմ խաղերի և պարապութեան մէջ։ Ես շատերին կճանաչեմ, որոնք երեխայութեան ժամանակը օգտակար բաներ չեն սովորել, և այժմ մեծ անպատուութեան և աղքատութեան մէջ են, և լաց են լինում իւրեանց մանկութեան օրերի կորցնելու համար։

«Այդպիսի տարաբախտներին տեսնելով, պէտք է զգուշացնեմ ինձ թեթևամտութիւնից, ուրախութիւնից և խաղերից, և պէտք է մեծ սիրով և ցանկութեամբ պարապիմ գիտութիւններով և ուսմամբ։ Ուրեմն, բարի ծնողք իմ, ես կկատարեմ ձեր ցանկութիւնը և կըպահպանեմ ձեր տուած բարի խրատները. կթողում մանկութեան խաղերը և ուրախութիւնը, և ամենայն ժամանակ կաշխատեմ սովորել իմ դասերը և գործել բարի գործքեր։ Ես ի՛նչպէս բախտաւոր կլինիմ, եթէ կարողանամ կատարել ասած խօսքերս։ Բայց ախ, մէկ կողմանէ ես պատրաստ եմ ամենայն բարին անել, պատրաստ եմ խաղերս և պարապորդութիւնս թողուլ. իսկ միւս կողմանէ իմ ընկերները ասում են ինձ. «ի՛նչ ժամանակ է քու կարդալուդ, արի՛ գնա՛նք փոքր ինչ խաղանք». ես դժուարութեամբ եմ յաղթում իմ ցանկութեանցը, թէ և շատ ուզում եմ հեռանալ նոցանից։ Ես ույժ չունիմ, չունիմ և հաստատ կամք, ես ի՞նչ տեղից գտնեմ օգնութիւն, ումի՞ց խնդրեմ հաստատամտութիւն»։

«Երկնաւո՛ր Հայր, Քո վերայ է իմ յոյսը. դէպ ի Քեզ եմ բարձրացնում իմ աչքերը։ Քեզ մօտ եմ ուղարկում իմ աղօթքները, յանուն քո Միածին որդւոյ և իմ փրկչի, որ շատ սիրումէ երեխանց։ Դու տեսնում ես իմ սիրտը. ես կամենումեմ լինել խելօք և բարեբարոյ, լուսաւորէ՛ իմ միտքը ճշմարիտ իմաստութիւնով, վառէ իմ սիրտը բարի սիրով։

Ուղարկէ՛ Քո պահապան հրեշտակը, որ պահպանէ ինձ յամենայն չարեաց և տայ ի՛նձ հաստատ միտք և կամք։ Իմ սրտի մէջ արմատացրո՛ւ այն միտքը, թէ ես ամենայն տեղ, ուր որ լինիմ, միշտ Քո առաջին եմ, եւ ո՛չ թէ միայն իմ գործքերը, այլ և ծածուկ մտքերս և իմ բոլոր ցանկութիւնները յայտնի են Քեզ։ Հաստատէ՛ իմ մտքի մէջ և այն բանը, թէ Դու այժմ իմ Հայրն ես, բայց մէկ ժամանակ կլինիս իմ Դատաւորը, և կպահանջես ինձանից իմ գործքերի հաշիւը։ Քո սուրբ օրէնքները հաստատուն կանոն լինին իմ կենաց մէջ, սորանից աւելի մեծ ուրախութիւն և ցանկութիւն չկայ ինձ համար։ Երկնաւո՛ր Հայր, առանց Քեզ ես մէկ տկար արարած եմ, չեմ կարող ընդդիմանալ չարին և չեմ կարող կատարել ոչ մի բարի գործ։ Բայց Քո մասնակցութեամբ և հովանաւորութեամբ կկատարեմ իմ ծնողաց ցանկութիւնը, կըլինիմ բարի Քրիստոնեայ և օգտակար որդի Հայրենեաց։ Կսիրեմ իմ հայրենիքը և իմ ազգը, որչափ կարողանամ։ Կմնամ միշտ հաւատարիմ Հայրենեացս և հաստատ հաւատիս։ Հաւատոյ և առաքինութեան ճանապարհով կը հասնեմ ես յաւիտենական կենաց, որ իմ Փրկիչը պատրաստել է ինձ համար»։

ԵՐԳ ՄԵՌԱՆՈՂ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ

Ազնի՜ւ ընկեր, մեռանումեմ,
Բայց հանգիստ եմ ես հոգւով։
Իմ թշնամիքս ես օրհնումեմ,—
Օրհնումեմ քեզ Աստուծով։
Հեռանումեմ, անգին ընկեր,
Չ՛գնահատած ոչ ոքից.

Բայց հաւատաւ անձնանուէր
　Ազգիս մշակ կ՚հաշուիմ։
Ազնիւ ընկեր, չը մոռանաս.
　Անդաւաճան, ջերմ սիրով
Ես սիրել եմ իմ հայրենիք,—
　Գնա և դու նոյն շաւղով։
Խեղճութիւնը Հայոց ազգի
　Կարեկցաբար մտածիր.
Ոսկէ գրքոյկն Եղիշէի
　Քաջ առաջնորդ քեզ ընտրիր։
Այնտեղ սուրբ կրօն, ազգ միաբան
　Ազատ կամքով ու խիղճով.
Այնտեղ Վարդան, անմահ Վարդան,
　Իւր խնկելի Քաջերով։
Իմ մտերիմ, մահըս մօտ է,
　Բայց հանգիստ եմ ես հոգւով.
Որովհետև խիղճս արդար է,
　Ճշմարտութեա՜ն ջատագով։—

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ

«Պատկառանքով վեր առ ձեռքդ Աստուածաշունչ Սուրբ Գիրքը», ասումէր ծերունի պապը իւր թոռանը, «պատճառ որ նա պարունակումէ իւր մէջ Աստուծոյ խօսքերը։ Իմացի՛ր, նոքա որ չունին առաջնորդ իւրեանց կենաց վտանգաւոր ճանապարհի վերայ, նոքա որ չունին մխիթարութիւն իւրեանց հիւանդութեանց և նեղութեանց ժամանակը, նոքա որ չունին ամենևին օգնութիւն իւրեանց կենաց վերջին ժամումը, նոցա համար Աստուածաշունչ Սուրբ Գիրքը է առաջնորդ, մխիթարիչ և օգնական։ Տե՛ս, Աստուածաշունչ Սուրբ Գիր-

քը մայր է, որ սնուցանում և պահպանում իւր բոլոր հաւատացեալ զաւակները, մինչև որ նոքա աճեն, զօրանան մի աւելի վերին աշխարհի քաղաքացի դառնալու համար։»

«Սուրբ է Եկեղեցին, սիրելի զաւակս, և տեղի ջերմեռանդութեան, ոչ թէ աշխարհական պաշտօնի համար շինած և ոչ մարդկան բնակարան, այլ Աստուծոյ և նորա պաշտօնին նուիրած։ Նա է աներևոյթ եկեղեցւոյ կամ Աստուծոյ արքայութեան պատկերը. մի հոգևոր դպրոց ժամանակի և մշտնջենաւորութեան համար, Հոգւոյն Սրբոյ գործատուն, նեղացած հոգւոց պատսպարան, երկնքի նախագաւիթ։ Ուրեմն սիրէ Սուրբ Գիրքը և սիրէ քո Սուրբ Եկեղեցին, որդեակ, որ բարի լինի քեզ, և կարողանաս գտանել երջանկութիւն թէ այս, և թէ այն կեանքումը։

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱԾՔ

5

Մանկուց դադումը, ծերուց գաւազան ա
Մաշկակարի մաշիկը ծակ կըլի։
Մարդ մարդի բաղ բախշեց, նա նորան պտուղ չի տուեց։
Մարդ մարդի դարդ չէր իմանում, կէս գիշերին ժամ էր կոչում։
Մարդիս աչքը դուս գայ լաւ ա, քանց թէ անունը։
Մարդ կայ հազար աժէ, մարդ կայ մէկ չաժէ։
Մեղքը լալով, պարտքը տալով։
Մեծի ասած, պստիկի լսած։
Մէկը հազարի անուն ա կոտրել։
Մէկ խելքը լաւ է, երկուսը ևս առաւել։
Մի ձեռը ծափ չի տալ։
Մի ձեռով երկու ձմերուկ չի բռնուիլ։
Մի քոսոտ ոչխարը սաղ սուրուն կփչացնէ։

Մի ծաղկից օձը թոյն ա շինում, ճանճը մեղր։
Մի ծաղկով գարունք չի գալ։
Մի ծառից թի էլ կըլի, հորսլի էլ.
Մի մուկը օխտը կարաս կմուռտառէ։
Մինչև Շուշանը զարդարուեց, ժամը դուս եկաւ։
Մօտիկ հարևանը լաւ ա, քանց հեռու բարեկամը։
Յոպոպը ինքը հոտած ա, հէնց գիտէ իրան բունն ա հոտած։
Շանը քանի քար գձես կհաչի։
Շունը իրան դրանը ղօչաղ կըլի։
Շունը շանից, երկուսը մի տանից։
Շատ ծիծաղողը շատ լաց կըլի
Շատ գիտացողը շատ կը սխալի։
Շատ մի սիրել, ատել կայ. շատ մի ատել, սիրել կայ։
Շունը կհաչի, քարվանը իրան ճամփէն կերթայ։
Շունը սպանողին քաշ տալ կտան։

ՄԱՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Անկիրթ տղայի պակասութիւնները։

3

Երբոր նորան մի բան են հարցնում, փոխանակ «այո» կամ «ոչ» ասելու, միայն գլխով է պատասխանում. և երբեմն «ոչ» կամ «չէ» ասելու տեղ՝ ասումէ «ցըք»։

Երբ որ նորա հետ խօսումեն, նա մատներովը խաղում է, կամ նոցանով մօտի սեղանի կամ նստած աթոռի վերայ թմբուկ է անում։

Իւր ծնողաց կամ իրանից մեծերի հետ խօսելիս տեղիցը վեր չէ կենում։

Ճաշից յետոյ իւր ծնողացը, կամ եթէ ուրիշի տան է՝ տան տիրոջը շնորհակալութիւն չէ անում

Օտարի պարտէզը որ մտնում է, առանց հարցնելու կամ հրամանի ծաղիկ կամ պտուղ է քաղում, և այն անխնայաբար՝ ծառի ճիւղերը կոտրատելով:

Մարմնոյ պակասութիւն ունեցողին, օրինակ, կաղին, կոյրին որ տեսնում է, նորա ձևը անում է:

Թէ որ մէկը յանկարծ նորա ոտքը կոխում է, կամ անզգուշութեամբ մի փոքր նորան դրդում է. դառն յանդիմանութիւններ է տալիս, ասելով «աչք չունի՞ս, կո՞յր ես». որ ընդ հակառակն եթէ այն պակասութեանց մէջ գտնուողն նորանից թողութիւն ուզէր, նա նորան սիրտ տալով պէտք է ասէր. «բան չկայ, պարոն, անհոգ կացէք, ես ամենևին ցաւ չիմացայ»:

Իսկ եթէ ինքն է ուրիշի ոտքը կոխում, կամ մէկին դրդում, ամենևին փոյթը չէ, և չէ կամենում նաև ներողութիւն խնդրել. որ եթէ սխալմամբ ևս կոխելու լինէր կամ դրդելու, պէտք էր թողութիւն խնդրէր և նորա սիրտը առնէր՝ ասելով. «ներեցէք պարոն, ես չտեսայ, կամ անգիտութեամբ գործեցի:»

Երբոր արբած մարդու տեսնումէ, հետն է ընկնում. նորա ձևերը անում է, և վրան ծիծաղում:

Երբոր նորան հրաւիրում են նստելու, ամենից լաւ կամ մեծ աթոռն է ընտրում:

Նստելիս կամ կանգնելիս անխտիր ամէն տեղ նստում կանգնում է, չնայելով թէ յետևը մարդ կայ նստած կամ կանգնած:

Ճրագի առաջին կանգնումէ և բոլորին մութն է անում, կամ ճրագը հանգցնելիս ծուխը թողնում է, և բոլոր սենեակը հոտով լցնում,

Կրակն այնպէս է փչում, որ աչքերդ, գլուխդ ու շորերդ մոխրով լցնումէ:

Ձեռքը քթախոտի տուփ որ ընկնում է, բաց է անում, փըչում ու աչքերդ քթախոտով լցնում:

Նրանց հրամանի կամ հարցնելու օտարի բաները առնում է, և իբրև իւր սեփհականութիւն նայում է, խաղացնում է, զրպանն է դնում և կամ տանում է դուրս։

Մօտի նստածի կամ կանգնածի վերայ թեկն է ընկնում, չմտածելով որ նորան կյոգնեցնէ։

Նրանց զգուշութեան կահ կարասեաց վերայ ընկնելով փչացնում է կեղտոտում։

Ուրիշների առաջևը անդադար բարձր ձայնով քիթը վեր է քաշում, իբրև թէ կամենում է մաքրել, յետոյ թքում գետնի կամ կրակի վերայ, և թքածը այնպէս թողում, չմտածելով որ դիմացիների սիրտը կարող է խառնել։

Պատուհանից թքում ներքև, ջուր կամ ուրիշ բան է թափում, չմտածելով որ անցնողների գլխին կնկնի։

Ուր որ մտնում է՝ դռները բաց է թողում, և միշտ նորա յետևից մէկը պէտք է գնայ, որ դռները փակէ. չգիտէ որ մարդ դռները գտածին պէս պէտք է թողու, այսինքն եթէ բաց է՝ բաց պէտք է թողու, եթէ փակած է՝ փակած։

Խօսակցութեան մէջ ամենևին գէշ ու սխալ-մխալ խօսելուց չէ զգուշանում։

Անկիրթ տղայն իւր այսչափ պակասութիւններով կարող է արդեօք մարդուս սիրելի լինիլ:

Ի՞նչպէս են կազմուել այս բառերը. քթախոտ, անխտիր, վրէժխնդիր, ոխակալ, ծխախոտ:

ԹԱՆԿԱԳԻՆ ԽՈՏ

Շուշանիկը և Սաթինիկը մէկ մէկ մրգով լիքը կողովներ ուսերուն դրած գիւղից բերում էին քաղաք ծախելու։ Սաթինիկը անդադար տրտնջում էր ու հառաչում, իսկ Շուշանիկը ծիծաղում էր ու կատակներ անում։ «Զարմանում եմ,»

ասաց Սաթենիկը Շուշանիկին, «որ դու այդպէս ուրախ ես ու զուարթ. քո կողովն էլ իմ կողովիս պէս լիքն է ու ծանր, և դու էլ ինձանից ուժեղ չես. ասա խնդրեմ ինչպէս ես դիմանում դու այդ ծանրութեանը, ու հետն էլ ուրախ ուրախ ծիծաղում ես։»

«Ես իմ կողովիս մէջ մի այնպիսի հրաշալի խոտ ունիմ դրած, որ ամէն աշխատութիւնը ու ծանրութիւնը թեթևացնում է», պատասխանեց Շուշանիկը։—«Այդ շատ թանկագին խոտ պէտք է լինի», ասաց Սաթենիկը, «ես էլ կցանկայի իմ բեռս թեթևացնել նորանով։ Ասա ինձ, խնդրեմ, այդ խոտի անունը ի՞նչ է»։—«Այս խոտի անունն է հ ա մ բ ե ր ու թ ի ւ ն, որ դու ամենևին չունիս», պատասխանեց Շուշանիկը։

Ի՞նչ էին տանում Շուշանիկն ու Սաթենիկը քաղաք ծախելու: Ինչու էր Շուշանիկը ուրախ ուրախ գնում, իսկ Սաթենիկը տխուր:— Կրկնեցէք բոլոր պատմութիւնը եւ գրեցէք:

Ասացէք այս բառերի նշանակութիւնը. կողով, կատակ, զուարթ հրաշալի, ուժեղ:

ԵՐԵԽԱՅՆ ԵՒ ՇԵՐԱՄԸ

«Ի՞նչ անպիտան և զարշելի որդն է», գոչեց բարձր ձայնով փոքրիկ Աննիկն՝ առաջին անգամ շերամը տեսնելու. «որքա՞ն տգեղ և զզուելի որդունք կան սորա պէս աշխարհիս վերայ, որ ո՛չ մի բանի օգտակար չեն. միայն ծառերին վնաս են տալիս և մեզ էլ վախեցնում ու զզուացնում։»—«Շատ մի բարբանջեր յիմար յիմար, անխելք դու», ասաց նորան հայրը, որ այնտեղ մօտ էր։ Գիտես թէ ո՛վ է քեզ համար այդ գեղեցիկ մետաքսեայ զգեստները պատրաստում, որ հագած ժամանակդ սիրտդ ցնծութեամբ ու հպարտութեամբ լցւում է։ Այդ դա է, որին դու անպիտան ես կոչում։ Մի

նայեր դորա արտաքին կերպարանքին ամէն բանի արժանաւորութիւնը ոչ թէ արտաքին գեղեցկութեան վերայ է, այլ նորա ներքին յատկութեանց և բերած օգտի վերայ է։ Այսուհետև, սիրելի զաւակս, չճանաչած կամ չգիտեցած բանիդ վերայ երբէք չխօսիս։

Ի՞նչ ասաց Աննիկը, երբոր առաջին անգամ տեսաւ շերամը: Իսկ հայրն ի՞նչ ասաց նորան:—Կրկնեցէք այս պատմութիւնը եւ գրեցէք:

Ասացէք այս բառերի նշանակութիւնը. դարշելի, շերամ բարբանջել, մետաքս, ցնծութիւն, յատկութիւն:

ԵՐԿՈՒ ԽՆՁՈՐԵՆԻ

Մէկ պարտիզպան երկու որդի ունէր, որ գրեթէ տարեկից էին իրարու։ Մայիս ամսին նա իւր որդւոցը մէկ մէկ խնձորենի պարգևեց։ Երկու ծառն էլ մէկ մեծութեան և մէկ տեսակ էին, միայն իրարից փոքր ինչ հեռու էին տնկած պարտէզումը։ «Որդիք, ասաց պարտիզպանը, այս ծառերը ձեզ եմ պարգևում, այժմ ձեզանից է կախեալ նոցա ապագայ վիճակը. բայց գիտացէք, որ առանց աշխատութեան նոքա ձեզ պտուղ չեն տալ։»

Մեծ որդին, որ աշխատասէր ու խելացի տղայ էր, շատ ուրախացաւ հօր պարգևած ընծայի վերայ, և իսկոյն սկսեց ամենայն աշխատութիւն և խնամք գործ դնել իւր ծառը կարգին պահելու համար։ Ծառի վերայի թրթուրները մաքրեց, չորս կողմի հողը փորեց փափկացրեց, որ թացութիւնը մինչև ծառի արմատները հասնէ, միով բանիւ ամէն հարկաւոր հոգացողութիւնը չխնայեց իւր ծառի համար։

Իսկ կրտսեր որդին, որ ծոյլ էր և անմտադիր, բոլորովին մոռացաւ իւր խնձորենին և թողուց անխնամ։ Միայն սեպտեմբերին միտքն ընկաւ իւր ծառը, երբ արդէն ամենայն

տեղ սկսել էին խնձորները ժողովել: Վաղեց գնաց իւր ծառի պտուղները քաղելու, բայց ծառի վերայ խնձոր չգտաւ, որովհետեւ պտուղների մի մասը դեռ խակ ժամանակը թըրթուրները կերել էին, միւս մասն էլ քամին թափել էր փչացրել: Տխրած գնաց նա իւր եղբօր ծառը տեսնելու, նայեց նորա վերայ ու մնաց զարմացած: Ծառը բաւականի մեծացել էր և գեղեցիկ ու խոժոռ խնձորներով լցուել:

Այս որ տեսաւ, տրտմեցաւ, նախանձը շարժեցաւ ու իսկոյն գնաց հօրը գանգատեց. «Հայր, ասաց, ինչո՞ւ էք իմ եղբօրը լաւ ու պտղալից ծառ տուել, իսկ ինձ՝ վատ ու անպտուղ:» — «Ձեզ երկուսիդ էլ ես մի և նոյն տեսակ ծառ տուի», պատասխանեց հայրը, «բայց եղբայրդ ամենայն խնամք ու աշխատութիւն գործ դրեց իւր ծառը կարգին պահպանելու համար, իսկ դու ծուլացար և ամենեւին անհոգ և անխնամ թողեր քո ծառը: Այդպէս է, որդեակ, ամենայն մարդ իւր աշխատանքին համեմատ վարձ կստանայ:»

Ի՞նչ պարգեւեց պարտիզպանը իւր որդւոցը: Նոքա ինչպէս էին իրանց ծառերին խնամք տանում: Ինչո՞ւ փոքր որդին գնաց հօրը գանգատելու եւ ինչ գանգատեց նորան: Հայրն ինչ պատասխանեց:—Կըրկնեցէք բոլոր պատմութիւնը եւ գրեցէք:

ԳՈՂԻ ՁԱԽԱԿԸ ԿԱՄ ՈՒՍՄԱՆ ՕԳՈՒՏԸ

Մէկ մարդ սովորութիւն էր արել գնալու իւր հարեւանի այգին միրգ գողանալու: Մէկ օր նա իւր տասը տարեկան որդուն էլ, որ կարդումէր ուսումնարանումը, հետը տարաւ, ու պարկը նորա ձեռը տալով սկսաւ չորս կողմը նայել, թէ տեսնող կայ՝ թէ ոչ: Մէկ լաւ նայելուց յետոյ պարկն առաւ որդու ձեռքիցը ու սկսեց իւր գողութիւնը:

«Հայր», ասաւ որդին, «մէկ տեղ էլ մնաց որ մոռացար

նայելու»։ Այն մարդը վախենալով պարկը վայր ձգեց ու հարցրեց շուտով. «Ո՞ր կողմը, որդիս.» կարծելով թէ մարդ կայ նայող։—«Դէպ ի վեր երկինքը մոռացար նայելու հայր, որ իմանայիր թէ Աստուած մեզ վերայ նայում է. մեր ուսուցիչը մեզ միշտ ասում է ու քարոզում, թէ Աստուած ամենատես է։»

Այս աստուածավախ ու բարեպաշտ որդու յանդիմանական խօսքերը այնպիսի մեծ ներգործութիւն ու ազդեցութիւն արին հօր քարացած սրտի վերայ, որ իսկոյն թողուց իւր չար գործը, վերադարձաւ տուն, և հրաժարեցաւ այնուհետև իւր չար սովորութիւնիցը, միտքը պահելով այն ազդու խօսքերը, այն ճշմարտութիւնը, որ իւր որդուցը լսեց ու սովորեցաւ, թէ Աստուծոյ ամենատես աչքը միշտ նայումէ մեզ վերայ և տեսնում է մեր ամենայն գործքերը։

Պատմեցէք եւ գրեցէք: Ասացէք այս բառերի նշանակութիւնը. պարկ բարեպաշտ, զաւակ, յանդիմանական, ազդու, ներգործութիւն, ամենատես,

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱԾՔ

6

Ով ալարի, ոչ դալարի։
Ով կը խաղայ, նա կը կաղայ։
Ով կը կարդա, նա մարդ ա։
Ով չուստ, նա կուշտ։
Ոսկին պստիկ ա, ամա գինը մեծ ա։
Որդին որ բունումը ձուաձեղ չինի, մօր պարտքիցն է՛լ չի
 կարալ դուրս գալ։
Որտեղ գնաս էնտեղի գտակը ծածկէ։
Ուզողի մի երեսը կրսևանայ, չտուողի երկու։
Ուղտին գդալով ջուր չին տալ։

Ուղտին ասին վիզդ ինչի՞ ա ծուռը, ասեց. ինչս ա դրուստ,
որ վիզս դրուստ ըլի։
Ուրիշի ձեռքով փուշ քաղելը հեշտ ա։
Պառաւն իր թանին թթու չի ասիլ։
Պաս ուտեմ պաս, էն էլ թա՞նէ սպաս։
Պտիկից սկսէ, որ մեծին հասնես։
Ջուրն իր գնացած տեղովը կերթայ։
Ջուրն իր ճամփէն կգանէ։
Ջուրը մի տեղ որ շատ կենայ՝ կը հոտի։
Ջրին չհասած, մի՛ բոբիկանալ։
Սարը սարին չի դիպչիլ, ամա մարդը մարդին կդիպչի։
Սեւին սապոնը՝ խեւին խրատն ինչ՞ անէ։
Սիրը սովորը կուտէ։
Սպիտակ շունը բամբակ ծախողին փեսա ա։
Սոխի քաղցրը չի ըլիլ։
Սոխ ու հաց սիրտը բաց։
Ստի ոտը կարճ կլինի։
Ստի տունը կրակ ընկաւ, ոչով չհաւատաց։

ԵՐԿԱՐ ԱՊՐԵԼՈՒ ՀՆԱՐՔ

Մի քանի տարի առաջ, ասում է մէկ գերմանացի մատենագիր, օրագիրների մէջ կարդացի, որ Ռումայ մօտ մի մարդ է մեռել հարիւր տասը տարեկան, երբէք հիւանդ չէ եղել իւր կենաց մէջ, և թէ բոլոր կենդանութեան ժամանակը միշտ զուարթ բնութիւն է ունեցել և ամուր կազմուածք։ Ես որ կարդացի իսկոյն գրեցի Ռոմ, որ տեղեկութիւններ տան ինձ, թէ ի՛նչ տեսակ կեանք է վարել այն մարդը, որ կարողացել է այնպիսի երջանիկ և խոր ծերութեան հասնել, և ահա այս պատասխանն ստացայ։

«Այս մարդս ամէնի հետ սիրով էր, բարեսիրտ էր և մարդասէր. ուտում էր ու խմում էր այնչափ միայն, որքան հարկաւոր է առողջութիւնը պահպանելու համար, և ոչ երբէք բնութեան պահանջածիցը աւելի. իսկ անուշեղէններ ու քաղցրահամ կերակուրներ երբէք չէր ուտում։ Սիրում էր մաքրութիւն, և սովորութիւն ունէր երեսը ու ձեռքերը սառը ջրով լուանալ. և յաճախ լողանումէր։ Չայ կամ սուրճ շատ քիչ էր խմում և բերանը գինի կամ օղի չէր դնում։ Մանկութիւնից սկսած մեծ սէր ունէր աշխատելու և երբէք ժամանակը պարապ չէր անցկացնում։» Այս նամակս յիշատակագրիս մէջ անցուցի։

Մի փոքր ժամանակից յետոյ մի ուրիշ օրագրի մէջ կարդացի, որ Պետերբուրգի մօտ մեռել է մէկ մարդ, որ կատարեալ առողջութեամբ ապրել է մինչև հարիւր քսան տարի, և թէ նա էլ միշտ երջանիկ է եղել և առողջ։ Իսկոյն նամակ գրեցի Պետերբուրգ ու խնդրեցի նոյն տեղեկութիւնները, և ահա ինչ պատասխան ստացայ։

«Ծերունը միշտ վաղ էր վերկենում, երբէք եօթը ժամից աւելի գիշերը չէր քնում, ծուլութիւն ամենևին չունէր, շատ աշխատում էր և միշտ բանում. մանաւանդ բաց տեղ և իւր պարտէզի մէջ։ Շատ սիրում էր ոտքով ման գալ, և առաւօտները վաղ գնում էր ման գալու, ամէն տեսակ շռայլութենէ և փափկութենէ հեռու էր։» Այս էլ կարդալուց և յիշատակարանիս մէջ գրելուց յետոյ՝ ասացի ինքս ինձ. «Շատ յիմար պէտք է լինիս, որ բոլոր այս օրինակներիս չհետևիս։»

Այս երջանիկ ծերերի կեանքը միշտ աչքիս առաջին ունենալու համար, նոցա մասին ժողոված տեղեկութիւնները մի մեծ թղթի վերայ գրեցի և գրասեղանիս մօտ պատին կպցրի, որ միշտ յիշեմ թէ ինչ պէտք է անեմ և ինչ

բանից պէտք է հեռու կենամ: Ամէն առաւօտ և երեկոյ այն թուղթը կարդում եմ, և աշխատում եմ կեանքս բոլորովին այն կանոններին յարմարացնել.

Եւ այժմ, կարող եմ հաւատացնել ձեզ, որ աւելի առողջ եմ և երջանիկ, երբոր սկսեցի այն կանոններին հետևելով ապրել: Առաջ գրեթէ ամէն օր գլխացաւ ունէի. իսկ այժմ հազիւ թէ երեք կամ չորս ամիսը մի անգամ: Առաջ անձրևից և ձիւնից մրսում էի, և կէս ժամ ման գալուց յետոյ սաստիկ յոգնում էի. իսկ այժմ ամենևին չգիտեմ ի՛նչ կնշանակէ մրսիլ, և կարող եմ մի քանի մղոն առանց յոգնելու գնալ:

Ի՞նչ կարդաց օրագիրների մէջ գերմանացի մատենագիրը: Ինչ տեղեկութիւններ ստացաւ նա Հռովմից եւ Պետերբուրգից այդ մասին: Ի՞նչ արաւ նա արդ տեղեկութիւնները, եւ ինչ օգուտ քաղեց նոցանից, կրկնեցէք բոլոր պատմութիւնը եւ գրեցէք:

ՔՐՏՆԱԾ ՍԱՌԸ ՋՈՒՐ ԿԱՐԵԼԻ՞ Է ԽՄԵԼ ԹԷ ՈՉ

Արտաշէսը շատ վազելուց յետոյ՝ քրտինքը երեսից կաթիլ կաթիլ թափելով եկաւ հօր մօտ: Հայրը նայեց նորա երեսին ու հարցրեց. «Ծարաւի չե՞ս:»

—Այո, ինչպէս չէ:—Ինչո՞ւ մի փոքր սառը ջուր չես խմում:—Չէ կարելի, հայր:—Ինչո՞ւ համար չէ կարելի:—Շատ քրտնած եմ:—Դորանով ի՞նչ կլինի որ:—Դուք ինձ շատ անգամ ասել էք, թէ քրտնած ժամանակը ջուր պէտք չէ խմել.—Այնպէս է, բայց գիտե՞ս ինչու քրտնած մարդը պէտք չէ ջուր խմէ:—Ոչ, հայր:—Ուրեմն լսէ ու աւելի ևս զգոյշ կաց քրտնած ժամանակդ սառը ջուր խմելուց: Քրտնած մարդու արիւնը շատ տաքացած է լինում, և թոքի բարակ երակները տաք արիւնով լցուած են լինում: Եթէ

մէկը սառը ջուր խմէ, այն սառը ջուրը կերթայ թոքերի մէջից կանցնէ. արիւնը թոքի երակներու մէջ կսառչի ու կթանձրանայ, որով և չէ կարող ազատօրէն հոսել. և նորանից ուռոյցքներ կգոյանան, որ քանի կերթան կմեծանան, այնպէս որ վերջը կսկսի փտիլ: Այս հիւանդութիւնը կոչւում է թ ո ք ա խ տ ո ւ թ ի ւ ն կամ բ ա ր ա կ ա ց ա ւ, և շատ վատ ու դժուար հիւանդութիւն է, որովհետև հազար հիւանդից մէկը հազիւ է առողջանում:

Պատմեցէք տեսնեմ ինչու համար չէ կարելի քրտնած ժամանակը սառը ջուր խմել:

Ի՞նչ կնշանակեն այս բառերը. Թոք, երակ, հոսել: Ի՞նչպէս են շինուել այս բառերը. Թոքախտութիւն, բարակացաւ, այժմ, (Այս ժամ:)

ԱՌԱԾՔ ԵՒ ԽՐԱՏՔ

Իմաստութեան սկիզբը Աստուծոյ երկիւղն է:

Ով որ հաւատում է թէ Աստուած ամենատես է, նա ոչ ծածուկ և ոչ հրապարակաւ մեղք չի գործիր:

Խեղճերին օգնէ, որ Աստուած էլ քեզ օգնէ:

Հանգիստ սիրտ ունենալու համար մաքուր խղճմտանք է հարկաւոր:

Մաքուր խղճմտանքը անուշ քուն կպարգևէ:

Աստուած ասաց մարդուս. Օգնէ դու քեզ, որ ես էլ քեզ օգնեմ:

Աշխարհումս այնպիսի դժուար բան չկայ, որ աշխատութիւնը չկարողանայ նորան յաղթել:

Պարտէզդ ջրելու համար անձրևի մի սպասեր:

Ադամանդն ու պատուական քարերը գին ունին, բարի խրատները գին չունին:

Չգիտեցածը հարցնելը ամօթ չէ, չիմանալն է ամօթ:

Առաջ բանը հասկացիր, ու յետոյ խօսէ:

Գէշ վէրքը կառողջանայ. գէշ համբաւը չի առողջանար, չի կորչիր։

Ամէն տեսակ վէճ և կռիւ վաղուան թող, ու չես փոշմանիր։

Բարկացած ժամանակը լաւ է լռել, քան թէ խօսիլ։

Եթէ բարկացած ես, խօսելուց յառաջ մէկից մինչև տասը համարէ. իսկ եթէ խիստ բարկացած ես, մինչև հարիւրը համարէ։

Ուրիշների քաշած նեղութիւնը նայէ, քննէ, քոնը քեզ թեթև կերևայ։

Քունն ու կերակուրը կարելի է վաղուան ձգել, իսկ հարկաւոր գործքը ու յարմար ժամանակը ոչ երբէք։

Միշտ պատրաստ կաց։

Քեզ մի սովորեցներ հանգստութեան ու փափկութեան. հանգստութիւն սիրող կատուն մուկ չէ կարող բռնել։

Կաթիլ կաթիլ վազող ջուրը քարը կծակէ։

Խօսալուց յառաջ կրկին մտածէ, ու կրկին լաւ կխօսիս։

Խօսողը կսերմանէ, նայողը կհնձէ կքաղէ։

Համբերութիւնը մէկ ծառ է, որոյ արմատը դառն է, բայց պտուղները քաղցր։

Համբերութիւնը բանալի է ամենայն դրանց, և դեղ ամենայն ցաւոց։

Ապերախտի սիրտը անապատի նման է, որ երկնքից եկած անձրևը անյագաբար ծծում է, կլանում, ու բան չէ բուսուցանում։

Ապերախտի վերջը միշտ խեղճութիւն է։

Զարիքը պէտքէ մոռանալ, բայց երախտիքը՝ ոչ։

Դաստիարակութիւն չունեցող մարդը մարմին է անհոգի։

Չար նախանձը վատութեան նշան է։

Նախանձողն բնաւ հանգիստ չունի։

Թէ որ թշնամիդ քաղցած է՝ կերակուր տուր որ ուտէ. թէ

որ ծարաւի է՝ ջուր տուր որ խմէ. սորանով դու նորան կյաղթես:

Պատուէ քո հայրը և քո մայրը, որ քո որդիքն էլ քո օրինակին հետեւելով քեզ պատուեն:

Հօր օրհնութիւնը որդւոց տունը հաստատում է, և մօր անէծքը հիմնայատակ կործանում է նորան:

Սիրէ քո ընկերը իբրև քո անձը:

Երանի՜ ողորմած մարդուն. նա միշտ ողորմութիւն կգտնէ:

Որչափ մեր երիտասարդութեան ժամանակ բարի գործքեր անենք, այնչափ և մեր ծերութեան ժամանակը քաղցրութիւն ու մխիթարութիւն կունենանք:

Բարեգործութեան յիշատակի պէս քաղցր բան չկայ:

Ամէն բանից պատուական է առողջութիւնը, ու ամէն բանից աւելի անխնամ ենք պահում:

Առողջութիւն ունեցողը հարուստ է, ու չէ տեսնում իւր հարստութիւնը:

Այս առածները եւ խրատները ուշադրութեամբ կարդացէք եւ աշխատեցէք ձեր միտքը պահելու ու նոցանով ձեր կեանքը ուղղելու, եթէ կամենում էք բախտաւոր ու երջանիկ լինիլ աշխարհիս վերայ:

ՄԱՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Անկիրթ տղայի պակասութիւնները

4

Ուտելու ժամանակը բերանը շատ է լցնում, և կամ լիքը բերանով խօսում է, ու մօտի կեցողի երեսը կերակուրի ցայտքերով ծեփում:

Բերանը կերակուրով լիքը ջուր է խմում, ու կերակուրի մէկ մասը գաւաթի մէջն է թափում:

Գդալն այնպէս շատ է լցնում, որ կարելի չէ լինում մի անգամով ուտել։

Հացի կտորով մատները կամ ամանը սրբում է, ու յետոյ բերանն է գձում։

Ինչոր իրան ուտելու տալիս են, դեռ բերանը չտարած, մէկ հոտ է առնում։

Բերանը մինչև ականջները կեղտոտում է, և կերած ջրոտ բաները թափում է սեղանի կամ շորերի վերայ։

Դանակով ոսկորները կոտրում է, կամ սկաւառակին է խփում որ ծուծը հանէ, և կամ բարձրաձայն ծծումէ։

Հացի պատառը կամ մսի կտորը բերանիցը հանում է կերակուրի ջրի մէջ թաթախում ու ուտում։

Աղտոտ դանակի ծայրով աղ է առնում և աղամանի աղը աղտոտում է։

Ճակատի ու երեսի քրտինքը կամ քիթը փոխանակ թաշկինակով սրբելու, անձեռոցովն է սրբում։

Տաք կերակուրի վերայ փչելով սեղանի և շորերի վերայ թափում է ու աղտոտում։

Պտուղը դանակով կտրելու տեղ կծում է, ու շատ անգամ առանց կճպելու է ուտում, և այն ամենի առաջևը։

Սեղանի վերայ եղած ժամանակը թքելուց կամ քիթը սրբելուց ամենևին չէ զգուշանում։

Եթէ յանկարծ կերակուրի մէջը ճանճ կամ մէկ այնպիսի բան տեսնէ, որ պէտք է դուրս ձգէ, փոխանակ ծածուկ հանելու և դուրս ձգելու, ամենին ցոյց է տալի և ամենի սիրտը խառնում է։

Պտղի կորիզը փոխանակ մատներով բռնելու և կամաց սկաւառակի մէջ դնելու՝ կարկուտի պէս բերնիցը թափում է։

Այնպէս է անյագաբար ուտում, որ կարծես թէ մի քանի օր կերակուր չէ կերած։

Ուտելու ժամանակը ձայներ է հանում բերանիցը, կամ դա-

նակով ու պատառաքաղով սկաւառակին խփում է ու ձայն հանում։

Գետին ընկած պտուղը կամ մի ուրիշ բանը վերցնում է ուտում, կամ ուրիշին է առաջարկում։

Սկաւառակի վերայ դրուած ուտելիքը չորս կողմն է դարձնում նայում, եթէ չէ հաւանում, տալիս է իւր կողքի նստածին։

Սեղանի վերայ ո՛րքան կերակուր լինի դրած, բոլորի համն էլ պէտք է տեսնու։

Սեղանի վերայ անվայել զրոյցք և ուրիշի սիրտը խառնող խօսքեր է ասում։

Չսիրած կերակուրը վատաբանումէ և ուտել ուզողներին էլ յետ է կացնում։

Հացը կծելով է ուտում, փոխանակ մարդավարի կերպով մատներով պատառ պատառ կտրելու. և կամ պատառները առաջուց պատրաստում մօտը բլրակի պէս դիզում է, որ յետոյ ժամանակ չկորցնէ։

Առանց բնական պատճառի իւր հաճոյիցը համար, հացի կեղևը կամ միջուկը հանում է ուտում, ու չորս կողմը փշրանքով լցնում։

Ոսկորները կրծում է փոխանակ դանակով նորա վերայի միսը կտրելու, և երբեմն էլ կրծած ոսկորը սեղանի տակն է ձգում։

Չսիրած կերակուրը որ առջևն են բերում, ծուռն աչքով վրան մէկ նայում է, ու տրտմութեամբ յետ է դարձնում։

Հացի միջուկովը գնդակներ է շինում, ու սեղանակցաց մէջ որոց հետ որ աւելի ընտանի է՝ նոցա վերայ է ձգում։

Սեղանի վրայից պտուղ, շաքարեղէն, խմորեղէն, ի՛նչ ազնիւ բան որ գտնումէ, գրպանն է լցնում որ յետոյ ուտէ,

Պտուղ, խմորեղէն կամ ո՛ր և իցէ ուտելիք որ մօտ են բե-

րում, մէջից խոժոռներն ու ազնիւներն է ընտրում, կար-
ծես թէ ամենից աւելի արժանաւորութիւն ունեցողը
ինքը լինի:

Գաւաթը գինով կամ ջրով մինչև բերանը լցնում. ու սե-
ղանի վերայ թափում:

Կերակրոյ պակասութիւնը թէ՛ դէմքով և թէ լեզուով յայտ-
նում, նաև օտարի տանը, որ ընդ հակառակը պէտք
է ջանար ծածկելու:

Կերակրոյ կամ ըմպելեաց վերայ խօսք բացուցած ժամանակը
բոլոր ճարտասանութիւնը թափում է:

Նրանց ամաչելու սիրած կերակուրները մէկ մէկ համարում
է: Խեղճը կարծում է որ մարդս ուտելու համար է
ապրում. չգիտէ որ միայն ապրելու համար է պէտք է
ուտէ:

Սեղանի վերայ դուք էլ այսպիսի պակասութիւններ ցոյց էք տալի՞ս
թէ ոչ:

Ասացէք այս բառերի նշանակութիւնը. ցայտք, ծեփել, գաւաթ, ան-
ձեռոց, անյագաբար, բլրակ, կեղեւ, միջուկ, գնդակ, ճարտասանութիւն:

ԵԶՈՎՊՈՍ ԵՒ ՆՈՐԱ ԱՌԱԿՆԵՐԸ

Որդին: Հայր, ինձ խրատելիս միշտ առակներ էք պատ-
մում, և ասումէք թէ՝ «այս Եզովպոսի առակներիցն է». ասա՛
խնդրեմ, ո՞վ է այդ Եզովպոսը:

Հայրը. Եթէ կամենումես իմանալ՝ լսէ ուշադրու-
թեամբ, և ես կպատմեմ քեզ:

Եզովպոսը Փռիւգիայ երկրիցն էր. նա ծնաւ 594 թուին
Քրիստոսից յառաջ՝ ստրուկ ծնողներից: Որքան նորա արտաքին
կերպարանքը տգեղ և ծաղրելի էր, այնքան առաւել նորա
ներքին յատկութիւնները գեղեցիկ և ազնիւ էին: Պատմու-

թիւնը ասում է թէ՝ նորա գլուխը սուր էր, քիթը տափակ, պարանոցը կարճ և հաստ, երեսի գոյնը թուխ և դեղնած. և այս պատճառաւ էլ նորա անունը Եզովպոս դրին, որ կնշանակէ Եթովպացի, սև։

Եզովպոսը իբրև ստրուկ վաճառուեցաւ, և նորան գնեց Դեմարքոս Աթենացին, որ տեսնելով նորա մտաց սրութիւնը և ընդունակութիւնը՝ ընդունեց իւր դպրոցի մէջ և սկսաւ ուսուցանել։ Եզովպոսը մեծամեծ օգուտներ քաղեց նորա դասերից. բայց տեսնելով որ իւր ստրկական վիճակը խափան է լինում այն ազատախօսութեանը, որ փիլիսոփայի առաջին գործին է, և թէ իւր խրատները և իմաստալից խորհուրդները երբէք արժանաւորութիւն ունենալու չեն, ինչպէս միւս իմաստասէրներինը, սկսաւ առակներ շարադրել և պատմել։ Այս կերպով հասարակ ժողովրդից սկսած մինչև իշխաններուն լսել տուաւ իւր համարձակախօս ճշմարտութիւնները։

Դեմարքոսի ձեռքից նա ընկաւ Քսանթոսի ձեռքը, և վերջապէս մի Սամոսացի հարուստ վաճառական գնեց նորան և ազատութիւն պարգևեց։ Կրեսոս Լիւդիոյ թագաւորը, լսելով Եզովպոսի հռչակաւոր անունը՝ հրաւիրեց և մեծ պատուով ընդունեց իւր մօտ։ Ճանապարհորդելով Ասիոյ զանազան երկիրների և ազգերի մէջ Կրեսոսի գործերու պատճառաւ, Եզովպոսը շատ առակներ հաւաքեց և բերաւ իւր հետ։ Մի անգամ Կրեսոսը յանձնեց նորան որ տանի Դելփեան տաճարի և նորա քուրմերի համար մեծածախ զոհեր և ընծաներ։ Բայց Եզովպոսը լաւ ճանաչելով քուրմերի խարդախութիւնը և արծաթասիրութիւնը՝ միայն տաճարին տուեց. իսկ քուրմերին վերաբերեալը յետ դարձոյց թագաւորին։

Վրէժխնդիր քուրմերը տաճարի նուիրական ոսկէ թասը պահեցին նորա պարկի մէջ, և ապա ամբաստանեցին նորան ինչպէս գող, և մահու վճիռ կարդացին նորա վերայ այդ սուտ

գողութեան համար, և անխնայաբար ցած գլորեցին Հիամպէ ժայռէն: Բոլոր Յունաստանը սգաց նորա մահը. ամէն տեղ յարգեցին նորա յիշատակը՝ ինչպէս բարերարի մարդկութեան:

Եզովպոսը առաջինն էր, որ շարադրեց, հաւաքեց և գրեց առակներ. ուստի և կոչւում է հայր առակագիրների: Առակի նպատակը գլխաւորապէս խրատել է. բայց խրատել զանազան նմանութիւններով, և ամոք կերպով յայտնել այն ճշմարտութիւնը, որ անհնարին էր բացայայտ և պարզապէս ասել:

ՄԵՂՈՒՆ ԵՒ ՃԱՆՃԵՐԸ.

Երկու ճանճ մտադիր էին գնալ հեռու երկիր իւրեանց համար ապրուստ հոգալու: Գնացին մեղրաճանճի մօտ և նորան էլ առաջարկեցին այս բանը: «Այստեղ», ասում էին ճանճերը, «մենք ամենևին պատիւ չունինք, ուր որ գնում ենք՝ մեզ քշում են, ամեն տեղ քաղցր կերակուրները մեզանից թագցնում են. իսկ անպիտան սարդերից մենք բոլորովին հանգստութիւն չունինք. մեր կեանքը միշտ վտանգի մէջ է: Գնանք, մեղու եղբայր, գնանք, այն տեղ ասում են ամենեքեան բաղդաւոր են, մենք էլ բաղդաւոր կլինինք:»

«Աստուած բարի ճանապարհ տայ ձեզ,» պատասխանեց նոցա մեղուն. «ես այս տեղ էլ բաղդաւոր եմ: Թէ հարուստ և թէ աղքատ ինձ սիրում են ու պատւում իմ տուած մեղրի և մոմի համար: Իսկ դուք, եղբարք, գնացէք ուր որ կամիք. բայց ես այս միայն կասեմ ձեզ, որ դուք ուր որ երթաք, ոչ մի տեղ պատիւ չէք գտնել մարդկանցից, որովհետև ոչ մի բանի պիտանի չէք. ամէն տեղ միայն սարդերին կուրախացնէք ձեր երևալովը:

Ի՞նչ ասացին ճանճերը մեղուին: Մեղուն ի՞նչ պատասխանեց նոցա: Ինչ է ուսուցանում մեզ այս առակը:—Կրկնեցէք բոլոր պատմութիւնը եւ գրեցէք:

ՀԵՏԱՔՐՔԻՐ։

«Բարով եկար, հազար բարի, բարեկամ,
Ո՞ւր էիր, ասա՛ տեսնեմ, այս անգամ։»
—«Թանգարանումն էի.
Ուղիղ չորս ժամ շրջեցի.
Ամէն կողմ պտըտեցայ, պտըտեցի,
Ամէն բան էլ լաւ նայեցի։
Աշխարհս ընչե՞ր կան եղեր,
Իրաւ, խելքէ մըտքէ վեր.
Ո՛ր կողմ նայես՝ արմանք զարմանք հրաշալիք.
Ո՛րն էլ տեսնես՝ մէկը միւսէն գեղեցիկ.
Ի՜նչ գազաններ, ի՜նչ թռչուններ,
Թիթեռնիկներ, բզէզներ,
Ի՜նչ զատիկներ, ինչ կերպ ճանճեր,
Ո՜րքան ոսկի եղնակներ.
Որը կանանչ՝ զըմրուխտի պէս.
Որը կարմիր՝ բուստի պէս.
Իսկ մանրիկ բոտոտնե՛րը, հաւատա,
Գնդասեղի գլխիցն էլ շատ փոքրը կայ։»
—«Հապա փըղին ի՜նչ ասիր.
Ի՜նչ ահագին վիթխարի.
Կարծեմ մտքովդ անցուցիր,
Թէ մէկ լեռան է սոսկալի։
—«Մի՞թէ փիղն էլ այնտե՞ղ էր։»
—«Ի հա՛րկէ. միթէ չտեսա՞ր։»
—«Ափսո՜ս, ինչ ասեմ ախպէր.
Փիղը աչքովս չէ ընկեր։»

Ի՞նչ է ուսուցանում մեզ այս առակը։ «Զատիկ» ինչ կնշանակէ։ (կարմրագոյն բոտոտ է կամ ճճի)։ Իսկ «եղնա՞կ» (թեւաւոր փայլուն ճճի է)։ Կրկնեցէք երկուսով այս առակը. մէկդ հարցը, իսկ միւսդ պատասխանը։

ԵՂՋԵՐՈՒ ԵՒ ՈՐՍՈՐԴ:

Մէկ եղջերու աղբիւրի մէջ տեսնելով իւր պատկերը՝ զմայլում էր իւր եղջիւրների գեղեցկութեան վերայ, բայց շատ անգոհ էր իւր բարակ և ջլոտ ոտներէն: Մինչ նա այսպէս նայում էր և խորհում, մի որսորդ վերայ հասաւ, փողը փչեց և նորա շները սկսան հաչել: Այս խառնաշփոթ աղաղակը լսելով՝ զարհուրեցաւ եղջերուն և փախաւ: Քանի որ բաց դաշտի մէջ էր՝ նորա սրնթաց ոտները մեծ օգնութիւն էին տալիս նորան՝ արագ արագ հեռացնելով վտանգէն. բայց երբ որ եղջերուն մտաւ անտառը, նորա եղջիւրները ծառերի ճիւղերի մէջ կառչելով՝ արգելք էին լինում նորան վազելու: Այն ժամանակը եղջերուն հասկացաւ, թէ որքան օգտակար էին նորա բարակ և ջլոտ ոտները, և որքան վնասակար այն սիրուն եղջիւրները, որք զմայլեցնում էին նորան և նորա մահուան պատճառը եղան:

Այս առակից մենք ի՞նչ բան կարենք ուսանիլ: Ասացէք մի օրինակ, տեսնեմ:

Գրեցէք այս առակի միտքը ձեր խօսքերով:

ՃՊՈՒՌՆ ԵՒ ՄՐՋԻՒՆ

Ամբողջ ամառը անհոգս Ճպուռն երգելով ու սուլելով անցոյց, և երբոր ցուրտ օրերը եկան վրայ հասան, նա մնաց առանց կերակրոյ պաշարի: Ճարը կտրած և ոչ մի տեղից յոյս չունենալով՝ գնաց Մրջիւնի մօտ, յայտնեց իւր կարօտութիւնը, և խնդրեց մինչև գարնան օրերը պահել և նորան ապրուստ տալ, որ սովից չմեռնի, և խոստանում էր գալ ամառ աւելորդով յետ դարձնել նորանից ստացածը: Մրջիւնը հարցրեց. «Ի՞նչ էիր անում ամառուան

տաք օրերին։» — «Օր ու գիշեր երգով էի անցնում ժամանակս,» պատասխանեց Ճպուռն։ Մրջիւնը ժպտալով ասաց. «Ով որ ամառը երգով է անցնում իւր թանկագին ժամանակը, նա ձմեռը թող պար գայ։ Գնա՛, հեռացի՛ր ինձանից, ես ծոյլերի կերակրող չեմ։»

Դուք ո՞րին էք աշխատում նմանելու ճպուռին թէ մրջիւնին։ Պատմեցէք այս առակը եւ գրեցէք։

ԱՂԱՒՆԻ ԵՒ ՄՐՋԻՒՆ

Աղաւնին աղբիւրի մօտ կանգնած ջուր էր խմում. նոյն աղբիւրի մօտ եկաւ Մրջիւնը, որ նոյնպէս ջուր խմէ, բայց մի թեթև քամի փչեց, ու խեղճ կենդանին ընկաւ ջրի մէջ։ Մահը մօտ էր թշուառականին, և ամէն նորա ջանքն այս վտանգէն ազատուելու 'ի զուր էին։ Աղաւնին տեսնելով Մրջիւնի չարչարանքը խղճաց նորա վերայ, առաւ մի չոր տերև ու ձգեց ջրի մէջ, և Մրջիւնը սողալով նորա վերայ՝ ազատուեցաւ։

Սորանից յետոյ շատ ժամանակ չանցաւ, մի որսորդ նետ ու աղեղը ձեռքին կամացուկ մօտենում էր Աղաւնուն որ սպանէ։ Երախտապարտ Մրջիւնը տեսաւ, որ իւր բարերարի կեանքը մեծ վտանգի մէջ է, շտապաւ գնաց ու այնպէս սաստիկ կծեց որսորդի կրունկը, որ նա ձեռքից վայր ձգեց նետ ու աղեղը ու ցաւագին աղաղակեց։ Աղաւնին լսելով այս աղաղակը թռաւ ու ազատեցաւ ակներև փորձանքից։

Առածը ասում է. «Ո՛րքան կարող ես բարութիւն արա այլոց, երբէք չի կորչիլ քո արած բարութիւնը։»

Պատմեցէք այս առակը եւ գրեցէք։ Դուք եւս օրինակ վերառէք այս աղաւնուցը, եւ որքան կարող էք բարութիւն արէք ձեր ընկերին։

ՄՈՒԿՆ ԵՒ ՄՈՒԿԻԿ

Մէկ օր վազեց մուկիկը
Դըրացի մըկան ծակը,
Գիտե՞ս ի՛նչ կայ, խնամի,
Ըսաց նորան ուրախ ուրախ,
Կասեն մեր Թըշնամի
Չար կատուն խարդախ
Ընկել է առիւծի ճանկ.
Այժմ փառք, որ ազատեցանք։»
—«Դա հերի՛ք է, մուկն ասաց, հերի՛ք.
Մինչև ե՞րբ պիտի խաբուիք.
Թէ բանը այն տեղ հասնի,
Որ նոքա ճանկ ճանկի գան,
Իմանաս, որ այն առիւծի
Բանը բուրդ է, խնամի ջան.
Կատուի հախէն ո՞վ կը գայ.
Կատուից ուժով ի՞նչ գազան կայ։»

Վախկոտ մարդը երբոր մըկից վախենայ,
Կըկարծէ թէ նորանից ողջ աշխարհը կդողայ։

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱԾՔ

7

Տանու տէրտէրին «օրհնիա՛ տէր» չկայ։
Տաշած քարը գետնին չի մնալ։
Տասը չափի, մին կտրի։
Տարին մի զատիկ, էն էլ նաւակատիք։
Տէրը տարածին էր ափսոսում, գէլը մնացածին։

Տուն քանդողի տունը Աստուած կքանդէ։
Փէտը որ վէր ունես, գող շունը կիմանայ։
Փիս մարդը զատկին էլ փիս կըլի։
Փիս շունը ոչ ինքը կուտէ, ոչ ուրիշին կուտացնէ։
Փորը հորի նման ա, ինչոր ածես՝ չի երեւում։
Փորձած սատանէն լաւ ա, քանց անփորձ հրեշտակը
Քամին ասեց մարագին, դուռդ բաց արա դարման տուն ա-
ծեմ. ասեց, ոչ քու բերածը կուզեմ, ոչ քու տարածը։
Քամու բերածը քամին կտանի։
Քանց պուտը կարմիր չկայ, որ ճղկես սեւ ա։
Քաչալը դեղ գիտենայ՝ իր գլխին կանէ։
Քարը իր տեղը ծանր կըլի։
Քիչ խօսիս, շատ կլսես։
Քոսոտ էծը աղբրի ակնից ջուր կ՚խմէ։
Քօռի ի՞նչ վէջն ա, թէ մոմը թանկ ա։
Օձը իր շապիկը կը փոխէ, բայց բնութիւնը չի փոխել։
Օձի գլուխը որ ցաւի, ճամփի մէջ տեղը կը պառկի։
Օչով չասէ, թէ իր ճրագը ընչանք առաւօտը լիս կտայ։

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՏԻԵԶԵՐՔ, ԿԵՆԴԱՆԻՔ, ԲՈՅՍՔ ԵՒ ՀԱՆՔ

ՏԻԵԶԵՐՔ

Մեր երկիրը կամ մեր աշխարհը Աստուծոյ ստեղծած տիեզերաց մէկ ամենափոքր մասն է։ Ուրիշ անթիւ երկիրներ կամ երկնային մարմիններ կան, որոց շատերը մեր աշխարհէն աւելի մեծ են։ Այս գեղեցիկ մարմնոց մէկ մասը տեսնում ենք երկնքի վերայ, որք իւրեանց մեծ հեռաւորութեանը պատճառաւ մեզ մի մի լուսաւոր կէտեր են երեւում, և կոչւում են աստղ։ Այս աստեղաց ամենէն մեծն է արեգակը, որոյ ճառագայթները երկիրս լուսաւորումէն ու տաքացնում, և ամէն տեղ պտղաբերութիւն և կեանք են սփռում։ Առանց արեւու տաքութեան ու լուսոյն չկայ աշխարհիս վերայ կենդանութիւն. տունկերը, բոյսերը, ծառերը, կենդանիքը և մարդիկ առ հասարակ նորա զօրութեամբն են մնում կենդանի, ապա թէ ոչ կմեռնին։ Լուսինն ևս երկիրս լուսաւորում է, բայց նորա լոյսը արեւու լոյսի պէս փայլուն ու զօրաւոր չէ, և ամենեւին տաքութիւն չունի։ Լուսինը արեգական նման սեփական լոյս և տաքութիւնը չունի. Նա իւր լոյսը առնում է արեգակէն, ինչպէս և երկիրս։

Մեր գլխոյ վերայ տարածուած այն կապուտակ մեծ կամարն, որ անուանում ենք երկինք և հաստատութիւն, մէկ անհուն տարածութիւն է կամ միջոց, որոյ մէջ շրջում են արեգակը, լուսինը, երկիրս ու անթիւ անհամար աստղեր։ Բոլոր այս մարմինները կամ աստղերը մէկ տեղ առած կոչւում են տիեզերք։ Ուրեմն արեգակը, լուսինը, երկիրս և բոլոր միւս աստեղքը տիեզերաց մէկ մէկ մասունքն են։ Այս տիեզերաց հետ բաղդատելով՝ ո՜րչափ փոքր է մեր երկիրը։ Միայն արեգակը երկրէս մէկ միլիոն ու կէս անգամ մեծ է։ Արեգակը ոչ միայն մեր երկիրն է լուսաւորում ու տաքացնում, այլ և իւր չորս կողմն շրջուող բազմաթիւ երկնային մարմինները։ Արևուն ամէնից մօտ մարմինն է Փայլածուն, որ նորա չորս կողմն շրջում է 88 օրուան մէջ։ Իսկ մեր երկիրը շրջում է արեգական գլխովն 365 օրուան և մօտ 6 ժամուան մէջ. և այս 365 օրերն են, որ կոչւում են տարի։ Արևէն շատ հեռու եղած մոլորակներէն մէկն է Ուրանոս, որ նորա չորս կողմն պտըտում է 84 տարուան մէջ։ Լուսինը միշտ երկրիս հետ է, շրջում է նորա չորս կողմն 29 օրուան մէջ, յորմէ յառաջանում են ամիսները։ Լուսինը թէև բոլոր երկնային մարմնոց մէջ ամենէն մօտն է երկրիս, սակայն 360 հազար վերստ հեռի է երկրէս։—Գիտէ՞ք թէ թնդանօթի ռումբը ինչ արագութեամբ է վազում. եթէ մէկ ռումբ շարունակ նոյն արագութեամբ գնար երկրէս, քսան և հինգ տարումը հազիւ թէ հասնէր արեգական մօտ։

Մեր երկրին պէս արեգական շուրջը պտըտուող երկնային մարմինները կոչւում են մոլորակք, որովհետև մէկ տեղ հաստատուն չեն կենում, այլ մոլորածի պէս միշտ պտըտում են։ Որովհետև այս մոլորակները մեր երկրին նման են, շատ հաւանական է, որ նոքա ևս ունենան տարուան չորս եղանակները, օր ու գիշեր, ցամաք, ծով և այլն։ Իսկ միւս երկնային մարմինները, այն է աստղերը, ինչպէս երևում է, մէկ

մէկ արեգակներ են, այսինքն այնպիսի մարմիններ՝ որ արեւու-
պէս իւրեանք իւրեանց սեփհական լոյսն ունին, և իւրեանց
ճառագայթներովը լուսաւորում են ու տաքացնում են ուրիշ
երկնային մարմինները, որ սեփական լոյս չունին, այլ ստանու-
մեն ուրիշից։ Այս արեգակները կոչւում են հաստատուն
աստեղք. և մեր արեգակն ևս հաստատուն աստղ է։

Կարո՞ղ է մարդ աստեղազարդ երկինքին նայել, և Արար-
չի ամենակարող զօրութեանը ու իմաստութեանը վերայ
չզարմանալ, և նորան չօրհնել ու չփառաբանել։

ՏԱՐՈՒԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ

«Ինչո՞ւ համար, հայր», հարցրեց մի անգամ որդին իւր
հօրը, «արեւն ամառը աւելի է տաքացնում, քան թէ ձմեռը,
երեւի արեգակը ամառը աւելի մօտ է մեզանից։»—«Ամենեւին
ոչ, որդեակ իմ,» պատասխանեց հայրը. «ձմեռն արեգակը
շատ աւելի մօտ է մեզ, քան թէ ամառը. բայց երկրիս տա-
քանալը արեգական հեռու կամ մօտ լինելուցը չէ կախած,
այլ նորա երկնքի երեսին ունեցած դրութիւնից։ Դու մէկ
նայէ արեգականը ձմեռուան մէկ պայծառ օր կէսօրուան ժա-
մանակը, և տես թէ ո՛րքան է բարձրացած երկնքի երեսին.
և ապա նոյն դիտողութիւնն արա ամառուան մէկ պայծառ
կէսօրին, և կտեսնես որ ամառը արեգակը շատ աւելի բարձր
է կանգնած երկնքի երեսին, քան թէ ձմեռը։»

«Արեգակը որքան մեր վերայ բարձր լինի կանգնած, այն-
քան իւր ճառագայթները ուղղակի կձգէ երկրիս վերայ, և նո-
րանով մեզ շատ աւելի կտաքացնէ։ Այս բանս կարող ես
ամէն օր փորձել, և կտեսնես որ առաւօտները և իրիկունները
արեգական ճառագայթները այնքան չեն տաքացնում մեզ,

որքան կէսօրին, երբոր արեգակը ամենավերին կէտի վերայ է լինում կանգնած երկնքումը։ Բացի սորանից ամառը արեգակը աւելի վաղ է ծագում և աւելի ուշ է մայր մտնում, ուստի աւելի շատ ժամանակ ունի երկիրս տաքացնելու, ու այս պատճառաւ էլ ամառն օրերը երկայն լինում և տաք։ Եւ այսպէս, որքան արեգակը բարձր է կանգնած երկնքի երեսին, որքան աւելի ուղղակի են արձակւում մեզ վերայ նորա ճառագայթները, և որքան աւելի երկար է նա մեզ լուսաւորում երկնքի երեսին եղած ժամանակը, այնքան աւելի ջերմութիւն է պատճառում մեզ ու տաքացնում երկիրս։»

«Ձմեռն արեգակը շատ փոքր է մնում երկնքի երեսին, և ամառուան պէս մեր գլխի վերայովը չէ անցկենում, այլ մէկ կողմիցը՝ շատ ցածր երկնքումը, և այս պատճառաւ էլ նորա ճառագայթները ամառուան պէս ուղղակի չեն ընկնում մեզ վերայ, այլ խոտորնակի. ուստի և չեն կարողանում երկիրս շատ տաքացնել, ինչպէս և առաւօտեան կամ երեկոյեան ճառագայթները, որ զօրութիւն չունին տաքացնելու։ Բացի սորանից ձմեռն արեգակն աւելի ուշ է ծագում և աւելի վաղ է մայր մտնում. Հազիւ թէ սկսում է նա երկրիս մէկ որ և իցէ մասը տաքացնել, երբ յանկարծ մայր է մտնում, այսինքն անց է կենում գնում այնտեղից ուրիշ տեղ։ Այս պատճառաւ էլ ձմեռուան օրերը կարճ են լինում ու ցուրտ։ Այսպէս ահա, որքան արեգակը ներքև լինի կամ ցած երկնքի երեսին, որքան նորա ճառագայթները խոտորնակի ընկնին մեր վերայ, և որքան նա կարճ ժամանակ մեզ լուսաւորէ ցերեկը, այնքան աւելի սակաւ ջերմութիւն կարձակէ երկրիս վերայ, ու սակաւ նորան կտաքացնէ։»

«Ի հարկէ դու այս էլ նշմարած կլինիս, որ ամառուան տաք օրերից յետոյ յանկարծ չէ սկսւում ձմեռուան ցուրտը, և կամ ձմեռուան ցուրտ օրերից յետոյ յանկարծ չէ սկսւում

ամառուան շոգը, այլ ընդհակառակն՝ ամառուան տաք օրերը սակաւ առ սակաւ սառնանալով դառնում են ձմեռուան ցուրտ օրերը, և ձմեռուան ցուրտ օրերը փոքր առ փոքր տաքանալով դառնում են ամառուան շոգ օրեր։ Ձմեռուան ցրտէն ամառուան շոգը անցկենալու ժամանակը կոչւում է գարուն, իսկ ամառուան շոգէն ձմեռուան ցուրտը անցկենալու ժամանակն ասւում է աշուն։ Այս չորս եղանակները, որ են գարուն, ամառն, աշուն և ձմեռն կազմում են մէկ ամբողջ տարի և կոչւում են տարուան չորս եղանակներ։»

«Ձմեռն սկսւում է դեկտեմբերի 10-ին և վերջանում է մարտի 9-ին։ Մարտի 9-իցը սկսւում է գարունը և շարունակւում է մինչև յունիսի 9-ը։ Յունիսի 9-ին սկսւում է ամառն և վերջանում է սեպտեմբերի 11-ին։ Այս ժամանակից սկսւում է աշունը և շարունակւում է մինչև դեկտեմբերի 10-ը։»

«Օրը և գիշերը միշտ հաւասար չեն լինում միմեանց. գարնանը ու ամառը օրերն են լինում երկայն, իսկ աշնանը ու ձմեռը՝ գիշերները։ Տարուան մէջ ամենաերկայն օրը ու ամենակարճ գիշերը մեզ համար լինում է յունիսի 9-ին. իսկ ամենակարճ օրը ու ամենաերկայն գիշերը լինում է դեկտեմբերի 10-ին։ Մարտի 9-ին լինում է գարնանային գիշերահաւասարութիւն. Իսկ սեպտեմբերի 11-ին՝ աշնանային գիշերահաւասարութիւն։ Որքան դէպ ի հիւսիս գնանք, այնքան օրերի և գիշերների տարբերութիւնը մեծ կլինի։ Բևեռային շրջանակների տակը ամենաերկայն օրը 23 ժամ է լինում։ Իսկ բևեռներու տակը վեց ամիս գիշեր է լինում և վեց ամիս ցերեկ։ Բայց որքան դէպ ի հարաւ գնանք, այնքան այս տարբերութիւնը փոքրանում է և հասարակածի տակը գրեթէ միշտ գիշերն ու ցերեկը հաւասար են լինում։»

Ի՞նչ հարցրեց մի անգամ որդին իւր հօրը։ Հայրն ինչ պատասխանեց։ Ի՞նչ է պատճառը որ ամառը շոգ է լինում եւ ձմեռը ցուրտ։ Տարին քանի եղանակ ունի։ Ի՞նչ է նոցա անունները։ Երբ են նոքա

սկսւում եւ երբ են վերջանում: Երբ է լինում ամենաերկայն օրը եւ ամենակարճ գիշերը: Իսկ ամենակարճ օրը եւ ամենաերկայն գիշերը երբ է լինում: Ե՞րբ են լինում օրն ու գիշերը միմեանց հաւասար:
—Կրկնեցէք բոլոր պատմութիւնը:

Ի՞նչ կնշանակեն այս բառերս. դիտողութիւն, խոտորնակի, ջերմութիւն, ճառագայթ, ամենավերին, նշմարել:

ՁՄԵՌՆ

Ձմեռուայ ժամանակը արեգակը թէպէտ փայլումէ, բայց այնքան տաքութիւն չունի որպէս ամառը, որովհետև նա երկար ժամանակ չէ մնում երկնքի երեսին. և բաց ի դորանից նա իւր ճառագայթները ուղղակի չէ արձակում մեզ վերայ որպէս ամառը, որ կարողանայ մեզ տաքացնել։ Ձմեռուան օրերը ամառուան օրերից կարճ են, իսկ գիշերները՝ երկար։ Հիւսիսային երկրներումը ձմեռը երկար է շարունակւում և երբեմն սաստիկ ցուրտ է լինում։ Գետերը և լճերը սառչում են, այնպէս որ ոտքով և կառքով կարելի է մանգալ սառուցի վերայ։

Ձմեռը երկիրը ձիւնով ծածկում է. բայց ձիւնը շատ օգտաւէտ է և հարկաւոր, որովհետև սաստիկ ցուրտ ժամանակը նորա տակը անվնաս պահպանւումեն և մնում խոտերի և ծաղիկների սերմերը և ցանած արտերը։ Առանց ձիւնի ծաղիկների սերմերը և ցանած արտերը կարող են ցրտատար լինիլ։

Ծառերը իւրեանց տերևները աշնան վերջին թափում են։ Տերևաթափ ճիւղերի վերայ տերևների փոխանակ կակուղ և սպիտակ ձնակոյտներ են կախւում։ Ձմեռը միայն եղևին և մայր ծառերն են կանաչ մնում։ Նոցա վերայ ողջ ձմեռը մնում են կանաչ ասղնաձև տերևներ, կամ թէ փշաբեր ճիւղեր։

Ձմեռը անտառներումը թռչուններ քիչ են լինում, նոյնպէս և դաշտերումը շատ քիչ են գտնւում չորքոտանիք. իսկ միջատները բոլորովին անհետանում են։ Նոցանից շատերը աշնանը ձու թողնելով՝ ձմեռը կեանքից զրկւում են, միւսները մտնում են խոր՝ երկրի մէջը, ինչպէս մրջիւնը։ Մի քանի միջատներ բոլոր ձմեռը քնում են, և միայն գարնան ժամանակն են զարթնում, երբոր երկիրը տաքանում է։

Շատ թռչուններ ձմեռը չեն մնում մեր կողմերը. նոքա թռչում են դէպ ի տաք երկիրները, շատ անգամ հազարաւոր մղոն հեռու։ Ծիծեռնակները, արտոյտները, և սոխակները աշնան ժամանակը մեզանից հեռանում են։ Նոյնպէս էլ վայրենի սագը, բադը, կռունկը, կարապը, և այլն, աշնան ժամանակը աշխատում են հիւսիսից դէպ ի հարաւ գնալ՝ երկայն շարքով երկնքի վերայ ձգուելով։ Նոքա շատ լաւ են զգում, թէ որքան դէպ ի հարաւ է, այնքան տաք է։ Նոքա գնումեն և այնպիսի երկիրներ են որոնում, ուր ձմեռ չէ լինում։ Այդպիսի թռչունները չուող թռչուններ են կոչւում, Ագռաւները, կաչաղակները, մոշահաւները և կաքաւները մեզ հետ ձմերում են, և այդ պատճառաւ կոչւում են ձմերող թռչուններ։ Նոյնպէս էլ մնումեն ձմեռը ճնճղուկները և ուրիշ մի քանի մանր թռչուններ, որոնք իւրեանց տաք բոյների մէջն են մտնում և պաշտպանւում ցրտից. բայց և դոքա ձմեռուան ժամանակը այնպէս ուրախ չեն թռչում և չեն երգում, ինչպէս որ ամառը։

Չորքոտանիքը ըստ մեծի մասին նոյնպէս ձմեռուան ժամանակը թագչում են իւրեանց որջերումը, բոյներումը և ծառերի խոռոչներումը։ Շատերը ամենացուրտ ժամանակը թըմբում քնում են, ինչպէս՝ ոզնին, արջը։ Բայց առնէտը չէ քնում, նա ծառի խոռոչներումը աշնան ժամանակը ձմեռուան համար լաւ պատրաստութիւն է տեսնում ընկոյզից, և ողջ ձմե-

ռը կրծում է։ Այն կենդանիքը, որոնք ձմեռը թմրում քնում են, քնէած կամ քնափ կենդանիք են կոչւում։ Ընտանի կենդանիքը՝ ձին, կովը, ոչխարը և այլն, ձմեռը սովից և ցըրտից կը կոտորէին, եթէ մարդ նոցա համար գոմեր և մսուրներ չշինէր, և նոցա համար խոտ, դարման և գարի չպատրաստէր։

Ձմեռը դեռ չեկած, մարդս աշխատում է ձմեռուան համար իւր բոլոր պատրաստութիւնը տեսնել։ Ալիւրը, փայտը և ամէն հարկաւոր պաշարեղէնը պատրաստելուց յետոյ՝ նա ուրախութեամբ ընդառաջ է գնում ձմերան, և հրաւիրում է նորան իւր տունը. նա միւս կենդանեաց պէս նորանից չէ վախում։ Ուրախալի է ձմեռը, մանաւանդ այն ժամանակը, երբ արեգակը պայծառ փայլում է, և ձիւնապատ դաշտերի վերայ փայլում են բիւրաւոր կայծեր. իսկ ծառերը խակապէս զարդարուած են լինում թանգագին բիւրեղով։ Բայց միայն ձմեռն այն մարդու համար է ուրախալի, որ տաք տուն ունի, տաք շորեր և պատրաստի կերակուր։ Հապա ի՞նչ անէ այն խեղճ և աղքատ ալևոր ծերը, որ ոչինչ չունի։ Չնայելով սաստիկ ցրտին, նա պէտք է դռնէ դուռը շրջի, և 'ի սէր Աստուծոյ իւր համար մի կտոր հաց խնդրէ։ Հիւսիսային կողմերումը շատ անգամ ձմեռ ժամանակը ճանապարհորդները և խեղճ մարդիքը սառչում են, ցրտատար է լինում նոցա քիթը, ականջները, ձեռքը և ոտքը։ Ձմեռը ամենասաստիկ ցուրտը լինում է Ջրօրհնէքին։

Ե՞րբ է սկսւում ձմեռը եւ երբ է վերջանում։ Ի՞նչ փոփոխութիւններ էք նկատում բնութեան մէջ ձմեռ ժամանակը։—Կրկնեցէք այս պատմութիւնը ձեր խօսքերով եւ գրեցէք։

Ասացէք այս բառերի նշանակութիւնը. եղեւին, մայր ծառ, կարապ, չուել, որջ, խոռոչ, ողնի, առնէտ, քնէած կամ քնափ, մուր, բիւր, կայծ, բիւրեղ։

Ի՞նչպէս են կազմուել այս բառերը, տերեւաթափ, ցրտատար, ձնակոյտ, ասղնաձեւ, փշաքեր, չորքոտանի, մոշահաւ, ձիւնապատ։ Ի՞նչ զանազանութիւն կայ ընտանի եւ ընտանիք բառերի մէջ։

ԳԱՐՈՒՆ

Դեկտեմբերի 10-ից սկսում է օրը երկարանալ. իսկ մարտի 9-ին օրն ու գիշերը հաւասար են լինում: Այդ պատճառաւ գարնան սկիզբը Մարտի 9-ից է հաշւում: Արեգակը գարնան ժամանակը շատ է մնում երկնքի երեսին, ուստի և օրէ ցօր աւելի է տաքացնում երկիրը: Ձիւնը սկսում է փոքր առ փոքր հալչել, և ջուրը առուի պէս գնում է գետերի և լճերի մէջն է թափւում: Շուտով հալչում է և գետերի սառոյցը, և ջուրը այնքան է աւելանում գետերի մէջ, որ չէ կարողանում տեղաւորուիլ ափերումը, ուստի դուրս է գալի ափերից և թափւում շրջակայ մարգագետինները և դաշտերը: Այն փոքրիկ գետերը, որ ամառը կարելի է շատ հեշտութեամբ անցկենալ, գարնան ժամանակը շատ մեծանումեն և տարածւում: Իսկ այն մեծամեծ գետերը, որոց մէջը հազարաւոր գետեր և առուներ են թափւում, գարնան ժամանակը ծովի պէս տարածւում են:

Դեռ բոլոր ձիւնը չհալուած՝ այստեղ այնտեղ արդէն հին չորացած խոտերի մօտ, նոր և մաքուր կանաչ խոտ է սկսում դուրս գալ: Խոտի հետ միասին դուրս են գալի և առաջին ծաղիկները: Ծաղկում է քարափների գլխին ու բլուրների վերայ ձնածաղիկը, և այնպէս խիտ՝ որ կարծես թէ սպիտակ կտաւ լինի փռած: Ծաղկում է անտառներումը թփերի տակը մանուշակը: Ծառերն էլ նոյնպէս ձմեռուան քնից զարթնում են, և արեգական ներգործութիւնիցը տաքանալով՝ լցւում են հիւթով, և սակաւ առ սակաւ կանաչելով ծաղկում են: Ամենից առաջ ծաղկում է նշենին, նորանից յետոյ ծիրանին և միւս ծառերը: Թփերը և ծառերը ընկեր ընկերի առաջ շտապումեն պճնուիլ Զատկի և Կանաչ կիւրակէի տօն օրերի համար: Սկզբից ծառերի

և թփերի վերայ կանաչը նօսր և սակաւ է երևում, բայց մի փոքր ժամանակից յետոյ այնպէս են աճում մեծանում, որ կանաչազարդ անտառները անթափանցելի են դառնում։ Դաշտերի վերայ բուսնում են բիւր տեսակ ծաղիկներ, որք միմեանց հետ խառնուելով այնպէս են փաթաթւում իրար, որ կարծես թէ փարում համբուրում են միմեանց ու շնորհաւորում մէկմէկու գարնան գալուստը։

Ամէն տեղ գարունը միևնոյն ժամանակը չէ սկսւում։ Որքան հարաւային է երկիրը, այնքան էլ գարունը շուտ է գալի այնտեղ։ Գարունը գալուն պէս՝ թռչունները բազմութեամբ երևում են։ Առաջ գալիս են մեր կողմերը ագռաւները, և իւրեանց կռկռալովը մեզ իմացնում են, որ գարունը սկսուել է։ Նոքա համարեա միշտ մարտի սկզբին են երևում։ Բայց ահա երևեցաւ և արտոյտը, որ օդի մէջ բարձր թռչում է և երգում իւր սաստկահնչիւն երգը։ Արագաթռիչ և սրաթև ծիծեռնակները փոքր ինչ ուշ են գալի մեր կողմերը։ Սարեակները, վայրենի աղաւնիքը, և կկուները մէկը միւսի յետևից երևում են և բնակւում դաշտերումը, անտառներումը և ծառաստաններումը։

Բարձր օդի մէջը շուտով գալիս են և գնում հարաւից դէպ ի հիւսիս կռունկների, վայրենի բադերի, սագերի և կարապների երամները մէկը միւսի յետևից։ Շուտով գալիս է և սոխակը ու սկսում իւր քաղցրաձայն երգը։ Այդ թռչուններից մի քանիսը՝ ինչպէս վայրենի բադը, կռունկը, կարապը ուրիշ տեղեր են գնում, միւսները մնումեն մեզ մօտ բոլոր ամառը, ու սկսումեն բոյներ շինել իւրեանց համար։ Նոքա անդադար թռչտումեն, երգումեն, աշխատումեն ու ժողովում չոր ճիւղեր, դարման, խոտ, մամուռ, փետուր, կաւ կամ ցեխ, որ իւրեանց ապագայ ձագերի համար փափուկ և տաք բնակարան շինեն։

Աշխատասէր մրջիւնները, գոյնզգոյն թիթեռնները, անճոռնի բզէզները, իսկ յետոյ անտանելի մոծակները և մժեղները, բիւր տեսակ թռչոտող և սողացող միջատները լոյս աշխարհ են դուրս գալի, Աշխատասէր մեղուն, որ տաք փեթակի մէջ բոլոր ձմեռը քնած էր, զարթնում է, թողնում է իւր մոմեղէն խուցը, և թռչում է ծաղիկներից քաղցըր մեղր ժողովելու:

Շատ փոքր փոփոխութիւն է նկատւում վայրենի չորքոտանեաց կամ գազանաց մէջ. Նոքա ամառ ձմեռ միևնոյն տեղն են կենում, հեռու կամ տաք երկիրներ չեն գնում: Բայց այսու ամենայնիւ նոքա էլ սպասում են անհամբեր գարնան գալուն: Արջը, ոզնին և միւս քնէած կենդանիքը արթնանում են իւրեանց երկարատև թմրութենէն, և սկսում են որոնել իւրեանց համար կերակուր: Նապաստակը մեծաւ ախորժանօք կրծում ուտում է նորաբոյս դալարիքը:

Ձմեռուան վերջերին ցորեանը և հաճարը, խոտը և գարին սկսում են պակասել, մէկը մարդկանց կերակուր դառնալով, միւսը անասուններին: Պէտք է աշխատել կրկին ուտելիք պատրաստել եկող ձմերան և գարնան համար: Ուստի երկրագործ գիւղացին կազմում պատրաստում է սայլը, գութանը, արօրը (չութը), տափանը, և երբ գետինը փոքր ինչ տաքանում է և կակղում, նա գնում է դաշտը, հերկում և սերմանում է գարնանացանը: Այգեպանները և պարտիզպանները տնկում են և ցանում զանազան տեսակ բոյսեր և ծաղիկներ:

Գարնան ժամանակը ամենեքեան ուրախ են լինում և զուարթ. նա մանաւանդ խեղճերը և աղքատները, որոնք ձմեռը ոչ փայտ ունէին և ոչ տաք հագուստ: Գարնան ժամանակը Աստուծոյ արեգակը նոցա էլ միւսների պէս ձրի լուսաւորումէ և ձրի տաքացնում:

Ե՞րբ է սկսւում գարունը: Ի՞նչ փոփոխութիւններ էք նկատում բնու-

Թեան մէջ գարնան ժամանակը:—Կրկնեցէք ձեր խօսքերով այս պատմութիւնը եւ գրեցէք:

Ի՞նչպէս են շինուած այս բառերը. մարդագետին, քարափ, ձնածաղիկ, սրաթեւ, երկարատեւ, երկրագործ, այգեպան, պարտիզպան:

ԱՄԱՌՆ

Ամառուան սկզբին ամենաերկայն օրեր են լինում: Արեգակը համարեա թէ երկնքից չէ հեռանում. միայն 6 կամ 7 ժամ է լինում գիշերը: Արեգական ուղղահայեաց ճառագայթները սաստիկ այրումեն և ջեռուցանումեն թէ երկիրը և թէ օդը: Մարդս ակամայ զովութիւն է խնդրում, և դիմում է դէպ ի անտառախիտ և ստուերաշատ տեղերը ապահովութիւն գտնելու: Այս օրերին սաստիկ շոգը արդէն տիրապետում է: Օդը էլ չէ փչում, ծառերը էլ չեն շարժւում, և տերևները կարծես թէ շոգից թառամած լինին: Թռչունները թագչում են անտառի խորքերումը, ընտանի կենդանիքը էլ չեն արածում և զովութիւն են որոնում. մարդը քրտնքով ողողած և սաստիկ դադարած լինելով թողում է իւր գործը. բոլորը սպասում են թէ երբ կնուաղի և կանցնի շոգը: Բայց արտերի, բոյսերի և ծառերի համար շոգը անշուշտ հարկաւոր է:

Սակայն երկարատև երաշտը վնասակար է բոյսերի համար, որոնք թէ և տաքութիւն են սիրում, բայց սիրում են և խոնաւութիւն: Երաշտի ժամանակը մարդիկ ուրախանում են, երբ երկնքումը երևում են ամպերը, թնդում է որոտումն, փայլում է կայծակը, և զովարար անձրևը գալիս է ու ծարաւ երկրին արբուցանում: Միայն թէ երբ անձրևը կարկտախառն է լինում, այն ժամանակը վնաս է տալի հասած արտերին, այգիների ու պարտէզների պտուղներին. գիւղացիքը

և առհասարակ երկրագործները ջերմեռանդ սրտով աղօթք են անում միշտ Աստըծուն, որ կարկուտ չգայ:

Ամենայն բան՝ ինչ որ սկսել է գարունը, ամառը վերջացնում է: Ծառերի տերևները մեծանում են, ինչքան որ հարկն է, և մի քանի ժամանակից յետոյ թափանցանց անտառները հազարաւոր թռչունների անթափանցիկ բնակարան են դառնում: Ջրովի դաշտերումը խիտ և բարձր խոտը ծովի նման տատանում է: Նորա մէջը թռչոտում են և բզզում բիւրաւոր միջատներ: Այգիներումը ու պարտէզներումը կարմիր բալը, շէկակարմիր ծիրանը և սալորը ծառերի կանաչ տերևների մէջ արդէն փայլում են. խնձորը և տանձը դեռ ևս կանաչ են և տերևների մէջը թաքչում են:

Դաշտերը ծածկուած են երփներանգ ծաղիկներով, որոնցից անուշահոտութիւն է բուրում: Այդ անուշահոտ ծաղիկների մէջը լսւում է մի ներդաշնակաւոր և մեղմիկ ձայն: Այդ հազարաւոր մեղուներն են, որոնք երգելով քաղցրահիւթ ծաղիկների վերայ բանում աշխատում են, որ քաղցրահամ մեղր շինեն մեզ համար:

Հաճարի և ցորենի արտերը արդէն բարձրացել են, հասկ են տուել և սկսել են դեղնիլ. նոքա քամու փոքր ինչ փչելուցը ծովի պէս տատանում են, և արտոյտը բարձր սլանալով նոցա վերայ քաղցր երգում է:

Դաշտերի պտուղները հասունանում են. և ո՛րքան քաղցրահամ պտուղներ կան դաշտումը: Կանաչ խոտերի մէջ փայլում է հիւթալի կարմիր ելակը (մորի), որ կարծես թէ իսկ կորալին (մարջան) լինի: Հաղարձի պայծառ և կարմրափայլ ողկոյզները թփերիցը կախ են եղել: Մորը և մոշը հասունացած՝ սպասում են հիւրերի.....: Ամառուան պտուղների ո՞ր մինը համարես: Մինը միւսի յետևիցը հասնում է:

Ամառը թէ թռչունների, թէ չորքոտանեաց և թէ մի-

ջահների համար առատութիւն է։ Ահա արդէն փոքրիկ թռչունները իւրեանց բոյների մէջը կերակրւում են։ Բայց մինչև նոցա փետուրների դուրս գալը, աշխատաւոր ծնողները ուրախ ձայնով սլանում են օդի մէջ, որոնելով իւրեանց ձագերի համար կերակուր։ Բաւականի կերակուր կայ թռչունների համար. մինը բարձրացնում է պտղալից հասկը, միւսը շարժում է հասած կանեփի ճիւղը, երրորդը կտցում է հասած բալը կամ թութը, չորրորդը մորեխի, ճանճի և կամ մժեղի յետևից է ընկնում, որ իւր ձագերի համար կակուղ կերակուր տանէ։

Արթօտ և գոյնզգոյն թրթուրը՝ երերալով իւր բազմաթիւ ոտների վերայ, կրծում է անդադար ծառերի և միւս բոյսերի տերևները և պտուղները։ Փայլուն և երփներանգ թիթեռները անթիւ բազմութեամբ թռչոտում են ծաղկանց վերայ և նոցա քաղցր հիւթը ծծում են ու կերակրւում։ Ոսկեփայլ մեղուն անդադար ու անխոնջ աշխատում է զանազան ծաղիկներից անուշահոտ հիւթ ժողովել քաղցրահամ մեղր պատրաստելու համար։ Փեթակների մէջը լսւում են անլռելի և խուլ ձայներ։ Մեղուների համար փեթակի մէջ շուտով նեղութիւն է լինում, և նոքա սկսում են արդէն ձագ տալ, այսինքն բաժանուիլ և յօրինել երկու աշխատասէր ընկերութիւն, որոց մինը մնում է հին տան մէջ, իսկ միւսը թռչում է իւր համար նոր բնակարան գտնելու, ուր և իցէ մի ծառի խոռոչի մէջ։ Բայց ճանճապանը ճանապարհին այդ ձագը բռնում է և դնում յառաջագոյն պատրաստած նոր փեթակի մէջ։

Արջիւնը արդէն սկսել է գետնի տակին իւր համբարը պաշարով լցնել։ Տնտես առնէտը սկսել է արդէն իւր ձմեռուան պաշարը հոգալ և պատրաստել, և հասած ընկոյզները իւր բոյնի մէջը կրել։ Լայնածաւալ բնութեան մէջ բոլորին

յարմար բնակութեան տեղ կայ, բոլորի համար առատութիւն է։ Ողորմած Արարիչը բոլորի համար լայն բացել է իւր ամենառատ ձեռքը, և երկրիս վերայ սփռում է անխնայ իւր բարութիւնը։

Գիւղացու գործերը ամառուան ժամանակը շատ և շատ են։ Նա պէտքէ հերկէ և պատրաստէ աշնանացանի համար գետինը. Նորանից յետոյ պէտք է հնձէ խոտը։ Դեռ չաւարտած խոտի հունձը, արդէն աշնանացանի հունձը եկել հասել է։ Պտղալից և ոսկեփայլ հասկը հասունացել կռացել է դէպ 'ի գետինը, եթէ նորան թողուն այլ ևս դաշտի մէջը, հատիկը կսկսի թափուիլ և Աստուծոյ տուրքը 'ի զուր կփչանայ։ Ուստի թողնում են գերանդին և վերցնում են մանգաղը։ Ուրախութիւն է նայել, թէ ինչպէս արտերի մէջ կռացած այստեղ այնտեղ հնձողների խումբը հնձում են բարձր կանգնած ցորենը և հաճարը արմատիցը, և գեղեցիկ ու ծանր խուրձեր են կապում։

Դեռ չաւարտած աշնանացանի հունձը, հասունանում դեղնում է գարնանացանը և մանգաղ է կանչում։ Ահա կտաւատի քաղելու ժամանակն էլ եկել է, նա բոլորովին հասունացել ընկել է։ Ահա կանեփն էլ պատրաստ է, թռչունները երամներով թռչում հաւաքւում են այն տեղ ու կացահարում կանեփի իւղալից հունդը։ Ժամանակ է հանել և գետնախնձորը։ Իսկ տանձն ու խնձորը վաղուց հասած թափւում են խոտի մէջ։ Բոլորն էլ հասել են, բոլորն էլ պէտք է ժամանակին ժողոված. . . . մինչև անգամ ամառուան երկայն օրերն էլ բաւական չեն լինում նոցա ժողովելու։

Երեկոյեան ժամանակը մարդիկը ուշ են տուն գալի գործից։ Նոքա դադրած են, բայց իւրեանց ուրախ երգերի ձայնը թնդացնում է օդը երեկոյեան արշալուսի խաղաղ ժամանակին։ Քաղցր է քնում գիւղացին այսպիսի ծանր աշ-

խատանքից յետոյ, զգալով որ նա կատարել է իւր սուրբ պարտաւորութիւնը: Առաւօտը, արեգական հետ միասին, գիւղացիքը կրկին գնումեն դաշտը բանելու. իսկ արեգակը, գիտէք որ ամառ ժամանակը շատ շուտ է դուրս գալիս:

Բայց ընչո՞ւ է գիւղացին ամառն ուրախ, երբ այդպէս շատ դժուար գործեր ունի: Ահ, սորան շատ պատճառներ կան: Նախ՝ գիւղացին գործից բոլորովին չէ վախենում. նա դժուարութիւնների մէջ է մեծացած: Երկրորդ՝ նա գիտէ որ իւր ամառուան աշխատութիւնը ամբողջ տարին իրան և իւր ընտանիքը կերակրում է: Երրորդ՝ գիւղացին զգում է որ իւր աշխատանքովը ոչ թէ միայն իւր ընտանիքն է կերակրում, այլ և ամբողջ աշխարհը, և ես, և դու, և բոլոր այս մեր շրջաբնակ պարոնները, թէ և նոցանից մի քանիսը արհամարհանօք են նայում գիւղացւոց վերայ: Նա հերկելով և մշակելով երկիրը, իւր հանդարտ և խոնարհ գործովը բոլորին կերակրում է, ինչպէս ծառի արմատները կերակրում են իւրեանց այն հպարտ ճիւղերին, որոնք կանաչ տերևներով զարդարուած են: Չորրորդ՝ գիւղացին վաճառելով իւր աշխատանաց աւելորդ պտուղը՝ ստանում է դրամ և հոգում է իւր ընտանեաց պակասութիւնը:

Շատ աշխատութիւն և շատ համբերութիւն է պէտք գիւղական գործերի համար, բայց և նոյնպէս փոքր գիտութիւն և փոքր փորձառութիւն չէ պահանջւում: Փորձեցէք հնձել, և դուք կտեսնէք որ սորա համար շատ հմտութիւն է պէտք: Ով որ սովոր չէ գերանդի բռնել կամ բանացնել, նա չէ կարող երկար ժամանակ բանել: Լաւ դէզ դնելը նոյնպէս հեշտ բան չէ, իսկ գետին հերկելն ամէն մարդու բան չէ: Բաց ի դորանից գիւղացին պէտք է իմանայ թէ ինչպէս պէտք է շինէ և կազմէ արօրը, տափանը, սայլը, ինչպէս պէտք է վուշ և կանեփը ծեծէ, մաքրէ, թել մանէ

և կտաւ գործէ....: Ո՜հ, շատ և շատ բան կարող է անել գիւղացին, և նորան ոչ մի կերպով և ոչ մի ժամանակ չէ կարելի տգէտ կոչել. թէպէտ և նա կարդալ չգիտենայ: Կարդալը և արուեստ սովորելը շատ հեշտ է, քան թէ սովորել այն ամենայն գործերը, ինչ որ մի փորձառու գիւղացին գիտէ:

Մեռնելն էլ դժուար չէ գիւղացու համար, նորա մշակած արտերը և նորա ցանած դաշտերը կմնան իւր որդւոցը, որ նա մեծացրել է, կերակրել է և սովորեցրել է աշխատութեան. և իւր փոխանակ Աստուծոյ և մարդկան առաջին մշակներ է պատրաստել և կարգել:

Ե՞րբ է սկսւում ամառը եւ ե՞րբ է վերջանում: Ինչ փոփոխութիւններ էք նկատում բնութեան մէջ ամառուան ժամանակը: Ի՞նչ դրութեան մէջ են լինում դաշտերը, արտերը, այգիները եւ պարտէզները: Ի՞նչ աշխատութիւններ է անում գիւղացին:—Կրկնեցէ՛ք ձեր խօսքերով այս բոլոր պատմութիւնը եւ գրեցէք:

Ասացէք այս բառերի նշանակութիւնը. ուղղահայեաց, անտառախիտ, ստուերաշատ, որոտումն, արբուցանել, թափանցելի, խիտ, երերալ, շիկակարմիր, երփներանգ, ներդաշնակաւոր, սլանալ, հիւթալի, ելակ, կոռողիոն կամ կորաղիոն, հաղարջ, մոր, մոշ,

Ի՞նչպէս են շինած այս բառերը. պտղալից, իւղալի, կտցահարել, շըրջաբնակ, ուղղահայեաց, ակամայ (ան-կամայ), անտառախիտ, շիկակարմիր (շէկ-կարմիր, բաց կարմիր), քաղցրահիւթ, հիւթալի, ոսկեփայլ, կտաւատ (կտաւի հատ, հունդ), փորձառու:

Ի՞նչ կնշանակէ. «ոսկեփայլ զարնանացանը մանգաղ է կանչում: Հասունացած մորը եւ մոշը հիւրերի են սպասում: Սաստիկ շոգը տիրապետում է կէս օրերին: Խիտ եւ բարձր խոտը ծովի նման տատանում է»:

ԱՇՈՒՆ

Արդէն յունիսի 9-ից օրը սկսում է փոքր առ փոքր կարճանալ, իսկ գիշերը երկարել: Սեպտեմբերի 10-ին օրը կրկին հաւասարւում է գիշերին, և լինումէ աշնանային գիշերահաւասարութիւնը և աշնան սկիզբը: Այս օրից ար-

դէն սկսում է գիշերը երկարել, և դեկտեմբերի 10-ին ամե-նաերկայն գիշերն է լինում:

Աշնան ժամանակը գիւղացու գործերը բաւականի թե-թևանում են, բայց այսու ամենայնիւ նա դեռ շատ գործ ունի կատարելու: Սեպտեմբերի սկզբին սկսում է նա դաշ-տից կրել խուրձը և դիզել կալի մօտ: Ծանր և պտղա-լից խրձերի տակին բարձած սայլերը ամէն ճանապարհում ճռնչում են: Խուրձ կրելուց յետոյ սկսումեն կասել: Կասած ցորեանը ածումեն համբարները, իսկ յարդը կամ դարմանը ածումեն մարագը՝ ձմեռը անասնոց կերակրելու համար:

Կալը կասելուց յետոյ սկսում է այգեկութը: Բոլորը թէ մեծ և թէ փոքր գնում են այգին, և սկսում են քաղել խա-ղողի ծիրանափայլ ողկոյզները, ածել հնձանը, ճմլել և գի-նի շինել: Այս ժամանակը գիւղացւոց համար ուրախութեան ժամանակ է: Նոքա մոռանում են ամառուան այնքան ծա-նըր աշխատութիւնները և կրած նեղութիւնները:

Այգեկութը աւարտելուց յետոյ գիւղացին սկսում է աշնանացանը. հերկում է, ցանում է և տափանում է ար-տերը, որ յաջորդ տարին ևս հաց ունենայ: Սորանից յետոյ նա սկսում է պատրաստել ձմեռուան համար փայտը կամ վա-ռելիքը, ալիւրը և բոլոր հարկաւոր պաշարեղէնը:

Մինչդեռ գիւղացին իւր այս գործերն է հոգում, ա-րեգակն էլ սկսում է փոքր առ փոքր խոնարհիլ և իւր այ-րող ճառագայթները մեզանից հեռացնել: Հոկտեմբերի սկզ-բին սկսում է աշնանային բարակ անձրևը, որ բոլորովին ամա-ռուան հեղեղագնաց և սպառնացող անձրևների նման չէ: Նա անդադար գալիս է, և երկիրն էլ այնպէս շուտով չէ չո-րանում կամ ցամաքում, ինչպէս որ ամառն էր լինում: Քա-մին անդադար փչում է. և արեգակը չունի իւր ամառուան տաքութիւնը: Ամպերը համարեա թէ երկնքիցը չեն հե-

ռանում, և նոքա ամառուան այն գեղեցիկ ամպերը չեն, ո-րոնք արծաթեայ լեռների նման բարձւում էին միմեանց վերայ բարձր երկնքումը։

Օրն սկսում է ցրտիլ, և հոկտեմբերի վերջերին առա-ւօտները բաւականի ցուրտ է լինում։ Առաւօտները զարթ-նելով դուք կտեսնէք թէ ինչպէս է սպիտակել խոտի երեսը, կամ հարևանի տան կտուրը։ Այդ եղեամն է։

Օգոստոսի վերջիցը սկսած ծառերի տերևը սկսում է տեղ տեղ դեղնիլ։ Իսկ սեպտեմբերին դուք կնշմարէք թէ ինչպէս դեռ ևս կանաչ ծառերի վերայ երևում են դեղին և ոսկեփայլ ամբողջ ճիւղեր, կարծես թէ աշնան մահացու-ցիչ ձեռը նոցա մօտից անցնելով բռնել և ճմլել է նոցա։ Օրէ ցօր աւելանում են ծառերի վերայ դեղին տերևները. օրէ ցօր անհետանում են դաշտերի գեղեցիկ ծաղիկները։ Անցնում է ևս մի փոքր ժամանակ, գալիս է հոկտեմբերը, պարտէզների ու այգիների ծառերը բոլորովին մի այլ գեղե-ցիկ, ծիրանի և ոսկեփայլ գոյն են ստանում։ Բայց կատա-ղի աշնանային քամին նոցա այդ վերջին զարդն էլ խլում է, և օդի մէջ պտոյտ տալով սփռում է թերթև և չորացած տե-րևները խոնաւ երկրի վերայ։

Դաշտերի անթիւ միջատները ու թռչունները կամաց կամաց անհետանում են։ Չուող թռչունները մինը միւսի յետևից ժողովւում են չուելու հեռաւոր երկիրներ, ուր ձմեռ չէ լինում։ Առաջին անգամը ծիծեռնակներն են աղաղակ բարձրացնում, և նոքա սեպտեմբերի կիսին յանկարծ անյայ-տանում են. նոքա զգում են աշնան մերձենալը և այդ թռ-չունների կանուխ թռչելը նախագուշակում է ձմերուան շուտ գալը. Նոցանից յետոյ գնում են հիւսիսից դէպ ի հարաւ կռունկները, կարապները և սագերի երկայն ձգուած երամ-ները, որք եկել էին ամառը մեզ հիւր։ Նոքա թռչում

գնումեն բարձր օդի մէջը աղաղակ բառնալով և պէսպէս ձևեր յօրինելով. երբեմն շղթայաձև երկար շարուելով մի կարգ, երբեմն անկիւնաձև և երբեմն բոլորակաձև։

Անտառները անօսրանում են, դատարկւում և հանդարտւում. միայն մնում են ագռաւները, կաչաղակները, ճնճղուկները և մի քանի ուրիշ մանր թռչուններ, որք տրտմագգեստած թռչոտում են տերևաթափ ծառերի վերայ։ Ծառերը արդէն մերկացել են իւրեանց գեղեցիկ զգեստը և կանգնած են բոլորովին մերկ։ Դաշտերը նոյնպէս մերկացել են իւրեանց ծաղկեայ պատմուճանը, և զգեցել են տրտմութեան սև զգեստ։ Մերկ և խոնաւ լեռները տխրագին նայում են երկինքին, և կարծես աղաչում են, որ շուտ ուղարկէ սպիտակափայլ ձիւնը նոցա անախորժ մերկութիւնը ծածկելու համար։ Գալիս է վերջապէս և ձիւնը, բայց դեռ այնքան ոյժ չունի, որ երկար մնայ. շուտով հալւում է և կրկին անյայտանում. Միայն նոյեմբերի վերջին կամ դեկտեմբերի սկզբին է սկսւում նորա տիրապետութիւնը և թագաւորութիւնը երկրիս վերայ։

Մարդիկ իւրեանց բնակարանները փակում են։ Ծերերը ժողովւում են մի տաք տեղ և իւրեանց գլխով անցած բաները պատմում են միմեանց, խրատ տալով երիտասարդներին և զգուշացնելով նոցա ապագայ պատահմունքներից և փորձանքներից։ Աշնան վերջը գիւղացւոց հանգստեան և զուարճութեան ժամանակն է։ Հարսանիքները միշտ այս ժամանակն է լինում, երբ գիւղացւոց համար գործ քիչ կայ և ամէն բարիք շատ։ Ուրախ և անհոգ ժողովուրդը գնում է հիւր մի խրճիթից միւս խրճիթը, մի գիւղից միւս գիւղը։ Գիւղացին ամառը սաստիկ աշխատութեան մէջ է լինում. ուստի հարկաւոր է նորան ձմեռը հանգստանալ և ուրախանալ։—

Ե՞րբ է սկսւում աշունը եւ ե՞րբ է վերջանում։ Ի՞նչ փոփոխութիւններ էք նկատում բնութեան մէջ աշնան ժամանակը։ Ի՞նչ դրութեան մէջ են լինում դաշտերը եւ անտառները աշնանը։—Կրկնեցէք ձեր խօսքերով այս պատմութիւնը կամ նկարագրութիւնը եւ գրեցէք։

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ

Բոլոր կենդանիքը մէկ տեսակ չեն. մեծ զանազանութիւն կայ շան և ճնճղուկի (ծտի), ձկան, գորտի, սարդի և խխունջի մէջ։

Շունը ունի չորս թաթ կամ ոտք, և իւր ձագերին կամ լակոտներին մեծացնում է կաթնով։ Շան մարմինը պատած է մազով։ Ճնճղուկը երկու ոտք ունի, թռչում է, ձու է ածում և ձագ է հանում, և նորա մարմինը պատած է փետրով։ Ձուկը ոչ ոտք ունի և ոչ թև, և մարմինը պատած է թեփով։ Ձուկը չէ կարող ոչ շան նման ման գալ կամ վազել, և ոչ ճնճղուկի պէս թռչել, այլ կարող է լողալ, և այս պատճառաւ ունի լողալու թևճակներ։ Գորտը չորս թաթ ունի, յետևի թաթերը առաջիններից աւելի երկայն են, և նոցանով նա աւելի լաւ է կարողանում լողալ քան թէ ման գալ։ Գորտը չէ կարողանում ման գալ, այլ թռչոտում է։ Նա կարող է ջրումն էլ ապրել, ցամաքումն էլ. ուստի և կոչւում է երկակենցաղ, այսինքն երկու կերպ կեանք ունեցող։ Սարդը ունի ութը թաթ կամ ոտք, և նորա մարմինը շատ օղակաձև մասունքներից է կազմուած։ Խխունջը ամենևին թաթ չունի, նա իւր վերայ մի խեցի պատեան ունի. երբեմն նորա մէջն է մտնում բոլորովին ծածկւում է, երբեմն կէս մի դուրս է գալիս։

Համարեա թէ բոլոր կենդանիքը իրանց համար սեպհական ձայն ունին. իսկ ձկները, որդունքը և միջատները, ինչպէս երևում է, ամենևին ձայն չունին։ Մարդուս ձայնը

կենդանեաց ձայնիցը աւելի ախորժելի է։ Ես լսել եմ սոխակի ու արտուտի երգը, շան հաջիւնը, ձիու խռնջիւնը, մեղուի բզզանքը, բայց ոչ մէկի ձայնը չէ կարող հաւասարիլ քաղցրաձայն մարդու քաղցրանուագ երգին։

Աստուած բոլոր կենդանեացը տուել է տաք և ամուր հագուստ։ Ոմանք մազով կամ բրդով են ծածկուած, ոմանք փետրով, ոմանք ևս թեփով՝ ինչպէս ձկները, կամ խայթոցով՝ ինչպէս ոզնին, և կամ խեցիով՝ ինչպէս ոստրէն, ձկնականջը, խեցգետինը, խխունջը։

Կենդանիքը կերակրւումեն զանազան կերպով։ Ոմանք սպանում են կամ գիշատումեն ուրիշ կենդանիք և ուտումեն, ուստի և կոչւում են գ ի շ ա տ ի չ, այսինքն պատառող կենդանիք։ Ոմանք կերակրւումեն խոտով, արմատով, տերևներով, ծաղկի ծուծով, և կոչւումեն խ ո տ ա կ ե ր կենդանիք։

Եզը, կովը, ոչխարը, ձին, ուտումեն խոտ և ուրիշ բոյսեր։ Շունն ու կատուն ուտումեն միս և ուրիշ ո՛ր և իցէ կերակուր։ Հաւերը և թռչունները ուտումեն հունտ։ Մեղուն և թիթեռները ուտումեն ծաղկանց հոյզը ու ծուծը. իսկ որդունքը՝ փայտ և տերև։

Կենդանեաց անդամներն ևս իրարու նման չեն։ Ոմանք ձեռքեր ունին՝ ինչպէս կապիկը, միւսները ոտքեր՝ ինչպէս կովը, ձին. կան ևս որ ամենևին անդամ չունին՝ ինչպէս որդունքը և օձերը։ Ոմանք չորս թաթ (ոտք) ունին, ոմանք երկու, և ոմանք վեց և կամ ութը. կան նաև որ մինչև հարիւր և աւելի թաթ ունին, ինչպէս օձասանդր կոչուած միջատը։

Կենդանեաց ոմանք թև ունին՝ ինչպէս թռչունները, ոմանք թևճակ՝ ինչպէս ձկները, և ոմանք եղջերիկ՝ ինչպէս մեղուն և թիթեռները։

Կենդանիքը երբոր յոգնումեն՝ հանգստանումեն, քնումեն։ Շատ մեծի մասին նոքա քնումեն գիշերը՝ բայց կան և մի քանի կենդանիք՝ ինչպէս բու ու բուիճակը, մաշկաթեւը, որոնք ցերեկը քնումեն և գիշերը արթուն են կենում։ Կան ևս կենդանիք, որ բոլոր ձմեռը թմրում են և խոր քնի մէջ մտնում, և գարնանը զարթնում, ինչպէս՝ արջը։

Աստուած ամէն կենդանեաց տուել է զէնք ու միջոց թշնամեաց երեսից իւրեանց անձը պաշտպանելու համար. օրինակ, ոմանք իւրեանց անձը պաշտպանումեն՝ թշնամուն կծելով, ոմանք՝ աքացի տալով, ոմանք՝ եղջիւրներով հարկանելով, այլք սաստիկ արագութեամբ վազելով կամ թռչելով։ Ջրի մէջ ապրողներից ոմանք ևս իւրեանց թշնամու ձեռքից ազատուելու համար պղտորումեն ջուրը, որ անտեսանելի լինին։

Կենդանեաց ոմանք իւրեանց ձագերը ծնումեն կենդանի, ու ծծերի մէջ գոյացած կաթնով նոցա սնուցանումեն։ Այսպիսի կենդանիքը կոչւում են կենդանածինք, ինչպէս են կովը, ձին, ոչխարը, շունը, կատուն, մուկը և այլն։ Թռչունները բոյների մէջ ձու են ածում, նոցա վերայ թուխս են նստում ու տաքացնում են։ Նոցա այն տաքութեամբը ձուերի մէջ ձագեր են գոյանում, և երբոր ժամանակը գալիս է, ձուի կճեպը կոտրում են ու դուրս են գալի։ Ձկները իւրեանց բազմաթիւ ձուանը ածում են ջրի բարակ տեղերը կամ խոտերի վերայ, ու նոցանից արեգական տաքութեամբը հարիւրաւոր ու հազարաւոր մանր ձկներ են դուրս գալի։

Թռչունները թռչումեն ու ապրումեն օդի մէջ, և ծածկուած են փետրով, որ նոցա զգեստի տեղն է։ Ձկները ապրում են ջրի մէջ և պատած են թեփով։ Որդունքը, մկները և մի քանի ուրիշ կենդանիք ապրում են հողի տակին, ու ծածկուած են մազով կամ բարակ մորթով։

Կենդանածնաց մորթը պատած է մազով, բրդով, խայթոցով և կամ թեփով։ Կենդանածինքը մարդուս շատ օգտակար են։ Ոչխարի միսը և կաթը ուտում ենք, և բուրդը մանելով տեսակ տեսակ հագուստներ ենք շինում մեզ համար։ Եզան միսը նոյնպէս ուտում ենք, որ կերակրեղէնաց ամենից սննդարարն է. Իսկ մորթը կաշի ենք շինում, ու նորանից մեզ համար, կօշիկ, մաշիկ, մուճակ ու տրեխ ենք կարում։ Շատ տեղ միայն եզներով են հերկում իւրեանց դաշտը կամ երկիրը։

Կովը մեզ կաթն է տալի, որ խմում ենք, կամ նորանով զանազան կերակուրներ ենք շինում։ Շատ տեղ գործ են ածում ձիու ու իշի կաթը, որ շատ առողջարար է կուրծքի ցաւի համար։ Ձին մեզ շատ օգտակար է լծելու և հեծնելու համար, նմանապէս մեր բեռները կրելու ու գետինը հերկելու համար. լեռնոտ երկիրների համար էշն ու ջորին ամենահարկաւոր են, որովհետև ձին չէ կարող նոցա պէս քարոտ տեղերը ման գալ, և լեռների կամ ժայռերի վերայ բարձրանալ։ Տաք ու աւազոտ երկիրներումը ձիու, իշի ու ջորու պաշտօնը ուղտն է կատարում։

Թռչնոց միսն ու ձուն համով կերակուր են լինում մեզ. իսկ բարակ փետուրները՝ կակուղ անկողին և բարձ։ Սագերի խոշոր փետուրներից գրիչ ենք շինում։ Ձկներն էլ մարդուս համեղ կերակուր են լինում, և վայրենի ժողովուրդներ կան, որ միայն ձկնով են կերակրւում։

Միջատներից մի քանիսը նոյնպէս օգուտ են բերում մեզ։ Շերամը շինում է ապրեշում, մեղուն մեղր է շինում մեզ համար ու մոմ. իսկ որդան կարմիրը գեղեցիկ ներկ է տալի մեզ՝ ծիրանի գոյն։

Խեցիներով և մանաւանդ սատափով ու բուստով (մերճան) շատ գեղեցիկ բաներ ենք շինում։ Գեղեցիկ ու թանկագին մարգարիտը սովորաբար սատափի միջիցն է դուրս գալի։

Տզրուկը գործ ենք ածում մեր մարմնու հարկաւոր եղած տեղից արիւն հանելու համար, առանց երակը նշտարակով ծակելու։

Եղան, կովի, հորթի, ոչխարի, այծի, եղջերուի, իշի և մի քանի ուրիշ կենդանեաց մորթին կաշի ենք շինում։ Մագաղաթը շինում են, իշի կամ ոչխարի կաշուից։ Հին ժամանակը, երբոր թուղթը դեռ հնարուած չէր, մագաղաթի վերայ էին գրում։

Մազոտ կենդանեաց մորթը՝ ինչպէս գայլի, արջի, աղուէսի և այլն, զգուշութեամբ հանումեն, մաքրումեն և մուշտակ են շինում, ձմեռուան ցրտից պաշտպանուելու համար։ Բայց աւելի առողջարար է և անվնաս, մանաւանդ տղայոց համար, չսովորել մուշտակին, քան թէ սովորել, որ յետոյ դժուար է թողուլ։

Բոլոր անասունները միատեսա՞կ են թէ զանազան: Ի՞նչ զանազանութիւն կայ շան, ճնճղուկի, գորտի, ձկան, սարդի եւ խխունջի մէջ: Բոլոր կենդանիքն էլ ձայն ունի՞ն թէ ոչ: Մարդո՞ւս ձայնն է ախորժելի թէ միւս կենդանեաց: Ընչո՞վ են կերակրւում կենդանիքը: Նոքա էլ քնո՞ւմ են թէ ոչ: Աւելի ե՞րբ, գիշերը թէ ցերեկը: Կենդանիքը ունի՞ն զէ՞նք կամ միջոց թշնամիներից իւրեանց անձը պաշտպանելու համար: Նոքա ինչպէս են բազմանում եւ ապրում: Կենդանածինքը մեզ ի՞նչ օգուտ են տալի: Իսկ թռչուննե՞րը եւ ձկնե՞րը: Միջատներն ու խեցեմորթներն էլ օգուտ տալի՞ս են մեզ: Իսկ որդունքներից ո՞ր է մեզ աւելի օգուտ բերում: (Տզրուկը):

Ինչպէս են շինուած այս բառերը· զանազան. պէսպէս, մեծամեծ, երկակենցաղ, միջատ (միջահատ), քաղցրանուագ, խեցգետին (խեց գետի), օձատանդր, կենդանաբանութիւն, մաշկաթեւ, ցերեկ (ց-երեկոյ), ցայգ (ց-այգ), կենդանածին, բազմաթիւ, խեցեմորթ:

ԲԱՐԵՄԻՐՏ ԱՂՈՒԷՍ

Գարնան օրերուն որսորդին մէկը
Խփեց ըսպանեց սիրուն Սարեկը.

Սարեկն երեք հատ մանրը ձագ ունէր,
Որբուկ մնացին, անմայր ու անտէր.
Երեքն էլ դեռ նոր՝ հաւկըթէն ծնած,
Ոչ ոյժ ունէին և ոչ էլ փետուր,
Փորերնին քաղցած
Ո՞վ տար կերակուր.
Ճիւ ճիւ անելով կանչումէին՝ մայրի՜կ,
Ո՞ւր է մայրիկը, ա՛հ, սև արևիկ։
Այսքան խեղճութիւն տես ու դիմացիր.
Ո՞ր քարէ սիրտը 'ի գութ չի՛ շարժիր։
Խեղճուկ ձագերին մէկ Աղուէս տեսաւ,
Ու անցնող դարձող թռչնոց այս ասաւ.
«Քոյրե՛ր, եղբայրներ, ձեր հոգին սիրէք,
Այդ ձագուկները անտէր մի՛ ձգէք.
Ի՞նչ կըլնի, մէկմէկ հատիկ ու հընտիկ
Բերէք խեղճերին դըրէք բերանիկ.
Թող մէկմէկ յարդի խոտի կտորիկ
Ամէն մէկերնիդ կըրէ այդ բունիկ.
Ահա երեք ձագ մահէ կազատէք.
Ի՜նչ մեծ վարձք է այս, դուք էլ լաւ գիտէք։
Դուն Արտուտիկ,
Քան թէ օդուն վերևիկ
Կըլոր կըլոր
Ման գաս՝ պարես թաւալագըլոր,
Լաւ չէ՞ երթաս սարեր ձորեր,
Որբուկներուն բերես որդեր։
Հապա դո՛ւն Տատրակ, ի՞նչ պարապ կենաս.
Ձագերդ մեծացան, եղան չափահաս.
Քեզ այսուհետև նոքա կարօտ չեն.
Թող իրանց գլխի ճարն իրանք տեսնեն։
Ի՜նչ լաւ կանէիր,

Բունէդ դուրս գայիր,
Այն որբուկներուն
Մօր տեղ բռնէիր։
Իսկ դո՛ւն Ծիծեռնիկ
Ճանճեր որսայիր,
Ու մէկիկ մէկիկ
Սոցա բերէիր։
«Ձեզ էլ ի՞նչ ասեմ, սիրուն Սոխակիկ.
Երբ այդ խեղճերի աչքը քուն կոխէ,
Ու թեթև քամին ծառն ու բոյնն օրրէ,
Անուշիկ ձայնովդ ասէիր նաննիկ։
Այս խնամքներով, հաւատացէք ինձի,
«Նոցա կըսկիծը կըմոռացնէիք։
«Նայեցէք ի՛նչ կասեմ ձեզի.
Բոլոր կենդանեաց յայտնի կանէիք,
Թէ անտառիս մէջ կան փափուկ սրտեր,
Որ երբ որ ուզեն....»—Խօսքը բերանն էր,
Խեղճ ձագերը երեքն էլ
Չկարենալով համբերել,
Գլորեցան վայր ընկան
Աղուէսուկին առաջեւ.
Ի՞նչ կըլինի մէկն որ չունենայ տէր տիրական,
Մէկ կողմանէ էլ երբ տանջէ քաղցն ու ծարաւը։
Ի՞նչ արաւ արդեօք մեր Աղուէսուկ սանամէրը.
Ի՞նչ պիտի անէր, երեքն էլ մէկ շուտ առաւ ու կերաւ։
Ո՞ւր մնացին ուրիշներին տուած երկայն քարոզները.
Երբ ինքը խօսքն աւարտելու ժամանակ չունեցաւ։

ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ

Ամէն բան ուշադրութեամբ նայելով ու հարցնելով՝ շատ

բան եմ սովորել։ Բանջարանոցների մէջ բուսած տունկերը ճանաչում եմ, որպիսի են լոբիա, խիար կամ վարունգ, դդում, ձմերուկ, սեխ, գետնախնձոր, գազար, բողկ, սխտոր, սոխ, շողգամ, ճակնդեղ (որոյ հիւթից շաքար են շինում), կաղամբ, աղցան (սալաթ), համեմ, կոտիմ, ռեհան, սամիթ, ազատքեղ (մաղդանոս), մանանեխ, սիմինդր, և այլն։ Գիտեմ նա և անպիտան խոտերը օգտակար բոյսերէն զանազանել։

Ցորենը, գարին, հաճարը, բրինձը, վարսակը, վուշը կամ կտաւահատը, բամբակը, տորոնը, լեղակը, կորեկը, ոսպը, սիսեռը, դուրս են գալի արտերումը։ Իսկ տանձը, խնձորը, խաղողը, սալորը, բալը, դեղձը, ծիրանը, նուշը, ընկոյզը, կաղինը, թուզը, նուռը, սերկևիլը, նարինջը, լիմոնը, և այլն դուրս են գալի պարտէզներումը ու այգիներումը։ Բոլոր այս պտուղները օգտակար են, եթէ հասած ուտուին. տհաս կամ խակ պտուղները վնասակար են և մարդու կհիւանդացնեն։

Ծառերը ոչ միայն քաղցրահամ պտուղներ են տալի մեզ, այլ և ամառը արևի ճառագայթներիցը մեզ պաշտպանումեն, և ձմեռը մեզ տաքացնում են իւրեանց փայտովը։ Ծառերը գետնի մէջը ամրացած են հաստ և երկայն արմատներով, որոնք գետնի տակին սնունդ են առնում ու մեծանումեն։ Ծառի թէ արմատը և թէ բունը (գետնից դուրս եկած մասը) պատած են կեղևով։

Գարնան սկզբին ծառերը ոչ տերև են ունենում և ոչ պտուղ, այլ միայն գնդակ կամ կոկոն։ Երբոր կոկոնը բացւում է, նորա միջից դուրս է գալի ընձիւղ կամ բողբոջ, որի ծայրերից արձակւումեն տերևները և ծաղիկները։ Ծառերի շատերը տերևներին մեծանալուց յետոյ են ծաղկում. Նշենին դեռ տերև չտուած ծաղկում է։ Ծաղիկներիցը դուրս է գալի պտուղը։

Տնկոց մեծանալու համար հարկաւոր եղած սնունդը

տերևները օդի մէջիցը ծծումեն. նոքա նաև ծառերը զարդարումեն, և արևի տաքութիւնից պաշտպանումեն պտուղները։ Երբոր ծառի պտուղները դեռ չհասած՝ տերևները թափուին, պտուղներն էլ կչորանան կթափուին։ Եթէ ծառի կեղևը վնասուի, ծառը կհիւանդանայ, և շատ անգամ էլ կչորանայ կմեռնի։ Ուրեմն ես պէտք է զգոյշ կենամ միշտ ծառերի կեղևը կտրատելուց և փչացնելուց։ Ես շատ ծառերի անուն գիտեմ. նշենի, ընկուզենի, ձիթենի, նռնենի, թզենի, տանձի, խնձորենի, որթ, սալորի, բալի, թթենի, արմաւենի, դեղձենի, ծիրանի, կաղնի, ուռի, սօսի, մայր, եղևին, . . . և եթէ նոցա տեսնեմ՝ կճանաչեմ։

Բանջարանոցների մէջ ի՞նչ տունկեր են դուրս գալի: Իսկ արտեր՞ումը: Պարտէզների եւ այգիների մէջ ի՞նչ պտուղներ են դուրս գալի: Ծառերն ինչպէս են ծաղկում եւ պտուղ տալի: Ծառերի տերեւներն ու կեղեւը ընչի՞ են պէտք:

Ի՞նչ կնշանակէ «նշենի»: Խնձորի ծա՞ռն ինչպէս է կոչւում: Իսկ ընկոյզի, նռան, թզի, տանձի, ծիրանի ծառերն ինչպէս են կոչւում: Ո՞ր պտղի ծառն է կոչւում «որթ:»

ՎԱՐԴԻ ՈՍՏ

Ասա՛ դու ինձ, ո՛ստդ վարդի,
Ո՞ւր ես ծլել, ո՞ւր ես ծաղկել,
Ո՞ր հովիտի կամ ո՞ր դաշտի
Զարդարանք ես դու եղել։
Արդեօք ծլե՞լ ես Եդեմում,
Ու ջրել է քեզ Եփրատ,
Թէ սնուցել է իւր ծոցում
Քեզ ծերունին Արարատ։
Ո՞ր անգութի ձեռն է քաղել
Քեզ քո թփից մայրենական,

Կամ որ անգութն է քեզ տնկել
Այս աշխարհում պանդխտական։

Կամ թէ այն թուփ, քո օթևան,
Թառամեցա՞ւ քեզ համանման,
Թէ սոխակները քաղցրաձայն
Մխիթարումեն միշտ նորան։

Բայց դու չունիս մխիթարիչ,
Ով թագուհիդ ծաղիկների.
Չունիս դու քեզ սիրոյ երգիչ,
Թառամումես երկրիցդ հեռի։

ՀԱՆՔԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ

Հանքերը սոքա են. հող, քար, երկաթ, ոսկի, արծաթ, պղինձ, անագ, կապար, աղ, ծծումբ, նաֆթ և այլն։

Հողը զանազան տեսակ է լինում. կաւային հող, կաւ, գաճ, կաւիճ, և այլն։ Որմնադիրը աւազի հետ կիր կամ ուրիշ նիւթ խառնելով շաղախ է շինում։ Բրուտը իւր ամանները շինելու համար կաւ է գործ ածում։ Կաւիճը գործ է ածւում իբրև ներկ՝ տան պատերը ու առաստաղը սպիտակացնելու համար, այլ և դպրոցներումը սև տախտակի վերայ գրելու համար։

Շատ տեսակ քարեր կան, բոլորն էլ գետնիցն են հանւում ու գործ են ածւում զանազան շինութեանց համար։ Կայծքարը, որ կայծ է հանում, գործ է ածւում հրացանների համար։ Սևաքարը գործ է ածւում դպրոցներումը վրան գրելու համար, և Եւրոպա շատ տեղ տանիքը կըղմինդրի (կրամիտի) տեղ այս քարովն են ծածկում, ածխաքարը՝ որ իբրև վառելիք գործ են ածում։

Կան նաև այնպիսի քարեր, որոնք սակաւագիւտ են և կոչւումեն ակունք կամ պատուական քարեր, և գործ են ածւում գեղեցիկ մատանի կամ կանանց զարդ շինելու համար։ Այս պատուական քարերի գլխաւորներն են. ադամանդ՝ որ սպիտակ գոյն ունի, և որով ապակագործները կըտրումեն ապակին, զմռուխտ՝ որ կանաչ գոյն ունի, կարկեհան կամ ոսկեակ՝ որ կարմիր գոյն ունի, և ասումենք ռամկօրէն կարմիր եաղութ, յակինթ՝ որ կապոյտ գոյն ունի (լալ կամ կապուտ եաղութ), և այլն։

Երկաթը, ոսկին, արծաթը, պղինձը, անագը և այլն, որք ունին փայլ, դիւրաթեք են և հրահալելիք, կոչւումեն «մետաղ»։ Մետաղներն գտնւում են գետնի մէջ կամ ինքնածին, այսինքն անխառն, զուտ, կամ թէ հանքային, այսինքն խառնուած ուրիշ հանքերի հետ։ Հանքային մետաղները մաքրւումեն այրելով կրակի մէջ, որով շինւումեն նորան փուխր և յարմար հալելու համար։

Երկաթը գործ են ածում զանազան բաներ շինելու համար. օրինակ, կացին, դանակ, մեխ, գերանդի, հրացան, թուր, մուրճ, շղթայ, լիսեռ, անիւ, գնդակ, թնդանօթ և այլն։

Պղնձից շինւումեն կաթսայ, տապակ, սկաւառակ և՝ այլ զանազան ամաններ կերակրոյ և ջրի համար։ Այլ և շինում են պղնձից գնդակ, թնդանօթ և հատանւումեն նորանից դրամ։

Հողը մի տեսակ է լինում թէ զանազան: Իսկ քարը: Ի՞նչ տեսակ հողերի եւ քարերի անուններ գիտես: Պատուական քարերը կամ ակունքը որոնք են: Ի՞նչ մետաղներ գիտես եւ ի՞նչ բանի համար ենք գործ ածում մետաղները.

Ի՞նչպէս են կազմուել այս բառերը. որմնադիր, կայծքար, սակաւագիւտ, ապակագործ, հանքաբանութիւն:

ՏԱՔԱՐԻՒՆ ԵՒ ՍԱՌՆԱՐԻՒՆ ԿԵՆԴԱՆԻՔ

Ամէն կենդանի արիւն ունի, միայն թէ ոմանց կար-

միր է, և ոմանցը՝ սպիտակ կամ դեղնագոյն։ Գիտես որ մարդուս, անասունների, թռչունների և ձկների արիւնը կարմիր է. բայց առ մէկ բզէզ, մէկ թիթեռնիկ կամ մէկ որդ ու կտրէ, կտեսնես որ մէջիցը սպիտակ կամ դեղնագոյն հիւթ դուրս եկաւ, այն հիւթը նոցա արիւնն է։ Կարմիր արիւնը մի քանի կենդանեաց մէջ տաք է, միւսների մէջ սառն։ Մարդուս, ընտանի կենդանեաց, գազանների և թռչնոց արիւնը տաք է. իսկ ձկների, գորտերի արիւնը թէև կարմիր է՝ բայց սառն է։ Սպիտակ արիւնը միշտ սառն է լինում։

Տաքարիւն կենդանիքը կարող են ցրտումն էլ ապրել, միայն թէ ոմանք երկար ժամանակ ցրտին չեն կարողանում դիմանալ։ Դուք տեսնում էք որ ձմեռը մեր երկրներումը չեն մնում ծիծեռնակները, սոխակները և կռունկները. բոլոր այս թռչունները ցրտին չեն դիմանում, և ձմեռուան սկզբին թռչում են գնում այնպիսի երկիրներ, որ տեղ ցուրտը սաստիկ չէ։ Բայց կան այնպիսի թռչուններ, որոնք դիմանում են մեր երկրի ցրտերին. օրինակ ագռաւը, ճնճղուկը, կաքաւը, վայրի բադերը, և այլն։

Այն կենդանիքը, որոց արիւնը կարմիր է՝ բայց սառը, չեն դիմանում ցրտին, ինչպէս օձերն ու գորտերը։ Այս տեսակ կենդանիքը ձմեռը մտնումեն գետնի մէջ, մէկ քարի տակը կամ մէկ ծակ, ու այն տեղ թմրում մնումեն. և երբոր գարնան տաքութիւնը սկսւումէ, նոքա դարձեալ կենդանանումեն։ Սպիտակ արիւն ունեցող կենդանիքը գրեթէ բոլորն էլ ձմեռը սատակում են։ Մեղուները ձմեռը չեն սատակում, որովհետև նոցա տաք տեղ են դնում. իսկ եթէ դուրսը ցրտումը թողուն, բոլորն էլ կսառչին ու կսատակին։ Ճանճերը, թիթեռնիկները, բզէզները և մոծակները՝ ինչպէս սպիտակ արիւն ունեցող կենդանիք, նոյնպէս ձմեռը սատակումեն. բայց դոցանից շատերը սատակելուց յառաջ

ձու են դնում ապահով տեղերում, որոնցից գարունքը նոր կենդանիք են գոյանում։

Ամէն կենդանի արիւն ունի՞ թէ ոչ։ Կենդանեաց արիւնը ինչ գոյնի է լինում։ Ո՞ր կենդանիքն ունին կարմիր արիւն եւ որոնք սպիտակ։ Կենդանեաց արիւնը տա՞ք է թէ սառն։ Որո՞ցն է տաք եւ որոց սառն։ Ո՞ր կենդանիքն են դիմանում ցրտին եւ որոնք չեն դիմանում։ Ճանճերը ի՞նչ տեղից են գոյանում գարնանը։—Կրկնեցէք բոլոր պատմութիւնը։

ՀՈՎԻՒ ԵՒ ՄՈԾԱԿ

Մէկ Հովիւ՝ յոյսը դըրած շըներուն,
Շուքին մէջը հանգիստ անուշ քնած էր.
Մի Օձ պառկած թըփոց մէջ գալարուն,
Տեսաւ հեռուանց, սողաց եկաւ որ խայթէր։
Մոծակը այն որ տեսաւ,
Խըղճաց վըրան, թըռաւ հասաւ,
Բոլոր ուժովը կըծեց,
Քնից Հովիւը հանեց։
Հովիւն արթնեց, օձը սպանեց,
Բայց եւ նրանից առաջ կէս քուն
Կէս արթուն,
Խեղճ Մոծակին էլ խփեց տըրորեց։

Սորա նըման օրինակ ո՞րքան ունիմք մեր մէջը.
Վա՜յ թէ ուզէ տըկարը բանալ մեծի աչքը՝
Որ տեսնէ չարն ու բարին.
Նորա գըլխին էլ ա՛յն կըգայ,
Ինչ որ եկաւ մոծակին։

ԸՆՉՈ՞Վ ԵՆ ԶԱՆԱԶԱՆՒՈՒՄ ԿԵՆԴԱՆԻՔԸ ԲՈՅՍԵՐԻՑ ԵՒ ԲՈՅՍԵՐԸ ՀԱՆՔԵՐԻՑ

Բոյսերը ինչտեղ որ ցանել ես կամ տնկել ես, այնտեղ էլ մնումեն մինչև չորանալը կամ մեռանիլը. նոքա չեն կարող իւրեանք իւրեանց տեղերը փոփոխել: Բայց կենդանիքը կարող են իւրեանց կամքով փոխել իւրեանց տեղը. մարդիկը ու անասունները ման են գալի, թռչունները թռչումեն, ձըկները լողումեն և որդունքը սողում:

Կենդանիքը զգումեն ցաւ, երբոր վիրաւորուումեն կամ տկարանում, լսումեն մեր ձայնը, երբոր նոցա կոչումենք, տեսնումեն մեզ և միւս շրջակայ առարկայքը, բայց բոյսերը ոչ ցաւ են զգում, ոչ տեսնումեն և ոչ լսում:

Կենդանիքը ունին բերան, ատամներ և ստամոքս, որով նոքա իւրեանց կերակուրը ուտումեն և մարսում, բայց բոյսերը ոչ բերան ունին, ոչ ատամներ և ոչ ստամոքս. նոքա իւրեանց կերակուրը ծծումեն արմատով և տերևներով:

Հանքերը, որք են հողը, քարը, երկաթը, ոսկին, արծաթը, պղինձը, աղը, և այլն, նոյնպէս զանազանուումեն բոյսերից: Օրինակի համար համեմատենք ծառն ու քարը, և տեսնենք ինչ զանազանութիւն ունին:

Ծառը բուսնումէ, մեծանումէ և վերջը չորանում է կամ մեռնում. բայց քարը ոչ բուսնումէ, ոչ մեծանում և ոչ էլ մեռնում: Ծառը ունի իւր մէջ կենդանութիւն. գարունքը և ամառը նա կանաչումէ, ծաղկումէ, պտուղ է տալի, և ձմեռը մերկանումէ իւր կանաչ զգեստը. բայց քարը թէ ամառ և թէ ձմեռ մնումէ մի և նոյն դրութեան մէջ:

Ծառի տերևը նման չէ արմատին, արմատը նման չէ

ծաղիկներին, և ծաղիկները նման չեն պտուղներին. բոլորն էլ զանազան են: Բայց վեր ա՛ռ, կտրէ՛ քարը, կտեսնես որ բոլոր մասունքն էլ նման են այն մեծ կտորին կամ քարին, որից նոքա բաժանուել են: Ծառը եթէ կտրես ամառը, միջիցը ջուր կամ հիւթ դուրս կգայ, իսկ քարիցը՝ ոչ: Ծառը եթէ կտրես, կամ կոտրես, կամ արմատով տեղիցը հանես, կչորանայ. բայց քարը՝ ոչ, թէ և հազար կտոր անես, կամ տեղիցը փոխես:

Ուրեմն ծառն ապրումէ և կեանք ունի, իսկ քարը ոչ ապրումէ և ոչ կեանք ունի, ուստի և մեռնիլ չէ կարող, որովհետև մեռնումեն միայն ապրողները և կեանք ունեցողները:

Քարի պէս էլ զանազանուումեն բոյսերից և միւս հանքերը, այն է՝ երկաթը, պղինձը, ծծումբը և այլն:

Պատմեցէք, տեսնեմ ընչով են զանազանւում կենդանիքը բոյսերից եւ բոյսերը հանքերից: Գրեցէք ձեր պատմածը:

Քարը, երկաթը, պղինձը եւայլն ինչու են կոչւում հ ա ն ք: Ուրեմն «հանք բառը ինչ բառից է շինուել: Ա ռ ա ր կ ա յ բառը ինչ կնշանակէ եւ ինչ բառերից է շինուած: Իսկ շ ր ջ ա կ ա յ բառը ինչպէս է շինուել:

ԲԱՂԵՂՆ

Պարտէզի մէջ մէկ Բաղեղ կար,
Սողաց գընաց օձաբար
Շրջապատեց փաթաթուեցաւ,
Մէկ չոր ցըցի վերայ ելաւ:
Պարտէզից դուրս ի դաշտին
Կար մէկ փոքրիկ Եղեւին.
Բաղեղն իւր ցըցի ականջում
Տես թէ ի՛նչ էր փըսփըսում:

«Շատ ցուցանքի, չգիտեմ,
Օգուտն ի՞նչ է, մի տեսնեմ,
Որ աշխարհս էնպէսին
Պահպանումէ իր մէջին.
Մէկ նայէ դու քու տեսքըդ,
Մէկ էլ դարձիր նորան տես,
Դու միայն ուղղութեամբդ
Նորա առաջին իշխան ես։
Վըրան եօթն օր անցաւ չանցաւ,
Պարտիզպանը հանեց ցիցն ու վառելու փայտ արաւ.
Իսկ Եղեւնիկը այն տեղից հանեց,
Ու պարտիզին մէջը բերեց տընկեց.
Տիրոջը բաղդէն՝ շուտով էլ բըռնեց,
Ու կողքերից նոր նոր ճիւղեր արձակեց։
Բաղեղն այն ժամանակ գիտե՞ս ի՛նչ արաւ.
Գընաց Եղեւնի վրայ փաթաթուեցաւ.
Եւ ի՛նչ գովասանք որ ցցին կըտար՝
Եղեւնին տալո՛վ էլ չէր կըշտանար։

Շողոքորթին վարմունքն է միշտ այսպիսի.
Հազարումէկ չարիք վըրէդ կխօսի.
Դուն աշխատէ ի՛նչպէս և ո՛րքան ուզես,
Բայց մի՛ կարծեր որ նորա աչքը մըտնես.
Իսկ մէկ պատուոյ հա՛սածիդ պէս՝
Դրանըդ մօտ առաջ նորան կըգըտնես։

ԸՆՉ՞ՈՎ Է ԶԱՆԱԶԱՆՒՈՒՄ ՄԱՐԴՍ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՑ

Իմ բնութիւնս անասնոց բնութիւնիցը գերազանց է, որովհետեւ ես կամքիս համեմատ կարող եմ ազատօրէն գոր-

ծել, կարող եմ նաև զգալ, կամենալ, մտածել և խօսիլ։— Անասուններն էլ ինձ պէս կարողանում են զգալ ցաւ և ուրախութիւն, օրինակ՝ շունը զգում է ուրախութիւն, երբոր տեսնում է իւր տիրոջը, և զգում է ցաւ, ոռնում է, երբոր նորան մի ուրիշ շուն կծում է։ Բայց ես իմ ցաւս կամ ուրախութիւնս կարող եմ խօսքով յայտնել կամ ասել, որովհետև խօսելու կարողութիւն ունիմ, իսկ անասունները չեն կարող խօսքով յայտնել իւրեանց ցաւը, որովհետև մեր խօսելու սքանչելի կարողութիւնից կամ շնորհքից զրկուած են։

Ես ման եմ գալի ուղիղ, կարողանում եմ գլուխս բարձրացնել դէպի երկինքը և ամէն կողմ դարձնել, բայց անասունները ման են գալի կռացած դէպի գետինը և չեն կարող երկնքին նայել։ Ես կարող եմ տեսնել, լսել, շօշափել, ճաշակել և հոտոտել. կենդանիքն էլ կարող են, որովհետև նոքա էլ ունին այս հինգ զգայարանքը. և կան այնպիսի կենդանիք, որ մարդուց աւելի սուր տեսանելիք ու հոտոտելիք ունին, ինչպէս արծիւը, շունը։

Ես կարող եմ, մտածել և հասկանալ թէ ինչ բանի համար են պէտքական երկաթը, քարը, փայտը, կիրը և միւս ուրիշ բաները, բայց անասունները չեն կարող մտածել և իմանալ։ Ես կարող եմ հասկանալ թէ ինչո՞ւ համար տունը պէտք է պատուհաններ, դռներ և ծխնելոյզ ունենայ. ինչո՞ւ համար վառարանը երկաթէ կամ քարէ պիտի լինի, և ոչ թէ փայտէ, ինչո՞ւ համար ենք ջրում բոյսերը, ինչո՞ւ համար եմ գնում ուսումնարան և ուսում առնում, ինչո՞ւ համար պէտք է հնազանդ լինիմ ծնողացս ու վարժապետներիս։

Ես կարող եմ համեմատել վարդը մեխակի հետ, մարդը անասնոյ հետ, և ասել թէ ի՛նչ նմանութիւններ ունին նոքա և ինչ զանազանութիւններ. իսկ անասունները չեն կարող

համեմատել, չեն կարող նոցա տարբերութիւնը կատարեալ կերպով հասկանալ. որովհետև հասկացողութիւն չունին, բանականութիւն չունին, Աստուած նոցա մեզ պէս խելք չէ տուել։

Ես գիտեմ, որ Աստուած ինձ ոտքեր է տուել ման գալու համար, աչքեր է տուել տեսնելու համար, ականջներ է տուել լսելու համար, լեզու է տուել ճաշակելու և խօսելու համար. բայց կենդանին չգիտէ և ամէն բան բնութեան ազդեցութեամբն է անում։

Բնութեան ազդեցութեամբն է, որ թռչունը շինում է իւր բոյնը, մեղուն իւր մեղրահացերը, սարդը իւր ոստայնը։ Մեղուն իւր մեղր շինելը և սարդը իւր ոստայնանկութիւնը ուրիշից չեն սովորում, այլ բնութիւնը նոցա տուել է մէկ բնական ազդեցութիւն, որով նոքա կատարումեն իւրեանց գործը նոյն իսկ ծնուելու օրից սկսած։ Արարիչը մարդուս անասուններից աւելի քիչ է բնական ազդեցութիւն տուել. բայց նա տուել է նորան բանականութիւն, այսինքն ընդունակութիւն սովորելու և իմանալու այն ամէն բանը, ինչ-որ նորան հարկաւոր է. և այդ ընդունակութեամբը մարդիկ այնպիսի անթիւ գիտութիւններ են ստացել, որ մինչև անդամ չէ կարելի համեմատել անասնոց բնական գիտութեանց կամ բնական ազդեցութեանց հետ։

Մեղուն աշխարհիս ստեղծագործութենէն մինչև այսօր էլ մի կերպով է շինում իւր բջիջները կամ մեղրահացերը, սարդը և այժմ էլ այնպէս է շինում և գործում իւր ոստայնը, ինչպէս նա շինում էր եօթն հազար տարի առաջ։ Բայց համեմատեցէք այն վայրենի մարդուն, որ կենդանեաց պէս գետնի մէջը որջ շինել գիտէ միայն իւրեան համար և նոցա պէս կերակրուիլ, Եւրոպացու հետ, որ ծածկել է երկրիս երեսը գեղեցիկ քաղաքներով, հոյակապ շինութիւններով, արհեստական զարմանալի ձեռագործներով, երկաթեայ ճանա-

պարհներով և կամուրջներով, ելեքտրական հեռագիծներով, այգիներով, մշակած դաշտերով, հագուստի համար հնարել է հազարաւոր տեսակ կերպասներ և գործուածքներ, և դուք կիմանաք մարդու բանականութեան և կենդանեաց կամ անասնոց բնական ազդեցութեան մէջ եղած բոլոր ահագին զանազանութիւնը:

Միայն մա՛րդս ունի հասկացողութիւն Աստուծոյ վերայ, թէ և նորան չէ տեսնում. միայն մարդս ունի ընդունակութիւն հաւատալ աշխարհիս անտեսանելի Արարչին, նորան սիրել, նորան աղօթել, նորա ողորմածութեան վերայ յոյս դնել և աշխատել նորա կամքը կատարել: Կենդանիքը կամ անասունները աղօթք չեն անում, և այդ աղօթելու ընդունակութեամբ մարդս իսկապէս զանազանւումէ անասուններից: Մարդս Աստծուն հաւատալու, նորան սիրելու, նորա վերայ յուսալու, նորան աղօթելու և նորա կամքը կատարելու ընդունակութեամբը աւելի է զանազանւում անասուններից, քան թէ իւր միւս բոլոր ընդունակութեամբը: Այն մարդը, որ մոռանում է Աստծուն, որքան և խելօք լինէր, աւելի նման է անասունին, քան թէ այն վայրենի մարդը, որ իւր համար շորեր և խրճիթներ չէ կարողանում շինել, բայց աշխարհիս անտեսանելի Արարչի անունը տալիս է:

Պատմեցէք տեսնեմ ընչով է զանազանւում մարդս անասուններից: Գրեցէք ձեր պատմածը

ԱՆՑՈՐԴՔ ԵՒ ՇՈՒՆՔ

Երկու հոգի իրիկուան դէմ
Մէկ փողոցով կերթային,
Ու հարկաւոր բանի վըրայ

Իրարու հետ կըխօսէին։
Մէկ էլ յանկարծ հա՛ռ արաւ
Մի տան դըռան տակէն
Ահեղ շուն մի դուրս ցատքեց,
Վըրայ վազեց հաջելէն.
Միւսն այնկողմէն ձայն ձըգեց,
Նուէն մէկն էլ ելաւ.
Որն էլ փողոցն էր պառկած,
Իսկոյն տեղէն վեր թըռաւ.
Վերջապէս մէկ րոպէի մէջ
Ա՛յնքան շներ դուրս թափեցան
Մանր ու խոշոր՝ որ շներով
Բոլոր ճամբէն լըցուեցաւ։
Մարդկանց մէկը բարկացաւ
Դարձաւ դէպ այն շըներուն,
Վայր ծըռեցաւ որ առնու
Մէկ քար ձգէ գլխընուն։
«Թող տուր, եղբայր, բան չունի՞ս,
Ասաւ նորան ընկերը.
Մեզ չէ՞ ձեռքիդ, որ քարով
Վարես դու այդ լերբերը.
Շուն սատըրդ խըրատելուն
Ամենէն լաւ հընարքը
Նորան երես չըտալն է.
Զըգիտե՞ս շան բարքն ու վարքը։»
Իրաւ, հազիւ տասը քայլ
Մարդիկն առաջ որ գնացին,—
Շըներն իրար նայելով
Ձայներնին էլ կըտրեցին։

Այսպիսի են աւասիկ

Չարախօսներն ամէն տեղ.
Ի՛նչ էլ տեսնեն լաւ ու նոր՝
Պէտք է հաջեն ունայն տեղ։
Դուն քու ճամբէդ անխոտոր
Արա հանդարտ ըղքարին,
Թող որ շները հաջեն.
Հաջեն հաջեն՝ կըդադրին։

ՄԱՐԴՈՒՍ ԱՊՐՈՒՍՏԸ ԵՒ ՍՆՈՒՆԴԸ

Մարդս իւր ապրուստը ճարելու համար պէտք է աշխատութիւն անէ և մի արուեստ ունենայ։ Աստուած մարդուս վերայ պարտք է դրել, որ իւր ճակատի քրտինքովը իւր հացը ճարէ ու ուտէ. այսինքն Աստուած կամենում է, որ ամէն մարդ օրինաւոր կերպով իւր աշխատանքովը հոգայ իւր ապրուստը։ Գողերը միշտ ծոյլ մարդիկ են լինում, որ ատումեն աշխատանքը և կամենումեն ուրիշի աշխատանքով ապրել և իւրեանց ամենօրեայ հացը գողութեամբ ճարել, որ ընդդէմ է խղճմտանաց, բարոյականութեան և օրինաց Աստուծոյ։

Ինչպէս որ թռչունը թռչելու համար է ստեղծուած, նոյնպէս և մարդս աշխատելու։ Երկիրս իւր բերքն ու պտուղը տալիս է աշխատասէր մարդկանցը միայն։ Աստուած մարդուս երջանկութիւնը աշխատանքի վերայ է հիմնել. ուստի և աշխատանք չսիրողը ոչ երբեք չէ կարող լինիլ երջանիկ։

Աշխատասէր և իւրեանց վիճակից գոհ եղող պակասաւորները կամ չքաւորները շատ անգամ հարուստներից աւելի երջանիկ են։

Աղքատութիւնը թշուառութիւն չէ, երբոր մարդս կրօնասէր, աշխատասէր և առողջ լինի, և երբ սովորի աւելորդ բաներից ինքն իւրեան զրկել։

Դոհ պէտք է լինինք միշտ, երբոր առողջարար և չափաւոր կերակուր ունենանք, մաքուր հագուստ և յարմար բնակարան, թէպէտ և կերակուրներուս բազմատեսակ, հագուստներուս թանկագին և բնակարաններուս ճոխ և փառաւոր չլինին։

Մեր գլխաւոր սնունդը հացն է. բացի հացը մենք գործ ենք ածում զանազան կերակուրներ, թէ մսեղէն և թէ բանջարեղէն։

Այն կենդանիքը, որոց միսը մենք ուտումենք, սոքա են. գոմէշ, եզն, կով, հորթ, ոչխար, այծ, խոզ, այծեամն, եղջերու, նապաստակ, հաւ, սագ, հնդու հաւ, բադ, աղաւնի, կաքաւ, տատրակ, լորամարգի, արտոյտ և ուրիշ մանր թռչունք,

Գոմէշի, կովի, ոչխարի ու այծի կաթը սննդարար կերակուր է մարդուս. կաթնիցը շինումենք իւղ, սեր, մածուն, պանիր, թան, և այլն։

Նոյնպէս առողջարար կերակուր է մարդուս ծառոց ու թփոց պտուղը, որպիսի են՝ խնձոր, տանձ, խաղող, դեղձ, ծիրան, սալոր, նուշ, ընկոյզ, կաղին, թուզ, սերկեւիլ, նուռն, նարինջ, լիմոն, ձիթապտուղ, արմաւ, թութ, բալ, շագանակ, հուն, հաղարճ, մոր, և այլն։

Բացի այս պտուղները գործ ենք ածում իբրև կերակուր նաև տնկոց պտուղը, հունտը, տերևը ու արմատը, որպիսի են ձմերուկ, սեխ, դդում, խիար, պատրինջ, լուբիա, ոսպ, սիսեռ, սիմինդր, գետնախնձոր, ճակնդեղ, կաղամբ, աղցան, բողկ, շողգամ, գազար, եղակ, ծնեբեկ, բող և այլն։

Այս կերակրեղէնը համովացնելու համար Աստուած այլ և այլ համեմիչ տունկեր ու արմատներ է ստեղծել, ինչպէս՝ սոխ, սխտոր, ազատքեղ կամ մաղդանոս, համեմ, սամիթ և այլն։ Բացի սոցանից կան և չոր համեմներ, ինչպէս պղպեղ, կինամոն (դարչին), մեխակ, կոճապղպեղ, հնդիկ ընկոյզ

և այլն։ Իբրև համեմիչ կերակրոց գործ ենք ածում և շաքարը, որ եղեգից կամ ճակնդեղից են շինում։

Մեր գլխաւոր ըմպելիքը ջուրն է։ Բացի ջուրը մենք գործ ենք ածում խմելու համար թէյ (չայ), սուրճ, գինի և օղի։

Թէյն և սուրճն, եթէ սակաւ խմուին, վնասակար են, մանաւանդ տղայոց. որովհետև նոքա գրգռումեն արիւնը և քունը կտրում։

Չափաւոր ու ջրախառը գինի խմելը առողջարար է, մանաւանդ տկար մարդոց. որովհետև մարսողութիւնը դիւրացնումէ և մարմնոյն ոյժ է տալիս։

Ամենավնասակար ըմպելին օղին է, որ մարսողութիւնը արգելում է, արիւնը գրգռում տաքացնում է և ուղեղի վերայ այնպէս սաստիկ ներգործում, որ չափազանց խմողը խելքը կորցնում է։ Մի և նոյնը կպատահի մարդուս հետ, եթէ չափազանց գինի խմէ։

Օղին աւելի վնասակար է տղայոց, որովհետև խանգարումէ նոցա մարմնոյ գործարանները, և նոցա հիւանդ, ծոյլ, ապուշ և ախտաւոր է անում։

Ո՞րն է մարդուս պարտաւորութիւնը իւր կենաց համար: Բացի հացը ուրիշ էլ ինչ կերակուր ենք գործ ածում: Ո՞ր կենդանեաց միսն ենք ուտում: Ի՞նչ պտուղներ եւ ինչ բանջարեղէն ենք գործ ածում իբրեւ կերակուր: Մեր կերակուրները ընչո՞վ ենք համովացնում: Բացի ջուրը ուրիշ էլ ի՛նչ ըմպելիք ենք գործ ածում: Նոցանից ո՞րն է առողջարար եւ որն է վնասակար:

ԹՈՌՆԻԿԻ ԿԱՊԱՆ

Թոռնիկը մի կապայ ունէր,
Ինչպէս եղաւ որ պատռեցաւ.

Նըստած երկար կըմտածէր,
Վերջապէս ճարը գըտաւ.
Տես հիմակ ի՞նչ անեմ ես,
Ըսաւ յանկարծ ինքն իրեն.
Մըկրատն առաւ՝ կըտրատեց
Երկու թեւին ծայրերէն,
Թեւի տակը կարկատեց,
Պատըռուածքը պարտակեց.
Բայց միայն թեւերը
Մէկ մէկ թիզ որ կարճացան,
Ամէն տեսնողները
Նորա վրայ ծիծաղեցան:
Թոռնիկը առնըւեցաւ,
Ինքն իրեն դարձաւ ասաւ.
Ես նորա ճա՛րն էլ կըգըտնեմ.
Թեւերն այնպէս կերկարացընեմ,
Որ առաջինից էլ աւելի
Կապաս առնու ձեւ գովելի.
Ինձ վարպետ Թոռնիկ կասեն,
Ուրեմն թող խելքըս տեսնեն:
Կապան առաւ նորէն ձեռք,
Կըտրեց քըղանցն ու եզերք,
Երկու թեւին խոշոր խոշոր
Զըգեց նովաւ մէկմէկ կըտոր.
Առաջ կապան էր խեղճիկ,
Յետոյ եղաւ յոյժ կարճիկ.
Չէիր իմանում բաճկոն էր այն թէ կապայ.
Բոլորն էլ ծաղր էին անում Թոռնիկի վըրայ:

Այսպէս շատ անգամ տեսած եմ եւ ես շատ պարոններ,
Որ ծուռը ուղղենք ասելով՝ ուղիղն էլ են խանգարեր:

ՄԱՐԴ

Մարդս անասուններիցը զանազանւումէ ոչ միայն իւր խելքովը ու բանականութեամբը, այլ և մարմնոյ գեղեցիկ ու գեղապատշաճ կազմութեամբը: Երկու ոտքի վերայ կենալով ձեռները թողնումեն ազատ և լցուցանումեն բոլոր պիտոյքը: Մատները երկայն են, բազմաթիւ, դիւրադարձ, դիւրաշարժ և ծայրերը տափակ եղունգներով պաշտպանուած. բութը կամ բութամատը, որ կարող է ամենայն կողմ դառնալ և շարժիլ, թէպէտ միւս մատներիցը կարճ է, բայց նորա ամենի առաջևը դրուելով՝ կարողանումէ ամենափոքրիկ առարկաները բռնել, շօշափել: Թէ ո՛րքան են ձեռները մարդուս օգտակար՝ էլ չեմ կարող ասել: Ձեռքով է, որ մարդս իւր մարմինը կերակրումէ ու պահպանում, գիր է գրում, նկարում է, կար է անում, տուն և զանազան կարասիքներ է շինում, երկիրը մշակումէ, սերմանումէ, հնձումէ, ձիերը սանձումէ ու կառավարումէ և ամենայն տեսակ արուեստներ ու գործեր է կատարում: Մարդուս ձեռքով արածի ո՞ր մէկն ասեմ:

Գրեթէ ամենայն կենդանիք ձայն ունին, և այն ձայնը մեքենայական է և միշտ մի և նոյնը. օրինակ՝ շունը հաչումէ, աղուէսը կաղկանձումէ, գայլը ոռնումէ, առիւծը մռնչումէ, կատուն մլաւումէ, ոչխարը մայումէ, կովը բառաչումէ, ձին խրխնջումէ, ագռաւը կռնչումէ, կաքաւը կրկջումէ. ճնճղուկը ճռուողումէ, սոխակը երգում է, գորտը կարկաչումէ. ամէնքն իւրեանց համար յատուկ ձայն ու հնչիւն ունին, և նոյնը միշտ պահպանումեն անփոփոխ: Մա՛րդս միայն կարողանումէ խօսիլ, այսինքն խաղուն յօդաւոր ձայն ունի, նորանով ամէն ուզածը խօսումէ, ամէն ուզած ձայնը հանումէ, ամէն ուզած եղանակը երգումէ: Խօսքով է որ ուրիշներին հաղորդումենք մեր խորհուրդները, մեր սրտի ցաւը, մեր փափագը ու մեր զգացմունքները:

Մարդս՝ որ Աստուծոյ արարածոց մէջ բոլորից կատա-
րեալն է, կարողանումէ աւելի ևս կատարելագործուիլ. միտ-
քը կրթւումէ, զարգարւումէ, լուսաւորւումէ, գաղափարները
ու մտածմունքը ընդարձակւումեն, բնաւորութիւնը կանո-
նաւորւումէ, սիրտը ազնուանումէ, նոր նոր գիւտեր է գըտ-
նում ու նշաններով, խօսքով և գրուածքով ուրիշներին հա-
ղորդումէ, և ըստ պարագայից և հանգամանաց տեղւոյ և
ժամանակին՝ սովորութիւններն ու կերակուրները փոխումէ:
Մարդս ուրիշների փորձառութիւնից ու գիտութիւնից օ-
գուտ է քաղում, նախնեաց գիւտերու ու գիտողութեանց և
զննութեանց վերայ իւր գիւտերն էլ աւելացնումէ, և ա-
ւանդումէ յաջորդներին. և այսպէս զարգանումեն կատարե-
լագործւումեն արուեստները և գիտութիւնները, և մարդիկ
միմեանց կրթումեն, ուսուցանումեն ու կատարելագործումեն:

Աստուծոյ մարդուս արած բարիքը անբաւ են, ուստի
պէտք է ճանաչենք այն բարիքը, և 'ի լաւը գործածելով՝
ցո՛յց տանք թէ արժանի էինք և եմք այն մեծի շնորհաց,
որ պարգևել է մեզ Աստուած, և երախտագէտ սրտիւ գո-
հութիւն մատուցանեմք մեր բազմագութ Ստեղծողին:

Ինչո՞վ է մարդս զանազանւում միւս անասուններից: Ձեռներով ինչ-
պէս է զանազանւում. իսկ ձայնով ինչպէս: Ի՞նչ յառաջադիմութիւն-
ներ ու կատարելագործութիւններ է անում մարդս, որ միւս անասուն-
ները չեն կարողանում անել:—Գրեցէք այս հարցմանց պատասխանը:
«Գեղապատշաճ» ինչ կնշանակէ: «Գեղեցիկ եւ գեղապատշաճ» միեւ-
նոյն նշանակութիւնն ունին թէ զանազան: Ի՞նչ զանազանութիւն կայ
«պարագայք եւ հանգամանք, արուեստ եւ գիտութիւն» բառերի մէջ:
Ի՞նչպէս պէտք է ասել. «ես տպարանի բոլոր հանգամանքն ունիմ»,
թէ «պարագայքն ունիմ»: «Ինձ այսօր պարագայքս չներեց գալ ձեզ տե-
սութիւն», թէ «հանգամանքս չներեց»: Վայելչագրութիւնը, նկարչութիւնը,
կազմարարութիւնը, հիւսնութիւն արուեստ են, թէ գիտութիւն: Իսկ թուա-
բանութիւնը, պատմութիւնը, աշխարհագրութիւնը ինչ են:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՒ ՇՈՒՔ

Տըղայամիտ մարդուն մէկը
Բըռնել կուզէր իւր շուքը.
Քանի որ նա քայլը կփոխէր,
Շուքն առաջից կըքայլէր.
Մէկ քայլ ևս նա փոխեց,
Շուքն էլ մէկ քայլ առաջեց,
Յետոյ վազել ըսկըսաւ,
Դարձեալ նոյն բանը տեսաւ.
Քանի որ շուտ կըվազէր՝
Շուքն այնքան շո՛ւտ կըփախչէր.
Ամենևին ձեռք չէր ընկնէր,
Կարծես՝ թաղուած մէկ գանձ էր։

Մէկ էլ յանկարծ մեր խելացին
Յետ կըդառնայ բոլորովին.
Աչքի տակով ի՞նչ տեսնէ.—
Շուքն էլ ետևէն կվազէ։

Ես շատ անգամ լսել եմ,
Ու շատ անգամ տեսել եմ.
Որ հետ բաղդին
Մարդիկ նոյնպէս կըվարուին։

Մէկը նորա յետևից
Վազելու մե՛ծ բաղձանքից
Զըրկընայեր աշխատանքի,
Եւ ոչ անգին ժամանակի։
Միւսը կարծես թէ կըփախչի իւր բաղդից,
Բաղդն այնպիսուոյն չքաժանուիր ետևից։

ՄԱՐԴՈՒՍ ՄԱՐՄՆՈՅ ՄԱՍՈՒՆՔԸ

Ես մարդ եմ, Թէպէտ դեռ փոքր, որովհետև ես էլ այնպիսի հոգի ունիմ և այնպիսի մարմին, ինչպէս միւս մարդիկը:

Իմ մարմինս եօթը գլխաւոր մաս ունի. գլուխ, պարանոց, իրան կամ բուն, երկու ձեռք և երկու ոտք:

Գլխիս վերին մասը կոչւում է գագաթն, յետևի մասը՝ ծոծրակ, իսկ առաջին մասը՝ դէմք: Կառափ կամ գանկ կոչւում է գլխոյ այն մասը, որի մէջ գտնւում է ուղեղը:

Դէմքի զանազան մասունքը զանազան անուններ ունին, և ահա սոքա են. ճակատ, քունք, այտ, աչք, բերան, քիթ, կզակ. իսկ ականջները գլխու աջ ու ձախ կողմերումն են:

Աչքերը շրջապատած են արտևանունքով, կոպերով և յօնքերով: Բերանոյ մասունքն են՝ շրթունք, ատամներ, լեզու, քիմք և կոկորդ: Ատամները ամրացած են ծնօտների վերայ, և երեք տեսակ են. առաջնատամներ՝ որ տափակ են և սուր, ժանիք՝ որ երկայն են և սրածայր, սեղանատամներ՝ որ հաստ են և ծայրը հարթ: Բոլոր ատամները 32 *են (հասակաւոր մարդկանց):*

Բերանից մարմնու ներսի կողմը երկու խողովակ են գնում: Այն խողովակը, որով մենք շնչառնում ենք և որ անցանում է պարանոցի առաջի կողմիցը՝ կոչւում է շնչափող, իսկ միւս խողովակը շնչափողի յետևն է և կոչւում է որկոր:

Գլուխը բնի կամ իրանի հետ դիւրաթեք պարանոցով է միանում. այդ պատճառաւ և ես գլխովս զանազան շարժողութիւն կարող եմ անել, այն է՝ բարձրացնել, խոնարհեցնել այս և այն կողմը դարձնել:

Իմ մարմնուս ամենամեծ մասը Իրանն է, որոյ շուրջը դասաւորուած են միւս մասունքը, այն է գլուխը, երկու

ձեռքը և երկու ոտքը։ Իրանի մէջը կան նոյնպէս մի քանի զանազան մասունք, որք են փոր, կուրծք և թիկնամէջ։

Իրանի գլխաւոր և միջին ոսկորը կոչւում է ողնայար կամ ողնաշար։ Ողնաշարը կազմուած է 33 փոքր ոսկորներից, որ ողներ են կոչւում, և որ մինը միւսի յետևից շարուած են, և այս պատճառաւ բոլոր ողները միասին կոչւումեն ողնաշար կամ ողնայար։

Այս ողները, որոց ըստ մեծի մասին կարելի է ձեռքով շօշափել, միմեանց վերայ են գտնւում, և դիւրաձիգ կապերով միմեանց հետ ամուր կապուած են։ Ողների մէջը դատարկ է, և բոլորը միասին մի երկայն խողովակ են կազմում, որ կառափի նման ուղեղով լիքն է։ Այս ուղեղը միանում է գլխոյ ուղեղի հետ։ Եթէ ողնաշարը մի պինդ և ամբողջ ոսկորից լինէր, այն ժամանակը մարդս չէր կարող ոչ կռանալ, ոչ պառկել, և ոչ կողմի վերայ խոնարհիլ. նոյնպէս չէր կարող իւր պարանոցը թեքել, և ոչ գլուխը շարժել։

Ողնաշարի վերայ ամրացած են միւս ճիւղեալ ոսկորները. այն է՝ վերին մասի վերայ ամրացած են կողերը և նոցա վերայ ձեռների ոսկորները. իսկ ներքին մասի վերայ ամրացած են մեծ և լայն կոնքի ոսկորները, որոց վերայ և ամրացած են ոտների ոսկորները։

Ձեռը երեք մասից է բաղկացած. վերին մասը՝ ուսիցը սկսած մինչև արմունկը, կոչւում է ուս. միջին մասը՝ արմունկից սկսած մինչև դաստակը, կոչւում է արմունկ. իսկ ներքին մասը կոչւում է դաստակ։ Դաստակի մասունքն են՝ ափը և մատները։ Մատները կազմուած են երեք երեք յօդից, բացի բոյթը, որ երկու յօդից է բաղկացած։

Ոտը նոյնպէս երեք մասն է բաժանւում. վերին մասը՝ իրանից սկսած մինչև ծունկը կոչւում է ազդր. միջին մասը՝ ծնկիցը սկսած մինչև ներբանը՝ ոլոք. իսկ ներքին մասը՝ ներբան։ Ներբանի յետևի մասը կոչւում է կրունկ, իսկ

տակը՝ գարշապար: Ներբանը վերջանում է մատներով, որոնք նոյնչափ յօդերից են կազմուած, որչափ յօդերից և ձեռքերի մատները:

Մարդուս տղայութեան ժամանակը ոսկորները կակուղ են լինում և աճառային, բայց հետզհետէ պնդանումեն ու կարծրանումեն: Ծերութեան ժամանակը նոքա կորուսանումեն այդ կարծրութիւնը, ուստի և հեշտութեամբ են կոտրւում:

Քանի գլխաւոր մաս ունի քո մարմինը: Ցո՛յց տուր տեսնեմ ո՛րն է իրանը: Ցո՛յց տուր քո գաղաթը, ծոծրակը, քունքը, այտերը, կզակը, արտեւանքը, յօնքերը, շրթունքը, քիմքը, կոկորդը, եւ ծնօտները: Քանի՛ տեսակ ատամ ունիս դու: Ո՞րն է շնչափողը եւ որն է կոկորդը: Ողնաշարը ո՛րն է: Քանի՛ մանր ոսկորներից է կազմուած նա եւ ընչի՛ է ողնաշար կոչւում: Ողնաշարի վերայ ինչ ոսկորներ են ամրացած: Կոնքի ոսկորները որո՞նք են: Ցոյց տուր ուսդ, արմունկդ, դաստակդ, ազդրըդ, ոլոքդ եւ ներբանդ: Մատներդ քանի յօդերից են կազմուած:

ՄԱՐԴՈՒՍ ՄԱՐՄՆՈՅ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ.

Ես տեսնումեմ աչքով, լսումեմ ականջով, հոտոտումեմ քթով, մի բանի ճաշակը կամ համը զգումեմ լեզուով, շօշափումեմ բոլոր մարմնովս՝ մանաւանդ մատներիս ծայրերով, խօսումեմ բերանով, ման եմ գալի ոտքով, գործումեմ ձեռքով, ծամումեմ ատամներով, կերակուրը մարսումեմ ստամոքսով և այլն: Մարմնուս այս բոլոր մասները, որոնք մի մի առանձին պաշտօն են կատարում՝ կոչւումեն գործիք կամ գործարան: Մարդուս մարմինը շատ զանազան և կարևոր գործարաններից է կազմուած, որոնք միասին մարդուս տալիս են ապրելու կարողութիւն: Այս գործարաններից ոմանք մարդուս մարմնոյ դրսի կողմն են գտնւում, իսկ ոմանք ներքին:

Դրսի առարկաները մարդս զգումէ, տեսնումէ և ճա

նաչումէ արտաքին գործարաններով, որ կոչւումեն արտաքին զգայարանք և են հինգ. շօշափելիք, տեսանելիք, լսելիք, ճաշակելիք և հոտոտելիք:

Տեսանելեաց գործիքը աչքերն են. մութը սենեակի մէջ չենք կարող բան տեսնել, որովհետև տեսնելու համար հարկաւոր է լոյս: Լաւ տեսնելու համար հարկաւոր է առողջ աչք ունենալ: Կոյրերը չգիտեն թէ ի՛նչ է գոյնը. գոյնի վերայ նոքա գաղափար չունին: Ո՛րչափ էլ աշխատես չես կարող կուրին հասկացնել գոյների ինչութիւնը կամ զանազանութիւնը:

Լսելեաց գործիքը ականջներն են. խուլը բան չի կարող լսել: Մենք լսումենք ձայնը օդի միջնորդութեամբ կամ օգնութեամբ: Եթէ մատով հարկանես քնարի լարին, կտեսնես որ լարը թրթռումէ: Լարի շրջակայ օդը ընդունում է այն թրթռումը, հասցնում է ականջիդ, ներս է մտնում և ականջի թմբուկ կոչուած մասին հարկանում է, որով և լսելեաց ջղերը շարժում է, և դու զգումես կամ լսումես այն ձայնը: Այն տեղ, որ տեղ օդ չկայ՝ ձայնը չէ կարող տարածուիլ կամ հնչուիլ:

Երբոր կամենումենք իմանալ մի առարկայի սառնութիւնը կամ տաքութիւնը, կարծրութիւնը կամ կակուղութիւնը, հարթութիւնը կամ անհարթութիւնը, շօշափումենք ձեռքով՝ մանաւանդ մատների ծայրերով, որ աւելի զգայուն են: Բայց շօշափելեաց գործիքը միայն մատները չեն, այլ բոլոր մարմինը, որովհետև բոլոր մարմնով էլ զգումենք

Ճաշակելեաց գործին լեզուն է: Երբոր մի կերակրոյ կամ ըմպելւոյ համը կամենումենք իմանալ, նորանից մի փոքր առնումենք մեր բերանը. այն կերակուրը կամ ըմպելին կազմող մասունքը գնումեն լեզուի վերայ պատած ջղերը գրգռում

և յայտնում մեզ մի ախորժ կամ անախորժ զգացմունք, որով և իմանումենք կերակրոյ համո՛վ կամ անհա՛մ լինելը։

Գիտէք որ հոտոտելեաց գործին քիթն է։ Օդը տանում է և բերում հասցնում մինչև մեր ռնգունքը ու քթերուս ծակերը առարկայից հոտն ու արտաշնչութիւնը, որք դնումեն և ռնգաց վերայ գտնուած ջղերուն դիպչում, և նոցա գրգռելով ախորժ կամ անախորժ զգացմունք կամ հոտ են պատճառում։ Այնպէս էլ լինումէ հոտառութեան գործողութիւնը, երբոր ծաղիկ կամ մի բան մօտեցնումենք քթերուս և հոտոտում։

Բացի այս արտաքին գործարանները մարդուս մարմնոյ մէջը կան և ուրիշ շատ ներքին գործարաններ, առանց որոց մարդս չէ կարող ապրել։ Այդ կարևոր գործարանները ամրացած են և ծածկուած մարդուս մարմնոյ մէջ՝ ապահով տեղերում։ Ներքին գործարաններից գլխաւորները սոքա են. ուղեղ, սիրտ, թոք և ստամոքս։

Ուղեղը ծածկուած է մի ոսկրային պատենով, որ կոչւում է կառափ կամ գանկ։ Մարդուս մարմնոյ ամենից կարևոր և փափուկ մասը ուղեղն է. եթէ մի փոքր վնասուի կամ վիրաւորուի՝ իսկոյն մահ կպատահի։ Մարդուս մարմնոյ զգացողութեան ու շարժման գործիքը ջղերն են, որոց հիմքը կամ կայանը ողնայարի ու գլխի ուղեղն է. ուստի և մարմնոյ ջիղ չունեցող մասունքները՝ ինչպէս մազերը ու ոսկորները զգացողութիւն չունին։ Եթէ մարդուս ուղեղը սղմեն, կթմրի, բան չի զգար. իսկ եթէ ձեռքի, ոտի կամ որ և իցէ մի ուրիշ անդամի ջղերը կտրուին, այն ժամանակը այդ անդամը անզգայ կլինի, ու ոչինչ չի զգալ՝ թէ և ասեղով ծակծկենք։ Այդպիսի անզգայ անդամ ունեցողին ասումենք անդամալոյծ։

Թէ մարդուս և թէ տաք արիւն ունեցող կենդանեաց սիրտը մէկ ջղոտ և փափուկ մսի կտոր է, մէջը պարապ, որ

բաժանւումէ չորս մասն։ Այս մասները կամ խոռոչները միմեանց հետ հաղորդութիւն ունին, և շնչերակաց (շահ տամարի) ձեռքով արիւնը տարածումեն մարմնոյ ամենայն տեղերը, ուտեղից յետոյ երակները (տամարները) կրկին ժողովումեն և դարձնումեն այդ արիւնը սրտի մէջը, ուր նորոգուելով վերստին տարածւումէ մարմնոյ մէջ և վերադառնում է սիրտը։ Սրտի թնդմունքը ու երակի զարկը յառաջանում է սրտի սղմուելուցը (քաշուելուցը) և ընդարձակուելուցը, ու դատարկուելուցը և արիւնով լցուելուցը։ Երակի զարկելուցը բժիշկները իմանումեն հիւանդի լաւ կամ վատ դրութիւնը. որովհետև առողջ մարդոյ երակը մէկ վայրկենի մէջ զարկումէ 60-ից մինչև 80 անգամ, իսկ հիւանդինը մինչև 100 կամ աւելի ևս։

Թոքերը շնչառութեան գործարաններն են։ Օդը ծծումենք բերանով և թոքերով։ Երբոր թոքերը ընդարձակուումեն ու լայնանում՝ օդը ներս է մտնում, և մի փոքր ժամանակ մնալուց յետոյ դուրս է գալիս՝ թողլով այնտեղ արեան կազմութեան համար եղած մասունքը, որ է թթուածին կազը (օդը)։ Սորանից հետևումէ որ ինչ սենեակի մէջ շատ մարդիկ են կենում, այն տեղ օդը առողջարար չէ կարող լինել, եթէ պատուհանները շուտ շուտ չբանան ներսի օդը մաքրելու համար։

Մեր կերակուրը ծամելուց և թքով թրջելուց յետոյ կուլ ենք տալի, որ գնում է որկորի միջով ստամոքսը։ Ստամոքսը մարսումէ կերակուրը, այսինքն կերակուրից արիւն է շինում այն մասը՝ ինչ որ կարելի է շինել։ Արիւնը շնչերակների և երակների ձեռքովը տարածում է մարմնոյ բոլոր մասանց մէջ՝ նոցա սնունդ տալոյ համար։ Արիւնից բաժանւումէ կամ գոյանում է քրտինքը, մաղձը, կաթը, արտասունքը, լորձունքը, մէզը կամ ջրուէթը։

Գործարան ասելով ինչ ենք հասկանում: Որոնք են արտաքին գործարանները կամ զգայարանքը: Շօշափելեաց եւ տեսանելեաց գործիքը որո՞նք են: Լսելեաց գործին ո՞րն է եւ ինչպէս ենք մենք լսում ձայնը: Ճաշակելեաց գործին ո՞րն է եւ ինչպէս ենք զգում մի բանի համը: Հոտոտելեաց գործին ո՞րն է եւ ինչպէս ենք զգում հոտը: Ո՞յք են ներքին գործարանները: Զգացողութեան եւ շարժման գործիքն ո՞րն է եւ ինչ տեղ է նոցա հիմքը կամ կայանը: Մարդուս սիրտը ինչպէս է կազմուած: Ընչից է յառաջանում սրտի թնդոցը: Շնչառութեան գործարանը ո՞րն է: Թոքերով ինչպէս ենք ծծում օդը եւ ընչի համար: Արիւնն ընչից է գոյանում: Արիւնից ինչ բաներ են բաժանւում:

ՄԱՐԴՈՒՍ ՀՈԳԵԿԱՆ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Ինձանից մեծ և հասակաւոր մարդիկ շատ կան: Ինձ համեմատելով նոցա հետ՝ տեսնումեմ որ ես դեռ շատ մեծ չեմ, և ոչ էլ զօրեղ. բայց առաջ աւելի փոքր էի և աւելի թոյլ, մինչև անգամ, ինչպէս ասումեն, ես չէի կարողանում ման գալ և խօսել, թէպէտ իմ միտս չէ՝ թէ ե՛րբ էր այդ.

Կանցնի եւս մի քանի տարի, ես հասակս կառնում, մեծ և զօրեղ կլինիմ, հասակաւոր մարդ կդառնամ: Կանցնի այլ եւս մի երեսուն տարի, և ես կսկսեմ ծերանալ. իմ զօրութիւններս կսկսին պակասիլ, դէմքս կսկսի կնճիռներով ծածկուիլ, աչքերիս լոյսը պակասիլ, ատամներս թափուիլ, ես կծերանամ: Յետոյ ես կմեռնիմ, մարմինս ոչ կզգայ և ոչ կշարժի, կսկսի չորանալ և հող դառնալ, որից նա ստեղծուած է, բայց իմ հոգիս երբէք չի մեռնիլ, որովհետև այն բարերար Աստուածը, որ ինձ մի մահկանացու մարմին է տուել, նա տուել է ինձ անմահ հոգի:

Իսկ այժմ իմ մարմինս ապրումէ, սնանումէ և աճում, զգումէ և շարժւում, որովհետև նորան կեանք է պարգևած:

Ես հասկանումեմ ինչոր ինձ ասումեն, և կարող եմ իմ միտքս էլ խօսքերով յայտնել ուրիշներին. ուրեմն ես ունիմ իմանալու և խօսելու կարողութիւն:

Եթէ ես մի բան տեսնումեմ, կամ թէ ուշադրութեամբ լսումեմ, յետոյ կարողանումեմ տեսածս և լսածս մտաբերել։ Ես կարող եմ սովորել դասս, և յետոյ սովորածս մտաբերել և պատմել, կարող եմ միտս բերել ծանօթ մարդկանց դէմ-քը և անունները. ուրեմն ես ունիմ յիշողութիւն։

Ես երբեմն երևակայումեմ կամ պատկերացնումեմ ա-չացս առաջին՝ թէ ի՛նչ զուարճութիւններ պէտք է ունենամ երբ ամառը գայ, ի՛նչպէս պէտք է զբօսնում ծաղկաւէտ դաշտերումը, մրգ ու ծաղիկներ քաղեմ պարտէզումը, ձուկը կամ թռչուն որսամ և ընկերներիս հետ խաղամ։ Ես նոյն-պէս երևակայումեմ կամ ձևակերպումեմ ծանօթ մարդկանց դէմքը կամ պատկերը։ Գիշերը ես շատ անգամ երազներ եմ տեսնում, տեսնումեմ այն՝ ինչ որ իսկապէս չկայ, ուրեմն ես ունիմ երևակայութիւն։

Ինչ որ ինձ ասումեն, և ինչ որ ես գրքումը կարդու-մեմ, բոլորը միտս չեմ պահում. բայց երբոր ինձ պարզ պատ-մումեն, և ես պատմածը ուշադրութեամբ լսումեմ, այն ժամանակը ինչ որ ես առաջ չէի հասկանում, այժմ լաւ հասկանումեմ։ Ես այժմ շատ բան չգիտեմ, առաջ աւելի չգիտէի. բայց որքան շատ ուսում առնում, այնքան աւելի կիմանամ, կհասկանամ և միտքս կբացուի. ուրեմն ես խելք ունիմ։

Ինձ ախորժելի է՝ երբ ինձ գովումեն, և անախորժ՝ երբ ինձ պարսաւումեն։ Ես սիրումեմ ծնողացս, եղբարցս և քոյ-րերիս, սիրումեմ և իմ ընկերներիցս շատերին։ Ես զգումեմ իմ մէջը մէկ սէր, մէկ երախտագիտութիւն, երբ ինձ բա-րերարութիւն են անում։ Ես զգումեմ ամօթ, եթէ մի ան-արդարութիւն կամ մի յանցանք եմ լինում գործած։ Ես զգումեմ երկիւղ, եթէ ինձ վերայ յարձակւումէ յանկարծ մէկ շուն կամ գազան։ Երբ ինձ բարկացնումեն՝ ես բարկանումեմ,

երբ ես ուրախ եմ լինում՝ ծիծաղում եմ, երբ ես տխուր եմ լինում՝ լալիս եմ. ուրեմն շատ ներքին հոգեկան զգացմունքներ ունիմ:

Երբ ես իմ դասս սովորում եմ, իմ պաշտօնս ճիշդ կատարում եմ, չարութիւն կամ մի յանցանք արած չեմ լինում, այն ժամանակը իմ հոգիս հանգիստ է, ուրախ և պայծառ. բայց երբ ծուլանում եմ, կամ յամառ ու անհնազանդ եմ լինում ծնողացս կամ վարժապետիս, կամ չարութիւն եմ անում, կամ մի յանցանք եմ գործում, այն ժամանակը իմ հոգիս անհանգիստ է լինում՝ տրտում և անդոհունակ ինձանից. ուրեմն ես խիղճ ունիմ:

Երբեմն ես չեմ կամենում գիրք կարդալ կամ դասերս սովորել, բայց ես կարող եմ ինձ հարկադրել և աշխատել պարապ չմնալ, գիտենալով որ պէտք է աշխատել՝ և ամօթ է ծուլանալ: Երբեմն ինչոր ինձ հրամայում են՝ ես չեմ կամենում կատարել, բայց ես կարող եմ ինձ հարկադրել և կատարել ծնողացս կամ ուսուցչացս կամքը, գիտենալով որ ես պէտք է նոցա հնազանդ լինիմ, և նոքա ինձ համար բարի են կամենում: Երբեմն ես այնպիսի բաներ եմ ցանկանում, որ ինձ վնաս են, բայց ես կարող եմ ինձ հարկադրել և կատարել այն՝ ինչ որ ինձ օգտակար է. ուրեմն ես կամք ունիմ:

Ես չեմ տեսել և չեմ կարող տեսնել Աստըծուն, որովհետև նա հոգի է. բայց հաւատում եմ որ նա կայ, տեսնում է բոլորը, գիտէ բոլորը և կառավարում է բոլոր աշխարհս, սիրում է մեզ և մեզ միշտ բարի է ցանկանում. ուրեմն իմ հոգուս մէջը կայ հաւատ առ Աստուած:

Ես երբեմն չարութիւն եմ անում, երբեմն ծուլութիւն, երբեմն բարկանում եմ, երբեմն չեմ հնազանդւում, երբեմն պատահում է որ սուտ եմ խօսում. բայց ես միշտ ցանկանում եմ խելօք ու գովանի երեխայ լինել, բան գիտենալ, ունկն-

գիր ու հնազանդ լինիլ, ճշմարիտ և բարի մարդ դառնալ, և ես գիտեմ որ կարող եմ այդպէս լինիլ, եթէ միայն աշխատեմ. ուրեմն ես ցանկութիւն ունիմ և կարող եմ ամենախելօք ու ամենաբարի մարդ լինիլ։

Այս բոլոր կարողութիւնները, այն է՝ իմանալու և խօսելու կարողութիւնը, յիշողութիւնը, երևակայութիւնը, խելքը, ներքին հոգեկան զգացմունքները, խիղճը, կամքը, հաւատը առ Աստուած, ամենալաւ լինելու ցանկութիւնը և կարողութիւնը՝ կոչւումեն հոգեկան յատկութիւններ։

Մարդուս մարմնու մէջը մի աներևոյթ հոգի է բնակւում, առանց որոյ մարմինը կենդանութիւն չէ կարող ունենալ, այսինքն ո՛չ կ'զգայ և ո՛չ կշարժուի, չնայելով նորա բոլոր գեղեցիկ կարգաւորուած գործարաններին։ Մարդուս հոգին շատ յատկութիւններ ունի, որոնցից մի քանիսը և անասուններն էլ ունին։ Բայց անասունները չունին խօսելու կարողութիւն, չունին խելք, չունին խիղճ, չունին կամքի ազատութիւն, նոքա չեն կարող Աստուծոյ վերայ հաւատացողութիւն ունենալ, չունին ամենալաւ լինելու ցանկութիւն և կարողութիւն։ Աստուծողը մարդուս տուել է մի գեղեցիկ և հրաշակազմ մարմին, տուել է կեանք, և պարգևել է մի ազատ, բանաւոր, անմահ, բարութիւն ցանկացող և տիեզերաց Արարչին երկրպագող հոգի։

Մեր մարմինը ինչ փոփոխութիւններ է կրում։ Իսկ մեր հոգին էլ այնպիսի փոփոխութիւններ կրում է թէ ոչ։ Իմանալու եւ խօսելու կարողութիւնը ինչ է. յիշողութիւնը եւ երեւակայութիւնը ինչ։ Խելք ունինք ասելով ինչ ենք հասկանում։

Մեր ներքին հոգեկան զգացմունքը որոնք են։ Խիղճն ինչ է։ Կամքը որն է։ Ամենայն մարդ էլ հաւատ ունի թէ ոչ։ Ամենայն մարդ էլ ունի ցանկութիւն եւ կարողութիւն ամենալաւ լինելու թէ ոչ։ Իսկ անասուններն էլ ունին այդ յատկութիւնը

Ասա, ինչ հոգեկան յատկութիւններ կան, որ միայն մարդս ունի, եւ ինչ, որ անասուններն էլ ունին։ Նոցա ինչու ենք «անասուն» կոչում։ (Որովհետեւ նոքա անասող, չխօսող, անբան են. ուստի եւ մարդս նոցա հակառակ կոչւում է «ասուն կամ բանական»),

ԲԱՂԴ ԵՒ ԱՂՔԱՏ

Ժամանակաւ մի աղքատ կար մուրացկան.
Հալած մաշած՝ մի հին տոպրակ կըռնակը
Դըռնէ դուռ կըպըտըտէր լալկան լալկան,
Տըժգոհալով կողբար իրան վիճակը.
    Շատ անգամ, «Զարմանք, կասէր,
    Ի՞նչպէս կըլլինի որ մարդիկ
    Կըբնակին մեծ մեծ տըներ,
    Ծոցերնին ոսկով լէք,
    Ունին ամէն կերպ ըզբօսանք,
    Հանգըստութիւն՝ փառք ու պարծանք,
    Ու դարձեալ չեն կըշտանար.
    Ա՛յն աստիճան ագահաբար
Կընկնին նոր նոր հարըստութեանց յետեւից,
Որ շատ անգամ կըզըրկուին բոլոր ունեցածից:»
Մինչ աղքատը այսպէս կխորհէր,
Ու ինքն իրան երկար կմտածէր,
    Յանկած բաղդը երեւեցաւ,
    Ու աղքատին այս ասաւ.
«Ինձի նայէ, ես վաղո՜ւց կուզէի օգնել քեզի.
Ահա գըտայ մէկ տեղից անչափ ոսկի.
Տոպրակըդ բեր՝ լըցընեմ.
Բայց միայն տես՝ թէ ինչ պայման կըդընեմ.
Տոպրակիդ մէջ ի՛նչ որ ընկնի
Իսկոյն պիտի դառնայ ոսկի,
Ինչ որ յանկարծ գետին ընկնի՝
Փոշու պէս պիտի ցընդի.
    Աչքդ լաւ բաց,
Ահա այժմէն քեզ ասի,
Ինձ այսպէս է հրամայուած,

Որ այս պայմանն ճիշդ պահուի.
«Քու տոպրակդ հին է, շատ մի՛ լցըներ,
Որ դիմանայ ու չըպատռի:»
Աղքատը ցընծութենէն չգիտէր ինչ անէ,
Կարծէիր թէ թևեր առած կըթըռչէ.
Առաւ տոպրակը մի լաւ նայեց,
Ծակ ու ծուկը կարկատեց.
Մէկ էլ տեսնես,
Անձրևի պէս
Բաղդի երկու ձեռքերէն
Դեղին ոսկին. շըռշըռալէն
Տոպրակի մէջ թափուեցաւ,
Ու մինչև կէսը լցուեցաւ.
«Բաւակա՞ն է, հարցրեց բաղդը»:
—Չէ դեռ, չէ՜, պատասխանեց աղքատը:
«Չըպատռի՛, լաւ նայէ»:
—Վախ չըկայ, շատ ամուր է:
«Նայէ՛, Կրեսոս դարձար:»
—Մի քի՛չ էլ, իմ բարերար,
Մի ափի՛կ էլ ձըգէ:
«Է՛հ վա՛յը դիր, բաւական է,
Տես տես՝ տոպրակըդ հի՛մա
Կպատռի կընկնի՛ ձեռքէդ հա:»
—Մէ՜կ պըտղունց էլ—ասաւ չասաւ,
Տոպրակն յանկարծ պատըռտեցաւ,
Բոլոր ոսկին վայր թափեցաւ.
Թափածն էլ ա՛յն էր՝ խկո՛յն ցընդեցաւ:
Բաղդը եղաւ աներևոյթ, ու տոպրակը պարապ մընաց.
Աղքատի էլ բոլոր յոյսը բաղդի հետը թըռաւ գընաց:

ԿԱԹՆԱՍՈՒՆ ԿԵՆԴԱՆԻՔ

Երկրիս բոլոր կենդանիքը կամ շնչաւորքը կարելի է բաժանել վեց տեսակ. կաթնասունք, թռչունք, երկակենցաղք, ձկունք, միջատք և որդունք։

Կաթնասուն կամ կենդանածին կոչւումեն այն կենդանիքը, որոնք իւրեանց ձագերը ծնումեն կենդանի և սնուցանումեն կաթով։ Մարդս նոյնպէս կաթնասուն կենդանի է։

Կաթնասուն անասունները կենումեն ըստ մեծի մասին գետնի վերայ. բայց կան մի քանի կաթնասուն կենդանիք, որք բնակումեն ջրի մէջ, և այս պատճառաւ փոխանակ ոտների ունին լողացողական թևեր, որպիսի են՝ կէտը, դելֆինը և այլն։ Կաթնակերների ազգից միայն չղջիկը կամ մաշկաթևը գիտէ թռչել, որ չէ կարող ման գալ գետնի վերայ՝ այլ սողալ։ Չղջիկների առաջին ոտների երկայն մատները կամ ճանկերը կապակից են մի նուրբ մաշկով, որով և կարողանումեն նոքա թռչել։

Կաթնասուններից ոմանք ունին իւրեանց փորի տակին մաշկեղէն պարկեր կամ քսակներ, որոնք այնքան մեծ են, որ փոքր ձագերը մտնումեն մէջը, և այնտեղ մնումեն և կաթով սնանում մինչև որ մեծանան. այսպիսի կենդանիքը ապրումեն ըստ մեծի մասին Նոր Հոլանդիայի մէջ և կոչւումեն Կենգուրոս։

Կաթնասուն կենդանիքը մասամբ ընտանի են և մասամբ վայրենի։ Թէ ընտանի և թէ վայրենի կաթնասուններից մարդս մեծամեծ և բազմազան օգուտներ է քաղում։ Կաթնասունները միակերպ չեն տարածուած. երկրիս վերայ, ոմանք սիրումեն տաք երկիրներ և այնտեղ են բնակւում միշտ, որպիսի են՝ առիւծը, վագրը, փիղը, կապիկները և այլն, ոմանք սիրումեն

բարեխառն երկիրներ, որպիսի են՝ ըստ մեծի մասին, տնային կենդանիքը, և ոմանք ևս՝ սառն երկիրներ, որպիսի է հիւսիսային եղջերուն, արջը, կէտը և այլն։—

ՁԻ

Մեր ընտանի ամենագեղեցիկ և ամենամեծ կենդանեաց մէկն էլ ձին է։ Ձիու գլուխը երկայն է և գեղեցիկ, պարանոցը դիւրաթեք, կուրծքը լայն, ոտները երկայն և բարակ, և իւրաքանչիւր ոտի վերայ մի մի պինդ կճղակ կամ սմբակ։

Ձիու բոլոր մարմինը ծածկուած է կարճ և փայլուն մազով բացի պարանոցը, որ ծածկուած է երկայն մազերով, որ կոչւում է բաշ։ Ձին զանազան գոյնի է լինում, սև, սպիտակ, կարմիր, մոխրախոյն և այլն։ Ձիու աչքերը մեծ մեծ են, ձուաձև և այնպէս են նայում, որ կարծես թէ բան են հասկանում։ Նորա ականջները երկայն են և կանգուն. գունչը երկայն է և սուր, և իւրաքանչիւր ծնօտի վերայ գտանւումեն երեք տեսակ ատամներ՝ առաջնատամներ, ժանիք և սեղանատամներ։

Ձին էլ այն միևնոյն հինգ արտաքին զգայարանքն ունի, ինչոր մարդս ունի. բայց ձիու լսելիքը աւելի սուր են՝ քան թէ մարդուս։ Ձին էլ մարդուս պէս ներքին գործարաններ ունի, ինչպէս՝ սիրտ, թոք, ստամոքս, ուղեղ և այլն։

Ձին շատ զօրեղ է, և այնպիսի ձի կայ, որ եթէ ճանապարհը լաւ լինի, կարող է մինչև 200 փութ սայլով քարշել։ Ձին սաստիկ արագ է վազում. լաւ ձին մի քառորդ ժամումը 8 վերստից աւելի կարող է վազել։ Ձին վախ չունի. նա պատերազմի մէջ շատ քաջ է։

Ձին շատ օգտակար է. մարդս նորանով ման է գալիս, բեռն է կրում, իւր դաշտը հերկում, նորան կառքումը և

սայլումը լծումէ և զանազան բաներ է կրում։ Ձիու կաշին գործ են դնում կօշիկների համար, և նորա աղբովը դաշտերը պարարտացնումեն։ Թափառական և խեղճ ժողովուրդը ձիու միսը ուտումէ, և կաթնիցը մի արբեցուցիչ և սննդարար խմելիք է պատրաստում, որ կոչւումէ կումիս։

Ամենալաւ և ազնիւ ձին Արաբիայի և Անգլիայի ձին է. իսկ մեր Հայաստանումը գովելի է Ղարաբաղու ձին։

Նկարագրեցէք ձին եւ ասացէք, ինչպէս է կազմուած նորա մարմինը, ինչ արտաքին զգայարաններ ունի եւ ինչ ներքին գործարաններ, ինչ օգուտներ է տալիս մարդուս եւ ո՛ր տեղի ձիերն են գովելի։—Կըրկնեցէք բոլոր պատմութիւնը եւ գրեցէք։

Համեմատեցէք ձին մարդուս հետ եւ ասացէք, ինչ նմանութիւն ունին եւ ինչ զանազանութիւն։ (Համեմատեցէք առաջ նոցա մարմինը, այսինքն մարմնոյ ձեւը, կազմութիւնը, գործարանները, սնունդը, եւ յետոյ միւս արտաքին յատկութիւնները)։

ԿՈՎ ԵՒ ԵԶՆ

Կովը ձիուցը ցածր է, բայց երկայնութեամբ նորա չափ է։ Նորա գլուխը ձիու գլխիցը աւելի տափակ է և կարճ, և գլխի վերայ նա երկու հատ մէջը դատարկ եղջիւր ունի։ Ականջները մեծ են և կողմի վերայ ցցուած, պարանոցը առանց բաշի է, կարճ և տափակ. կուրծքը նեղ, պարանոցի և կուրծքի կաշին շատ ցածր կախ ընկած է։ Կովի մարմինը կողքերիցը սղմուած է, մէջքը սուր է, ոսկորները դուրս ընկած են և կողքերը ուռած, ագին երկայն է և վերջանում է երկայն մազերով։ Կովի ոտները ձիու ոտներիցը աւելի կարճ են և հաստ, իւրաքանչիւր ոտի վերայ կայ երկու կճղակ։

Կովի վերին ծնօտի վերայ առաջնատամներ չկան, և այդ պատճառաւ նա չէ կրծում խոտը, այլ ներքին առաջնատամների և վերջին ծնօտի մէջ սղմելով քաղումէ (պոկումէ)։

Կովը չէ կարող մի անգամից լաւ ծամել խոտը կամ դարմանը. փոքր ինչ ծամում է ու կլանում, և յետոյ երբ կերակուրը նորա ստամոքսի մէջ մի փոքր փափկում է և գունդ գունդ է լինում, այն տեղից կրկին այդ կերակուրը դուրս է գալի բերանի մէջը, և կովը հանդարտ պառկելով՝ ըսկսում է դարձեալ կամաց կամաց ծամել ատամներովը և որոճալ՝ ու փշփշոտ լեզուովը տրորել: Կովերին տալիս են խոտ, դարման, հաց և այլն. աւելի սիրում են նոքա աղ լիզել:

Կովի մազը զանազան գոյնի է լինում. բայց ձիու մազերից երկայն է և նորա նման չէ փայլում: Կովի արտաքին զգայարաններից ամենից սուր՝ հոտոտելիքն է: Կովը էգն է, իսկ որձը կոչւում է եզն: Կովը և եզը մարդուս մատակարարումեն իւրեանց համեղ և սննդարար միսը: Բացի դորանից կովը տալիս է կաթը: Կաթնից շինումեն մածուն, սեր, իւղ, թան, պանիր և այլն: Կովի և եզան հաստ կաշուց կօշիկներ և տրեխներ են կարում, տիկ են շինում, եղջիւրներից կոճակներ և զանազան մանր բաներ են շինում, կճղակներից սոսինձ (ծէբօ, թութխալ) են շինում, աղբը (թրիքը) գործ են դնում փայտի տեղ, կամ դաշտերը պարարտացնելու համար: Եզներին և երբեմն էլ կովերին բեռն են բարձում և լծումեն: Մեր Հայաստանումը եզը աւելի հարկաւոր է և օգտաւէտ գիւղացու համար, քան թէ ձին. նա իւր ամենայն գործը եզներով է կատարում:

Կովերի և եզների ամենալաւ տեսակը համարւում է Տիրօլի և Հոլանդիայի եզն ու կովը:

Նկարագրեցէք կովը եւ ասացէք ընչով է կերակրւում նա, եւ ինչպէս է մարսում կերակուրը. կովը ինչ օգուտ է բերում. իսկ եզն ինչ օգուտ:

Համեմատեցէք եզը կովի հետ եւ ասացէք, ինչ զանազանութիւն ունին: Համեմատեցէք եզն ու կովը ձիու հետ: Գրեցէք այս համեմատութիւնը:

ՈՉԽԱՐ ԵՒ ԱՅԾ

Ընտանի ամենահարկաւոր կենդանեաց մէկն էլ ոչխարն է, որ շատ հին ժամանակներից հետէ մարդս ընտանեցրել է։ Խոյը՝ որ ոչխարների որձն է, եղջիւրներ ունի, մաքին (էգ ոչխարը) եղջիւր չունի. բայց այծերը՝ թէ մեծ և թէ փոքր եղջիւր ունին։

Ոչխարը որովհետև երկու կճղակ ունի, այդ պատճառաւ եզան և կովի հետ միասին մի առանձին կարգ են բաղկացնում, և թաթահերձ կամ կճղակաբաշխ կենդանիք են կոչւում։ Բացի դորանից ոչխարը աւելի նման է կովին այն պատճառաւ, որ երկուսն էլ որոճումեն և առաջնատամներ չունին։

Ոչխարը իւր մարմնու մեծութեամբը կովից շատ փոքր է. նորա ճակատը փոքր է և դուրս ընկած, ականջները փոքր են և ցցուած, խոյի եղջիւրները քամակի վերայ կորացած են և ծայրերը դարձած առաջի կողմի վերայ։ Ոչխարի պարանոցը կարճ է և կողքերիցը սեղմուած։

Ոչխարը բաւականի յիմար և խեղճ կենդանի է. եթէ, օրինակ, առաջին գնացող ոչխարը կամ խոյը վազելիս ընկնում է յանկարծ մի փոսի մէջ, կամ թռչումէ մի փայտի վերայից, այն ժամանակը բոլորն էլ չմտածելով թափւումեն նորա յետևից փոսը, կամ թռչումեն նոյն փայտի վերայով։

Ոչխարը՝ ինչպէս և կովը, մարդուս մատակարարում է իւր միսը և կաթը. և բացի դորանից մատակարարում է իւր կակուղ, նուրբ և գեղեցիկ բուրդը, որից հազարաւոր բաներ են շինում։ Ոչխարի և գառան մորթուցը մուշտակ (քուրք) են կարում. իսկ կաշուիցը մաշիկներ և կօշիկներ։ Ճրագուն գործ է դնւում կերակուրի, սապոն շինելու և ճրագալուսի համար։ Ոչխարը տարին մէկ կամ երկու անգամ խուզում են, և բրդի իստակութեան համար, խուզելուց առաջ, ոչխարին

լողացնումեն։ Փոքր գառների մորթուցը թանգագին գդակներ են կարում։

Ամեն երկրում խաշնարածութիւնը մեծ նշանակութիւն ունի, բայց որքան ցուրտ է երկիրը, այնքան դժուար է այնտեղ բազմացնել նրբաստև ոչխարի սեռը։ Մեր Հայաստանումը շատ ոչխար պահել գիտեն, և այդ անմեղ, երկչոտ և չափազանց հեզ արարածիցը մեծ օգուտներ են ստանում։

Այծը նոյնպէս կճղակաբաշխ և որոճող կենդանի է, և ոչխարի հետ միասին մի ցեղ են բաղկացնում, թէ և արտաքին կողմից ոչխարին շատ սակաւ է նման։ Այծի մարմինը շատ նիհար (լղար) է, եղջիւրները յետի կողմի վերայ ծռած են, և ծայրերը առաջի կողմի վերայ չեն կորացած, ինչպէս խոյերի եղջիւրներր. վերին շրթունքը մազ չունի, իսկ ներքին շրթունքի տակին կզակի վերայ մօրուս ունի, և այդ յատկութիւններովը խոյիցը սաստիկ զանազանւումէ։

Պառաւ այծի միսը վատ համ ունի և չէ ուտւում, բայց ուլի միսը շատ համեղ է։ Այծի մորթուցը շինումեն ամենալաւ տեսակ սեկ՝ մաշիկների և ուրիշ բաների համար։ Այծերը շատ տեսակ են լինում, ամենաթանկ և ազնիւ տեսակը Կաշիմիրի և Անգորի այծերն են։

Խոյը եւ մաքին ընչո՞վ են զանազանւում: Ոչխարը ընչո՞վ է նման եզանը եւ կովին: Ոչխարի ճակատը, ականջները, պարանոցը եւ եղջիւրները ինչ ձեւի են: Ոչխարը ինչ օգուտներ է տալիս մարդուս: Այծը ընչո՞վ է ոչխարին նման եւ ընչո՞վ է նորանից զանազանւում:

Համեմատեցէք ոչխարը կովի հետ, եւ ասացէք, ինչ նմանութիւն ունին նոքա եւ ինչ զանազանութիւն: Գրեցէք այս համեմատութիւնը:

Ի՞նչ զանազանութիւն ունին «փոս, հոր եւ ծոր» բառերը: «Թաթահերձ եւ կճղակաբաշխ» բառերը ինչպէս են շինուած: Իսկ «նրբաստեւ եւ խաշնարածութիւն» բառերը ինչպէս: «Քուրք, լղար, չաղ, փիս քիչ, պոզ» հայոց բառեր են թէ օտար լեզուի: Ապա ինչպէս է հայերէնը:

ՈՒՂՏ

Թէպէտ ուղտը մի քանի յատկութիւններով որոճող կեն-
դանեաց, զորօրինակ, կովին և ոչխարին նման է, բայց շատ
յատկութիւններով էլ նոցանից զանազանւումէ։ Ուղտին չէ
կարելի գեղեցիկ կենդանի կոչել։ Եւ արդարև նորա անճոռ-
նի և լայն գարշապարը, բարձր և այլանդակ ոտները, ծու-
ռը և լայն մէջքը, որի վերայ ցցուած է սապատը, երկայն
և դեղնագոյն բուրդը—այս ամէնը արտաքուստ տգեղացնու-
մեն ուղտին։ Բայց այսու ամենայնիւ այդ այլանդակ արա-
րածը մարդուս համար թանգագին և շատ օգտաւէտ յատ-
կութիւններ ունի։ Ուղտը շատ փոքր է ուտում, չնայելով
որ նա ձիուցն էլ և կովիցն էլ շատ մեծ է։ Մի փոքր խմո-
րի գնդով, կամ մի քանի բուռն գարով նա բաւականանումէ,
և կարող է մինչև ութն օր անջուր մնալ։ Երբեմն նորան
15-ից մինչև 20 փութ բեռն են բարձում, և այդպիսի բեռ-
նով նա կարողանումէ իւրաքանչիւր օր մինչև հարիւր վերստ
ճանապարհ գնալ։

Հասկանալի բան է, որ այդպիսի կենդանին մարդուս հա-
մար իսկապէս մի գանձ է աւազուտ անապատներումը, ուր
ո՛չ ջուր կայ, ոչ խոտ, և ուր արեգակը սաստիկ այրումէ։
Եթէ ուղտը չլինէր, և ոչ մի վաճառականութիւն չէր լինիլ
այդ զարհուրելի ամայի տեղերումը. իսկ այժմ թանկագին
ապրանքներով բեռնաւորուած ուղտերի կարաւանները՝ մինը
միւսի յետևից շարուած, այդ մահաբեր անապատներովը ան-
ցանումեն։ Գթած է մեր Ստեղծողը, որ Աֆրիկայի և Ա-
սիայի լայնածաւալ անապատներին ընծայել է ուղտը. իսկ
հիւսիսի ձիւնապատ և ճախճախուտ տեղերին՝ սրընթաց եղ-
ջերուն, որ սլանումէ ձիւնի վերայ քարշելով սահնակը, և
կերակրւումէ ձիւնի տակից հանած արմատներով։

Ուղտի կաթը և միսը ուտումեն. նորա բրդիցը զանազան բաներ են շինում, և մինչև անգամ նորա աղբը փայտի տեղ այրումեն անապատներումը, ուր ամենևին փայտ չկայ։

Ուղտը երկու տեսակ է լինում. միասապատ և երկասապատ. բայց այդ երկու տեսակն էլ միևնոյն կերպով օգուտ են տալիս մարդուս, և գլխաւոր յատկութիւններով միմեանց նման են։ Ուղտի մէջքի սապատները ճարպից են բաղկացած, և երբ այդ կենդանին երկար ժամանակ անօթի և ծարաւ է մնում, այն ժամանակը դորա սապատները փոքրանումեն։ Ուղտի այդ պաշարի համբարը սև օրի համար է, և սապատների ճարպը լուծուելով և արիւն դառնալով նորան կերակրումէ և նորա ույժը երկար ժամանակ պահպանում։ Այդ բարձր կենդանուն հեշտ բարձելու համար իջուցանումեն ծնկների վերայ, և այնպէս են բարձում։

Ուղտը ընչո՞վ է նման կովին եւ ոչխարին, եւ ընչո՞վ է նոցանից տարբեր: Ուղտը գեղեցի՞կ կենդանի է թէ ոչ: Ինչո՞ւ: Ուղտը ի՞նչ թանգագին յատկութիւններ ունի: Ուղտը աւելի ո՞րպիսի տեղերումն է շատ պիտանի մարդուս: Ինչու: Իսկ սրընթաց եղջերուն ո՞րպիսի տեղերումը: Ուղտից առհասարակ ի՞նչ օգուտ է քաղում մարդս: Քանի՞ տեսակ ուղտ կայ, եւ ընչո՞վ են նոքա զանազանւում

Համեմատեցէք ուղտը ձիու հետ, եւ ասացէք ի՞նչ նմանութիւն ունին նոքա եւ ի՞նչ զանազանութիւն: Գրեցէք այս համեմատութիւնը:

ԳԱՅԼ ԵՒ ԿԿՈՒ

«Մընաս բարով, դըրացիս»,
Ասաւ գայլը կըկուին.
«Վերջապէս ինձ այս մըրիս
Հանգստութիւն չըտըւին։
Ի՞նչ մարդիկ են սոքա, եղբայր.
Ի՞նչ անըզգամ շըներ են.

Մէկը միւսից կատաղի,
Մէկը միւսից անօրէն.
Անմեղ չէ որ՝ կուզես հրեշտակ էլ եղիր,
Որ կողմ դառնաս՝ կերածդ է ծեծ, փէտ ու բիր»։

—«Ի՞նչ անեմ եղբայր,
Բարի ճանապարհ.
Բայց երթալու տեղդ հեռո՞ւ է,
Անդ գընացողն հանդչելո՞ւ է.
Ամե՛նքն էլ սո՞ւրբ են անդ, ամէնքն էլ խելօ՞ք,
Որ անդ ապրիս դուն էլ հանգիստ ու անհոգ»։
—«Հէ, ես ո՞ւր եմ գնալու, գիտե՞ս,
Արկադիոյ դա՛շտը, գուցէ լըսած ես.
Ա՜խ, բարեկամ, աշխարհումս լաւ տեղ կայ եթէ՝
Այն է.
Անդ ոչ կըռիւ կայ կասեն՝ ոչ ծեծկըռունք.
Անդ մարդիկը մարդ չեն, մէկ մէկ հե՛զ գառնուկ.
Անդ ջրի տեղ կաթ կըհոսեն գետերը,
Անդ է այս աշխարհիս ոսկի դարը։

Ամէնքը անդ իրարու հետ
Քըրոջ աղբօր պէս կըփարուին,
Շըներն անգամ՝ ո՛չ թէ կըծեն՝
Հաջելն էլ մեղք կըհամարին։
Ի՞նչ անեմ ու այնպիսի տեղ չգնամ, եղբայր.
Երազես մէջ ա՛յն կը տեսնեմ ես անդադար.
Ո՜հ, բարով մնաս,
Ո՜վ իմ քաղցրիկ դըրացի,
Աւել պակաս
Հալալ արա դու ինձի.
Երթամ քաշուիմ այն երջանիկ տեղերը,
Այն հովասուն, հանդարտ սիրուն դաշտերը.

Տե՛ղը մըրնան այս մըրները՝ գեղերը,
Ուր ոչ ցերեկն հանգստութիւն կայ ինձ, և ոչ գիշերը»:
—«Գ՛նաս բարով, ինչ ասեմ,
Պատասխանեց մեր կըկուն.
Բայց քեզ մի բան հարցանեմ.
Երկադիա ասած տեղդ որ երթաս դուն,
Ետամնե՛րդ էլ կառնուս հետըդ կը տանե՞ս,
Թ՛է նոցա այստեղ կթողնես»:
«Այստեղ ինչի՞ կթողում.
Ի՞նչ ես ասում»:
—«Թ՛է այդպէս է, դու իմ խօսքիս նշան դիր.
Մէջքիդ մի մազ էլ չի մընար, լաւ գիտցիր»:

Փ Ի Ղ.

Կենդանեաց թագաւորութեան մէջ ոչ մի կենդանի այնքան չէ գրաւում իւր յատկութիւններովը մեր ուշքը, ինչպէս փիղը: Փիղը աշխարհիս մէջ գտնուած գազանների ամենամեծ ու զօրաւորն է, և դիւրաւ ընդելանում է: Նա 4-ից մինչև 6 արշին բարձրութիւն ունի և 6-ից մինչև 8 արշին երկայնութիւն. նորա մարմինը 150 փթից աւելի ծանրութիւն ունի: Փղի կաշին շատ հաստ է և կարծր, այնպէս որ հրացանի գնդակով անգամ դժուար է նորան ծակել: Փղի գլուխը մեծ է և փոքր ինչ երկայն, աչքերը փոքր և իմաստալի, ականջները լայն են և կախ ընկած: Փիղը միայն վերին ծնօտի վերայ 2 առաջնատամ ունի. սեղանատամների թիւը զանազան է՝ մէկից մինչև երեք իւրաքանչիւր ծնօտի վերայ: Ժանիքը երկու են, որք մինչև 2 արշին երկայնութիւն ունին և 2 փութ ծանրութիւն. նոքա թանկագին են և նոցա-

նից զանազան և գեղեցիկ բաներ են շինում։ Փղի ոտները սաստիկ հաստ են. իւրաքանչիւր ոտի վերայ հինգ մատը կայ, որոնք հաստ կաշուով փաթաթուած են։

Սակայն փղի մարմնու ամենահետաքրքրական մասը կընճիթն է, որ քթի շարունակութիւնն է և չափազանց շարժական է։ Կնճիթը մի սաժենից աւելի երկայնութիւն ունի, և կարող է քաշուիլ կամ կարճանալ՝ երբ կամենայ փիղը։ Կնճիթը փղի համար մի այնպիսի հարկաւոր և գործածական անդամ է, ինչպէս մեզ համար մեր ձեռքը։ Նորանով փիղը կարող է վերցնել գետնի վերայից նաև ամենափոքր բաները, իւր կերակուրը նորանով է տանում բերանը, նորանով կարող է ջուանի կապը քանդել, փակած դուռը բանալ և կրկին փակել և այլն։ Բացի այդ յատկութիւնները՝ կնճիթը սաստիկ ուժեղ է, այնպէս որ փիղը նորա մի հարուածովը հեշտ կարող է մարդուս սպանել, և նորանով մինչև 5 փութ ծանրութիւն գետնիցը բարձրացնել։

Փիղը առհասարակ մեց ձիու ույժ ունի, և կարող է 50-ից մինչև 100 փութ ծանրութիւնով բեռը տանել։ Նա բաւական արագ ընթացք ունի և կարող է վազել. նա ջրի մէջ շատ գեղեցիկ լող է տալիս։ Փղերը մեծ խումբերով բնակւում են, երբեմն մինչև 400 հատ միասին, Աֆրիկայի սաստերաշատ անտառների և հարաւային Ասիայի մէջ, նոյնպէս Ցէյլան և Սումատրայ կղզիների վերայ, և ապրումեն մինչև 200 տարի։ Փղերը կերակրւում են բոյսերով, ուստի շատ անգամ մեծ վնաս են տալիս այն դաշտերին, ուր բրինձ է լինում ցանած։ Ընտանի փղերի պահելը մեծ ծախս ունի, միջին թուով օրը նոցա փութ ու կէս բրինձ են տալի և այդքան էլ խոտ կամ տերև։

Ընտանեցրած փղերին մարդիկ գործ են դնում զանազան բաների համար, օրինակ՝ բեռն են բարձում և ուրիշ տեղեր են

տանում, նոցանով որս են գնում, և Հնդկաստանումը նոցա վերայ բարձումեն և մտն ածում զօրաց թնդանօթները: Փղերին կառքումը կամ սայլումը չեն լծում, բայց առհասարակ նոցա մէջքի վերայ փոքրիկ տուն են շինում և մէջը նստում գնումեն: Փղի վարելու (քշելու) համար նորա գլխի մօտ նըստումէ փղապանը, և ձեռին մի սուր մուրճ բռնած՝ անդադար նորա գլխին խփումէ, որ երթայ: Փղապանի բոլոր կանոնաւոր պահանջմունքները փիղը խոնարհութեամբ կատարումէ, և առանց բարկութեան կրումէ արժանի պատիժները, բայց անիրաւացի և խիստ վարմանց համար՝ սաստիկ վրէժխնդիր է լինում:

Մի ճանապարհորդ պատմումէ, որ մի անգամ փղապանը փղի վերայ նստելով՝ կոկոսի պինդ ընկոյզները բարկութեամբ նորա գլխին զարկեց (խփեց): Խեղճ կենդանին այդ սաստիկ ցաւին համբերեց, բայց այս մի և նոյն օրը փողոցովը անցանելիս՝ փիղը կոկոսի ընկուզի կոյտի մօտ կանգնեց, կնճիթով մի ընկոյզ վերառաւ, և այնպէս զարկեց փղապանի գլխին, որ նա թուլացած վայր ընկաւ գետնի վերայ և մեռաւ:

Փիղը չափազանց նրբամիտ և հնարագէտ կենդանի է: Մի անգամ մի փիղ՝ քաղաքի մէջ ման գալու ժամանակը, մօտենում է մի դերձակի խանութի, և տեսնելով որ պատուհանը բաց է, կնճիթը ներս է երկարացնում: Դերձակների մէկը՝ կամենալով զուարճանալ նորա վերայ, ասեղով ծակծակումէ խեղճի կնճիթը: Փիղը բարկանում է, գնումէ գտնում մի տեղ աղտոտ ջուր, կնճիթը մի լաւ լցնումէ, և շուտով վերադառնում ու պատուհանից հեղեղի նման աղտոտ ջուրը այն դերձակի գլխին ածում, ու գնում իւր ճանապարհը:

Բայց փիղը առանց կնճթի մի ամենախեղճ և անզէն կենդանի է: Երբոր նա առիւծի կամ տիգրի հետ պատերազմում է, այն ժամանակը բռնում բարձրացնում է նոցա իւր

կնճիթովը, ձգում է վերև օդի մէջը, և իւր ժանիքներովը նոցա պատառում, և կամ թէ ձգում է գետնի վերայ և իւր ծանր և հաստ ոտներովը տրորում։ Այսու ամենայնիւ փիղը շատ հանդարտ բնութիւն ունի, և երբէք առաջին անգամը ինքը չէ յարձակւում, այլ ընդհակառակը աշխատում է թագչել. բայց բարկացած և կատաղած փիղը շատ զարհուրելի է։

Նկարագրեցէք փղի մարմնոյ կազմուածքը։ Փղերը ինչ տեղ են բնակւում եւ ընչո՞վ են կերակրւում։ Ընտանի փղերին ինչ բանի համար են գործ դնում եւ ինչպէս են նոցա կառավարում։ Փիղը նրբամտութիւն եւ հնարագիտութիւն ունի՞ թէ ոչ։ Կարո՞ղ ես օրինակ բերել։

Փիղը ի՞նչպէս է իւր թշնամեաց հետ պատերազմում։ — Կրկնեցէք ձեր բառերով այս պատմութիւնը եւ գրեցէք։

Ի՞նչ զանազանութիւն կայ «ծակել եւ ծակծակել, կոտրել եւ կոտրատել, կտրել եւ կտրատել, փոխել եւ փոփոխել» բառերի մէջ։

ՓԻՂ ԵՒ ՔՈԹՈՍ

Մէկ փիղ առած ման կածէին,
Փողոցներով կանցանէին,
Յանկարծ քօթօտ մի կուռասէր
Վրայ վազեց ու խիստ կհաջէր։
«Ձայնդ քաշէ, դըրացի եղբայր,
Ասաց զամփռը մեր քօթօտին.
Չե՞ս տեսնում որ ծաղր եղար,
Բոլոր շների դու առաջին։
Դուն ո՞վ ես, ու փիղը ո՞վ.
Ահա քու հեւքդ է բռնըւեր,
Իսկ նա հանդարտ ու անխռով
Առջեւդ ո՛ւշ էլ չի դըներ»
—«Հա՛ հա՛ հա՛, դու չիմացար,
Պատասխանեց մեր քօթօտը.

Ու իմ միտքս չը հասկացար.
Հեռուանց կանչեմ կըռուեմ հետը,
Որ մեծ բանի մէջ երևամ,
Ու ուրիշներուն էլ այս ասել տամ.
Տեսէք քոթոռն ինչպէս քաջ է,
Որ փըղի դէմ էլ կը հաջէ։»

ԱՌԻՒԾ

Առիւծը իւր վսեմ տեսքի, սաստիկ ուժեղութեան և զարհուրելի ձայնի համար կոչւում է գազանների թագաւոր. առհասարակ նա մուգ դեղին գոյն ունի, և մօտ երեք արշին երկայնութիւն և արշին ու կէս բարձրութիւն ունի։ Նորա ագին երկար է և ունի իւր ծայրին մի մեծ մազէ փունջ, իսկ պարանոցի վերայ կայ մի երկար թաւամազ բաշ. էգ առիւծը բաշ չ՚ունի։ Հին ժամանակումը առիւծը Հարաւային Եւրոպայումն էլ էր գտնւում, այժմ Եւրոպայումը միայն գազանանոցներումը կարելի է նորան տեսնել։ Առիւծը բնակւում է Աֆրիկայումը և Հարաւային Ասիայումը։ Ամենամեծ առիւծները Պարսկաստանի մէջ են գտնւում։

Առիւծը, ինչպէս ասում են, միայն սոված և բարկացած ժամանակն է մարդուս վերայ յարձակւում. իսկ միւս կենդանեաց վերայ յարձակւում է ոչ միայն քաղցած այլ և կուշտ ժամանակը։ Նա սաստիկ ճարտար է և արագաշարժ, և մեծ ցայտքումներ է անում որսի վերայ յարձակուելիս։

Առիւծի ուժը ցոյց տալու համար բաւական է ասել, որ նա իւր թաթի մի հարուածովը կարող է ձիու ողնաշարը կոտրել ու եղջերուին գրկած փախցնել, ինչպէս որ գայլը գառին։ Ահա՛ թէ ինչո՞ւ համար, երբ անապատի մէջ ամպի

գռռոցի նման կէս գիշերին առիւծի մռընչիւնը լսւում է, բոլոր կենդանիքը դողում են, և շտապում են թագչել:

ԱՌԻՒԾԻ ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆԸ.

Առիծն ու Շուն, Գայլն ու Աղուէս
Մէկմէկու հետ կըկենային աղբօր պէս.
Իրարու մէջ խօսք կըդընեն,
Որ միշտ որսի մէկտեղ դիմեն.
Ի՛նչ որ ընկնի ձեռքերնին,
Հաւասար անեն բաժին:
Չըգիտեմ ի՛նչ կերպով,
Կամ թէ ի՛նչ հընարքով,
Առաջ Աղուէսը մի Եղնիկ կորսայ.
Իսկոյն ընկերացն էլ իմաց կըտայ,
Որ գան ու բաժնեն այն ընտիր որսը,
Չորս բաժին անեն ու առնուն չորսը:
Եկան ժողովեցան. Առիւծն էլ եկաւ,
Ճանկերը սըրեց, չորս կողմ նայեցաւ,
Ասաւ միւսերուն. «Բերէք ես բաժնեմ.
Մենք չորս ենք, եղբարք, չորս կըտոր անեմ.
Ահա նայեցէք. այս է իմ բաժինս,
Ինչպէս խօսք դըրած ենք մէջերնիս.
Այս էլ ինձի, զի ես Առիւծ եմ.
Այս էլ՝ որ ձեր միջի ուժովը ես եմ.
Իսկ այս,—թող մէկը թաթը մեկնէ,
Տես ինքն իր գըլխին ի՛նչ ձիւն կըբերէ:

Ի՞նչ է ուսուցանում մեզ այս առակը:

ԿԱՊԻԿ

Դուք շատ անգամ տեսած կլինիք այդ ծաղրածու կենդանին, որ մարդիկ բերումեն մեր կողմերը և խաղացնումեն: Կապիկը մեր կլիմայի համար մի օտար կենդանի է. Նորա հայրենիքը իսկապէս Աֆրիկան է և Ասիան:

Կապիկը իւր մարմնու կազմուածքովը և իւր հասկացողութեամբը մարդուս սաստիկ նման է, և մեծամեծ կապիկների տեսակների մէջ աւելի սաստիկ է երևում այս նմանութիւնը. Կապկի բոլոր մարմինը մոխրագոյն մազով է ծածկուած, և միայն նորա երեսի վերայ մազ չ՛կայ, որ մարմնու գոյն ունի: Կապկի ատամները թէ թւով և թէ ձևով մարդուս ատամների նման են. Նորա բոլոր չորս անդամների վերայ էլ երկար մատներ կան, որոնք մեր մատների պէս կարող են զանազան առարկաներ բռնել, և այդ պատճառաւ կապիկներին չորս ձեռնանի կենդանի են կոչում: Անդամների այդպիսի կազմուածքը կապիկներին արգելում է արձակ ման գալ, բայց դորանով նոքա շատ լաւ են բարձրանում ծառերի վերայ, և ահա՛ թէ ինչո՞ւ համար երբեմն նոքա ծառագնաց կենդանի էլ են կոչւում: Կապիկները ըստ մեծի մասին խումբերով այրեցեալ գօտու տակ գտնուած անտառներումն են բնակւում, նոքա ո՛չ թէ մագլցելով են ծառերի վերայ ելանում, այլ ծառի ճիւղը բռնելով: Թէպէտ նոքա գլխաւորապէս պտուղներով են կերակրւում, բայց ուտում են նմանապէս մի ջատներ և փոքր թռչունների ձուաներ: Կապիկները երբեմն յարձակւումեն զանազան տեղերի վերայ և գողութիւններ են անում: Կապիկները առհասարակ մի աշխոյժ, արագաշարժ, խորամանկ և ընդունակ կենդանի են, բայց երբ որ ծերանում են, այն ժամանակը բոլորովին բթա-

նում են, կատաղի են լինում և դժուար են ընտելանում: Նոքա ընդունակ են մարդկանց շարժուածքը և ձևը անելու։

Կապիկների մէջ երևելի է օրանգուտանգ կոչեցեալ տեսակը, որ միայն տաք կլիմայի անտառների մէջն է բնակւում: Օրանգուտանգը հասակով մի մեծ մարդու չափ է, բայց նորա վերին ձեռները մինչև գարշապարն են հասնում: Մեծ օրանգուտանգը կատաղի է լինում և բարկացոտ, բայց փոքրուց բռնուածը աշխոյժ է լինում և աւելի հեշտ է ընտելանում, քան թէ մեծը: Օրանգուտանգը իւրեան համար խրճիթ է շինում բարձր ծառերի վերայ, և թշնամու երեսից իւր անձը պաշտպանում է փայտերով և քարերով: Նա ցուրտ կլիմայի մէջ երկար չէ կարողանում ապրել, այլ թոքացաւից շուտով սատակում է։

ԵՐԱԺԻՇՏՔ

Չորս այլ և այլ կենդանի,
Մէկն Արջուկն անճոռնի,
Մէկը Կապիկ, մէկն Իշուկ,
Մէկն էլ Նոխազ ձիգմօրուք
Իրարու հետ խօսք կը կապեն,
Որ մէկ նուագ յօրինեն։

Չգիտեմ ինչպէս կանեն,
Որ ամէն բան կըճարեն.
Գտան սրինգ, տաւիղ, ջութակ,
Նստան ուռի ծառի տակ.
«Նուագս յօրինեմք որ, ասին,
Երկինք երկիր ըզմայլին։»
Ամէն մէկը մեծ ջանքով

Իրանց գործիքը առնելով
Արկտըրտուէր կըտընքտընքար,
Բայց համ ու հոտ բնաւ չկար։
«Կացէ՛ք եղբարք, ծըւաց յանկարծ
Չարաճըճի Կապիկը.
Մէկս էլ կարգին մենք չենք նըստած,
Ի՞նչպէս լինի լաւ երգը։
Դուն Արջ եղբար,
Թմբուկդ առ,
Նիստ աստ այսպէս տաւղին դէմ.
Էս սըրընգին
Պէտք է առաջին
Այսպէս նըստիմ ու առեմ,
Ժիմա տեսնէք թէ ի՛նչ նուագ ձեւանայ,
Սարեր, ձորեր, դաշտն ու հովիտ հիանայ։»
Երաժիշտները շարուեցան նըստան,
Առել ըսկըսան.
Բայց թէ ի՛նչ անհամ բան,
Իրանք էլ տեսան։
«Եհէ՜—կանչեց Էշն այն կողմէն—դադրեցէ՛ք.
Դորա ճարը գտայ ես.
Եկէք ամէնքըդ մէ՛կ շարքով նըստէք.
Տեսնէք ի՜նչպէս
Անուշ կլինի նուագը։»
Մըտիկ արին իշուն՝ մէկէլ էշերը.
Նըստան շարքով
Մեծի կարգով,
Բայց անօգուտ. դարձեալ նուագն էր խառնակ,
Որը կասէ,
«Այդպէս չէ՜,
Այսպէս նըստէ դուն, եղբար.»

Որը նորա հակառակ,
Թէ «դուն ինչո՞ւ աստ նըստայր։»
Մի սոխակ լսեց նոցա գոչումն աղաղակ,
Թըռաւ իջաւ, որ տեսնէ՝ թէ ի՛նչ կայ այն ծառի տակ.
Դարձան նորան մէ՛կ բերան՝ ասին. «բարի որ եկար.
Հոգի՛դ սիրես, մեզ մի խըրատ տուր օգտակար.
Էհա խաղի մեծ գիրք ունինք,
Մէկմէկ հատ էլ գործիք ունինք.
Միայն դու մեզ ա՛յս ասա,
Թէ ինչպէս պէտք է նըստինք,
Որ լաւ նուագ յօրինենք։»
Սոխակն ի՞նչ ասաց նոյենք.—
«Քաջ երաժիշտ լինել ո՛վ որ կամենայ,
Պէտք է փափուկ ականջ ու խելք ունենայ.
Իսկ դուք եղբարք, ի՛նչպէս կուզէք շարուեցէք,
Նուագ յօրինել ձեր բանը չէ, լաւ իմացէք։»

ԿԷՏ

Էյս կենդանու մարմնոյ ձեւը ձկանը շատ նման է, և հասարակ ժողովուրդը կարծում է թէ սա ձուկն է, բայց կէտը բոլորովին ձուկը չ՚է, այլ գազան է, և նոյնպիսի կենդանի ձագեր է բերում, ինչպէս ձին և կովը։ Կէտը շատ մեծ կենդանի է, քառասուն փղերը հազիւ թէ մի կէտ կարելի է կազմել. նա մինչև տասը սաժէն երկայնութիւն ունի։ Կէտի գլուխը սաստիկ մեծ է և բաղկացնում է նորա մարմնոյ երրորդ մասը։ Էնդամների կամ առաջին ոտների փոխանակ երկու լողալու թևեր ունի, յետին անդամների փոխանակ՝ ձկան տտան նման մի տուտն ունի։ Կէտի ականջները շատ փոքր են. նորա փոքրիկ աչքերը լողալու թևերի մօտ են գտնւում, իսկ ռունգները, գագաթի վերայ։ Կէտի

բերանը երկու սաժէն երկայնութիւն ունի, իսկ լայնութիւնը դորանից քիչ փոքր է (լեզուն կ՚լինի երեք սաժէն. Բայց կոկորդը այնպէս փոքր է, որ մարդուս ձեռը հազիւ կարող է նորա մէջը մտնել:

Կէտը երբ որ փոքր է, այն ժամանակը ատամներ ունի, բայց յետոյ ատամների փոխանակ նորա բերանումը մինչև չորս հարիւր եղջերէ ատամներ են դուրս գալի, որոց իւրաքանչիւրը մինչև երկու սաժէն երկայնութիւն է ունենում և կէս վերշօկ էլ լայնութիւն, իսկ ծայրը մանր մանր ճիւղեր է բաժանւում: Կէտի այս եղջերէ ատամները մօտ 80 փութ կը լինին, և դուք ինքներդ էլ տեսած կլինիք այս եղջերէ ատամները, որ բերումեն մեր կողմերը ծախելու, և որից զանազան բաներ են շինում: Այդ եղջերէ ատամները կէտի համար ցանցի պաշտօն են կատարում, որով նա որսում է ծովային փոքրիկ կենդանիքը և նոցանով կերակրւում է: Կէտը իւր լայն բերանը ջրով լցնում է, և այդ ջուրը եղջերէ ատամների արանքներովը թողնում է. ինչ որ կէտին կարող է կերակրել՝ այդ եղջերէ ատամների ետևը նորա բերանումը մնում է և կոկորդն է գնում. իսկ մնացած ջուրը շատրվանի պէս դուրս է թափում իւր գլխի վերայի երկու մեծ ծակերովը: Չնայելով կէտի մեծութեանը, նա միայն ամենափոքր ձկներով և ուրիշ ջրային փոքրիկ կենդանիներով է կերակրւում: Երբ որ կէտի ձագերը սկսում են լողալ, կէտը այդ ժամանակը իւր լողալու թևերովը, որ մի սաժէն երկայնութիւն ունին, նոցա օգնում է և լողալ է սովորեցնում: Կէտի տուտը երեք սաժէն լայնութիւն ունի և այնպէս ուժով է, որ կէտը նորա մի խփելովը ոչ թէ կարող է միայն շուռ տալ նաւը՝ այլ և կարող է կտոր կտոր անել. Նա շատ արագ է լողում, և երբեմն լողալով մի ժամումը անցնում է մինչև չորս մղոն: Կէտը ջրի տակին մինչև 40 րոպէ և կամ փոքր ինչ աւելի կարող է մնալ, բայց յետոյ լողալով պէտք է դուրս գայ ջրի երեսը և տասն անգամ շունչ առնու:

Շատ նաւեր են ճանապարհ ընկնում դէպ 'ի հիւսիսային ծովերը կէտ որսելու համար։ Նաւավարներիցը մինը նըստում է կայմի վերայ և նայում է, թէ որ տեղ է կէտը երևում, երբ որ նա տեսնում է այդ հրէշքի ծանօթ գլուխը կամ թէ բերանիցը դուրս եկող ջրի շադրվանը, այն ժամանակը իւր ընկերներին նշան է տալիս, և իսկոյն նաւիցը մի նաւակ են բաց թողում, որի վերայ նաւավարներ և ձկնորսներ են նստած լինում։ Ձկնորսները իւրեանց ձեռքին երկար, սուր և երեքժանեայ զէնքեր են բռնում, որոց մի ծայրիցը երկար չուան է կապած լինում։ Հանդարտ նաւակը քշում են դէպի այդ հսկայ կենդանին, և ձկնորսը՝ ինչքան որ զօրութիւն ունի, ձգումէ այդ զէնքը և ցցումէ կենդանու մէջքումը։ Կէտը իսկոյն ջրի տակն է անում և երեքժանի զէնքի ծայրից կապած չուանը արագ արագ արձակում են, որքան հարկաւոր է լինում։ Կէտը մի քանի րոպէ ջրի տակին մնալով, անպատճառ պէտք է ջրի երեսն անէ, որ օդ ծծէ։ Այն ժամանակը իսկոյն զէնքերը կրկին ձգումեն և նորա մէջքումը ցցում. ծովը այդ կենդանու արիւնովը ներկւում է։ Կէտը այդ ժամանակը իւր ահագին ոտնովը ջրին այնպէս է խփում, որ ձայնը մի վերստ հեռու լսւում է։ Վերջապէս նորա արիւնը քամւում է, և նա իւր ուժը կորցնում է, կողքի վերայ շուռ է գալիս և սատակում է։ Այն ժամանակը նաւը մօտեցնում են կէտին, և այդ հսկայ կենդանու վերայ են ելանում, ինչպէս որ մի կղզու վերայ, և կացիններով ու դանակներով կտրում են հանում նորա ճրագուն, որ երբեմն մինչև մէկ արշին հաստութիւն է ունենում, այլև հանումեն եղջիւրէ ատամները և լեզուն, և մնացած մարմինը թողում են, որ գիշատող թռչնոց համար կերակուր է դառնում։

ԹՌՉՈՒՆՔ

Թռչունները իւրեանց արտաքին կերպարանքով շատ նման են միմեանց, որովհետև նոքա ամենքը ունին երկու ոտ, երկու թև, եղջերանիւթ կտուց և փետրապատ մարմին։ Թռչունների ամենաամուր և մեծ փետուրները գտնւում են թևերի և տտան վերայ։ Համարեա թէ բոլոր թռչունները ապրումեն ծառերի և հողի վերայ, միայն մի քանիսը կենումեն ջրի մէջ, և նոցա մատները կամ ճանկերը միաւորուած են լողացողական մաշկով։

Թռչունները չունին ատամներ. նոքա իւրեանց կերակուրը կամ փշրումեն կտուցով, կամ թէ կլանումեն ամբողջապէս։ Այն թռչունները, որ սնանումեն հատիկներով և հունդերով և կլանումեն նոցա ամբողջապէս, խոչափողից փոքր ինչ ցած ունին մի մաշկեղէն պարկ, որ կոչւումէ խածի կամ խածեակ։ Խածեկի մէջ նոցա կերակուրը յառաջ կակղանումէ և ապա իջանումէ այնտեղից ստամոքս։ Շատ թռչունք կլանումեն փոքրիկ քարեր, որ օգնումեն նոցա մարսողութեանը։ Թռչունները իւրեանց կտուցը գործ են ածում, ոչ թէ միայն կրկտելու, այլ և իւրեանց փետուրները յատակելու, բոյն շինելու, կերակուր տանելու, իւրեանց անձը պաշտպանելու համար։

Թռչնոց աչքերը մեր աչքերի նման բբերով չեն խփւում փակւում, այլ մի առանձին փառով, որ երբ հարկաւոր է լինում, աչքի անկիւններիցը յառաջ է գալիս և ծածկում է աչքը։ Թռչունների տեսութիւնը շատ սուր է. վառեկը նկատումէ որսը այնքան հեռուից, որ ամենասրատես մարդը չէ կարող տեսանել նորան. Մի քանի թռչունք, որպէս բուերը, ցերեկը չեն կարում տեսանել, այլ տեսանումեն միայն գիշերները, ուստի և նոքա ցերեկը քնումեն և գիշերները դուրս են գալի իւրեանց համար կերակուր որոնելու։

Թռչունները շնչառութիւն ունին. եթէ նոցա կտուցը սեղմես, այն ժամանակը նոցա շունչը կըկտրուի և կըսատակին. նոքա ունին տաք և կարմիր արիւն, որ շարժումէ նոցա երակների միջին, և եթէ թռչունը ձեռներում բռնէք, կտեսնէք որ նորա սիրտը շատ սաստիկ բաղխումէ, որ յառաջանումէ արեան շրջելուցը: Թռչնոց կերակուրը զանազան է. ոմանք սնանումեն բոյսերով և ունդերով, այլք՝ մանր թռչնոց կամ կենդանեաց մսով և կոչւումեն գիշատիչ թռչունք:

Շատ թռչուններ, տարու մի սահմանեալ ժամանակում, փոխումեն իւրեանց բնակարանը, և այս պատճառաւ կոչւումեն տեղափոխական կամ չուող թռչունք: Արժանի է ուշադրութեան, որ նոքա երկարատև բացակայութենից յետոյ վերստին գտնումեն իւրեանց առաջին բոյները: Թռչունները շինումեն իւրեանց բոյները մեծ ճարտարութեամբ և ապահով տեղերում: Ոմանք շինումեն իւրեանց բոյները ծառերի վերայ, ոմանք ժայռերի ճեղքերումը կամ ծառերի խոռոչներումը, ոմանք էլ տան պատերի միջին: Նոքա իւրեանց բոյների նիւթը հաւաքումեն տեղի դրութեանը և կլիմային համեմատ. ուստի ոմանք ժողովումեն ծառի ճիւղեր, արմատներ, խոտ, յարդ, եղէգն, իսկ այլք բացի այս նիւթերից ծողովումեն կաւ, մամուռ, մազ, բուրդ և այլն: Սովորաբար միայն մարին կամ էգ թռչունն է շինում բոյնը, իսկ ծիծեռնակների մէջ գիտէ բոյն շինել և էգն և արուն:

Բոլոր թռչունները միակերպ են ձագ հանում, այն է ձու են դնում և նոցա իւրեանց մարմնովը տաքացնելով ձագեր են հանում, բայց ձագերը երկու կերպ են դուրս է գալի ձուից: Մի կերպն այն է, որ ձագը՝ երբոր ձուից դուրս է գալի, բոլորովին մերկ է լինում, փետուրներ չէ ունենում, կոյր և թոյլ է լինում, այնքան ոյժ չէ ունենում, որ կարողանայ ման գալ կամ կանգնել, չէ կարում իւրեան կերակրել, այնպէս որ մայրն է նորան երկար ժամանակ կերակրում բոյնի

մէջ։ Այսպէս ձագեր են հանում ճնճղուկները, ծիծեռնակները, աղաւնիքը, ագռաւները, արծիւը, սարեկը, սոխակը, դեղձանիկը և այլն. Իսկ միւս կերպը այն է, որ ձագը՝ ձուից դուրս գալուն պէս, ուժեղ է լինում, ինքն իր պինդ կտցովը կոտրումէ ձուի կեղևը և բաց աչքերով է դուրս գալի նորանից, փետրաւորուած է լինում, ոտների վերայ պինդ կանգնումէ և շուտ շուտ վազումէ, իր կտցովը որսումէ մժեղներ, կրկտումէ և ինքն իւրեան կերակրումէ։ Բայց նորա հոգատար մայրը պահպանումէ նորան թշնամեաց ձեռքից և գիշատիչ թռչուններից մինչև այն ժամանակը, երբոր նորա թևերը բոլորովին դուրս են գալի և մեծանում են։ Այսպէս ձագ են հանում հաւերը, բադերը, սագը կռունկը, արագիլը և այլն։—

Թռչուններից ոմանք գեղեցիկ ձայն ունին, որպէս սոխակը, դեղձանիկը, ուստի և մարդիկը բռնումեն և պահպանումեն նոցա իւրեանց տանը վանդակի մէջ. բայց նոքա իւրեանց գերութիւնը ըստ մեծի մասին տխրութեամբ անցուցանելով յօժարութեամբ չեն երգում և երկար չեն ապրում։ Մի քանի թռչուն յայտնի են իւրեանց գեղեցկութեամբը, որպէս սիրամարգը, դրախտիկ թռչունը, քնարահաւը, փասիանը, թութակը, ոմանք էլ յայտնի են իւրեանց մեծութեամբը, զօրեղութեամբը և սրտոտութեամբը, օրինակ՝ ջայլամը, արծիւը, անգղը, և այլն։

ՍԱՐԵԱԿ

Սարեկին մէկը պըզտիկ ատենէն
Դեղձանիկի պէս կըսուլէր կասեն.
Անպէս որ նորա ձայնն որ լըսէիր՝
Ասես Դեղձանիկ է, Սարեակ չէ կասէիր։

Մէկը չըկար որ Սարեակը չըճանաչէր,
Կամ թէ նորա գովասանքները չասէր։
Օրհնեա՜լ Սարեակ, դրանից աւել ինչ կուզէս —
Բայց ո՞ւմ կասես.
Մեղք որ Սարեակն էլ մարդու պէս նախա՛նձ
Ունէր չափազանց։
Մի օր Սոխակի ձայնը կըլսէ,
Մի՛թէ Սոխակէն ես ստոր եմ կասէ.
Ձայնը կըձըգէ՝ կըսկըսէ երգել,
Թևերը շարժել, ելևէջք անել.
Բայց ո՞ւր Սոխակին անուշ դայլայլիկ,
Ո՞ւր այն եղանակ փափուկ գեղեցիկ.
Սարեկին երգն էր ճվճվանք ու կռռաչ,
Երբեմն էլ այծի ձագերու պապաչ։
Մէկ խօսքով,
Սարեկի քով
Մէ՛կ թռչուն չըմնաց,
Ամէն մէկը թռաւ՝ հեռու տեղ գընաց։
Ա՜խ Սարեակ Սարեակ, տեսա՞ր արածդ,
Տեսա՞ր ի՛նչ բերաւ գըլխուդ նախանձըդ։
Լաւ չէ՞ր չափդ իմանայիր,
Ու զգոյշ կենայիր,
Քան թէ մեծամտէիր,
Ու խայտառակուէիր։

ՍՈԽԱԿ.

Բոլոր Թռչուններից ամենաքաղցր և գեղեցիկ երգողը սոխակն է, որ միայն ամառն է գալի մեր կողմերը։ Նորա փետուրները մոխրագոյն են և շատ հասարակ, որով ամենևին

չէ կարելի գուշակել, թէ ո՛րպիսի ճոխ և գեղեցիկ տաղանդներ կան ծածկուած այդ փոքրիկ արարածի մէջ: Նա սիրումէ բոյն դնել ջրի մօտ թանձր թփերի մէջ, մանաւանդ վարդի և հաղարջի: Սոխակները երգումեն սովորաբար առաւօտեան վաղ՝ դեռ արևը չծագած և երեկոյեան. իսկ երբեմն և ողջ գիշերը, մանաւանդ երբ իւրեանց ճանապարհորդութիւնից վերադառնումեն:

Սոքա կերակրւումեն փոքրիկ միջատներով, բզէզներով և որդունքներով: Սոխակների բնակարանների համար վնասակար թշնամիները կատուներն են: Խեղճ թռչունները սովորաբար շատ բարձր չեն նստում թփի վերայ, և երգելու ժամանակը աչքերը փակում են, կարծես թէ իւրեանք իւրեանց երգելովը հրճուումեն և զմայլում, և այդ ժամանակը նոցա որսալը շատ հեշտ է: Օձերը նոյնպէս թշնամի են սոխակներին և հալածելով որսում են նոցա:

Սոխակը ճնճղուկին շատ նման է, միայն նորանից աւելի բարակ է, և սոխակի մարմինը աւելի գեղեցկակազմ է և ազնուաձև՝ քան թէ ճնճղուկինը:

ՍՈԽԱԿ ԵՒ ԴԵՂՁԱՆԻԿ

Դեղձանիկն ու Սոխակ
Ապրգէին մէկ տան պատուհանի տակ.
Դեղձանիկն երբոր երգել ըսկսէր,
Փոքրիկ տղան հօր առաջը կդիմէր,
Ու թռչունը նորան միշտ կըցուցանէր,
«Տես ի՜նչ գեղեցիկ կերգէ, հայր, կասէր:»
Հայրը երկու թռչուններն էլ կը բռնէ
Տղին կըտայ ու կասէ.

«Այս երկուսից ցոյց տուր, Հոգիս
Որի՞ն այնքան կը հաւանիս»։
Տղան իսկոյն գեղձանիկը ցոյց կըտայ,
Ու կասէ. «Հայր, այս է ահա.
Որքան տեսօք է ու սիրուն.
Նայէ մի լաւ փետուրներուն,
Ի՞նչ գեղեցիկ են ու հիանալի.
Նորա համար էլ ի՞նչ անուշ ձայն ունի»

Ի՞նչ է ուսուցանում մեզ այս առակը։

ՋԱՅԼԱՄՆ

Ջայլամները երամներով բնակւում են Աֆրիկայի աւազուտ անապատներումը և Հարաւային Ասիայումը։ Նորա մի սաժեն բարձրութիւն ունի և երկու կամ երեք փութ ծանրութիւն։ Ջայլամների պարանոցը շատ երկար է և գլուխը փոքր։ Բոլոր գլուխը, պարանոցի վերին մասը և փորը բոլորովին առանց փետուրների են. իսկ փառահեղ, երկայն և գեղեցիկ փետուրները արուների թևերի մէջ են գտնւում։ Չնայելով ջայլամի ահագին և ուժեղ թևերի վերայ՝ նորա թռչելու համար անյարմար են, որովհետև նոցա ներքին մասը շատ բարակ է և կակուղ։ Թէև ջայլամը չէ թռչում, բայց այնպէս արագ է վազում, որ նորա յետևից չէ կարող հասնել մինչև անգամ ամենալաւ ձին։

Հարկաւոր ժամանակը ջայլամը պաշտպանւում իւր անձը իւրեան թևերովը, կտուցովը և ոտների ճանկերովը։ Եթէ ջայլամը իւր թևովը շանը խփէ, կարող է այդ մի խփելովը շանը սպանել։ Ջայլամներին շատ հեշտութեամբ են ձեռնասուն անում, և նոցա պահպանումն առանձին չի-

նութիւնների մէջ, որ նոցա փետուրները չկտրուին կամ չճմլուին, որ շատ անգամ պատահում վայրենի ջայլամներին: Նոցա գեղեցիկ և երկայն փետուրները թանկ գնով ծախւում են և լինում են զարդարանք կանանց գլխարկների համար:

Ջայլամները աւազի մէջ բոյներ են փորում, և մի բանի էգ ջայլամ մի և նոյն բոյնի մէջ 40-ից մինչև 50 ձու են դնում, և նոցա վերայ փոփոխակի նստում են: Իւրաքանչիւր ձուն 24 հաւի ձուի չափ է, և մի ձուով կարող են կշտանալ չորս սոված մարդ: Ջայլամի ձագը, երբոր ձուից նոր դուրս է գալիս, մի հաւի չափ է լինում: Ջայլամի ձուերը համեղ են և անվարար, իսկ նոցա կճեպից նեգրաները զանազան ամաններ են շինում:

ԵՐԿԱԿԵՆՑԱՂՔ ԿԱՄ ՋՐԱՑԱՄԱՔԱՅԻՆՔ

Երկակենցաղ կոչւում են այն կենդանիքը, որոնք երկու կերպ կեանք ունին, այսինքն ապրում են և ջրում և ցամաքում. օրինակ՝ գորտը, օձը, կրիան, կոկորդիլոսը և այլն:

Երկակենցաղ կենդանիքը առաւելապէս նորանով են որոշւում կաթնակերներից և թռչուններից, որ ունին սառն արիւն, և այս պատճառաւ նոցա մարմինը միշտ սառն է: Նոցա ձկներից զանազանւում են նորանով, որ ծծում են օդը իւրեանց թոքերի միջնորդութեամբ: Շատ երկակենցաղք ունին ձայն, ինչպէս գորտերը, բայց միւսերը, զոր օրինակ, կանաչ խլէզները, ինչպէս երևում, ամենևին համր (անձայն) են:

Երկակենցաղքը զանազան տեսակ են, ոմանք ունին չորս ոտք, զոր օրինակ կրիաները, գորտերը և խլէզներ, բայց միւսերը ունին երկայն և բարակ մարմին առանց ոտների, կամ թէ առանց որևիցէ արտաքին անդամների, ինչպէս օձերը, որոնք

շարժումն՝ ամփոփելով իւրեանց մարմինը, և ապա դարձեալ պարզելով։ Մի քանի երկակենցաղք ունին ոսկրեղէն պատեան, որ պաշտպանում է նոցա, այլք եղջերանիւթ օձեր կամ թէ փոքրիկ փաշաններ, բայց սոցա մարմինն էլ մերկ է և պատած է խժային նիւթով, ինչպէս կանաչ գորտի մարմինը։ Նոցա մեծ մասը ժամանակ առ ժամանակ փոխում է իւր խորխը կամ մորթը, զոր օրինակ օձերը, և սորա իւրեանց բոյնի մէջ մնում են մինչև նոր մորթը ամրանում։ Մի քանի ջրացամաքայինք յանկարծ փոխում են իւրեանց գոյնը, զոր օրինակ այգու գորտը և զանազան խլէզներ, բայց մանաւանդ թէ քամելէոնը. այս պատճառով, անհաստատ և փոփոխամիտ մարդու համար ասում են, նա ճշմարիտ քամելէոն է։

Ջրացամաքայինների կերակուրը, մանաւանդ թէ կրիաների և օձերի սնունդը շատ բազմատեսակ է. ոմանք ապրում են միայն մի քանի տեսակ կենդանի ճճիներով։ Համարեա թէ բոլոր ջրացամաքայինքը կարող են շատ երկար անօթի մնալ. սալամանդրը կենդանին կարող է ապրել մի քանի ամիս, առանց կերակրի։ Կրիաների մասին յայտնի է, որ նոքա կէս տարի կարող են ամենևին անկերակուր մնալ։ Բոլոր երկակենցաղքը անցուցանում են ձմեռնային ամիսները թմրութեան մէջ։

Մի քանի ջրացամաքայինք, մանաւանդ օձերի տեսակից, ունին իւրեանց մէջ թոյն, որպէս պաշտպանողական հնար իւրեանց թշնամիների երեսից։

Համարեա՛ թէ բոլոր ջրացամաքայինքը դնում են ձուեր, բայց մի քանիքը, մանաւանդ թէ օձերի մէջ, չեն դուրս թողում իւրեանց ձուերը, մինչև նոցա մէջ եղած ձագերը չեն լինում կատարելապէս ձևակերպած։ Երկակենցաղքը աճում են շատ ծանր, բայց և շատերը նոցանից անչափ երկարակեաց են։ Յիշուած են օրինակներ, որ կրիաները ապրել են 125 տարի, և սորանից եզրափակում են, որ օձերը և կոկորդիլոսքը կարող

են լինել ավելի ևս երկայնակեաց։ Կոկորդիլոսը է ամենամեծ սողունը, որ բնակում է քաղցր ջրերի, այսինքն լճերի և գետերի մէջ. նա հասանում է մինչև 50 ոտնաչափ երկայնութեան. սպանում և կլանում՝ մարդ և գազան։ Էգ կոկորդիլոսը դնում է ջրի եզերքին ցամաքումը մինչև 100 ձու, հաւատա՛ թէ այնպէս մեծ են լինում, ինչպէս սագերի ձուերը։

Կրիայքը կէս մի ծովային են, և կէս մի ցամաքային։ Հնդկայականին եղեց ավելի երկար ու մեծ է, ունի 20 փութ ծանրութիւն, և իւր ոսկրեղէն քամակի վերայ կարող է տանել մինչև երեսուն փութ բեռն։ Ծովային կրիայն դնում է քանի մի հարիւր ձու ցամաքումը աւազի մէջ, և արեգական ջերմութեամբը գոյանումեն նորանից ձագեր։ Կրիայի միսը շատ համեղ է։

Օձերը կէս մի ապրումեն ջրի մէջ, և կէս մի հողի և ծառերի վերայ. նոքա լինումեն մինչև 40 և կամ՝ 50 ոտնաչափ երկայնութեամբ. օձերը կարող են կլանել այնպիսի կենդանիք, որ աւելի հաստ են քան թէ ինքեանք, որովհետև նոցա ծնօտները կարող են մեծապէս լայնանալ, բայց ծամել չեն կարող։

Երկակենցաղները ունին նոյնպէս սիրտ, թոք, ստամոքս, ուղեղ, երակներ և ջիղեր. բայց այդ ամէնը փոքր ինչ ուրիշ կերպով է կազմուած, քան թէ կաթնասուններին և թռչուններին։

ԳԻՒՂԱՑԻՆ ԵՒ ՕՁ

Օձը սողալով
Գիւղացուն եկաւ,
Եւ անուշ լեզուով

«Դըրացի, ասաւ,
Եկ ընկերանք ապրիլ եղբօր պէս.
Այլ պէտք չէ ինձնից զգուշութիւն անես,
Դու՛ն էլ կըտեսնես,
Որ փոխուել եմ ես,
Եւ ամենևին էլ այն օձը չեմ;
Գարնան սկզբից կաշիս փոխել եմ»

Բայց Գեղացին Օձի խօսքին չըհաւատաց,
Հաստ բիրն առաւ ձեռքը ու ասաց,
—Թէպէտ քու կաշիդ նոր է,
Բայց սիրտդ մի՛և նոյնն է։—

Եւ մէ՛կ խփելով փըռեց ի գետին
Խարդախ դըրացւոյն անկենդան մարմին։

ՄԱՆՈՒԿ ԵՒ ՕՁ

Մէկ Տըղայ մի Օձ բռնեց,
Օձաձուկ կարծէր, խաբուեցաւ.
Վախէն սրտի դողը բռնեց,
Երեսի գոյնը պատ դարձաւ։

Օձը նայեցաւ, նայեցաւ Տըղուն,
«Տօ, ո՞ւմ հետ ասաւ՝ կուզես խաղալ դուն.
Թէ չըխելօքանաս զէթ այսուհետև,
Դու չես ազատուիր միշտ այսպէս թեթև.
Այս անգամ քեզի կըներէ Աստուած,
Բայց ուրիշ անգամ աչքդ մի լաւ բաց.
Հանաք անել թէ կուզես՝ արա,
Միայն տես առաջ՝ դիմացինդ ո՞վ ա։»

ՁԿՈՒՆՔ

Ձկան մարմինը երկար է և առհասարակ կողքերից սեղմուած, այնպէս որ ջրի մէջ լողալու ժամանակը մենք միայն նորա մէջքն ենք տեսնում։ Ձկան մարմինը պատած է բոլորակ, կոշտ և փայլուն թեփով։ Ձկան մարմնու մէջ մենք նշմարում ենք գլուխ, մէջք և տուտն. բայց չենք տեսնում ոչ ձեռներ և ոչ ոտներ, փոխանակ տեսնում ենք թևձակներ, այսինքն լողալու թևեր։ Ձըկան եռանկիւնի գլխի վերայ մենք նշմարում ենք երկու աչք առանց կոպերի, և երկու քթի ծակեր, որ կոկորդի հետ չեն միանում, ինչպէս մարդունը, կամ միւս կենդանեացը, որոնք բերանով և քթով են շնչառում։ Ձկան իսկական ականջները բոլորովին չեն երևում, բայց նա ունի լսելեաց գործի, որ երևի թէ գլխի մէջ ծածկուած է, որովհետև ձուկը շատ լաւ է լսում։ Ձկան գլխի երկու կողմումը մենք երկու ալինգ խուփ ենք նշմարում, եթէ նոցանից մինը բարձրացնենք, այն ժամանակը նորա տակին կը նշմարենք կարմիր, մաշկեղէն թերթեր, որ նորա շունչ առնելու գործին է։ Մեր տեսած կենդանեաց ոչ մէկը այդպիսի գործի չունէր։ Ձկան բերանը համեմատելով իր մեծութեան հետ՝ առհասարակ մեծ է, և լայն է բացւում։ Իսկ բերանի մէջ մենք նշմարում ենք մի փոքրիկ լեզու և սուր սուր ատամներ, որոնք ծնօտների վերայ խառն ի խուռն շարուած են։ Թևձակները ձկան համար մեծ պաշտօն են կատարում, այնպէս որ նա նոցանով ջրումը կարողանում է շարժել, առաջ գնալ, զանազան կողմերի վերայ պտտուել, վերև բարձրանալ ու ջրի տակն անել. այդ լողական կենդանու համար թևձակները շատ գեղեցիկ և ճարտար շինած զէնքեր են։

Ձկան միսը ուտելու ժամանակը ՚ի հարկ է զուք տե-

սած կլինիք, որ նորա սպիտակ և համեղ մսի մէջ շատ ոսկորներ կան, իսկ գլխի մէջ մի քանի մեծ ոսկորներ, որոնք գագաթի ոսկորներն են, և որոց հետ միացած է ողնաշարը, որ գլխիցը սկսած մինչև տուտը ձգւում է: Ողնաշարիցը երկու կողմի վերայ ձգւում են կողքերի սուր ոսկորները, որոնց կտորները կարող են, եթէ ձկան միսը անզգուշութեամբ ուտէք, ձեր կոկորդի մէջը ցցուիլ և մեծ վնաս տալ:

Ձկան փորը հանելու և խատակելու ժամանակը նորանից սաւը և կարմիր արիւն է գնում: Ձուկը, ինչպէս և ամէն կենդանի, շնչառնում է նոյնպէս օդով, միայն թէ նա ջրումը գտնուած օդովն է շնչառնում: Այդ շնչառութիւնը այսպէս է կատարւում. ձուկը, լողալու ժամանակը, իւր բերանը բաց է անում և ջրով լցնում է, յետոյ այդ ջուրը մի առանձին ճեղքով իւր շնչառութեան համար ունեցած գործիքի մէջն է գնում, և այն տեղից կրկին դուրս է թափւում: Այն շունչ առնելու գործին—ձկների թոքերն են. նոցա մօտովն է անցնում արիւնը (ահա՛ թէ ինչո՛ւ համար են նոքա կարմիր), և այդ արիւնը՝ ջրի մէջը գտնուած օդի հետ միանալուց և մաքրուելուց յետոյ, կրկին յետ է գնում մարմինը սննդելու համար: Երբոր ձուկը ջրիցը հանում են, այն ժամանակը խեղճ ձուկը իւր բերանը լայն է բաց անում, և կարծես թէ կամենում է օդ ծծել, բայց նորան օդ չէ հարկաւոր, նա արդէն շատ օդ ունի, այլ ջուր է հարկաւոր, առանց որոյ իւր շնչառութեան համար ունեցած գործին շուտով չորանում է, ձկան շունչը կտրւում է և սատակում է:

Ձկան փորումը օդով լցուած մի փամփուշտ կայ, որով ձուկը կամ ջրի տակն է անում և կամ երեսը: Ձուկը, երբ կամենայ, այդ փամփուշտը կարող է օդով լցնել և կրկին օդը միջից դուրս հանել. երբ որ փամփուշտը օդով լցնում է, այն ժամանակը ձուկը ջրի երեսն է անում,

Երբեմն ձկան փորումը անթիւ, մինը միւսիցը կըպած, փոքրիկ ձուան են գտնում, այդ իւրաքանչիւր մի ձուիցը մի մի փոքրիկ ձկներ պիտի դուրս գան։ Ձուկը իւր ձուանը երբ որ ածում է, այն ժամանակը թքով մի քարի կամ խոտի կպցնում է, և յետոյ այնպէս թողնում է։ Այդ ձուանու մի մասը ուրիշ ձկները ուտում են, իսկ մի մասիցը, արեգակի ներգործութեամբ 5 կամ 6 օրումը փոքրիկ ձկներ են դուրս գալի։ Ձկները՝ մի որոշ ժամանակ տարու մէջ, անհամար բազմութեամբ կատարումեն հեռաւոր ճանապարհորդութիւն ծովերի մէջ։ Ձկները կերակրւում են որդերով, փոքրիկ ջրային կենդանիներով կամ ժժմակներով և փոքրիկ ձկներով. նոքա բոլոր հինգ ներքին զգայարանքներն էլ ունին։

Ձկների տափակ գլխումը փոքր ինչ խելք կայ, որով նոքա կարողանում են իւրեանց թշնամիներիցը ազատուիլ և իւրեանց համար կերակուր գտնել։ Նոքա ունին սիրտ և երակներ, որոց միջովը սառը և կարմիր արիւն է գնում, զըլխի և ողնաշարի մէջը ուղեղ կայ, ունին ջղեր, մկանունքներ և ստամոքս. բայց 'ի դորանից նոքա ունին փամփուշտներ ջրի երեսը և տակն անելու համար, թոքերի փոխանակ ունին շունչ առնելու գործիք, և այնպիսի ջղեր ունին, որով նոքա իւրեանց մարմնու անդամները շարժում են. բայց նոքա ձայնի գործի չ՚ունին, զի ձկները համր են։

ԿԱՐԱՊ ՁՈՒԿՆ ԵՒ ԽԵՑԳԵՏԻՆ

Երբ ընկերաց մէջ միութիւն չըկայ,
Ոչ երբէք նոցա գործն առաջ կերթայ.
Գործ էլ մի՛ կոչեր դու այն աշխատանք,
Այլ անտանելի վիշտ ու չարչարանք։

Մի օր Կարապը, Ձուկն ու Խեցգետին,
Չգիտեմ ինչպէս, իրարու գտին,—
Բեռնաբարձ մի սայլ տանիլ կուզէին.
Երեքը մէկէն լծուեցան սայլին.
Երեքն էլ արիւն քրտինք կըմրտնեն,
Սակայն չըշարժիր սայլը իր տեղէն։
«Զարմանք, կասէին նոքա մէկմէկու.
Չգիտեմք ինչո՞ւ
Այս սայլը առաջ տանիլ չիք հնար.
Ոչ բեռը ծանր է, ոչ ճանբէն դըժար։»
Հապա չե՞ս ասեր.
Կարապը վեր կըքաշէր,
Խեցգետինը յետ յետ,
Իսկ Ձուկը դէպ ի գետ։

ՄԻՋԱՏՔ

Շնչական թագաւորութեան վերջին երկու դասակարգը, այսինքն միջատները և որդունքը, նորանով են զանազանւում առաջիններից, որ սոցա մարմնի մէջ հոսումէ ոչ թէ կարմիր արիւն, այլ մի սպիտակագոյն հիւթ։ Անունս միջատ ստացել են նոքա այն պատճառով, որ նոցա գլուխը, կուրծքը և իրանը մինը միւսից բաժանուած են՝ որպէս թէ միջակտուր լինելով, միջատուելով. և աւելի շատերի մէջ միաւորուած են որպէս թէ թելով։ Այսպէս ահա բառս միջատ նշանակումէ միջահատած, միջակտուր կենդանի։ Բացի սորանից նոքա որոշւումեն իւրեանց շօշափական եղջիւրներով, որ նոցա ճակատի վերայ է, և ոտերի բազմութիւնով, որովհետև ոմանք նոցանից ունին 6 ոտն, այլք 12, 20 և մինչև անգամ 100 կամ 150։

Անթիւ անհամար տեսակ միջատներ կան աշխարհիս

վերայ, մէկը միւսից զանազան և գեղեցիկ։ Որքան գեղեցիկ թիթեռնիկներ կան, որ գրաւում են մարդուս ուշքը իւրեանց հրաշակերտ և գեղափայլ թևերովը։ Միջատները ապրում են կամ առանձին, կամ 'ի միասին ընկերութեամբ, որ օրինակ՝ մեղուները և մրջիւնները։

Զարմանալու արժանի է այն ճարտարութիւնը, որով մի քանի տեսակ միջատներ ճարում են իւրեանց կերակուրը. ո՞վ կարող է նայել սարդի վերայ, առանց հիանալու նորա ճարտարարուեստ նուրբ և մանր ոստայնի վերայ. Նոյնչափ զարմանալի է և այն ձագարաձև փոսը, որ ճանճի չափ մրջիմնառիւծը գիտէ շինել հոսանուտ աւազի մէջ. Նա ինքը թաղւում է աւազի մէջ և սպասում այլ մրջիմներին, որ անզգուշապէս մօտենալով նորա փոսին՝ ցած են գլորւում դէպ ի նա, հոսանուտ աւազի վերայով։ Մի ջոկ զարմանալու արժանի բան են այն շինուածքը, որ իւրեանց համար կաւից ու տղմից պատրաստում են սպիտակ մրջիւնները կամ Տերմիտքը, որ կենում են Ամերիկայի և Աֆրիկայի մէջ. այս շինուածքը կոնաձև են, և ըստ մեծի մասին վերջանում են շատ սուր ծայրերով. Ներսից ունին բարձր կամարներ և 10 ից մինչև 12 ոտնաչափ բարձրութիւն, և երբեմն այնքան բազմաթիւ մինը միւսի մօտ կառուցած են, որ հեռուից երևումեն որպէս գիւղեր։ Պատերի մէջ շինած են մեծ ու ընդարձակ գնացքներ, բայց այնպիսի ամուր կամարներով, որ կարող են դիմանալ մի քանի մարդու ծանրութեան։ Այնքան ևս արժանի է ուշադրութեան մեղուների բնակարանը, նոցա փեթակը իւր ճարտարակերտ բջիջներով, որոց կանոնապատշաճ շինութեանը չէ կարող նմանիլ ոչինչ մարդկեղէն ձեռակերտ։

Միջատներից ոմանք օգտաբեր են մարդուս, որպէս շերամը, մեղուն, որդան կարմիրը. իսկ ոմանք վնասաբեր, որպէս մորեխը, որ երբեմն մեծ վնաս է բերում դաշտերի ցանքերին և բոյսերին։

Միջատների մեծ մասը յառաջանում է ձուերից, որ էգ միջատները մի հրաշալի բնական ազդեցութեամբ դնում են յատկապէս այնպիսի տեղերում, որ ապագայ սերունդը աւելի հեշտ և ապահով կարողանան հայթայթել կերակուր իւրեանց համար։ Թեւաւոր միջատները ընդունում են զանազան կերպարանք, մինչև որ ստանում են նմանութիւն այն կենդանու հետ, որից յառաջացած են։ Այս բանը ասւում է միջատների կերպարանափոխութիւն։ Այն փոքր կենդանին, որ դուրս է սողում ձուից, ասւում է դիմակ։ Այսպէս, թրթուրները են դիմակներ, որ դուրս են գալի թիթեռներից։ Մորթապատ միջատները են մայիս ամսու բզէզների դիմակները. շատ որդունք համարւում են ճանճերի դիմակներ։ Այս դիմակները ոչինչ գործ չունին բաց ի անդադար ուտելուց, մի քանի անգամ փոխելով իւրեանց մորթը և ստանալով նոր մորթ. նոքա մի քանի ժամանակից յետոյ պատրաստում են իւրեանց համար պատեան, և սորա մէջ հանգստանում են առանց մի բան ուտելու. այս դրութեան մէջ ասւում են պաճուճապատանք։ Այն միջոցին, երբ որ այսպէս հանգստացած են, ինչպէս երևում է, ամենևին անզգայ և թմրած իրեանց պատենի մէջ, կատարւում է նոցա վերայ մի մեծ և զարմանալի փոփոխութիւն, որով նոքա դիմակներից դառնում են կատարեալ միջատներ, և սահմանեալ ժամանակից յետոյ, նոր միջատը դուրս է գալիս իւր պատենից։ Այս դրութեան մէջ չեն աճում նոքա աւելի, ուտում են փոքր, կամ թէ ոչինչ, և շատ անգամ ապրում են մի քանի ժամ միայն, յառաջուց կատարելով իւրեանց սահմանեալ պաշտօնը, որ է հոգ տանել իւրեանց սեռի պահպանութեան համար, այսինքն ձուեր ածել յառաջուց։

Մի քանի միջատք գործ են ածւում որպէս կերակուր, զոր օրինակ խոշոր մարախը, որ հազւագիւտ է և գտանւում է միայն Ասիայի մէջ և Ռուսաստանի քանի մի գաւառներում։

ՄԵՂՈՒ

Մեղրագործ մեղուների մեծութիւնը, կերպարանքը և գոյնը բաւական ծանօթ են ձեզ, բայց դժուար թէ ծանօթ լինի ձեզ նոցա արժանի պատմութեան կեանքն ու վարքը:

Մեղուները կազմումեն իւրեանց օթեվանը կամ դուրսը՝ գոգաւոր ծառերի և ժայռերի մէջ, կամ թէ մարդու ձեռքով յատկապէս նոցա համար շինած փեթակների մէջ: Ամենայն փեթակում լինումեն մինչև 20,000 կամ աւելի աշխատաւոր մեղուք, սոցանից գրեթէ 1600 է թուխս նըստող մեղուք, կամ որձամեղուք, որ մեծութեամբ գերազանց են բոլոր միւսներից և չունին խայթոց, իսկ մի հատն է մայր մեղու կամ թագուհի: Թագուհին է հասարակաց շարժող հոգին, որ բոլոր ընկերութիւնը չէն ու հաստատ է պահում. առանց նորան անկարելի է մեղուների ընկերութիւնը: Աշխատաւոր մեղուքը, որ աւելի փոքր են, քան թէ թագուհին, բոլոր ամառը անդադար աշխատութեան մէջ են:

Այս հրաշալի մեղրաճանճերը անհամար բոյսերի և ծառերի ծաղիկներից հաւաքումեն ծաղկափոշին, և ոտերի վերայ տանելով դէպի իւրեանց փեթակը, նախ և յառաջ թըրջումեն նորան մէկ հիւթով, որ ծորումէ իւրեանց բերանից և ապա լաւ շաղախելով որպէս փոխինդ, տալիս են միւս աշխատաւոր մեղուներին, որ ուտումեն նորան և իւրեանց աղիքների մէջ պատրաստումեն մոմ, որ և ապա նոցա յետակողմեան մարմնի վեց օղերիցը դուրս է ծորում: Այս մոմիցը պատրաստուումեն յետոյ մեղրի բլիթները կամ հացերը, որ բաղկանումեն կանոնաւոր վեցանկիւնի բջիջներից: Այն կարգը, գործունէութիւնը և հոգացողութիւնը որ ամեն մի աշխատաւոր մեղու ցուցանումէ իւր պաշտօնի մէջ, արժանի է ամենամեծ զարմանքի:

Վեցանկիւնի բջիջները շտեմարանք են կէս մի մեղր պահելու համար, և կէս մի բոյներ լինելու ձագերի կամ գալոց սերունդի համար: Նոցա մէջ թագուհին, բոլոր ամառուան միջոցումը, դնում է 30 մինչև 40 հազար ձու. նախ և յառաջ դնում է նա այն ձուերը, որոնցից յառաջանում են աշխատաւոր մեղուք, ապա այն ձուերը որոնցից պէտք է ծնանին որձամեղուքը, և վերջապէս, առանձին շինած բջիջների մէջ, դնում է ուրիշ 10 ձու, որոնցից գոյանում են թագուհիք:

Բայց ի՞նչպէս են մեղր շինում աշխատաւոր մեղուքը: Նոքա իւրեանց փոքրիկ կնճիթներով ծծում են ծաղիկների քաղցր հիւթը, կլանում են նորան և պատրաստում են ապա իւրեանց մեղրագործ ստամոքի մէջ. սա մի փոքր փամփուշտ է, որի մէջ հիւթը դառնում է մեղր, որ ապա դուրս են ձգում նոքա իւրեանց բերանից:

Եթէ մի փեթակի մէջ անչափ բազմանում են մեղուքը, և եթէ կան այն տեղ շատ թագուհիք, նոցանից մի մասը դուրս է գնում փեթակից: Այս փախստական մեղուքը հետևելով իւրեանց թագուհուն, կոնաձև շարուած դադարում են այն տեղ, ինչ տեղ նստում է թագուհին. Նոցա բռնում են մարդիկ և դնում են մի դատարկ փեթակի մէջ, ուր նոքա իսկոյն սկսում են տուն ու տեղ հաստատել իւրեանց համար: Եթէ շատ թագուհիք եկած են նոր փեթակի մէջ, աւելորդները սպանուած դուրս են ձգւում փեթակից. պատճառ որ մի թագուհի միայն կարող է հրամայել և կառավարել:

Մեղուները ձագ են տալի մայիս և յունիս ամիսների մէջ: Օգոստոսին, երբ որ ձագեր հանելու ժամանակը վերջանում է, աշխատաւոր մեղուքը յարձակւում են որձամեղուների վերայ և սատակեցնում են նոցա: Երբ որ սկսանում է ցուրտը աշնան վերջումը, մեղուքը, ինչպէս այլ միջատները, ընկնում են ձմեռնային քնի մէջ, եթէ տևողական է ցուրտը. միւսանգամ զարթնում են գալոց գարնան ժամանակին: Մեղուների ազգը շատ բազմաթիւ է. կան մինչև 200 տեսակներ:

ՇԵՐԱՄ

Գեղեցիկ ժապաւէնները. սիրուն բազմերանգ թաշկինակները, հիանալի ու շողշողուն հանդերձները շինուած են մետաքսից (ապրեշումից): Սակայն, ընչի՞ց է գոյանում մետաքսը, և կամ ո՞վ է շինում նորան: Մետաքսը շինում է շերամը (ապրեշումի որդը), որ մարդիկ պահպանում են այդ բանի համար մեծ խնամքով և հոգացողութեամբ: Շերամը գոյանում է գնդասեղի գլխի չափ մանր սերմից կամ ձուից, որ գարնան սկզբին, երբոր թթան ծառը սկսում է կանաչել, դընում են արևումը: Արեգակը իւր ջեռուցիչ ճառագայթներով տաքացնում է այդ ձուն, և նորանից գոյանում է մի փոքրիկ որդն, որ այնքան փոքր է լինում, որ կարողանում է մի գընդասեղի գլխի չափ ձուի մէջ պառկել:

Պառկելով վերջապէս ձանձրանում է որդը. նա ցանկանում է իւր նեղ խցեկից լոյս աշխարհ դուրս գալ: Սակայն ի՞նչպէս պիտի ճեղքէ այն պինդ կեղևը: Սորա համար բնութիւնը տուել է նորան երկու սուր ատամ, որով նա կրծում է իւր բանտի պատը: Երկար ժամանակ աշխատելուց յետոյ, վերջապէս ծակում է, և լոյս աշխարհ է դուրս գալիս: Ուրախութեամբ որդը պարզում է իւր մարմինը թթենու տերևի վերայ, և ծծում է անուշահոտ օդը: Ծանրատար աշխատանքից յետոյ՝ որդի ախորժակը բացւում է, և սորա համար նա արդէն բաւականացուցիչ միջոցներ ունի: Նորա գլխի վերայ կան երկար դուրս ընկած աչքեր, որով կարող է նա իւր կերակուրը տեսնել, և փորի վերայ ունի 16 ոտք, որով նա կարող է սողալ թթան նորափթիթ և նուրբ տերևների վերայ: Այս տերևը իրաւի նորա նախաճաշն է, և ճաշը և ընթրիքը. գիշեր ցերեկ նորա բանը ու գործը այնուհետև ուտել ու խմելն է: Վերջապէս որդը մինչև այն աստիճանի

է ուտում, այն աստիճանի է հասցնում, որ նորա կաշին նեղ է գալիս նորա վերայ, այն ժամանակը նա դադարում է ուտել խմելուց, և անշարժ մնում է, ուստի նիհարանում (լղարում) և կարծես թէ սատակելու է պատրաստւում: Այս միջոցին նորա վերևի կաշին ճեղքւում է և պատռւում է, և նա մի քանի անգամ շուռ ու մուռ գալով՝ հանում դէն է ձգում իւր հին շորը, որ նորա համար շատ նեղ էր: Եւ նորա փոխանակ հագնում մի նոր շոր, որ նորա հին շորի տակին արդէն պատրաստուած է լինում, և որ առաջինից աւելի սիրուն է և լայն:

Որդը հագնելով այս նոր հանդերձը, կրկին սկսում է անդադար ուտել թէ՛ գիշեր և թէ՛ ցերեկ՝ մինչև որ կաշին կրկին նեղանում է իւրեան համար. կրկին փոխում է նա և երրորդ ու չորրորդ անգամ, և իւրաքանչիւր անգամին նոր հանդերձ է հագնում, որ հնիցը աւելի պայծառ և լայն է լինում: Վեց կամ եօթը շաբաթից յետոյ փոքրիկ շերամը, որ գնդասեղի մեծութիւն ունեցող ձուից դուրս եկաւ, մի մատի չափ թրթուր է դառնում, որ թթան տերևիցը իւր մէջ իւր ապագայ աշխատանքի համար մի նիւթ է պատրաստել: Այս նիւթիցը կամ հիւթիցը պատրաստում է նա մի նուրբ և սպիտակ թել, և նորա մի ծայրը ծառի ճիւղքի վերայ պնդացնելով՝ սկսում է զարմանալի շարժումն անել. մանումն և պտոյտ գալով արձակում է իւր նրբին շրթունքիցը նուրբ թելեր, որ փաթաթում է իւր շուրջը այնպէս, ինչպէս որ մենք փաթաթում ենք թելի կծիկը, միայն այնու զանազանութեամբ, որ մենք կծիկը տակից ենք փաթաթում, խսկ թրթուրը վերայիցը, ու առաջ կծկում է նորա արտաքին մասը և յետոյ ներքին: Այս թրթուրը եօթն կամ ութ օր շարունակ աշխատում է առանց ամենևին իւր թելը կտրելու, և այդ թելիցը դեղին կամ սպիտակ գոյնով մի

հալի փոքրիկ ձուի չափ մի սիրուն կծիկ է ոլորում, որ աս-ւում է խոզակ կամ բոժոժ: Խոզակի արտաքին մասը բաղկացած է շատ բազմաթիւ պնդացած ու միմեանցից կպած թելերից. սակայն նորա տակի կամ միջի մնացած թելը շատ նուրբ է և կանոնաւոր և այնպէս երկարութիւն ունի, որ մանուկը պիտի մէկ քառորդ ժամ փաթ տայ, որ բոլոր թելը ետ տայ կամ արձակէ:

Խոզակի մէջ շերամը իւր համար մի փոքրիկ սենեակ է շինում և շատ աշխատելուց յետոյ՝ պառկում է նորա մէջ դադրած և անզօրացած: Մէկ շաբաթ ուտում էր նա անդադար, չորս անգամ փոխելով իւր հանդերձը, և ութ օր կծկում ու ոլորում էր իւր նուրբ թելը, բայց այժմ ժամանակ է հանգստանալու: Վերջին անգամը նա փոխում է իւր բանւորի հագուստը: Նա արդէն 16 ոտի հարկաւորութիւն չունի, որովհետև նա ուրիշ տեղ վազելու չէ և միջոց չունի, նորան հարկաւոր չէ աչք, որովհետև իւր սենեակը մութըն է, և ոչ մի բանի վերայ չէ կարող նայել, նորան էլ հարկաւոր չեն ատամները, որոնք այնքան տերևները կրծեցին, —և ահա սոքա բոլորը խաւոտ կաշու հետ պնդանում են՝ և դառնում են խոզակի պինդ մաշկ, որի մէջ գտնուած որդը մնում է անշարժ և կարծես թէ մեռած է: Խոզակի պինդ մաշկի տակին բոլորովին մի նոր բան է գոյանում. 14 օրից յետոյ՝ խոզակի մէջի պինդ մաշկը պատռում է և նորանից դուրս է գալի թիթեռը: Նորա գլխի վերայ երևում են երկու մեծ աչքեր, չորս թևեր, որով նա օդի մէջը թռչում է, իսկ վեց ոտները նորան հարկաւորում են ծաղիկների վերայ նստելու համար: Ամենայն կերպով երևում է, որ այս փոքրիկ միջատը նշանակուած է արեգական ճառագայթների և տաք օդի մէջ թըռչելու համար: Բայց նա ինչպէս պիտի կարողանայ դուրս գալ իւր բանտից, որի մէջ ինքն իւրեան բանտարկել է:

Նորա ոտները անկարող են հաղարաւոր թելերը քանդելու, առաջուայ ատամները չունի, որ կարողանայ կրծել։ Նուրբ լեզուակը հարկաւոր է միայն նորա համար, որ ծաղկանց բաժակի միջի հիւթը ծծէ։ Եւ տարակոյս չկայ որ նա իւր խաւար բնակի մէջ կ'ոչնչանար, եթէ Արարիչը նորան մի ուրիշ հնարք չէր տուել. Թրթուրը իւր սեպհական հիւթիցը պատրաստեց խոզակ, բայց նա ունի մի ուրիշ հիւթ, որոյ մի քանի կաթիլը բաւական է, որ թրթուրը նորանով խոզակի թելերը կտրատէ, և մի նոր դուռը բաց անէ և դուրս թռչի։

Մարդս գտել է հնարք օգուտ քաղելու շերամի աշխատանքիցը, ուստի միայն մի քանի թրթուրներին է թողում, որ դուրս գան իւրեանց խաւար բնակիցը, որովհետև բնակիցը դուրս գալու ժամանակը խոզակի թելերը կտրատելով նորա փչացնում են մետաքսը։ Մի քանի թրթուրներին թողնում են օրը դուրս գալու այն պատճառով՝ որ կրկին ծառերի ճիւղերի վերայ իւրեանց ձուները դնեն, որոնցից ժամանակին դարձեալ կարողանան գոյանալ օգտակար թրթուրներ։ Միւս խոզակների միջի որդերին՝ դեռ չը դուրս եկած, սատակցնում են տաք հնոցի կամ տաք ջրի մէջը անելով, յետոյ խոզակի նուրբ թելը արձակումեն, և ներկում են զանազան գոյներով, և հիւսում են գեղեցիկ մետաքսեղէններ, թաշկինակներ և ժապաւէններ։

Շերամը այնքան սիրուն չէ, որքան որ նորա ընկերակից թիթեռները. նորա թևերի գոյնը սիրուն ու բաց թուխ է, սակայն միմիայն շերամն է, որի վերայ մարդս այնքան մեծ աշխատանքով հոգացողութիւն ունի։ Նորա համար շինում է առանձին տներ, սենեակները տաքացնում է, տնկում է նորա սիրական ծառերը, պատրաստում է նորա կերակուրը, և շատ անգամ էլ նորա համար վտանգի մէջ է դնում իւր սեփհական կեանքը։

ՈՐԴՈՒՆՔ

Թէպէտ որդունքն ևս ունին նոյնպէս սպիտակագոյն և սառն արիւն, ինչպէս միջատքը, բայց չունին նոքա շօշափական եղջիւրներ և ոչ յօդաւոր գործարաններ շարժողութեան համար։ Նոցա մարմինը, ըստ մեծի մասին, փափուկ է, անոսկր է, խմային և մերկ, այսինքն առանց մազերի, կեղևի և խայթոցի։ Մի քանի որդունք ապրումեն պինդ, ոսկրանման բնակարանների մէջ, որ ամրացած են նոցա վերայ, որպէս կողինջները և սատրէպյքը։ Փոխանակ շօշափական եղջիւրների շատ որդունք ունին գլխի վերայ ունչիկներ ասած բաները, որ մի քանիներինը բաւական երկար է։ Մի քանի որդունք ունին այնպիսի պարզ կազմուածք, որ չէ կարելի նշմարել նոցա մէջ զանազան անդամներ։

Որդունքները մեծութեան կողմանէ շատ զանազան են. կան այնպիսի խեցմորթք, որոց ծանրութիւնը հասանումէ մինչև 15 փութ, և սորա հակառակ կան այնպիսի մանր որդունք, որ կարելի է միայն որոշել նոցա խոշորացուցի օգնութիւնով։ Որդունքի մեծ մասը բնակումէ ջրի մէջ, միւսերը ապրումեն միայն հողի տակին, մի քանիսն էլ ուրիշ շնչաւորների մէջ և մարդու աղիքներումը, զոր օրինակ փորաճճիքը։ Թէպէտ մի քանի տեսակ որդունք գտնուումեն մեծ բազմութիւնով միմեանց մօտ, ինչպէս սատրէպյքը, բայց նոքա չեն ապրում ընկերական միաբանութեամբ։

Որդունքը ճարումեն իւրեանց համար կերակուր զանազան բոյսերից և մանր կենդանիներից. ոմանք ուտումեն նաև հող և կիր։ Շատերը նոցա մէջ, մանաւանդ կողինջները և տզրուկները, կարող են երկար ժամանակ անկերակուր մնալ։ Մի քանիքը նոցանից գնումեն ձուեր, միւսերը ծնանումեն կենդանի ձագեր։ Նշանի է ուշադրութեան քանի մի որ-

դունքի կենդանութեան դիմացկոտութիւնը և վերածնելութեան զօրութիւնը. պատճառ որ կարելի է նոցա երկու կտոր առնել, բայց նոքա դորանից մեռանում չեն, այլ կարճ միջոցում բաց կտրած անդամները միանգամ աճում են նոցա վերայ, ինչպէս որ բուսանում են մարդու մազերը կամ եղունգները։

Խեցեմորթերի մէջ շատերը պիտանի են ուտելու և բաղկացնում են նաւորդների և ծովեզերեայ բնակիչների գլխաւոր կերակուրը։ Աւազածծին տալիս է մի այնպիսի հիւթ, որից կարելի է թանաք պատրաստել։ Շատ տեսակ խեցեմորթեր պարունակում են իրենց մէջ թանգագին մարգարիտներ և տալիս են պատուական սադափ, որից շինում են այլ և այլ անօթք զարդարանքի համար։ Ապունգը բնակարան է մի տեսակ որդան, որ ասւում է Պօլիպ։ Ծովային որդունքների խեցեմորթիքը եթէ այրենք՝ կստանանք կիր։

ՕԴ.

Բոլոր երկիրս պատած է մի նուրբ և թափանցիկ հեղանիւթով, որի մէջ աճում են բուսականքը, ապրում են մարդիկ և անասունք, և թռչունքը իրենց կամքին թափառում են թռչում են այնպէս՝ ինչպէս ձկունքը լող են տալիս ջրի մէջ։ Այս հեղանիւթին ասում ենք օդ։ Օդը անչափ թափանցիկ է, և այդ պատճառով պարզ օդը անտեսանելի է։ Բայց նա այդու ամենայնիւ մարմին է, որ մենք կարող ենք լսել և զգալ։ Երբ որ օդը սկսում է շարժուիլ սաստկապէս, շատ զգալի կերպով իմացւում է նորա մարմին լինելը։ Օդը՝ երկրի վերայ ապրող արարածների պահպանութեան համար՝ անչափ հարկաւոր է. առանց նորան ոչինչ բուսական կարող չէ աճել,

ոչինչ կենդանի շունչ առնուլ և ապրել. պատճառ որ նա թոքերի կամ թէ այլ շնչառական գործարանների միջնորդութեամբ ներս է մտնում արիւնի մէջ և հովացնում է նորան։ Առանց օդի չէ կարող վառուիլ կրակը։

Օդը տարածուած է ամենայն տեղ 8 կամ 10 մղոն բարձրութեամբ, ներս է մտնում ամէն մարմինների ամենանուրբ ծակերի մէջ և լցնում է նոցա ամենափոքր միջոցները։ Որքան մօտ է նա երկրին, այնքան աւելի թանձր է, և որքան հեռի է կամ բարձր է նորանից, այնքան աւելի անօսր է նա։ Մի մղոն բարձրութեան մէջ, օդը այնքան է անօսրանում, որ մարդ չէ կարող այնտեղ ապրել և թռչունները չեն կարող այնտեղ թռչել։

Ձմեռուայ ժամանակը օդը սառն է և թանձր, ամառուայ ժամանակը օդը տաք է և նօսր։ Տաք օդը սառը օդիցը թեթև է և վերև է բարձրանում. եթէ սաստիկ տաք օդով մի մեծ գունդ լցնենք, այն ժամանակը գունդը սառը օդի մէջ կարող է բարձրանալ։ Այս հիման վերայ է, որ շինումեն օդապարիկներ, և մարդիկ նոցանով բարձրանումեն երկինքը։

Եթէ մեր սենեակի միջի օդը անյայտանայ՝ չքանայ, այն ժամանակը մենք կըզգանք, որ օդ չկայ։ Օդը բոլոր կենդանեաց և ձկների շնչառութեան համար հարկաւոր է, թէպէտ այս վերջինները ջրի մէջն են բնակում։ Եթէ որ մի ջրով լիքը ամանի մէջ մի ձուկը գձենք և ամանը այնպէս ծածկենք, որ օդի հետ հաղորդակցութիւն չունենայ, այն ժամանակը ձուկը կը սատկի, թէպէտ և ամանի մէջ բաւական ջուր լինի։ Դուք տեսած կլինիք, որ ջուրը եփ գալու ժամանակը նորա միջից անդադար փամփուշտներ են դուրս գալի. այդ ջրի միջի օդն է։

Եթէ այդ ջրի մէջը, որ մի լաւ եփ գալուց յետոյ

սառել է, մի ձուկը գձենք, նա կը սատակի, որովհետև եփուած ջրի մէջ օդ չկայ։ Խլուրդը իւր բնի մէջ և որդն էլ գետնի տակին դարձեալ օդ են ծծում։

Մարդիկը ամեն տեղ էլ օդ են գտել, թէ բարձր լեռների վերայ և թէ խորը այրերի մէջ։ Սորանից մենք կարող ենք հետևեցուցանել, որ օդը ծովի պէս երկրիս չորս կողմը պատումէ, և այս օդային ծովի յատակումը մենք այնպէս ենք ման գալի, ինչպէս որ ձկները ջրի մէջ։ Օդը մինչև անգամ ջրի և մասամբ էլ հողի մէջն է մտնում։

Աստըծուն փառաբանութիւն տանք, որ առատութեամբ երկրիս չորս կողմը մի այնպիսի թանկագին տարրով պատել է, որ եթէ այդ տարրը կամ օդը չը լինէր, մենք աւելի շուտով կը մեռնէինք և կը ոչնչանայինք, քան թէ առանց հացի ու ջրի։

ՋՈՒՐ

Ջուրն էլ այնքան հարկաւոր է և պիտանի, ինչպէս օդը։ Առանց ջրի կարող չեն բուսականքը աճել, ոչ մարդիկ և ոչ անասունք իւրեանց ծարաւը հանգուցանել։ Եւ քանի՛ քանի յարմարութիւններից պիտոյ է զուրկ լինէր մարդս առանց ջրի։ Նա չէր կարող մաքուր պահել իւր մարմինը, ոչ եփել իւր կերակուրը. ջուրը շարժումէ նորա աղօրիքը, նորա միւս մեքենայքը։ Ջրի վերայ լող տալով շրջումեն նորա նաւերը, հաղորդւումեն միմեանց հետ հեռաւոր աշխարհներ և փոխադարձաբար տալիս են միմեանց գլթառատ բնութեան բերքերը և տուրքերը։ Ջուրը զօրաւոր թշնամին է կրակի, ուստի և հրդեհները ջրով են շիջուցանում, թէ և ջուրը երբեմն իւր յորդութեան ժամանակը վնասներ է պատճառում, բայց այս վնասը շատ փոքր է, համեմատաբար այն բազմատեսակ օգուտներին, որ նա տալիս է մարդուն։

Ջուրը սովորաբար խառն է լինում ուրիշ բաների հետ, և շատ սակաւ է գտնւում ամենևին մաքուր։ Մաքուր ջուրը պէտք է լինի շատ պարզ, անգոյն, անհոտ և առանց համի։

Ջուրը լինումէ անձրևային, աղբիւրային, ծովային և ճահճային։ Աւելի թեթև և մաքուրը անձրևի ջուրն է։ Ջուրը հեղուկ մարմին է, բայց միշտ հեղուկ դրութեան մէջ չէ մնում․ ցրտից ջուրը սառոյց է դառնում, իսկ տա-քութենից շոգի։

Ջուրը շոգի դառնալով անդադար բարձրանումէ երկ-րից դէպ ի երկինք․ վերին օդի մէջ այս շոգիքը ստանումեն ամպերի կերպարանք, և այս ամպերը հողմից այս կողմ ու-այն կողմ վարուելով և բոլոր աշխարհների վերայ տարածու-ելով՝ դարձեալ ցած են իջանում երկրի վերայ որպէս ցօղ, անձրև և ձիւն։ Այսպիսի կերպով ամպերից դուրս հոսած ջուրը ներս է մտնում երկրի ծոցի մէջ, պտղաբեր է շինում նորան, և առիթ է տալիս նոյնպէս աղբիւրների գոյանալուն։ Այս բնագիր կարգադրութեամբ անձրևի ջու րը թափւումէ և ամենաբարձր սարերի կատարների վերայ, թափանցումէ նոցա ճեղքերի և ծակերի մէջ, իր բնական ծանրութենով իջա-նումէ դէպ ի խորքը, և այնտեղից աղբիւրի պէս դուրս է բղ-խում երկրից։ Որովհետև ջրի մէջ գտնումենք միշտ հողային և այլ տեսակ մասներ, որոնք յօժարութեամբ խառնւումեն նորա հետ, այս պատճառով աղբիւրի ջուրը երբէք մաքուր չէ կարող լինիլ բոլորովին օտար խառնուրդներից․ ուստի հա-ղորդակցելով երկաթային մասների հետ, ստանումէ նա թթու համ, աղերի հետ՝ աղի համ, և առնումէ հանքային ջուր։ Հանքային ջրերը շատ տեղ գործ են դրւում մարդուս ա-ռողջութեան համար։ Ծովի ջուրը առաւել ծանր է և այդ պատճառով կարող է տանել իւր վերայ ծանր բեռնաւորած նաւերը։

Ջուրը ճանապարհորդելով երկրի միջին՝ շատ անգամ զուգաւորւումէ ջերմացած մարմինների հետ, և ջերմանումէ ինքն ևս. սորանից յառաջանումեն տաք և ջերմ աղբիւրներ։

ՋՐՎԷԺ ԵՒ ԱՌՈՒԱԿ

Լեռան տակէն մէկ աղբիւրիկ կըլվազէր,
Բայց ջուրն այնքան նուաղ էր,
Որ և անցնող դարձողաց հազի՛ւ կերեւար.
Միայն թէ հանքային էր ու շատ առողջարար։

Աղբիւրի մօտի բարձր ժայռերէն
Փրփրած կատաղի մէկ Ջրվէժ կիջնէր.
Նա հրպարտ հրպարտ գոռմամբ ահագին
Ասաւ Առուակին.
«Տես ի՛նչ կասեմ քեզ.
Դուն խեղճ ջըրիկ ես,
Ուրեմն ինչո՞ւ այդքան
Քեզ հիւրեր կգան.
Ինձի թէ գան՝ իրաւ որ զարմանք չէ.
Հիանալի տեսք մի ունիմ աննըման.
Ասա տեսնեմ, քու յատկութիւնըդ ի՞նչ է,
Ինչո՞ւ մարդիկ միշտ գունդագունդ քեզ կգան։»

Առուակն ասաւ հանդարտ գնալով,
Հեզիկ ու քաղցըր ձայնով.
—Գիտե՞ս ինչու.
Բըժըշկուելու։—

ԱՄՊ ԱՆՁՐԵՒ ԵՒ ՁԻՒՆ

Մենք արդէն գիտենք, որ ջուրը տաքութեան ներգործութեամբ իւր վիճակը և ձևը փոխում է. սառոյցը հեղուկ է դառնում, իսկ հեղուկը գոլորշի։ Նոյնպէս գիտեմք փորձով՝ որ շատ տաքութիւն չէ հարկաւոր, որ ջուրը գոլորշի դառնայ։ Արեգակը անդադար տաքացնելով երկրիս ջրերի մակերևոյթները գոյացնում է միշտ գոլորշիք, որ աւելի նօսր և թեթև լինելով օդից բարձրանում են երկինքը և կոչւում են ամպ։ Երբոր օդի մէջ խաղացող ամպերի վերայ մի սառը քամի է փչում, այն ժամանակ գոլորշիքը կամ ամպերը սառնանալով թանձրանում են, մանր կաթիլներ են դառնում, և այդ մանր կաթիլները դարձեալ միանում են ու խոշոր կաթիլներ դառնալով թափւում են երկնքից գետնի վերայ, որ կոչումենք անձրև։

Ամպերը զանազան բարձրութեան վերայ կարող են լինիլ։ Ամենաբարձր ամպերը, որոնք երկրիցս եօթն կամ ութ վերստ հեռաւորութիւն ունին, թեթև են երևում և արծաթի գոյն ունին։ Այդպիսի ամպերը երկար ժամանակ են մնում մթնոլորտի կամ օդի մէջ առանց անձրև դառնալու. և առհասարակ նկատած է, որ եթէ սպիտակ և արծաթափայլ ամպեր են երևում, նշանակում է թէ լաւ եղանակ պէտք է լինի։ Օդի մէջ երբոր շատ գոլորշիք են ժողովւում, այն ժամանակ ամպերը ծանրանում են և ցած են գալիս, և քամին որ կողմի վերայ որ փչում է, այն կողմն են գնում. շատ հասկանալի է, որ երբոր այդպիսի ամպեր երևան, նշանակում է թէ անձրև պէտք է գայ

Ամէն երկրում մի չափով չէ գալիս անձրևը, մի տեղ շատ է գալիս, մի տեղ քիչ, նայելով երկրի դրութեանը և ծովերի մերձաւորութեանը կամ հեռաւորութեանը։ Անձրևն

էլ դարձեալ միակերպ չէ գալի, երբեմն յորդ և առատ հեղեղի նման է գալի, երբեմն բարակ: Շատ տեղ տարուան մեծ մասը անձրևային օրեր են լինում: Բայց այնպիսի տաք և անպտուղ անապատ տեղեր կան, որոնք ծովից և մեծ մեծ գետերից հեռու են գտնւում, և որտեղ որ երբէք անձրև չէ գալի: Այդպիսի տեղերումը բոյսերը չորանում են, երկիրը ցամաքում է և պատառ պատառ է լինում, Թռչունները և գազանները հեռանում են կամ սատակում: Այդպիսի տեղերը գտնւում են միջին Ափրիկայումը և Ասիայի մի քանի երկիրներումը:

Այնպիսի երկիրներ էլ կան, որտեղ մի քանի ամիս շարունակ անձրև է գալի, և յետոյ մի քանի ամիս շարունակ բոլորովին մի կաթիլ անձրև չէ գալի: Այդպիսի անձրևներին ասում են պարբերական կամ շրջանաւոր անձրևներ, որոց գալը պարբերական քամիներից է կախուած. որոնք մի քանի ամիս մի կողմի վերայ են փչում, և ջրի գոլորշիքը իւրեանց հետ բերում են. և յետոյ մի քանի ամիս ուրիշ կողմի վերայ են փչում, և ջրի գոլորշիքը այդ տեղից հեռացնում են և ուրիշ երկիր են տանում:

Անձրևի փոխանակ ձմեռը ձիւն է գալի: Ձիւնը գալիս է միայն սառն և բարեխառն գօտիներումը. իսկ տաք երկիրներումը ձիւն չէ գալի: Ձիւնը գոյանում է այսպէս: Երբոր գոլորշին մանր կաթիլներ կամ հատիկներ է դառնում, և այդ մանր կաթիլները իրար հետ միանալուց յառաջ սկսում են սառչել, այն ժամանակը դառնում են նոքա ձիւն: Երբ եղանակը շատ ցուրտ չէ, ձիւնի հատիկները մեծ մեծ են լինում. իսկ եթէ շատ ցուրտ է եղանակը՝ մանր են լինում: Ամէն տեղ ձիւնը միակերպ չէ գալի: Հիւսիսային կողմերումը շատ ձիւն է գալի և մնում է գետնի վերայ եօթն կամ

ութ ամիս, իսկ մեր կողմերումը սակաւ է գալիս և մնում է միայն երկու կամ երեք ամիս։

Պատմեցէք տեսնեմ ինչպէս է գոյանում անձրեւը եւ ձիւնը։ Ամպն ի՞նչ է։

ՑՕՂ, ԵՂԵԱՄՆ ԵՒ ԿԱՐԿՈՒՏ

Գիշերը երբոր արեւը մայր է մտնում, այն ժամանակը երկրի մակերեւոյթը՝ որ ցերեկը տաքացել էր, սկսում է սառչել, որովհետեւ գիշերը երկրի մակերեւոյթի տաքութիւնը օդի մէջն է գնում։

Երբ որ երկիրը սկսում է օդիցը աւելի ցրտել, այն ժամանակը երկրիս մակերեւոյթի վերայ սկսում է կաթիլ կաթիլ ժողովել այն աննշմարելի ջրային գոլորշին, որ մինչեւ այդ ժամանակը օդի մէջն էր. նոյն իսկ կերպով, երբոր մի սառը բաժակ մի տաք սենեակի մէջ բերենք, կը տեսնենք, որ այդ սառը բաժակի եզերքին կախուն ջրի կաթիլներ ժողովել։ Այդ կաթիլները, որոնք ցօղ կամ շաղ են կոչւում, սովորաբար խոտերի և ծառերի վերայ են լինում առաւօտեայ ժամանակը, երբ որ երկիրը աւելի է սառչում։

Երբոր արեգակը ծագում է, այն ժամանակը այդ ցօղ կամ շաղ կոչուած կաթիլները փայլում շողշողումեն, և բաւական երկար ժամանակ մնալուց յետոյ չորանում ցամաքումեն, այսինքն կրկին գոլորշի են դառնում։

Երաշտութեան ժամանակը, երբոր երկիրը ծարաւի է և անձրեւի կարօտութիւն ունի, ցօղը բաւականի զովութիւն է տալիս այն բոյսերին, որոնք ծարաւի էին և նամութեան կարօտ։

Աշնան ժամանակը շատ անգամ ցօղը սառչում է գետնի երեսին, և երբոր մենք առաւօտեան վաղ զարթնումենք, տեսնումենք որ գետինը, խոտերը, տերեւները և տան կտուր-

ները սպիտակել են. այդ եղեամն է։ Ուրեմն եղեամն ոչ այլ ինչ է, եթէ սառած ցօղ կամ շաղ։ Բայց երբոր արեգակը դուրս է գալիս և բաւական բարձրանումէ, այն ժամանակը եղեամը շուտով ցօղ է դառնում, իսկ ցօղն էլ գոլորշի է դառնում։

Եթէ որ անձրևի կաթիլները ամպերից աւելի սառը օդի միջով են անցկենում և գետնի վրայ թափւում, այն ժամանակը այդ կաթիլները արդէն ճանապարհին սառչումեն և պինդ սառուցի կտոր են դառնում, որ կոչւումէ կարկուտ. ուրեմն կարկուտը ոչ այլ ինչ է, եթէ սառած անձրև։ Երբեմն կարկուտը շատ խոշոր է լինում և մինչև անգամ ամառուան տաք ժամանակն էլ է գալիս, և յանկարծ օդը սառցնումէ։ Հարաւային Ամերիկայումը երբեմն ձուի մեծութեամբ կարկուտ է գալի, և կոտրում է թռչուններին և գազաններին։

ԱՌՈՒԱԿ

Շատ անգամ արդէն ես լսել եմ կարկաչուն առուակների ձայնը, բայց ոչ ոք ինձ դեռ ևս չէ ասել, թէ ի՞նչ են նոքա կարկաչում։ Ահա մէկ վճիտ աղբիւր, որ բղխում է մեծ քարի տակիցը. կ՚նստեմ նորա մօտ՝ ականջ կ՚դնեմ, թէ ի՞նչ է նա խօսում։ Անթիւ փոքրիկ ալիքները միմեանց առաջ վազելով և խոխոջելով անցնում են քարերի և աւազի միջով, բարձրացնելով և բոլորելով նորա ճերմակ հատիկները։ «Ասեցէ՛ք դուք փոքրիկ և զուարթ ալիքներ, պատմեցէ՛ք ինձ, ինչո՞ւ դուք այդպէս շտապում էք, ո՞րտեղից և ո՞ւր էք վազում, ի՞նչու այդպէս խառնուած դրդումէք միմեանց»։—«Ո՜հ, քչքչացին ալիքները, մենք շատ ենք և շատ շատ ենք այնտեղ սարի մէջ. և այնքան շատ ենք, որ մեր թիւը չկայ. մենք ամենքս ուզում ենք դուրս գալ Աստու-

ծոյ լոյս աշխարհը, բայց դուռը նեղ է, ահա ինչ պատճառաւ մենք այսպէս դրդում ենք միմեանց, ինչպէս աշակերտները՝ երբոր ուսուցիչը յայտնում է նոցա թէ դասը աւարտեցաւ:»

Ո՞ւր էիք դուք մինչև ցայժմ և ի՞նչ էիք անում այնտեղ, նստած չէի՞ք դուք արդեօք սարի մէջ այն օրուանից, երբ Նոյեան աղաւնին բերաւ նորա համար ձիթենու ճիւղը իբրև նշան, թէ ջրերը նորից մտել են գետնի մէջ:

Ոհ՛. ո՛չ, ո՛չ, քչքչացին ալիքները միմեանց առաջ վազելով, և ամէն մէկը նոցանից շտապում էր պատմել իւր պատմութիւնը, որ ես չկարողացայ հասկանալ ամենևին նոցա խօսքերը: Ես կռացայ դէպի աղբիւրը, առայ մէկ բուռը խտակ ցուրտ ջուր, և բաց թողնելով նորան մատներիս միջովը կաթիլ կաթիլ՝ լսում էի նոցա ամէն մէկի պատմութիւնը: Ի՛նչպիսի գեղեցիկ պատմութիւններ պատմեցին նոքա ինձ:

«Մենք ձիւն էինք անցեալ ձմեռը, ասացին ինձ երկու կաթիլները, և այնտեղ սարի վերայ ուրախ ուրախ փայլում էինք արեգակի տակ, մինչև որ նա գարնանը հալեց մեզ: Մենք երկու կարկուտ էինք, քչքչացին միւս կաթիլները, և ո՜հ մեղանչեցինք, գետին գլորեցինք ծանր հասկը: Մենք երկու կաթիլ ցօղ էինք և ջրեցինք ծարաւ մանուշակը, ասացին երկու նոր կաթիլները: Մենք տանում էինք նաւերը ծովի վերայ, մենք զովացրինք ծարաւին և ազատեցինք մահից նորա կեանքը, պտըտում էինք ջրաղացի անիւը, մեզ փրփրացնում էր շոգենաւը, մենք քաղցր ջուր էինք բալի միջին, և մենք համով գինի էինք, մենք դեղ էինք, մենք թոյն էինք, մենք կաթըն էինք, ձայն հանեցին մէկը միւսի ետևից պարզ կաթիլները, գլորուելով ինչպէս մարգարիտներ իմ մատներիցս»:

Մէկ պարզ կաթիլ կախ մնաց իմ մատիս վերայ. «մէկ ժամանակ ես արտասունք էի՝ հեծեծեց նա, ես քրտնքի կա-

թիլ եմ, ասաց նորա ետեւից մինը՝ վայր ընկնելով գետնի վերայ, իսկ ես արդէն քո սրտումն էի, ձայն հանեց երկրորդը, եւ արիւնի տաք կաթիլ էի, բայց յետոյ երբ դու արտաշնչեցիր, ես դուրս թռայ իբրեւ շոգի, եւ գնացի ամպերի մօտ»։

Ես տեսայ, որ այս պատմութիւններին վերջ չի լինիլ, կրկին թափեցի գետի մէջ մնացած կաթիլները, չը լսելով նոցա բարբաջմունքը։ Ես ցանկացայ ամաչացնել ինքնագով առուակին, եւ ասացի նորան. «աւելի լաւ կ՚լինի որ պատմես, թէ ի՞նչ բան ես տեսել դու սարի մէջ»։ Ի՞նչ նոր բան պիտի լինի այնտեղ, մտածում էի ես իմ մէջս, քարերը վայր են ընկած անշարժ աշխարհի ստեղծագործութիւնից, եւ վայր ընկած կմնան այնտեղ յաւիտեանս, եթէ միայն մարդ չփորէ չհանէ նոցա, եւ չշինէ նոցանից տներ եւ զանազան շինութիւններ։

Բայց ինչպէս ես զարմացայ, երբոր առուակը սկսեց ինձ պատմել հրաշալի եւ զարմանալի բաներ։

«Ամէն մէկ կաթիլը, ասում էր նա, դառնալով անձրեւ կամ ձիւն, կարկուտ կամ ցօղ թափանցում գետնի մէջ եւ աշխատում մշակում է այնտեղ բոլոր ուժովը, ձեր հանքահաններից աւելի լաւ. բացում է իւր համար ամենազարմանալի ճանապարհներ եւ անցքեր։ Եթէ քեզ երեխայութեան ժամանակ պատմութիւններ են պատմել գետնի տակի քաջերի եւ ոգիների վերայ, որոնք իբրեւ թէ բնակում են սարերի միջում եւ պահպանում են այնտեղ հանքերը, եռանդով գիշեր եւ ցերեկ աշխատելով նոցա համար, գիտացի՛ր որ այն ոգիքը եւ քաջերը մենք ենք, մենք ջրի փոքրիկ կաթիլներս»։

«Մենք քեզ երեւում ենք փոքր եւ նուաղ, բայց դու տեսնում ես մենք ինչ շատ ենք, եւ անշուշտ լսած կլինիս, որ կաթիլը կաթիլի ետեւից վայր ընկնելով՝ պինդ քարն էլ է ծակում։ Մաղելով սարերի քարերի եւ ժայռերի միջով, ուր

մենք մեզ համար ճանապարհ ենք բացել, ամեն մէկը մեզանից տանում է իւր հետ այս կամ միւս տեսակ քարերի մասը, որ քո աչքերիդ համար աննկատելի է։ Շուտով ծանըր բեռը փոքրիկ կաթիլի ուժին յարմար չէ լինում, և նա թողում է իւր քարի կամ հանքի կտորը մի առանձին տեղ։ Այսպէս մենք շինում ենք կրից և գաճից փայլուն գեղեցիկ բիւրեղները։ Այսպէս և բերում ենք մեզ հետ կամ կարմիր կտորը երկաթի նիւթի, կամ կանաչ և կապոյտ կտորը պղնձի կապուտակի և ներկում ենք նոցանով ուրիշ քարեր։»

«Այնպիսի ժամանակ է լինում, որ ջրի կաթիլները հասնում են սարերի մէջ մինչև մեծամեծ այրերին։ Ա՛հ, այս այրն էլ մենք ենք շինել։ Նա առաջ բոլորը աղով լիքն էր, բայց բիւր ջրի կաթիլները հալել են այս աղը և տարել են նորան ուրիշ տեղ, կարելի է տարել են ծովը, որ ինչպէս դու գիտես, այնպէս աղի է։ Այսպիսի այրումը մենք ազատ ենք գործելու, ձայնով վայր ենք ընկնում մենք առաստաղից, և թողլով նորա վերայ մեր բերած քարի կտորները, շինում ենք ամենահիանալի բաներ, որոնք նման են ձեր եկեղեցիներին և աշտարակներին»։

«Դու անշուշտ տեսել ես, որ մենք ձմեռը հալուելով արեգակից և վազելով տանիքից՝ ինչպէս ենք կազմում սառուցի թափանցիկ շառաշեղներ։ Մեր ստորերկրեայ գործը քիչ սորա նման է, միայն մենք այնտեղ շինում ենք խողովակները ոչ թէ ջրից՝ այլ կրից։»

«Այրերի յատակներում հաւաքւում են կաթիլները և կազմում են ստորերկրեայ լճերը, յետոյ դուրս են վազում այնտեղից ճեղքերի միջով և խոխոջմամբ թափւում են ժայռից ժայռ։ Մեզ մօտ գալիս է ջուր խմելու ժամանակ առ ժամանակ սարի սաղամանդրը, որ մի փոքրիկ դեղնած ու կոյր կենդանի է. ձեզ համար տրտմութիւն է կենալ այս անարե-

գակ այրերի մէջ, բայց նորա համար ուրախութիւն է, գէ նա վախենում է ինչպէս մահից արեգակի ճառագայթներից»։

«Եթէ ճանապարհին պատահի սարի վերայ մէկ ժայ-ռի կտոր, մենք կ'սկսենք աշխատել բոլոր ուժով նորա ամէն մէկ ծակոտիքը լցնելու կայծ քարով և կրով. իսկ փայտը կը կտրենք և կտանենք ուրիշ տեղ, որ մէկ խօսքով դուք ա-նուանում էք քարացած փայտ. բայց ամենևին ճշմարիտ չէք անուանում, որովհետև այնտեղ մէկ փոքր կտոր էլ փայտ չկայ, այլ բոլորը իստակ քար է, փայտից մնացել է մի-միայն նորա ձևը, և ո՜րքան ենք չարչարուել, որ կարողացել ենք շինել քարից նորա ամէն մէկ ջիղը, ամէն մէկ բջիջը»։

Այս ժամանակը վազեց մէկ նոր ալիք և սկսաւ ինձ պատմել ուրիշ պատմութիւն, նա ասումէր, թէ ինչպէս ջրի կաթիլները փոքր առ փոքր փորել քանդել են մի ահագին լերան տակը Զուիցերիայում, այնպէս որ նա իւր բոլոր ծանր քարերովը և ծառերովը, որոնք բուսած էին նորա վերայ, գլորուցաւ դաշտի վերայ և ծածկեց չորս գիւղ իւ-րեանց բնակիչներով և անասուններով։—Բայց ես նորա խօս-քը կտրեցի և ասացի ալիքներին, որ չեմ սիրում լսել աւե-րածութեանց և սպանման լուրեր։

Աւելի լաւ կանես, թէ մի ուրիշ բան պատմես, ես նորից առուին խնդրեցի։ Եթէ քո կաթիլները լերան միջում այսքան շատ ուտում են և խմում են, այսքան շատ քանդում են և շինում են, այն ժամանակ կարծիք չկայ, որ այս պարզ ջուրն էլ, որի միջով ես այսպէս պարզ տեսնում եմ փոքր քարն էլ և ամենափոքր փայլուն ձուկն էլ, ամենևին այնպէս իստակ չէ, ինչպէս երևում է արտաքուստ։

—Շատ հեշտ կարող է պատահել, պատասխանեց ա-ռուակը, որ մէկը կամ միւսը իմ փոքրիկ մշակներից տանե-լիս լինի իւր հետ այս կամ այն նիւթը։

Ի՞նչ նիւթ, ո՞ւր և ինչի՞ համար են տանում քո աշխատասէր մշակները, հարցուցի ես առուակից։

«Մենք կիր ենք տանում, պատասխանեցին մի քանի կաթիլները. մեզ արդէն շատ ժամանակ է սպասում են բիւր փոքր ծովային կենդանիք, խեցիներ, խխունջներ, ծովային աստղեր, որոց հարկաւոր է շինել իւրեանց համար բնակարաններ և պինդ բուստեր. բայց բուստերի համար հարկաւոր է շատ կիր, որովհետև բուստից շինում են նաև ամբողջ կղզիներ ովկիանոսի մէջ։»

«Մենք տանում ենք կայծքար, քչքչացին միւս կաթիլները. շատ ջրորդունք և բոյսեր վաղուց սպասում են մեզ, մինչև անգամ խոտը ափի վերայ, նա էլ է խնդրում, որ մենք նորան էլ տանք մի փոքր մասն։—Մնք օդ ենք տանում փոքր աներևոյթ շիշերի մէջ, ձայն հանեցին նոր կաթիլները, օդ՝ առանց որոյ չէին կարող շունչ քաշել ջրի մէջ ու ձկները, ոչ միւս ջրային կենդանիքը։—Մենք ածխային թթու ենք տանում, որ նորանով ջրենք մի քանի տեսակ ծաղկի արմատները։»

«Մենք գաճ ենք կրում, մենք երկաթ, մենք փոսփոր մենք շատ աղ, որ հարկաւոր է անթիւ բոյսերին, կենդանեաց և մինչև անգամ ձեզ մարդկանցդ էլ։ Արդեօք դուք չէ՞ք գալիս բժշկուելու մեզ մօտ, և շատ ուրախ չէ՞ք լինում երբ զգում էք, որ մեր մէջ կայ կամ ծծումբ կամ երկաթ և կամ մէկ այլ հանք, որ ձեզ օգնում է հիւանդութեան ժամանակը։»

«Այն ժամանակը դուք պատուում էք մեզ կոչելով հանքային աղբիւներ, առողջարար աղբիւրներ, իսկ երբեմն ջերմուկներ, եթէ մենք դուրս ենք գալի ձեզ մօտ առաջուց տաքացած ստորերկրեայ կրակից։ Այն ժամանակ դուք ծառայում էք մեզ, խտակում էք մեր կեղտը, շինում էք մեզ

համար գեղեցիկ աւազաններ. մեզ մօտ շինում էք թանկագին տներ, հիւանդանոց, հիւրանոց, ամբողջ քաղաքներ։ Մի՞թէ դու ոչինչ չես լսել Բադէն-Բադէնի, Էմսի, Պետիգորսկու, Կիսլավոդսկու, Բորժոմի, Աբասթումանի և ուրիշ շատ տեղերի ամենագովելի և բժշկարար ջրերի մասին, որ մեր մի մասն են նոյնպէս։»

«Ո՛հ, մի՛ կարծեր, թէ մենք ոչինչ չենք անում, ձայն հանեցին բոլոր կաթիլները միասին, ընդհակառակն մենք երբէք հանգստութիւն չգիտենք, մրջիւններից էլ աշխատասէր ենք որ անդադար շինում են իւրեանց բնակարանը, անդադար խռնւում են, վազում են և քաշում են յարդի կտորները, որ երեք անգամ իւրեանցից մեծ են։ Ամպերի, սարերի և դաշտերի մէջ աշխատելուց և բոյսերին զովացնելուց և զուարթացնելուց յետոյ՝ մենք շտապում ենք դէպի առուակը ճանապարհի վերայ պըտըտելով ջրաղացի անիւը. առուակից վազում ենք գետի մէջ և գետից լայնատարած և անսահման ծովը՝ տանելով շատ նաւեր. այստեղ կարծեմ կարելի կը լինէր մեզ հանգստանալ և դադարել գործից։»

«Բայց արեգակի ճառագայթները տաքացնում են մեզ և դարձնում են թեթև մեգ։ Բարձր բարձրանալով դառնում ենք ամպեր և լողում ենք երկնքի տակին մինչև դարձեալ չըդառնանք անձրև և չթափուինք երկրի վերայ, ուր սպասում է մեզ գործը։ Մենք գործում ենք առանց նեղութեան և չենք տխրում։ Մենք ուրախ ենք, որ մենք ընդունում ենք այսպիսի գործունեայ մասնակցութիւն Աստուծոյ աշխարհի մէջ և ջուր ենք տալիս անթիւ բիւր բոյսերին, կենդանեաց և մարդկանց։»

Աստուա՛ծ իմ, ասացի հեռանալով բարբաջող առուակից, չկայ սահման քո իմաստութեանը։ Ո՛րքան երևելի գործեր ես Դու կատարում ջրի ամենափոքր կաթիլով։ Ո՛րքան

կեանք և գործունէութիւն կան քո աշխարհումդ։ Արա այնպէս, որ ես ևս չապրիմ առանց գործունէութեան, որ մի օգուտ բերեմ մարդկութեանը․ ապա թէ ոչ՝ ինձ համար ամօթ կը լինի նայել ջրի գործունեայ կաթիլի վերայ։

ՎՏԱԿ

Ո՜վ վտակ վտակ,
Մի՛ այդպէս փութով
Ընթանար 'ի ծով.
Կա՛ց 'ի քոյդ յատակ։
Այդ ալիք վճիտ
Զերկիր առոգեն,
Քեզ ահարկու չեն
Վէմք և խորափիտ։
Այդ քոյին վիժակ
Մօտ յաղբերակունս
Յունկն ամենեցունց
Քաղցր է ու ախորժակ։
Ո՜վ վտակ վտակ,
Մի՛ այդպէս փութով
Ընթանար 'ի ծով.
Կաց 'ի քոյդ յատակ։
Թէ գետք ուղխաջուր
Զքեզ ի ծոց առնուն,
Կապտեն և զանուն
Եւ զփայլդ երկնաւոր։
Ի բանտ , 'ի կապանս
Ընդ նոսին ձըգես,

Նու կամ զեղանիս
Յօտարին վընաս
Ո՞վ վըտակ վըտակ,
Մի՛ այդպէս փութով
Ընթանար 'ի ծով.
Կաց 'ի քոյդ յատակ։

Ասացէք այս բառերի նշանակութիւնը. վճիտ, խորափիտ, վիժակ, ուղխաջուր, կապտել, զեղանիլ։ Ի՞նչ կնշանակէ այս. «ուղխաջուր գետերը կխլեն քեզանից քո անունը եւ քո փայլը»։ Իսկ այս ինչ կնշանակէ. »նոցա հետ կերթաս կընկնիս բանտի ու կապանաց մէջ»։ (Գետերի բանտն ու կապանքը ծովն է։)

ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

ԱԶԳԱՅԻՆՔ, ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆՔ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆՔ

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԵՒ ՆՈՐԱ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ:

Որդին: Հա՛յր, դուք միշտ ասումէք ինձ, որ ամենայն ազգ իւր երկիրն ունի, և ամենայն մարդ իւր հայրենիքը. ապա ո՞րն է մեր Հայոց երկիրն ու հայրենիքը:

Հայրն: Մեր երկիրը և հայրենիքը Հայաստանն է, որդեակ, որտեղից բղխումեն Տիգրիս և Եփրատ գետերը, որտեղ է Մասիս սարը, և որտեղ է մեր հայրապետաց աթոռը՝ Սուրբ Էջմիածին:

Որդին: Մեր երկիրն էլ, հայր, միւս երկիրների նման բազմամարդ և գեղեցիկ քաղաքներ ունի՞, թէ ոչ:

Հայրն. Ունի մի քանի փոքր քաղաքներ. իսկ բազմամարդ քաղաքներից միայն հետքն ու աւերակներն են մնացել....:

Ո՞ւր է, որդեակ, թողե՞ն անգութ պարսիկները ու թաթարները մեր երկրումը էլ բազմամարդ քաղաքներ կամ աւաններ, որ քարուքանդ չարին: Չար չկայ մեր երկրումը, որ մեր ազգի արիւնովը ողողած լուացած չլինի: Քանի՛ քանի հոյակապ և աթոռանիստ քաղաքներ, ուր մեր թագաւորները հզօր

իշխում էին, այժմ աւերած, հողի հետ հաւասարուած են։ Ո՞ւր է մեր բազմամարդ Անին իւր հազար ու մէկ եկեղեցիներովը ու շքեղ պալատներովը։ Ո՞ւր են մեր Արմաւիր, Արտաշատ, Վաղարշապատ, Տիգրանակերտ, Դուին, և այլ միւս մեծաշէն քաղաքները. . . .։ Ո՞ւր է մեր հզօր թագաւորութիւնը, ո՞ւր է մեր մեծազօր հայրենիքը, ո՞ւր մեր երևելի իշխանները. . . .։

Բայց մեր ազգը թէև ամենայն ինչ կորցրեց, սակայն իւր անունը, իւր լեզուն, իւր սուրբ հաւատը և եկեղեցին պինդ և անխախտ պահել է մինչև ցայսօր։ Կամի՞ս իմանալ՝ թէ մեր թագաւորութիւնը ինչպէս սկսաւ և վերջացաւ, ահա ականջ դիր, սիրելիս, քեզ կպատմեմ համառօտ, և դու մտքումդ պահէ։

Մասիս եւ դրախտ։

Ասացի որ Մասիս սարը Հայաստանումն է։ Այս սարը աշխարհիս ամենաբարձր սարերից մէկն է։ Սորա վերայ էր, որ Նոյեան տապանը իջաւ, և սորա մօտն էր, որ մարդիկ ջրհեղեղից յետոյ կրկին բազմացան։ Աստուած երբոր Ադամին ստեղծեց, դրաւ դրախտումը. իսկ դրախտը Հայաստանումն է, ինչպէս վկայում է Աստուածաշունչ գիրքը՝ ասելով թէ Տիգրիս և Եփրատ գետերը դրախտից են բղխում։ Այս ասելով ես քեզ կամենում եմ իմացնել, որ դեռ բոլոր աշխարհս անմարդաբնակ էր՝ անապատ և ամայի, երբոր մեր երկրումը բնակութիւն կար։ Մասիս և դրախտն կենդանի արձանք են և վկայք, որ մեր երկիրը ամենից հին՝ երևելի և անուանի է. ուստի և իրաւամբք կարեն նոքա կոչիլ «Արձանք հնութեան Հայաստանի»։

Միապետութիւն Հայկայ եւ իշխանութիւն Հայկազանց։

Այս Մասիս սարի մօտն էր, որ մեր նախահայրն Հայկ՝

2200 տարի Քրիստոսից առաջ, իւր որդւովք և ընտանեօք եկաւ բնակեցաւ։ Նեբրովթ Թագաւորն բաբելացւոց եկաւ մեծ զօրքով, որ նորան ոչնչացնէ և մեր երկիրը տիրէ։ Բայց քաջըն Հայկ պատերազմի մէջ յաղթեց սպանեց նորան, և սկսեց միահեծան իշխող լինիլ մեր երկրի վերայ։ Նորա անունովը մենք կոչւումենք Հայք, և մեր երկիրը Հայաստան։

Հայկայ որդիքը և Թոռունքը, որք նորանից յետոյ իշխանութիւն արին, սոքա են. Արմենակ, Արամայիս, Ամասիայ, Գեղամ, Հարմայ, Արամ, Արայ, Կարդոս և Անուշաւան։ Սոցա միջի երեւելիքն են Արամ և Արայ։ Առաջինը շատ մեծամեծ յաղթութիւններ արաւ, մեր երկիրը ընդարձակեց մեծացրեց։ Սորա համար ուրիշ ազգերը մեզ Արմէն են ասում, և ոչ Հայք։

Երբ Հայկայ սերունդը վերջացաւ, շատ իշխաններ սկսեցին մեր ազգին տիրել։ Սոցա միջի երեւելին էր Զարմայր նահապետն մեր, որ Տրոյեայ քաղաքի աւերման ժամանակը մեծամեծ քաջութիւններ արաւ։ Յետոյ մեր Պարոյր իշխանը, որ ուրիշ իշխանների հետ միաբանուելով գնաց պատերազմաւ Ասորոց Սարդանաբաղ Թագաւորին յաղթեց, մեր երկիրը նորա ձեռի տակիցը ազատեց, և առաջին պսակաւոր Թագաւոր եղև Հայոց 610 Թուին Քրիստոսից առաջ։

Պարոյրից յետոյ եղած Թագաւորների միջին երեւելին էր Տիգրան Առաջին, որ միաբանեցաւ Պարսից Կիւրոս Թագաւորի հետ, յաղթեց Ասորոց Աժդահակ Թագաւորին, ու անթիւ գերի բերեց Ասորեստանից Հայաստան, ուրիշ շատ քաջութիւններ գործեց և մեր երկիրը մեծացրեց։ Նորա որդի Վահագն այնքան հզօր էր և քաջ, որ Աստուծոյ տեղ պաշտեցին և արձան կանգնեցրին նորան։

Բայց աւա՜ղ, Հայաստանի ծաղկած ժամանակը յանկարծ մէկ այնպիսի Թագաւոր երեւեցաւ, որ բոլոր աշխարհս

սասանեցրեց։ Այս թագաւորը մեծն Աղէքսանդր Մակեդոնացին էր, որ բոլոր փոքր Ասիու և Եգիպտոսի տիրելուց յետոյ՝ անթիւ զօրքով եկաւ որ Պարսկաստանն առնու։

Վահէ թագաւորն մեր կամելով Պարսից Դարեհ թագաւորին օգնութիւն անել, գնաց զօրքով պատերազմ, ուր ինքն մեռաւ և մեր աշխարհը թողեց թշնամու ձեռքը։ Այս պատահեցաւ 328 թուին Քրիստոսից առաջ, և մեր թագաւորութիւնը առաջին անգամ վերջացաւ։

Իշխանութիւն Արշակունեաց։

Վահէի մահից յետոյ ամենաբարի Նախասահմանութիւնն Աստուծոյ մեզ երկար չթողեց որբ։ Աղէքսանդր Մակեդոնացին յանկարծ մեռաւ։ Նորա զօրապետները տէրութիւնը բաժանեցին, և մի փոքր ժամանակից յետոյ սկսաւ քաջազօր տոհմն Արշակունեաց տիրել Պարսից և Հայոց։ Մեծն Արշակ իւր Վաղարշակ եղբօրը Հայոց վերայ թագաւոր կարգեց։ Վաղարշակայ երախտիքը և բարերարութիւնները անթիւ են մեր ազգի վերայ։ Նա մեր աշխարհը բարեկարգեց, երկոտասան նախարարութիւն (մինիստրութիւն) բաժանեց, և մեր ազգի պատմութիւնը Մարիբաս Ասորւոյն գրել հրամայեց 149 թուին Քրիստոսից առաջ։

Վաղարշակից յետոյ մեծամեծ թագաւորներ շատ ունէինք, որոց երևելիքն են՝ Արտաշէս Առաջին, որ Պարսից երիցութիւնը ստացաւ, Տիգրան Երկրորդ, որ շատ տարի Հռովմայեցւոց հետ պատերազմեցաւ ու տիրեց Ասորեստանը, Աբգար՝ որ ամէն թագաւորներից առաջ ընդունեց քրիստոնէական հաւատը, և Քրիստոսի անձեռագործ դաստառակը ընկալաւ, Անանէ և Սանատրուկ, որոնք կրկին ուրացան զՔրիստոս, Վաղարշ՝ որ Վաղարշապատ քաղաքը շինեց 196 թուին Քրիստոսից յետոյ, ուր որ այժմ Էջմիածինն է։ Խոս-

րով՝ որ Պարսից հոգեհան էր արել, բայց Անակ հայրն սըր-
բոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ եկաւ և նորան դաւաճա-
նութեամբ սպանեց։

Խոսրովի որդին Տրդատն էր, որ իւր ուսումն ստացաւ
Հռովմ և իւր քաջութեամբ բոլոր աշխարհը զարմացոյց։
Սորա ժամանակը Լուսաւորիչ Հայրն մեր՝ որդին Անակայ,
եկաւ մեր աշխարհը և Տրդատի ձեռից չարչարանք կրելուց
յետոյ, 302 թուին քրիստոնէական հաւատը քարոզեց ու տա-
րածեց Հայաստանումը։ Տիրան երկրորդ, Արշակ երկրորդ
և Պապ, որ անշէջ ծրագն Հայաստանի զմեծն Ներսէս
թունաւորեալ շիջոյց, չեն այնքան անուանի։

Մեր թագաւորների մէջ աւելի բարեբարն և մեծագործն
էր Վռամշապուհն, որոյ անունը կմնայ անմահ յազգէ յազգ։

Սա սկսաւ Հայաստանումը ուսումնարաններ բանալ,
երիտասարդներ Յունաստան և Եգիպտոս ուղարկել, գրեանք
թարգմանել և շարադրել տալ։ Միով բանիւ՝ մեր աշխարհի
լուսաւորութեան, մեր լեզուի յառաջադիմութեան ու զանա-
զան գիտութեանց տարածման պատճառը սա էր։ Սորա ժամա-
նակ սուրբն Մեսրովբ մեր գրերը գտաւ, թարգմանեցին
Աստուածաշունչ գիրքը, որ մինչև այն ժամանակը Յունաց և
Ասորոց լեզուաւ էին կարդում մեր եկեղեցեաց մէջ։ Մովսէս
Խորենացին մեր պատմութիւնը գրեց։

Վռամշապուհի յաջորդները Խոսրով երրորդ և Արտա-
շէս չէին այնքան բախտաւոր։ Պարսիկները և Հռովմայեցիքը,
որպէս ամեհի գազանք, երկու կողմից յարձակուել էին մեր աշ
խարհի վերայ և կամենում էին իւրեանց ձեռքի տակը ձգել։ Այս
պատճառաւ Պարսից Վռամ թագաւորը մեր Արտաշէս թա-
գաւորին գերի արաւ սպանեց, և Արշակունեաց թագաւո-
րութիւնն էլ վերջացաւ այսպիսի դառն կերպով 432 թուին
Քրիստոսից յետոյ, և այսպէս մեր ողորմելի հայրենիքը կըր-
կին մնաց անտէր և թշնամահար։

Իշխանութիւն մարզպանաց։

Սգալի էր յիրաւի այս ժամանակին մեր աշխարհի վիճակը։ Անողորմ Պարսիկները երկար գերելուց և աւերելուց յետոյ՝ սկսան սաստիկ հրաման և զօրք ուղարկել մեր երկիրը, որ բոլոր եկեղեցիքը քանդեն, Քրիստոսի հաւատը վերջացնեն և մեր ազգը կրակապաշտ շինեն։ Այս դառն ժամանակին էր, որ Աստուած մեզ մէկ այնպիսի իշխան պարգևեց, որոյ նմանը շատ սակաւ կը գտնուի։ Վարդան Մամիկոնեանը փրկիչ դարձաւ Հայաստանի։ Այնպէս էր նա վառեալ քրիստոնէական հաւատով և հայրենասիրութեամբ, որ մինչև անգամ փոքր զօրքով Պարսից անթիւ զօրքերին յաղթեց, մեր աշխարհը ազատեց, իւր կեանքը զոհ տուեց ազգի փրկութեան համար՝ նահատակուելով 451 թուին։ Յաջորդք նորա՝ Վահան Մամիկոնեան, Սմբատ, Դաւիթ Սահառունի և այլ բազումք՝ նորա հոգին ունելով, միշտ մեր ազգը և աշխարհը քաջութեամբ պահպանեցին։

Իշխանութիւն Բագրատունեաց։

Երբոր Աշոտ Բագրատունին 885 թուին օծաւ թագաւոր Հայոց, Հայաստանը կրկին ոգի առաւ։ Սորա յաջորդները՝ Սմբատ առաջին, Գագիկ Արծրունի, Աշոտ երկաթ, Սմբատ երկրորդ և այլն, հզօր և իմաստուն թագաւորներ էին. Բայց անիրաւ Յոյները, Արաբացիքը և Պարսիկները ամէն կողմանէ պաշարելով մեր աշխարհը կրկին սկսան այնքան ճնշել, մինչև որ Բագրատունեաց թագաւորութիւնն էլ վերջացաւ 1045 թուին, և Գագիկ Երկրորդ մեր վերջին թագաւորը վտարանդի և թափառական մեռաւ 'ի Յունաստան։

Իշխանութիւն Ռուբինեանց։

Տեսնելով որ մեր աշխարհը այսպէս ոտնակոխ և թըշ-

նամահար եղև, Ռուբէն Առաջին՝ Գագկայ ազգականը, 1080 թուին սկսաւ Միջերկրական ծովի ափումն Տաւրոս և Կիլիկիայ իւր ձեռքի տակը ձգել և այստեղ իշխանութիւն անել: Նորա յաջորդները՝ Կոստանդին Առաջին, Թորոս Առաջին, Լևոն Առաջին, Թորոս երկրորդ, Թովմաս, Ռուբէն երկրորդ մեծ քաջութեամբ և իմաստութեամբ կառավարեցին իւրեանց տէրութիւնը և ընդարձակեցին: Խաչակիր զօրացը մեծ օգնութիւն հասցրին, մինչև անգամ Լևոն երկրորդ, եղբայր Ռուբէնի օծաւ թագաւոր Հայոց 1198 թուին: Նորա յաջորդները՝ Լևոն երրորդ, Լևոն չորրորդ, Լևոն հինգերորդ և այլն նոյնպէս քաջութեամբ և խոհեմութեամբ կառավարեցին իւրեանց երկիրը: Ապա Լևոն վեցերորդ, որոյ հայրն Լատին էր և մայրն Հայ՝ շատ թշնամի ունելով և ոչինչ օգնութիւն չգտնելով գերի վարեցաւ Եգիպտոս. ապա գնաց Հռովմ, Սպանիա, որ մեր աշխարհին մի օգնութիւն անէ, բայց ոչինչ հնար չգտաւ, և ինքն էլ 1393 թուին Փարէզ մայրաքաղաքումը վախճանեցաւ, որոյ գերեզմանը մինչև ցայժմ էլ անդ է: Այսպէս վերջացաւ և Ռուբէնեանց թագաւորութիւնը:

Այսպէս չորիցս Հայոց թագաւորութիւնը հաստատուեցաւ և չորիցս կրկին վերջացաւ: Այս ժամանակից սկսած մնացինք գլխովին անտէր և գերի Օսմանցւոց և Պարսից: Էլ նեղութիւն և հալածանք չմնաց, որ Պարսիկները մեզ չտային. բայց ինչ ազգ որ լինէր, օրինակը շատ կայ, այսքան ժամանակ, այսպէս բարբարոս ազգաց ձեռքի տակին՝ հաւատն էլ կուրանար, լեզուն էլ կմոռանար և իւր ազգութիւնն էլ կըկորցնէր: Սակայն մեր ազգի հաստատուն բարքը, համբերութիւնը, մեծահոգութիւնը և ջերմեռանդ սիրտն էր, որ այսքան խղճահարութեանը չորս հարիւր տարուց աւելի դիմացաւ:

Ի վերջոյ խղճաց Աստուած մեր ազգի վերայ, և ձգեց

Ռուսաց հզօր տէրութեան պաշտպանութեան ներքոյ, որոյ շնորհը և ողորմութիւնը մեզ վերայ առատ է։ Այսուհետև պէտք է ջանք անենք, որ աւելի ևս լուսաւորուինք, մեր լեզուն ճոխացնենք, մեր հայրենիքը պայծառացնենք, և մեր կրօնն ու հաւատը պինդ պահպանենք։

Ո՞րն է մեր երկիրը եւ մեր հայրենիքը։ Ի՞նչ Թշուառութիւններ է կրել Հայաստանը Պարսից ձեռքիցը։ Ո՞ք են Հայաստանի հնութեան անմահ արձանները ու վկայքը։ Ի՞նչ քաջութիւններ է արել Հայկը։ Ո՞յք են նորա որդիքը եւ Թոռունքը, որ նորանից յետոյ իշխանութիւն արին։ Արամը ընչո՞վ է երեւելի։ Ո՞վ էր մեր առաջին պսակաւոր Թագաւորը։ Տիգրան Ա. եւ նորա որդի Վահագը ինչպէս մարդիկ էին։ Ո՞վ էր մեր վերջին Թագաւորը Հայկազանց ցեղից։

Վահէի մահից յետոյ ո՞վ նստաւ Թագաւոր Հայոց վերայ։ Ի՞նչ բարեկարգութիւններ արաւ Վաղարշակը Հայաստանումը։ Վաղարշակից յետոյ ի՞նչ երեւելի Թագաւորներ ունէինք։ Ո՞վ էր Տրդատը։ Ո՞վ տարածեց հիմնաւորապէս Քրիստոնէական հաւատը Հայաստանումը։ Ի՞նչ բարերարութիւններ եւ մեծագործութիւններ արաւ Վռամշապուհը Հայաստանումը։ Վռամշապուհից յետոյ ի՞նչ դրութեան մէջ ընկաւ Հայաստանը։ Վարդան Մամիկոնեանը ինչո՞վ անմահացրեց իւր անունը։

Ե՞րբ սկսաւ Բագրատունեաց իշխանութիւնը եւ ո՞վ էր առաջին Թագաւորը այդ ցեղից։ Ո՞յք էին Աշոտ բագրատունւոյ յաջորդները։ Ե՞րբ վերջացաւ Բագրատունեաց իշխանութիւնը եւ ո՞վ էր վերջին Թագաւորը։ Ի՞նչ պէս սկսաւ Ռուբինեանց իշխանութիւնը, ե՞րբ եւ ո՞ւր։ Ո՞յք էին Ռուբէն Առաջնոյ յաջորդները։ Ե՞րբ վերջացաւ բոլորովին Հայոց Թագաւորութիւնը եւ ո՞վ էր մեր վերջին Թագաւորը։—Կրկնեցէք բոլոր պատմութիւնը։

ԱՓՍՈ՛Ս ՔԵԶ ՀԱՅՈՑ ԽԵՂՃԻԿ ԺՈՂՈՎՈՒՐԴ

(Ազգային երգ)։

Ափսո՛ս քեզ Հայոց խեղճիկ ժողովուրդ,
Ցիրուցան եղաք անմեղ անխորհուրդ,
Գերի գնացիք դէպ 'ի Խորասան,
Քաղցած ու ծարաւ, տկլոր Թշուառական։
Հարիւր ու հազար ցաւի դիմացաք,

Ձեր քաղցր երկրէն ուր դուրս չըդրաք·
Հիմի ձեր հօր մօր գերեզման թողաք,
Տըներն ու ժամեր ուրիշին տուաք։

Էս սիրուն դաշտերն, մեծ մեծ քաղաքներն,
Քաղցրիկ ջըրերն, ձեր չէն գեղերըն,
Ո՞ւմն էք թողում դուք, որ գնումէք,
Էսպէս կըլինի՞ որ մոռանում էք։

Վախում եմ էնպէս մտքերնուցդ ընկնի,
Ինչքան որ ողջ էք, մտքերնուդ չընկնի·
Գոնէ ձեր որդւոց, թոռանց պատմեցէք,
Էսպէս հայրենիքն քանդած թողեցիք։

Մասիսի անունն, Նոյայ տապանի,
Արարատ դաշտի, Սուրբ Էջմիածնի,
Մեր Խոր Վիրապի, սուրբ Գեղարդ, Մուղնի,
Չմոռանան մինչ 'ի օրն դատաստանի։

Աչքըս կուրանար, շլինքըս կոտրուէր,
Խեղճ Հայաստան, քեզ էսպէս չըտեսնէր,
Թէ մեռած էի, ինձ երանի էր,
Քան թէ կենդանի՝ աչքս բաց տեսնէր։

Այս երգը կամ ողբը յօրինել է Ստեփան վարդապետը Նախավկայի վանքից, Հայոց Պարսկաստան քշելու վերայ 1605-ին Պարսից Շահ-Աբաս Թագաւորի հրամանաւը։

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ամէն մարդ պարտական է իւր հայրենեացը այնպէս, ինչպէս որ որդին իւր հօրը· ուստի ամէն մարդ պէտք է ջանայ հետեւի իւր որդիական պարտքը՝ որքան կարող է, հատուցանել հայրենեաց։ Մենք սիրում ենք մեր ծնողները, ազգականները ու բարեկամները· բոլոր այս մեր սիրելիքը

հայրենիքն է մեզ տուել, որ իբրև խնամածու մայր պահում է նոցա և սնուցանում իւր ծոցումը. ուրեմն ո՜րչափ պէտք է սիրենք այս Հայրենիք կոչուած օրհնեալ երկիրը, և երախտագէտ սրտով ծառայենք ու զոհ լինինք նորա բարօրութեանը։ Եւ ի՞նչպէս կարող ենք չնուիրել հայրենեաց մեր անձը և բոլոր մեր ստացուածքը, երբոր մտածենք որ մեր կեանքը, սնունդը և ամէն մեր ունեցածը նորանից ենք ըստացել, և մեր մահից յետոյ դարձեալ նորա մէջը պէտք է թողունք, և մենք էլ նորա ծոցը պիտի հանգչինք։

Հայրենեաց համար մեռնիլը քաղցր ու փառաւոր բախտ է. ով որ կտարակուսի մեռնել հայրենեաց համար, նա վատանուն մարդ է։ Հայրենեաց ծառայելու ժամանակ պէտք է որ բոլոր մեր անձնական թշնամութիւնները, կռւքերը ու վրէժխնդրութիւնները թողունք, և իբրև մի անձն և մի հօր որդիք՝ այնպէս սիրով միմեանց հետ կապուինք ու ծառայենք նորան, որ մէկս միւսի արած ծառայութիւնը կամ տուած օգուտը չխանգարենք։

Մեր նախնիքը մեզ համար գեղեցիկ օրինակ են թողել հայրենասիրութեան։ Մեծն Ներսէս հայրենեաց ու ազգի սիրոյն համար ուրախութեամբ յանձն առաւ աքսորուիլ անմարդաբնակ կղզի յունաց Վաղէս կայսեր ձեռքից, քան թէ անհարազատ գտանիլ իւր հայրենեաց։ Քաջն Վարդան և նորա ընկերքն պարծանք համարեցին հայրենեաց համար զոհ լինիլ Աւարայրի անմոռանալի պատերազմի դաշտումը, քան թէ տեսանել նորա կորուստը։

Հայրենասիրութիւնը՝ իբրև մէկ բնական զգացմունք, տեսնում ենք ամէն ազգի, ամէն մարդկանց մէջ։ Եւ յիրաւի բնական է մարդուս սիրել այն երկիրը, ուր իւր ազգակցաց ու արենակցաց հետ միասին բնակում է, հասարակաց մայր և դայեակ է համարում նորան ու նորա հետ սիրով կապ-

ուում է։ Թէ և բնական է մարդուս սիրել միայն գեղեցիկ բանը, բայց հայրենիքը՝ թէ գեղածիծաղ և թէ տխրադէմ, թէ մշտնջենական սառնամանիք և թէ անտանելի տապ, թէ պտղաբեր և թէ անպտուղ, միշտ հաւասար սիրելի է իւր զաւակաց համար։

Յովսէփ նահապետը իւր վերջին մտածութիւնը ապագայ հայրենեաց վերայ դարձրած՝ ցաւում էր, հոգում էր որ ինքը նորանից դուրսն է մեռնում. և սրտառուչ ձայնով մահուան անկողնու մէջից աղաչում էր, պաղատում էր իւր եղբարցը՝ ասելով. «Աստուած ձեզ այցելութիւն պիտի անէ և մեր հարցը խոստացած երկիրը պիտի տանէ ձեզ բնակեցնէ, հետներդ տարէք իմ ոսկրներս»։ Եւ այս էր նորա վերջի խօսքը. մեռնելու րոպէին քաղցր էր նորա համար յուսալ որ եղբարցը հետ պիտի երթայ Աստուծոյ նոցա տուած հայրենիքը, և ոսկրներն այնտեղ իւր հայրենակցաց մէջ աւելի խաղաղ պիտի հանգչին։

Թեմիստոկլ աթենացին, որ երևելի զօրավար էր, երբ որ աքսորեցաւ իւր հայրենի երկրից՝ Պարսից Արտաշէս երկայնաձեռն կոչուած թագաւորից մեծ ընդունելութիւն գտաւ, և մեծ պատուով նորա մօտ կենում էր։ Բայց երբոր տեսաւ որ թագաւորը հայրենեացը դէմ պատերազմ բացաւ, և իրան է յանձնում զօրաց սպարապետութեան պաշտօնը, աւելի ուզեց հայրենեաց սիրոյն համար թոյն առնելով մեռնիլ՝ քան թէ նորա դէմ զէնք առնուլ ու փառաւորուիլ։ Եւ մեռնելու ժամանակը աղաչելով աղաչեց իւր բարեկամներին, որ ոսկրները առնուն տանին իւր հայրենիքն Ատտիկէ, որ գոնեայ ոսկրները վայելեն այն քաղցր հայրենիքը, որից ինքն զրկուեցաւ։

Եւ այս բնական զգացմունքն է դարձեալ, որ լաւ ազնուամիտ մարդիկ ո՛ւր և լինին, ինչ հանգիստ՝ ուրախ և

փառաւոր վիճակի մէջ և գտնուին, դարձեալ իւրեանց հայրենեաց վերայ են մտածում, նորա կարօտն են քաշում, նորա համար խոր հառաչում են, նորա յաջողութիւնն ու պայծառութիւնը տեսնելով ուրախանում են ու զուարթանում, և նորա ձախորդութիւնն ու թշուառութիւնը տեսնելով՝ տըխրում են ու թշուառ լինում։

Նեեմի հրէայն գերութեան ժամանակը Պարսից երկայնաբազուկ կոչուած Արտաշէս թագաւորի մատռուակը (գինի տուող) դարձաւ ու մեծ պատուոյ մէջ էր. բայց հայրենի երկրիցը դուրս լինելը նորա համար մեծ վիշտ էր։ «Թագաւորի առաջին էի», ասում է, «նորան գինի էի տալի ու վշտահար էի երևում։ Թագաւորն ասաւ ինձ. որովհետև հիւանդ չես, ինչո՞ւ երեսդ այդպէս տխուր է։ Պատասխան տուի նորան. եւ ի՞նչպէս է կարելի որ երեսս տխուր չլինի, երբոր հարցս թաղուած քաղաքը աւերակ է և դըռները այրած մրկած։ Թէ որ ուզում ես ինձ մի շնորհ անել, ինձ Հրէաստան ուղարկէ, ուր հօրս գերեզմանն է, որ նորան նորէն շինեմ պայծառացնեմ։»

Այնպէս սիրելի էր եղած Նեեմի թագաւորին, որ անկարելի էր նորա խնդիրքը չկատարել. նա մանաւանդ որ նա նոյն իսկ իւր անշահասէր խնդիրքովը թագաւորի առաջին աւելի պատկառելի ու սիրելի ցոյց տուաւ իրան. որովհետև փոխանակ իւր անձը մտածելու և իւր համար փառք ու պատիւ խնդրելու, նա այսպիսի գեղեցիկ առիթ գտնելով՝ իւր հայրենեաց օգուտն ու շահն էր մտածում, ամէն բանից բարձըր դասելով հայրենիքը։

Ուրախ ուրախ վազում է հասնում Հրէաստան, կանչում է իւր մօտ քաղաքացւոցը, որոնք հասարակաց հայրենեաց սիրովը իրար հետ միաբանած էին և ասում է նոցա. «Գիտէ՞ք», որ մեր վշտաց ու թշուառութեան պատ-

ճառը այն է, որ Երուսաղէմ աւերակ է և դռներն այրած ապականած. եկէք միանանք ու վերստին շինենք նորան։»

Որքան ժամանակ Հրէայքը իւրեանց հայրենի երկրիցը հեռի օտարութեան մէջ կացան, նոցա աչքերի արտասունքը չչորացաւ. և իւրեանց Սիոնը յիշելով անդադար արտասունք էին թափում իւրեանց գերութեան տեղը, և Բաբելոնի գետերի ջրերն էին յորդահոս առատացնում։ Ի՜նչ սըրտառուչ նկարագիր է, որ սաղմոսերգուն նոցա բերանից ասում է. «Բաբելացւոց գետերի մօտ նստում էինք ու լալիս էինք։ Ի՜նչպէս էինք յիշում մենք այնտեղ Սիոնը։ Ուռի ծառերի մէջ կախեցինք մեր կտակարանները և այնտեղ էինք աղօթք անում, (որովհետև տուն ու տաճար չունէինք)։ Մեզ գերի տանողները յորդորում էին և ասում. երգեցէք Սիոնի օրհնութիւնները. բայց ի՞նչպէս երգենք Աստուծոյ օրհնութիւնները օտար երկրի մէջ։»

Եւ նոցանից ամէնքը առանձին առանձին անլուծանելի ուխտ էին կապում հայրենեաց հետ ու ասում. «Եթէ մոռանամ քեզ Երուսաղէմ, թող իմ աջ ձեռս ինձ մոռանայ», այսինքն տկար անկալ մնամ ես։ Սորանով չբաւականանալով վրէժն աւելացնում էին. «Իմ լեզուս թող բերանիցս կպչի, եթէ քեզ չյիշեմ, եթէ իմ ուրախութեան սկիզբը նախ քեզ երգելով չկատարեմ, Երուսաղէ՛մ։

Զարմանալի հայրենասիրութեան օրինակներ տեսնում ենք աւելի Յունաց և Հռովմայեցւոց մէջ։

Յոյները, թէ արք և թէ կանայք, թէ երիտասարդք և թէ ծերք, թէ հարուստ և թէ աղքատ միմեանցից աւելի էին աշխատում զոհ լինելու հայրենեաց համար, և հայրենասիրութեան գեղեցիկ փառքը իրար ձեռքից յափշտակելու էին ջանք անում ամենայն ժամանակ և ամենայն դրութեան մէջ։

Քրիստոսից 480 տարի առաջ, երբոր Պարսից Քսերքսէս թագաւորը անհամար զօրքով սկսաւ Յունաստանի վերայ արշաւել, Յոյները Լէոնիդաս քաջ զօրավարի առաջնորդութեամբ մի փոքր զօրք ուղարկեցին Թերմօպիլէի կիրճը պահպանելու, որտեղից թշնամին պէտք է Յունաստան մտնէր։ Այս կիրճը, որ ծովի ու լերանց մէջ տեղն է գտընւում, տեղ տեղ հազիւ մէկ քանի կանգուն լայնութիւն ունի, և մի փոքր զօրքով հեշտ կարելի է պաշտպանել։

Երբոր Քսերքսէս իւր անթիւ զօրքովը հասաւ Թերմօպիլէ, չէր հաւատում որ այն փոքր զօրքը սիրտ անէ իրան ընդդիմանալու. ուստի և գրեց Լէոնիդասին. «Թէ որ ինձ հնազանդիս, բոլոր Յունաստանի վերայ քեզ տէր կը կարգեմ։» Բայց հայրենասէր Լէոնիդասը պատասխանեց. «Աւելի լաւ կհամարիմ հայրենեացս համար մեռանիլ, քան թէ քո ձեռքովը նորայ վերայ իշխան կարգուիլ։»

Այս խրոխտ պատասխանի վերայ սաստիկ բարկացաւ Քսերքսէսը և զօրք ուղարկեց նոցա վերայ: Յոյները շարունակ երկու օր անդադար կռուում էին և հալածում պարսիկներին. և մինչդեռ Քսերքսէս յուսահատած չգիտէր թէ ինչ անէ, մէկ մատնիչ յոյն գալիս է նորան ծածուկ մի նեղ ճանապարհ է սովորեցնում, որտեղից Պարսիկները կարող էին անցկենալ և Յունաց պատել։

Երբոր իմացաւ Լէոնիդաս այս սոսկալի լուրը, ասաց իւր քաջերին, որ ընդամէնն երեք հարիւր հոգի էին. «Մեզ մեր հայրենեաց օրէնքը հրամայումէ պաշտպանել մեզ յանձնած տեղը մինչև մեր վերջին շունչը։ Մի կարծէք որ մեր անձնանուիրութիւնը անօգուտ պիտի լինի։ Մենք նորանով բարի օրինակ կլինինք բոլոր մեր հայրենակիցներին և նոցա քաջութեան սիրով կվառենք։ Իսկ եթէ թողունք մեզ յանձնած տեղը անպաշտպան, ու վերադառնանք, այն ժամանակը մենք կլինինք մեր հայրենեաց առաջին թշնամին։»

Շատ չանցաւ, Պարսիկները եկան և նոցա շրջապատե-
ցին։ Նոքա ամէնքն զոհ եղան ուրախութեամբ հայրենեաց
փրկութեան համար, պատերազմելով և չարաչար կոտորելով
թշնամեաց զօրքը մինչև իւրեանց վերջին շունչը։ Լևոնի-
դասի և նորա ընկերաց այս անձնանուիրութիւնը այնպէս
քաջալերեց և վառեց սիրով բոլոր Յունաստանը, որ ամենե-
քեան զօրացան միացան, և հալածեցին այն ահարկու թըշ-
նամին։

Սակայն և երախտագէտ հայրենիքը չմոռացաւ Թեր-
մոպիլեայ դիւցազանց այս օրինակ անձնանուիրութիւնը։
Նոցա թաղուած տեղը արձան կանգնեց այս պարզ և փառա-
ւոր արձանագրով. «Անցաւոր, գնա պատմէ մեր հայրենակ-
ցացը, որ մենք այստեղ մեռանք հայրենեաց համար։»

Յունաց կանայքը այնպէս էին վառուած հայրենասի-
րութեամբ, որ իւրեանց որդիքը ուրախութեամբ զոհում էին
հայրենեաց փրկութեան համար։ Մի մայր՝ տեսնելով որ որ-
դին պատերազմի դաշտից վերադառնում է, առաջ է գնում
և շուտով մի լուր հարցնում. «բոլոր ընկերներս մեռան» որ
պատասխանում է նա, բարկանում է մայրը, կղմինտրով տալիս է
գլխին ու մեռցնում, ասելով. «Թշուառական, ուրեմն դու ժա-
բե՞ր լինելու համար կենդանի մնացիր դուն։»

Մի ուրիշ մայր՝ լսելով որ որդին պատերազմից փախել
է, գրում է նորան. «Կամ պէտք է մեռնիս հայրենեացդ հա-
մար, կամ իմ երեսս չտեսնես»։

Մի ուրիշն էլ հինգ զաւակ ունէր բանակի մէջ, և
հինգն էլ մեռնում են պատերազմում, բայց յաղթութիւնը
Յունաց ձեռքն է մնում. մայրը լսելով այս յաղթութիւնը՝ մո-
ռանում է իւր որդւոց մահուան դառն կսկիծը, վազում է
մեհեան և աստուածոց գոհութիւն է մատուցանում հայրե-
նեաց փրկութեան համար։

Մի ուրիշ մայր էլ քաղաքի պաշարման ժամանակը իւր անդրանիկ որդին մի տեղ պահապան է դնում, և երբոր տեսնում է, որ նա թշնամեաց նետերեցը վիրաւորեցաւ և մեռած իւր ոտքերի տակն ընկաւ, ասում է. «Եղբօրը կանչեցէք, որ գայ տեղը բռնէ։»

Իսկ Հռովմայեցւոց համար աստուածներից յետոյ հայրենիքն էր ամէն բանից աւելի սիրելի և ցանկալի։ Ծնած երկիրը սիրելը բնական է մարդուս. բայց Հռովմայեցւոց համար բնականից աւելի էր այս սիրոյ զգացումը։ Պատրաստ էին միշտ հայրենեաց ազատութեան, փրկութեան ու երջանկութեան համար ամէն տեսակ նեղութիւն կրել, և ամէն բան նուիրել. ուստի և հայրենեաց սիրու համար՝ հարստութիւն, հանգիստ, կեանք, փառք, բարեկամք, ազգականք, որդիք, և որ և իցէ զոհ աչքերին ծանր չէր երևում։

Հոստիլիոս անուն երևելի հռովմայեցին անիրաւութեամբ իւր հայրենի երկրիցը աքսորուած էր։ Նորա բարեկամներից մէկը նորան մխիթարելու համար ասում է. «Մի նեղանար, մի փոքր ժամանակից Հռովմ քաղաքական խռովութիւն և պատերազմ կունենայ, և բոլոր աքսորեալներին յետ կը կանչեն։»—«Քեզ ի՞նչ եմ արել, անիծեալ, պատասխանում է Հոստիլիոս բարկութեամբ, որ ինձ աքսորանքէս աւելի տխուր դարձ ես մաղթում։»

Պոմպոնիոս անուն հռովմայեցի զօրականը քաջութեամբ պատերազմելուց յետոյ գերի է բռնըւում և տանում մեր Միհրդատ թագաւորի առաջը։ Քաղցրութեամբ ընդունում է նորան թագաւորը և մեծաւ խնամքով նորա վէրքերը առողջացնել է տալիս. և երբոր առողջանում է, հարցնում է նորան թէ՝ ՚ի վարձ այնչափ խնամոց կարո՞ղ է վստահանալ նորա բարեկամութեան վերայ։ «Բարեկամդ եմ, պատասխանում է Պոմպոնիոս, թէ որ կուզես Հռովմայեցւոց բարեկամ լինիլ.

բայց թէ որ հայրենեաց դէմ ունեցած ատելութիւնդ շարունակես, գիտացի՛ր որ անհաշտ թշնամիդ պիտի լինիմ միշտ։»

Ամէն մարդ պարտական է սիրել իւր հայրենիքը եւ ազգը թէ ոչ։ Ինչու համար։ Մեր նախնիքը մեզ համար թողել են հայրենասիրութեան օրինակ թէ ոչ։ Ասա՛ մի քանի օրինակ, տեսնեմ։ Իսկ միւս ազգերն էլ ունին հայրենասիրութիւն, թէ ոչ։ Ասա՛ մի քանի օրինակներ տեսնեմ։—

ԳԱՐՈՒՆ

(Երգ պանդխտական հայի)

Ո՜հ, ի՞նչ անոյշ և ի՞նչպէս զով
Առաւօտուց փըչես հովիկ,
Ծաղկանց վերայ գուրգուրալով
Եւ մազերուն կուսին փափկիկ.
Բայց չես հովիկ իմ հայրենեաց,
Գնա՛ անցի՛ր սրտէս 'ի բաց։

Ո՜հ, ի՞նչ աղու և սրտագին
Ծառոց մէջէն երգես թռչնիկ,
Սիրոյ ժամերն 'ի յանտառին
Ըզմայլեցան 'ի քո ձայնիկ.
Բայց չես թռչնիկ իմ հայրենեաց,
Գնա՛ թռի՛ր սրտէս 'ի բաց։

Ո՜հ, ի՞նչ մրմունջ հանես վտակ
Ականակիտ և հանդարտիկ.
Քո հայելույդ մէջ անապակ
Նային զերենք վարդն ու աղջիկ.
Բայց չես վտակ իմ հայրենեաց,
Գնա՛ հոսէ՛ սրտէս 'ի բաց։

Թէպէտ թռչնիկ և հովն Հայոց

Ուերակաց թուչէն վերայ,
Թէպէտ պղտոր փտակն Հայոց
Նոճիներու մէջ կը սողայ,
Նոքա հառաչք են հայրենեաց,
Նոքա չերթա՞ն սրտէս 'ի բաց:

Պատմեցէք այս երգի միտքը ձեր խօսքերով: Ասացէք այս բառերի նշանակութիւնը. զով, գուրգուրալ, աղու, սրտագին, զմայլիլ, մրմունջ, ականակիտ, հոսել, նոճի, հառաչք:—Գիտէք այս երգի եղանակը:

Սովորեցէք անգիր այս երգը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԵՐՔԸ, ԿԵՆԴԱՆԻՔԸ ԵՒ ՀԱՆՔԵՐԸ

Որովհետև Հայաստանի մակերևոյթը միանման չէ, և որովհետև Հայաստան աշխարհումը կան այնպիսի տեղեր, որոնք բարձր են, և կան այնպիսիք՝ որոնք ցածր են, (ինքն լեռնոտ աշխարհ լինելով), այս պատճառաւ էլ Հայաստանի բերքերը և կլիման զանազան տեղ զանազան են, չընայելով որ Հայաստանը բարեխառն գօտիումն է գտնւում: Սորանից է որ Հայաստանի շատ կողմերում կան այնպիսի տունկեր և անասուններ, որոնք այրեցած գօտուն են պատկանում, կան այնպիսիններ էլ, որոնք բարեխառն գօտուն են պատկանում, և վերջապէս կան այնպիսիք, որոնք բոլորովին պատկանում են սառուցեալ գօտուն:

Եթէ մեր աչքի տակն առնունք այն, թէ կլիման և տեղի դրութիւնը մարդոց վերայ ևս ներգործութիւն ունին, կարող ենք ասել միևնոյն բանը Հայաստանի բնակիչների մասին: Վերոյիշեալ բանից կարող ենք հասկանալ, որ Մոկաց աշխարհի բնութիւնը և պարզ երկինքը կարող էին ներգործել այնտեղի Հայերի վերայ, որոնք պարապում էին աստեղաբաշխութեամբ և ուրիշ գիտութիւններով: Գողթն գա-

ւառի գինին և բնութիւնը կարող էր իր միջի Հայերին բանաստեղծ անել, որոնք մեր քաջ նախնեաց վիպասանութիւններն երգում էին իւրեանց անմահ քնարովը։ Սիւնեաց, Գուգարաց և Արցախու նահանգների բնութիւնը և երկրի դիրքը ներշնչում էին իւրեանց միջի Հայերի հոգւոյ մէջ այն պատերազմական ազատ հոգին, որով նոքա պատրաստ էին իւրեանց արիւնը թափելու Հայրենեաց ազատութեան և իւրեանց անկախութեան համար։ Այո՛, կար Հայոց մէջ և այն հոգին, որով նոքա ճանաչեցին քրիստոնէական հաւատոյ բարձր ճշմարտութիւնը և պարզութիւնը, իւրեանց անձն դրին այն հաւատոյ վերայ և անխախտ մնացին նորա մէջ մինչև ցայսօր, այն ժամանակը, երբոր իւրեանց ուրիշ դրացի ազգերը, կուրացած լինելով թէ՛ մահմետականութեամբ և թէ՛ մոխրապաշտութեան խաւարովը, սպառնում էին ամեն քայլում կլանել նոցա և մեր քաղցր Հայրենիքը։

Հայաստանումը, ինչ տեղ կլիման և տեղի դրութիւնը յարմար էին, այն տեղ գտնւում էր՝ ցորեան, հաճար, գարի, վուշ, բամբակ, թութ, սերգեւիլ, նուռը, պիստակ, շագանակ, նուշ, վարունգ, գղտոր, մեղր, ձիթենի, յասմիկ, մուրտ ծառը, տօսախ ծառը, լօշտակ բոյսը։ Անուանի էր Հայաստանի գինին, մանաւանդ Գողթն գաւառինը, Արարատ և Ուտի նահանգացը. անուանի էր և Հայաստանի ծիրանը, որ Եւրոպացիք Հայաստանիցը տարան։ Հայաստանումը գտնւում էր նմանապէս զանազան տեսակ խնկեղէններ, ինչպիսի են՝ քարախունկ և պտղախունկ. առաւել երեւելի է Հայաստանի զալզէն, որ մանանայի պէս քաղցր բան է, և որ գտընւում է այժմ մէկ քանի տեսակ ծառերի տերևների վերայ։ Գալզէն գտնւում էր աւելի Կարնոյ և Սասունքի մէջ տեղի երկիրներումը։ Հայաստանումը շատ անտառներ կային, թէ բնական, որոնք աւելի գտնւում էին Գուգարքումը և Սիւ-

նեաց աշխարհումը, և թէ արհեստական՝ որ տնկել էին մեր թագաւորները, և լցնում էին նոցա վայրենի անասուններով որսի համար։

Հայաստանի մէջ գտնւում էին 'ի հնուց զանազան որսի կենդանիք. ինչպիսի էին՝ եղջերու, վարազ, վայրի այծ և այլն։ Խիստ անուանի էր Հայաստանի ձին, թէ՛ գեղեցկութեան և թէ՛ ուժեղութեան կողմանէ, որոյ մէկ տեսակն էր Նժոյգ անուանեալն, որ աւելի գտնւում էր Տուարածոտն գաւառի՝ Խնուսի կողմերը, որ ըստ մեծի մասին Հայոց թագաւորները և իշխանները գործ կ'ածէին։ Կենդանեաց և բերքերի կարգը կարելի է դնել և որդան կարմիր մանր ճիճուն, որ աւելի գտնւում էր և գտնւում է Արարատում։ Հայաստանի զանազան ձկների միջին երևելի էին և են տառեխը, կարմրախայտը և գեղարքունին։

Գազանների ցեղից Հայաստանում գտնւում էր՝ առիւծ, ինձ, վագր, ընձուղտ, գայլ և այլն. Թռչունների ցեղից՝ ագռաւ, սագ, բադ, փոր կամ կարապ և ուրիշ զանազան թռչուններ։

Հայաստանը շատ տեսակ հանքեր ունի, բայց այժմ ըստ մեծի մասին անգործ մնացած են, ինչպիսի են Մանանաղի և Դարանաղի գաւառներումը. նմանապէս և Աղիովիտ գաւառումը ունէր և աղի շատ հանքեր, ինչպէս և մինչև ցայժմ Բագրևանդ գաւառի Կողբ գիւղումն։ Աղձնեաց և Տուրուբերան աշխարհներումը գտնւում էր երկաթի, պղնձի, կապարի և ուրիշ հանքեր։ Բարձր Հայոց՝ Սպեր գաւառումը, և չորրորդ Հայոց՝ Հանձիտ գաւառումը գտնւում էր արծաթի հանք։ Ինչպէս մեր, նոյնպէս և օտար, մատենագիրներն պատմում են՝ թէ Հայաստանում կային զանազան և ազնիւ քարերի հանքեր, ինչպէս էին՝ բիւրեղ կամ սառնատեսակ, եղնգաքար կամ սարդիոն, շափիւղ, զմրուխտ,

ակատ, սև սաթ, մարմարիոն, որ մինչև այսօր էլ կան. իսկ հասարակ կիճեր, ինչպէս և զանազան գոյնզգոյն քարեր, խիստ շատ կան։ Շամիրամ Ասորոց թագուհին Հայաստանի ժայռերից մէկ քար կտրել տուաւ, որոյ երկայնութիւնն էր 130 ոտնաչափ, իսկ լայնութիւնն 25 ոտնաչափ։

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻԿ

Հայո՜ց աշխարհիկ, գարունդ է հասել,
Ահա գեղեցիկ գարուն քո եկել.
Ով դու ի վաղուց մոռցուած հայրենիք,
Ով դու իմ սրտիս անմոռաց տեղիք.
Ահա գարունիկդ եկել է եկել
Աւագ Մասեաց ծայրն ընդ քեզ հաշտ հայել.
Այն սեւ սեւ ամպերն են դարձել ի փախ,
Այն ճերմակ ճերմակ սարերն են անվախ.
Ձընիկն ի ծոցին բացել է ճան'պարհ,
Քաղցրիկ կըրկըջով գլորէ գետս հազար.
Յայն բարձըր ժայռից, որ երկնուց են մօտ,
Կենաց օրհնութեան ծագէ առաւօտ։

Ահա քո բլուրներն, Հայո՜ց աշխարհիկ,
Այն քո բիւր բլուրներն ու բիւր վըտակիկք,
Հազար քո ձորերդ ու հազար քո դաշտ
Տարան ցուրտ ձըմեռդ ու ձիւներըդ շատ.
Լերինք ու հովիտք ընդարձակ ու լայն
Նախշուն զարդարին նոր հարսին նըման,
Կապուտակ սարերդ գոյնզգոյն պըսակ
Կապեն ի գըլուխ զինչ նոր թագաւորակ.
Ի ծայրից սարից որ երկնուց են մօտ՝
Փըռուի մինչև ի խորն հօրոտն ու մօրոտ.

Գետեզերքն ամէն բացել են շուշան,
Պայծառ ծփանօք ցընցըղկեն գընան.
Սարեզերքն ամէն զվարդն երեւցուցին,
Ա՜Հ, կարմրուկ վարդեր, զուարկք Եդեմին։

Բըլբուլն ի հեռուանց թողեց ծըգնարան,
Ծովեր ցամաքներ թեւեց անդուլման.
Կանչեց ի յօդուն երեք հետ բարեւ,
Ոտկունքն գըլրաւ ի սարին վերեւ,
Սարին վերեւէն ի վարդին տերեւ,
Հայո՜ց աշխարհիկ, քեզ տուաւ բարեւ.
Սարեկն ի սարին եկաց ու մնաց,
Ընդեղ նախընծով եղաւ երգասաց.

Արագիլն յերդիս մաքրեց իր բունիկ,
Կագնեցաւ կըղղաց «Հայոց աշխարհիկ».
Հովիւն ու հօտաղ, դաւինք, եզն ու կով
Գոհացան զԱստուած՝ մարդեր շուրջ գալով։
Հէնց քեզ Տէրն է տուել գարուն գեղեցիկ,
Որ դրախտի նմանիս Հայո՜ց աշխարհիկ։

Բայց Նահապետիս ի՞նչ սանմ ծերուկ,
Որ եմ քան զամէն ծաղիկ փաղանցուկ.
Իմ գարունս անցել՝ ու հասել աշուն.
Ցամքած տերեւուկս ըսպասեմ՝ հովուն,
Թէ ե՞րբ ի լերանց ծոցուն փըչէ խոր,
Զըգէ անկակիծ զիս ի մահուն ձոր.

Նահապետիս կեանքն եղաւ բաւական,
Խընդութեամբ կեցաւ ի յիւրն Հայաստան.
Ժամ է որ երթայ ի յայն հայրենիք,
Ուր խեկի չզատուին եղբարք սիրելիք.
Խընդութեամբ կ՚երթամ քեզնից Հայաստան,
Քեզնից առած հողս՝ ի քեզ տամ թաղման.

Ա՜յ մանկտիք եկէք շուրջ «Նահապետիս»
Ականջ դիք քերթող հօրդ յետքի ձայնիս.
Մանկտիք, զիս Հայոց հողն ու ջուր սնուցել,
Եւ այն հողն ու ջուր սրտով եմ սիրել.
Հայրենեաց հարուստ է հող, ջուրն անուշ,
Քանց օտար վարդ քաղցր է հայրենեաց փուշ.
Հայաստանի օդն է քաղցր ու բարակ,
Հովերն են անուշ, պայծառ են վտակք.
Ջուրն ու պտուղն համ տան անմահութեան,
Խոտն ոսկեզօծէ զգառներուն բերան.
Յոսկեթել ամպոց յայգուն զովագին
Թորթոր իջանէ ցօղիկ մանրագին,
Կարմիր ճաճանչով արեւուն շաղուած
Գայ ի խաւարծիլ մանանայ կենաց։

Ո՜հ լերունք ծաղկած, ո՜հ ջուրք ծիծաղկոտ,
Զանուշիկ հովերդ ի յիս ածէք մօտ.
Հողմունք անուշիկք եկէք մօտ ի յիս,
Ճունչ ու երգս առէ՛ք տարէ՛ք ի Մասիս.
Տարէք վերջի շունչս ի տուն տապանին,
Ու լսեցուցէք զաւկաց Թորգոմին.
Ձեզ կ'ասեմ մանկունք, սիրունք նազելիք,
Որոց է բնական Հայոց աշխարհիկ.
Մի՛ ուրանայք զերկիրդ ու զազգըդ սիրուն,
Ծառն արմատով ծառ, տունն հիմամբ է տուն։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉՔԸ ԵՒ ՆՈՑԱ ԿՐՕՆԸ

Ինչպէս Հայաստանի աշխարհագրական դրութիւնը և Հայոց լեզուն վկայում են՝ Հայերը ծագում են Յաբեթի

սերունդներից, և ջրհեղեղից յետոյ բնակում էին Հայաստանումն առանց որոշիչ անուան և հաստատ կառավարութեան։ Պէտք է որ դոցա այդ ժամանակուայ կրօնը աւելի ճշմարիտ և պարզ լինէր՝ քան միւս ժողովրդոցը, որոնք արդէն ցրուել էին Հայաստանից և սկսել էին մոռանալ ճըշմարիտ Աստուծուն։ Նոյ նահապետը ինչպէս և նորա կին Նոյեմզարէն Գալով Հայաստանումը, և ապրելով մինչև Արմենակայ ժամանակներն, կարող էին ճշմարիտ Աստուծոյ կրօնը և հասկացողութիւնը անխախտ աւանդել անդրէածին Հայերին, ինչպէս և նոցա, որոնք Բաբելոնը թողին և Հայկայ հետ եկան Հայաստան։ Այս պատճառաւ է, որ շատերը մեր հարազատ պատմաբաններիցը խոստովանում են՝ թէ Հայկը Բաբելոնը թողեց և եկաւ Հայաստան, այն պատճառաւ որ չըկամեցաւ միւս եօթանասուն նահապետների հետ հնազանդել և պաշտել Բէլին, այլ ինքըն լինելով Հայաստանի որդի և ունենալով ճշմարիտ Աստուծոյ վերայ հասկացողութիւն, վրէժխնդիր և պաշտպան եղաւ Աստուածպաշտութեան, սպանելով Բէլին։

ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ

Ի բիւր ձայնից բնութեան շըքեղ
Թէ երգք թռչին սիրողաբար,
Մատունք կուսին ամենադեղ
Թէ որ զարնեն փափուկ քընար,
Չունին այնքան ձայն մի սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն։

Տուր ինձ քու ձեռքդ, եղբայր եմք մեք,
Որ մըրկաւ էինք զատուած,

Ռաղդին ամէն ոխ չարանենք
Ի մի համբոյր ցրուլին ի բաց:
    Ընդ աստեղօք ի՛նչ կայ սիրուն,
    Քան զանձկալի եղբայր անուն:

Երբ ալեւոր Մայր Հայաստան
Տեսնէ զորդիս իւր քովէ քով,
Արտին խորունկ վէրքըն դաժան
Քաղցր արտասուաց բուժին ցօղով:
    Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
    Քան զանձկալի եղբայր անուն:

Մէկտեղ լացինք մենք ի հընում. .
Եկէք դարձեալ յար անբաժան
Խառնենք զարտօսր և զխնդում,
Որ բազմածնունդ լինի մեր ջան:
    Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
    Քան զանձկալի եղբայր անուն:

Մէկտեղ հոգնինք, մէկտեղ ջանենք.
Մէկտեղ թափին մեր քրտինքներ,
Ըզհունձ բարեաց յերկինս հանենք,
Ու կեանք առնուն Հայոց դաշտեր:
    Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն
    Քան զանձկալի եղբայր անուն:

ՀԱՅԿԱՅ ԳԱՂՈՒՍՏԸ Ի ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՆՈՐԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԲԷԼԻ ԴԷՄ

Քսաներկուերորդ դարումը նախ քան զՔրիստոս, երբ-որ աշտարակաշինութեան և այնտեղ գտնուած հսկայից պատ-ճառաւ այն ժամանակուայ աշխարհումը մեծամեծ փոփոխու-

թիւններ յառաջացան, մէկ մարդ՝ որոյ անունն էր Հայկ, գալով Բաբելաստանից Հայաստան, ժողովեց իւր ձեռի և հովանաւորութեան տակ այն տեղի Յաբեթական ժողովուրդներին, և իւր անունով այն ժողովրդեանը անուանեց Հայ, իսկ երկիրը Հայաստան։

Հայկը նոյնպէս Յաբեթի ցեղեցն էր և Յաբեթի Թոռան Թորգոմի որդին է համարւում։ Նա միւս քաջարի մարդկանց նման Հայաստանից գնացել էր Բաբելոն, և քաջ ու երևելի էր հսկայից միջին, որոնք մասնակցութիւն ունէին աշտարակաշինութեանը։ Աշտարակաշինութիւնը անյաջող վերջանալուց յետոյ, երբոր Բէլ կամ Նեբրովթը կամենում էր ամենի վերայ իշխել և տիրել բոլոր երկիրներին, Հայկը չհնազանդուելով վերառաւ իւր Արմենակ որդուն, որ ծնել էր Բաբելոնումը, և իւր ստացուածովն և մարդկանցովը, որոնք թւով 300 հոգի էին, եկաւ Արարատ աշխարհը։ Այս տեղ՝ Հայաստանի հարաւային մասերումը, որ կարծելի է Մոկաց և Կորդուաց աշխարհները, մէկ բարձրաւանդակ տեղ բնակութիւն շինեց և տուաւ իւր Կադմոս Թոռանը՝ որ Արմենակայ որդին էր, իսկ ինքն իւր Արմենակ որդւովն և ուրիշներովը գնաց Բզնունեաց ծովի արևմտեան հիւսիսոյ կողմերը։ Այն տեղի ցիրուցան ժողովրդոց իւր ձեռի և հովանաւորութեան տակն առաւ, շինեց Հայկաշէն քաղաքը և այն երկրի անունն էլ կոչեց Հարք։

Մինչև որ Հայկը Հայոց երկրի և Հայոց վիճակը բարելաւացնելու վերայ էր, Տիտանեան Բէլը, որ արդէն իւր հզօր տէրութիւնը հաստատել և կառավարում էր, կամենում էր որ միւս նահապետներն ևս իւր ձեռքի տակը լինին, ուստի իւր որդուն դեսպան ուղարկեց մէկ քանի թիկնապահներով Հայկայ մօտ ասելով. «Բնակեցար սառնամանեաց և ցրտութեան մէջ, այժմ մեղմի՛ր քո հպարտացած բարքի ցրտու-

թիւնը, հնազանդի՛ր ինձ և հանդարտութեամբ կաց իմ երկիրներիս մէջ, որտեղ քեզ հաճոյ կը լինի»: Հայկը՝ երբոր լսեց այս պատգամաբերութիւնը, խստութեամբ պատասխանեց դեսպաններին և յետ դարձրեց: Բէլը բարկանալով Հայկայ յանդգնութեան վերայ, իսկոյն բազմաթիւ զօրք ժողովեց և դիմեց դէպի Հայաստան, այն նպատակաւ, որ մեր աշխարհը հիմն 'ի վեր տապալէ: Երբոր Բէլը մօտեցաւ Հայոց աշխարհին, Կադմոսը՝ որ արդէն Ասորեստանի սահմաններումն էր գտնւում, շուտով մարդիկ ուղարկեց Հայկայ մօտ, այսպիսի խօսքերով՝ «Գիտացի՛ր ո՛վ մեծդ դիւցազանց, որ Բէլը գալիս է քո վերայ քաջ և բարձրահասակ հսկաներով, և ես իմանալով նորա մօտ լինելը՝ ահա՛ քեզ իմաց եմ տալիս, ուրեմն մտածի՛ր և ինչ որ անելու ես արա՛»: Այն ինչ ինքն Կադմոսն էլ շուտով պատրաստուեցաւ և գնաց Հայկայ մօտ:

Այն ժամանակն ուշիմ և խոհեմ Հայկն իւր մատաղ տէրութիւնիցը ժողովեց զօրք, որք էին թուով փոքր և ըստ մեծի մասին իւր որդիքը և թոռները, և գնաց Բզնունեաց ծովի մօտ Բէլի առաջ: Այստեղ սկսեց խրախուսել իւր փոքր զօրքը և յորդորել չըվախենալ ահարկու և բազմաթիւ թշնամիներից, այլ քաջութեամբ պատերազմել նոցա հետ, լաւ իմանալով թէ այն յաղթութիւնիցն է կախուած իւրեանց գերդաստանների կեանքը և մատաղ տէրութեան վիճակը. ուրեմն պէտք է կա՛մ մեռնիլ, որ իւրեանց մահից յետոյ միայն թշնամիները կարողանան իւրեանց սրբազան երկրին տիրապետել, և կա՛մ յաղթել, որ օրինակ լինի յետի եկողներին, թէ՝ իւրեանց նախնիքը չըխնայեցին իւրեանց արիւնը և կեանքը հայրենեաց ազատութեան համար: Այսպէս ասելով՝ Հայկը յառաջ գնաց դէպի Բզնունեաց ծովի հարաւային լեռները, և այնտեղից տեսաւ նա Բէլին ու նորա բազմաթիւ զօրքերին. ուստի շուտով կարգ դրեց իւր զօրքի միջին և նոցա կանգնեցրեց եռանկիւնի

ձեռով. առաջին տեղն ինքը բռնեց իւր մարդկանցով. աջ կողմն կանգնացրեց Արմենակին իրաններով, իսկ ձախ կողմն՝ Կադմոսին, նմանապէս իրաններով։

Բէլը զարմանալով Հայկայ վստահութեան վերայ, ջոկեց իւր զօրքի միջիցը քաջերին և նոցանով յառաջ եկաւ Հայկայ միտքն իմանալու. իսկ Հայկը չըկորցնելով իւր ձեռից այսպիսի յաջող դիպուածը՝ յարձակուեցաւ Բէլի վերայ, փակեց նորա ամբոխը իւր եռանկեան մէջ և սկսեց կոտորել իւր թշնամիքը։ Բէլը զարհուրելով այս անակնունելի դիպուածից՝ կամեցաւ յետ գնալ և սպասել իւր միւս մնացած զօրքին, բայց Հայկը հասկանալով նորա դիտաւորութիւնը՝ յառաջ գնաց և այնպէս պինդ քաշեց իւր երեքթևեան նետն, որ դիպչելով Բէլայ կուրծքին՝ թիկունքիցը դուրս եկաւ, և ինչպէս պատմում են, խրեցաւ գետնի միջին. Բէլը վայր ընկաւ, փչեց հոգին, և մնացեալ զօրքը զարհուրելով Հայոց քաջութիւնից, սկսան փախչել դէպի Բաբելաստան։ Պատերազմի տեղը Հայկը շինեց քաղաք և անուանեց Հարք, Բէլի վէրընկած տեղն անուեցաւ Գերեզմանք, իսկ երկիրն Հայոց Ձոր։

ՀԱՅ ՀԱՅՐԵՆԻՔ

Առաւօտուն դըռնակն է բաց,
Եՙլ եՙլ արեգ Հայաստանեայց.
Ահա ելնեն՝ որք կան ի քուն,
Ու Նահապետն այլ որ անքուն՝
Յաստուածադարդն ելնէ հանդէս,
Հայ հայրենեացն ելնէ ի տես։

Ահա ելաք ի մեծ հանդէս,
Հայ հայրենեացս ելանք ի տես.

Ահա տեսանք զաշխարհն Հայոց,
Որ գըրախտին առել է ծոց,
Դէմ երկընուց կայր կանգնըման,
Անդրանկածին մօրըն նըման։

Ահա ելնէր արեւն յամպոց,
Վարդ կու թափէր յաշխարհն Հայոց.
Յօղըն տեղայր զով ու սիրուն,
Զինչ մարգարիտ ի սատափուն.
Կարմիր կանաչ ծին ծիրանի
Գօտի ածուէր Հայաստանի։

Նրանց սարերըն բարձրածայր
Ոսկի պըսակ եդան հաւսար.
Հայոց գետերն հազարաւոր
Իջանէին ճաճանչաւոր.
Հազար թէ գետ, բիւր թէ առուի
Հայոց ծովակքն այլ աւելի։

Ո՜ դըրախտի ջրեր իջէ՛ք իջէ՛ք,
Զերկիրն Հայոց արբեցուցէք.
Ահա վտակունք նըրկըջային,
Զորն ու հովիտ արբենային.
Յամէն կաթէն աստղիկ ծըլնէր,
Յամէն ծըլնէն ծաղիկ ծագէր։

Ահա տեսանք զծաղկունքն Հայոց
Գոյնն էր երկնից, հոտըն խընկոց.
Վարդն ու շուշան էին վառման,
Հարսնամատերն ի ջուր փըռման.
Հօրոտ մօրոտ էր տարածել,
Ըզտեսողաց աչքըր քաղել։

Ահա տեսանք զվաստակն Հայոց,
Սերմըն թափել էր յերկընուց.
Անդ որ Ադամ վարէր գութան,
Քանց ըզքառասուն հասկերըն տան.
Անդ որ Աբել գառն ընծայէր՝
Մաքիքն ածեն միշտ ջուխտակներ.
Անդ որ զայգին է տընկել Նոյ,
Ոսկի ողկոյզքն են խաղողոյ.

Ահա տեսանք զխորանքն Հայոց,
Կամար կապել են յերկնից ծոց.
Եկեղեցեաց թիւն հազարով,
Մատուռք՝ սըրբոցն են համարով,
Խունկըն ծըխի առաւօտ իրկուն,
Աստուած առնու զհոտըն սիրուն:

Ահա տեսանք զքարերն Հայոց,
Մեր հայրերուն մահուան օրրոց.
Գերեզմաններըն լուռ էին,
Խաչվէմքն ի քոյն աղօթէին.
«Տէրն ողորմի հանգուցելոց,
Եւ ամենայն երկրիս Հայոց:»

Ահա տեսանք զերկինք պայծառ,
Շըրթներն՝ երկրիս Հայոց հաւսար,
Հաւերն ի հունչ, հովերն ի շունչ,
Օդըն վառվառ, ջուրըն ի մըրմունջ.
Լուսիկս է ձոխ, արեւս անուշ,
Սարերն ի վար իջնումք մեք ուշ:

Ահա ի դունան երթայր արեւ
Նահապետին մենք տանք բարեւ.—
Ծեր Նահապետն այլ՝ ձեզ բարեւ,

Աստուած վերէն տայ շատ արեւ.
Ի ժիր գնայէք դուք յայդ հանդէս,
Հայ հայրենեացդ եղէք ի տես։

ՏԻԳՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Երուանդայ որդի Տիգրանայ ժամանակները Հայոց տէրութիւնը ընդարձակւում է։ Փոքր Ասիոյ մեծ մասն և մինչև անգամ Յունաց գաղթականութեանց մէկ քանիսները ընկնում են Հայոց ձեռքի տակ, և հարկ են տալի մեր թագաւորներին։ Այս ժամանակը Հայոց մէջ արհեստը և քաղաքականութիւնը առաջ են գնում։ Ի բնէ Հայերը ընդունակ էին վաճառականութեան, և այդ ժամանակները շատ ազգերի հետ վաճառականութիւն էին անում։ Երասխ գետովը, Կասպից ծովով և Օքսուս գետովը (Ամու-Դարիա), որ այն ժամանակը մէկ ճիւղով մտնում էր Կասպից ծովը, Հայերը գնում էին, ինչպէս յոյն Ստրաբոնն է պատմում, Բակտրիացւոց և մինչև անգամ Հնդկաց աշխարհները, և Եփրատ գետովը, ինչպէս Հերոդոտոսն է պատմում՝ հասնում էին Բաբելոն։ Քարուանով գնում էին Կապադովկիա և մինչև անգամ Ասորոց աշխարհովը՝ Փիւնիկէ։ Տիւրոսացիք Հայերից ստանում էին լաւ տեսակ ջորի և ձիաններ և Հայաստանի ուրիշ բերքեր, իսկ նոցա փոխարէն տալիս էին՝ ոսկի, արծաթ, պատուական քարեր և զանազան անկուածներ։ Նաւագնացութիւնը նոցա ստիպեց նաւեր շինել, որոնք աւելի գտնւում էին Կասպից ծովումը և Եփրատ գետի վերայ։ Մէկ քանի արհեստներ, որոնք հարկաւոր էին կենցաղավարութեանը՝ բաւական առաջացած էին. մշակուած էր նմանապէս ոստայնանկութիւնը որպէս և նարօտ գործելը, ինչպէս Մովսէս Խորենացին է ասում։ Տիգրանայ ժամանակները զէնու-

որական արհեստները առաւել կատարելագործութեան, հետեւակ զօրքի մօտ գտնւում էին հեծելազօրք, լոկ նետաւորների տեղը այժմ երեւում են սուսերաւորներ և տիգաւորներ. թեթև հագնուած զօրաց տեղը վահանաւորներ, սպառազէններ և զրահակիրներ. իսկ մեր աղեղնաւորները և պարսաւորները, որոնք հեռուից պէտք է կռուէին, առհասարակ գովուած էին ուրիշ ազգերից: Զինուորական արհեստը՝ կապուած լինելով դարբնութեան հետ, բաւականին յառաջացրել էր և տարածել մեր միջին և այս արհեստը:

Առաւել երեւելի էին Տիգրանայ ժամանակուայ Հայոց պատերազմական գործքերը. Երեմիայ մարգարէն Հայոց է վրէժխնդիր կանչում Բաբելացւոց զեղխ թագաւորաց դէմ, որոնք գերի էին տարել Հրէից ժողովրդեանը և նոցա սրբազան անօթները: Կիւրոսը այս ժամանակներումը սկսել էր հիմնել Պարսից ընդարձակ տէրութիւնը, նուաճել Մարաց և Լիւդացւոց թագաւորներին, բռնելով մեր խոհեմ և քաջ Տիգրանի հետ իւր ամէն գործքերը և առաջարկութիւնները: Մարաց Աժդահակ թագաւորը տեսնելով դոցա սէրը և միաբանութիւնը մտածմանց մէջ է ընկնում, և երազի մէջ տեսնում է Հայոց բարձր լեռների մէկի վերայ մի կին, որ ծնում է երեք դիւցազունք. առաջինը առիւծի վերայ նստած գալիս է դէպի արեւմուտք. երկրորդ դիւցազն ընձու վերայ՝ դէպի հիւսիս, և երրորդը մէկ անարի վիշապ սանձելով գալիս է իւր տէրութեան վերայ: Այս վերջինը հասնելով նորա պալատի մօտ՝ ուր Աժդահակը զոհ էր մատուցանում կռոց, կամենում է խորտակել նորա, բայց Աժդահակը մէջն է ընկնում և սպանում է նորանից: Աժդահակը սարսափելով՝ զարթնում է քնից և կանչում է խորհրդականաց և մոգերին, որոնք մեկնութիւն են տալիս՝ թէ դէպի արեւմուտք եկողն է Կիւրոսն, դէպի հիւսիս՝ Բաբելացւոց թագաւորը, իսկ վիշապին սանձողն է Հայոց քաջ Տիգրանը, ուրեմն և պէտք է շուտով

զօրք ժողովել և նոցա առաջը կտրել: Բայց Աժդահակը կամենում է խորամանկութեամբ բանը վերջացնել, այն է բարեկամութիւն անել Տիգրանայ հետ՝ նորա քոյրը կին առնուլ և այնպէս սպանել նորան, բայց ինքն խաբւում է և իւր կորստեանը առիթ է լինում: Պատգամաւորներ է ուղարկում Տիգրանայ մօտ՝ նորա քոյր Տիգրանուհին կին խընդրելով: Ամուսնանալուց յետոյ ասում է նորան՝ թէ քո եղբայր Տիգրանը իւր Զարուհեայ կնոջ խօսքովն կամենում է մեզ և մեր թագաւորութիւնը ոչնչացնել. որովհետև Զարուհին նախանձում է քո տիկնաց տիկին լինելուդ համար: Տիգրանուհին չըխաբուելով այսպիսի պատրողական խօսքերիցը՝ շուտով յայտնում է ծածկաբար եղբօրը:

Աժդահակը հրաւիրում է Տիգրանին առանձին խօսելու, բայց սա յայտնում է, թէ շուտով կը տեսնենք միմեանց պատերազմի դաշտումը: Սորանից յետոյ զօրք է ժողովում և հասնում է Մարաց սահմանը: Այս տեղ պատերազմը ուշանում է առ ժամանակ, մինչև Տիգրանուհին փախչում է եղբօր մօտ, Կիւրոսն էլ վրայ է հասնում 535 թուականին. Տիգրանը անձամբ ընկնում է Աժդահակայ վերայ և նորան սպանում է: Այսպիսով պատերազմը վերջանում է և 10,000 մարդ գերելով՝ իւրեանց Անուշ թագուհու հետ միասին բնակեցնում է Մասիս սարիցը դէպի արևելք՝ Երասխ գետի ափերումը, որ տեղից յետոյ ծագեցան Վիշապազունք: Իսկ իւր Տիգրանուհի քրոջ համար Երինջակ գաւառումը Տիգրանակերտ քաղաքն է շինում, և նորան, ինչպէս և նորա սերնդոց, այն տեղ է բնակեցնում:

ՀՐԱԶԴԱՆ

Հրազդա՜ն, գետակդ իմ հայրենի,
Հրազդա՜ն, ջըրիկդ իմ անուշիկ,

Ահա թողել զհողն օտարի՝
Բաբկէնս հասել եմ պանդըխտեկ.
Ա՜յ Հրազդան, ա՜յ ջուրք հայրենիք,
Ա՜յ ափունք, յէ՞ր լայք լռիկ։

Ես ձեր դրացնակն եմ, չէ՞ք ճանչել,
Սիրտս ըղձեղ չէ մոռցել իսկի.
Դուք կարկըջեկդ է՞ր էք մոռցել.
Ծփծղուն երեսդ է՞ր սուգ ունի։
Ա՜յ Հրազդան, ա՜յ ջուրք հայրենիք,
Ա՜յ ափունք, յէ՞ր լայք լռիկ։

Վա՜հ, մեր կանաչ անտառիկս ո՞ւր,
Ո՞ւր տաղւարիկս, ո՞ւր մեր նըշխս,
Հովո՞ւն եղան թէ ծովուն կուր.
Ո՞ւր մեր տընակն, ո՞ւր մեր այգիս.
Ա՜յ Հրազդան, ա՜յ ջուրք հայրենիք,
Ա՜յ ափունք, յէ՞ր լայք լռիկ։

Ո՞ւր ես աչացըս լոյս Խանտուկ.
Իմ ընկերներն ո՞ւր են Հրազդան.
Միթէ Պարսի՞կն առաւ գերուկ,
Միթէ ամէնքն ի հո՞ղ դարձան.
Ա՜յ Հրազդան, ա՜յ ջուրք հայրենիք,
Ա՜յ ափունք, է՞ր լայք լռիկ։

Ա՜հ, անցուգնաց եղել ամէն.
Ա՜հ, անցուգնաց է Հայաստան.
Օ՜խ անմէկնիկ թողած աստէն
Հետ անցնիս գնաս դո՞ւն էլ Հրազդան...
Անցի՜ր դընա ջրիկդ հայրենի,
Արտասունք հերիք են Բաբկենի։

Հրազդան գետը այժմ կոչւում է «Զանգի», որ դուրս է գալի Սեւանայ ծովիցը եւ Երեւանի միջով անցնելով գնում է թափւում Երասխը:

ՀԱՅՈՑ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԿՐՕՆԸ ԵՒ ԳԼԽԱՒՈՐ ՉԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ

Արայի ժամանակները սկսում են հեթանոսական մոքերը Հայոց մէջը մտնել: Արմաւիրը նուիրական էր Արմենակիցը տընկուած սօսիներովը, որոնցով Հայկազանց ժամանակները հմայութիւն էին անում: Հայոց ազգը 'ի սկզբանէ մեծ կապակցութիւն ունէր Արեաց անուանեալ ազգաց հետ, ինչպէս ցոյց են տալի մեր գետերի շատերի անունները, մեր նախնեաց միաբանական գործ բռնելը նոցա հետ, աշխարհագրական դրութիւնը, որով Հայաստանի արեւելեան մասերը հաւասար մակերեւոյթով միանում էր նոցա աշխարհների հետ, և մինչև անգամ մեր աշխարհի արեւելեան մասերը լցուած էին Պարսիկներով և Մարաց ազգով: Այս պատճառաւ Հայոց հին հեթանոսական կրօնը մեծ մասով նման էր նոցա Զրադաշտական կրօնին: Բարձրագոյն էակին մենք Արամազդ էինք ասում, նոյն նոքա Աուրամաստա: Մեր կրօնովը, ինչպէս և նոցա՝ հոգեղէն էութիւնները երկու էին՝ բարի և չար կամ հրեշտակ և դև:

Զրադաշտի ուսման համեմատ Հայերը մեհեաններ չունէին, որովհետև արգելուած էր փակել աստուածութիւնը մեհեանների մէջ. բայց յետոյ քիչ քիչ ուրիշ խառն պաշտամունքներ էլ մտան այդ առաջուայ պարզ վարդապետութեան մէջ: Առաջ Փոքր Ասիոյ կողմերից մեր մէջը մտաւ Անահիտ չաստուածուհու պաշտամունքները, որ այն տեղ փառաւոր պաշտամունքներ և հոյակապ մեհեաններ ունէր: Յետոյ Արշակունի թագաւորաց դից պաշտամունքները, և ամենից վերջը Յունաց դիւցաբանութիւնը բոլորովին խառնակեցին մեր նախնեաց պարզ կրօնը, երբոր մեր Արշակունի թագաւորները նոցա չաստուածների պատկերները և քրմերը բերին Հայաստան: Ամենից առաջ Աշտիշատը, յետոյ Թիլը, Անի ամրո-

ցը, Երիզը, Բագայառիճը և Բագաւան կամ Դիցաւանը նուիրական տեղերն էին համարւում, ունէին փառաւոր մեհեաններ և քրմաց դասեր։

Քրմապետութեան պատիւը՝ մինչև Տիգրան երկրորդի օրերը, Վահագնի սերունդներն ունէին ժառանգութեամբ. բայց երբ նոքա զրկուեցան այդ պատուիցը, ուրիշներն էին կատարում միևնոյն պաշտօնը, և շատ անգամ թագաւորների որդիքը և թոռներն էին առնում այդ պատիւը մեր թագաւորներից։ Շատ անգամ ուխտ էին գնում երևելի բագիններին և չաստուածներին, զոհ էին մատուցանում ցուլ, նոխազ, ձի, ջորի, որոնք պէտք է լինէին սպիտակ և ոսկով ու արծաթով զարդարած, նուիրում էին նոյնպէս ոսկեայ պսակ, ականակապ անօթներ, և երբեմն ծաղկանց պսակներ կամ ծառերի ճիւղեր։

Չաստուածոց հայրը համարւում էր Արամազդը, որոյ հոյակապ պատկերը գտնւում էր Անի ամրոցումն, ուր որ նըստում էին քրմապետները և ուր թաղւում էին Արշակունի թագաւորները, իսկ քրմապետները թաղւում էին Բագաւանում։ Արամազդայ միւս պատկերը գտնւում էր Բագաւանումն, ուր թաղուած էր Տիգրան երրորդի եղբայր Մաժան քրմապետը։ Իւր եղբօր մահից յետոյ Տիգրան Գ. նորա գերեզմանի վերայ կանգնեցրեց Արամազդայ պատկերը, ուր հիւրերը նորա զոհերով և նուէրներով բաւականանում էին։ Այս պատճառաւ այդ պատկերը կոչւում էր Արամազդ Վանատրի, Վաղարշ թագաւորը՝ Նաւասարդ ամսեան մուտքերումը, որով մեր նոր տարին էր սկսւում, այդ տեղ հիմնեց ամանորաբեր տօնը։

Երկրորդն էր Անահիտ չաստուածուհին, որ ծնունդ էր Արամազդայ, մայր ամենայն զգաստութեանց, փառք ազգին Հայոց, կեցուցիչ շունչ և կենդանութիւն աշխարհին Հայոց։

Սորա պատկերը գտնւում էր Եկեղեաց Երիզ աւանումը և շատ ջերմեռանդութեամբ էին գնում ուխտ սորա բագինին: Հայոց թագաւորների հիւանդութեան ժամանակն առողջութիւն էին խնդրում նորանից, և շնորհակալութիւն էին մատուցանում յաղթութեանց ժամանակը: Սորա միւս պատկերը գտնւում էր Տարօն գաւառի Աշտիշատ գիւղումը: Այս պատկերը ասւում էր ոսկեծին, ոսկիամայր դիք կամ ոսկիահատ, որովհետև ոսկեղօծ պղինձ էր:

Երրորդն էր Վահագն, որի պատկերը և մեհեանը գտնւում էր Աշտիշատումը, նորա պատկերն ասւում էր Վիշապաքաղն Վահագնի, իսկ մեհեանը Վահէվանեան, որ էլի ասւում էր Հաշտից տեղի: Վահագն միևնոյն նշանակութիւնն ունէր Հայոց համար, ինչոր Հերակլէսը Յունաց համար:

Բացի վերոյիշեալ գլխաւոր չաստուածները՝ Հայերն այլ և պաշտում էին Տիւր անուամբ չաստուածը, որ երազներ մեկնողն էր, դպրութեանց և ուսմանց պաշտպան. սորա մեհեանը, որ կոչւումէր Երազամոյն, գտնւում էր Աշտիշատ քաղաքի մօտ, ճանապարհի վերայ. Միհրական դիք, որոյ առաջին կրակն անշէջ էին պահում. սորա մեհեանը գտնվում էր Բագաւանումը կամ Բագայառիճումը: Նանէական դիք՝ որ միևնոյն էր Հայոց համար, ինչոր Յունաց համար Աթենասը. սորա մեհեանը Թիլ աւանումն էր: Աստղիկ՝ որոյ մեհեանը Աշտիշատումն էր: Բարշամեան դիք, որ նաև ասւում էր Սպիտակափառ դիք, որովհետև շինած էր փղոսկրից, բիւրեղից և արծաթից, և այս կուռքը Տիգրան Բ. հրամայեց Միջագետից Թորդան տանել: Մեր Աբգար թագաւորը Թարաթա անուամբ մէկ չաստուած էր պաշտում:

ԱԲԳԱՐ ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ՍԿԻԶԲՆ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

Աբգար Թագաւորը, որ նստում էր Եդեսիա քաղաքումը, լսելով Քրիստոսի հրաշագործութիւնքը և փափագելով մարմնոյ առողջութեանը՝ դեսպաններ ուղարկեց Յիսուսի մօտ և թուղթ գրեց, որոյ մէջ գովանելով նորան որդի Աստուծոյ՝ խնդրեց նորանից բժշկութիւն: Նոյնպէս հրաման տուաւ իւր դեսպաններին, որ գոհ մատուցանեն Աստուծոյ Երուսաղէմի տաճարումը: Դեսպանները գնացին հասան Երուսաղէմ և հանդիպեցան Յիսուսին Երուսաղէմ մտնելու հանդէսի ժամանակը. և երբ կամենում էին Աբգարու նամակը յանձնել նորան, մօտ գնացին Փիլիպպոսին և նա խորհրդակցելով Անդրէաս առաքեալի հետ, երկուսը միասին յայտնեցին Յիսուսին: Այն ժամանակը Յիսուս ուրախութեամբ հրամայեց Թովմայ առաքեալին Աբգար Թագաւորի նամակին պատասխան գրել, որոյ մէջ խոստացաւ, որ իւր համբարձմանէն յետոյ աշակերտաց մինը կուղարկէ և կբժշկէ նորա ցաւը, և կեանք կպարգևէ նորան և ամենեցուն որոնք նորա հետ են: Պատասխանի հետ նմանապէս Յիսուս ուղարկեց իւր անձեռագործ պատկերը, որոյ երկրպագութիւն տուաւ Աբգարը և սպասում էր Քրիստոսի խոստմանն: Ապա Քրիստոս համբառնալուց յետոյ՝ ինչպէս որ հրամայել էր ինքն Քրիստոս Տէրն մեր, Թովմաս առաքեալը ուղարկեց Եդեսիա քաղաք Աբգար Թագաւորի մօտ Թադէոս առաքեալին, որ եկաւ Եդեսիա բերելով իւր հետ և կողամուխ գեղարդը, քարոզեց քրիստոնէական հաւատը, բժշկեց Աբգար Թագաւորին և մկրտեց նորան և ժողովրդոց շատերին. եկեղեցի շինեց և իւր տեղ ձեռնադրեց եպիսկոպոս Թագաւորի խոյրարար Ադդէին և նորան կարգեց հաւատացելոց վերայ հովիւ և առաջնորդ:

Սորանից յետոյ Թադէոս առաքեալը գնաց բարձր Հայաստան, ուր այն ժամանակը տիրում էր Աբգար Թագաւորի քեռորդի Սանատրուկը։ Սա ինքն և իւր դուստր Սանդուխտ և ուրիշ շատերը Թադէոս առաքելոյ քարոզութեամբ ընդունեցին քրիստոնէական հաւատը. և նոցա համար սուրբ առաքեալն եպիսկոպոս ձեռնադրեց մի բարեպաշտ մարդ Զաքարիա անունով, և կարգելով նորան այնտեղ հովիւ, ինքն գնաց Աղուանից կողմերը, ուր նոյնպէս քարոզեց քրիստոնէական հաւատը, հիմնեց եկեղեցի, և այն տեղից գնաց Կապադովկիա քարոզելու։

Աբգար Թագաւորի մահից յետոյ յաջորդեց նորա որդի Անանէն. սա թողաւ քրիստոնէական հաւատը և սկսաւ կռոց երկրպագութիւն տալ, որոյ համար նախատուելով Ադդէ հայրապետից, սպանել տուաւ նորան մօտ 39 թուին. բայց ինքն ևս փոքր ժամանակից յետոյ պատժուեցաւ յԱստուծոյ անակնկալ մահուամբ։ Նորանից յետոյ Հայոց Թագաւորութեան իշխանութիւնը առաւ Աբգարու քեռորդի Սանատրուկը, որ նոյնպէս ուրացաւ քրիստոնէական հաւատը, և մտածեց տիրել բոլոր Հայաստանին. ուստի գնաց զօրքով Եդեսիա քաղաքը, ջնջեց Աբգարու ցեղը և հրամայեց կռատունները բանալ և երկրպագանել կռոց։

Թադէոս առաքեալը այս լսելով Կապադովկիա, կամեցաւ այնտեղից յետ դառնալ Հայաստան Սանատրուկ Թագաւորի մօտ, և երբ հասաւ Միջագետաց սահմանը՝ պատահեցան նորան Հռովմայեցւոց դեսպաններ հինգ հոգի, որոնք նշանաւոր մարդիկ էին և գնում էին Սանատրուկ Թագաւորի մօտ, Թադէոս առաքեալը քարոզեց նոցա քրիստոնէական հաւատը՝ մկրտեց ամենին, և նոցանից գլխաւորը, որոյ անունը Խրիւսի էր (ոսկի), քահանայ ձեռնադրեց, որոյ անուամբ և նորա ընկերքը կոչուեցան Ոսկեանք։

Երբոր իմացաւ Սանատրուկը Ոսկեանց քրիստոնէութիւն ընդունելը Թադէոս առաքեալի ձեռքով՝ կանչեց սուրբ առաքեալին Շաւարշան քաղաք և նահատակել տուաւ։ Նորա հետ նահատակուեցաւ Սանատրուկի դուստր սրբուհի կոյսն Սանդուխտ քրիստոնէական հաւատոյ մէջ հաստատ մնալու համար. և շատերը ժողովրդոց սքանչելիք տեսնելով սուրբ կոյսի նահատակութեան վերայ՝ հաւատացին ՚ի Քրիստոս և նահատակեցան։

ՇՈՒՇԱՆՆ ՇԱՒԱՐՇԱՆԱՑ

Հայո՛ց կոյսեր,
Շուշան վարդեր
Փունջ փունջ առէք տարէք ուխտ
Առ Թադուհին մեր Սանդուխտ։

Կուսա՜նք Հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան։
Պայծառ պատկեր կուսանաց
Հայոց պըսակ պարծանաց
Ճակատն ի քօղ գեղեցիկ,
Ցանած ի հող խոպոպիք,
Տարակ տոտամբ մանրաքայլ
Ման գայ ի դաշտ ցօղափայլ.
Մեղըր կաթէ շըթներուն,
Փայլին աչք յօնքն սիրուն։
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան։

Հիւսիսային մեր աստղիկ
Հայաստանեայց գեղեցիկ
Երկնըմանն հայելի,
Երքայդստրիկ նազելի,

Ախրասընունդըն Սանդուխտ,
Որում արև ելքն ու մուտ
Փափագէին սրտմաշուկ,
Հա՜րսն է եղեր շնորհաշուք.
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան:

Քանց զարուսեակ պսպղուն
Ի մէջ մանտրիկ ամպերուն,
Քանց վարդենի արեւակ
Ի խնծորի տերեւակ,
Քանց Երասխայ նունուֆար
Գլխիկն ի ցօղ շարուշար,
Քանց զամէնն ա՛յլ գեղեցիկ
Նազէ Սանդուխտըն բամբշիկ:
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան:

Արքայորդիք կորիճներ
Ընդ դարպասներ դուրս ընկեր,
Ի յԱլանաց մինչ Պարսիկ,
Մինչ ի Հռովմ, մինչ ի Հընդիկ
Բերանաբաց կու նային,
Երնեկ տալով փեսային,
Որ զօրիորդն այն Հայոց
Յիւրըն տանի տուն և ծոց:
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան:

Բայց Սանդըխտոյ արժանի
Չըկայ մին տեղ արքունի.
Յայնոր աչացըն կամար
Ցած գայ երկիրս ու խոնարհ.

Երկինքն ասէ, իմ գահի
Անդուխտ պիտէ՞ր թագուհի.
Ո՜վ՝ իմ ծըփանացըս ծիրան՝
Անդուխտ, ասէ, տայր հրաման։
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան։

Բայց մեծ մի կայ քան զերկիր,
Լայն՝ քանց ծովուն ծըփան ծիր,
Եւ քան զերկիր բարձր անհուն,
Պայծառ քանց լոյս արեւուն.
Կայ մին ահեղ մեծ արքայ.
Որում սահման չափ չկայ
Ըն, և միայն այն պիտի
Փեսայ կուսին Անդըխտի։
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան։

Իւր լոյս դարպասն է պատրաստ
Կարմիր կանաչ առագաստ,
Եւ աստղազարդ կապուտակ
Տարակ տոտանցն է յատակ·
Ճապուկ ձորտերն են հրեղէն,
Ուր որ նայիս կայծ թափեն.
Ինչ որ խօսին՝ երգ է այն,
Խնդում ու սէր ամենայն.
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան։

Ի Սանիրայ սուրբ սարէն [1]
Փութայ սուրբ այրն Թադէն,
Երկնախօսիկ փեսաւէր
Օրիորդին տայ հրաւէր.

«Տէրն այն երկնուց և երկրի,
Զոր պաշտէ քո մեծ քեռի [2]
Սիրեց ըզքեզ սըրբի՛կ կոյս.
Ե՛կ հարսնացիր ի Քրիստոս»:
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան:

Սանդուխտ եղաւ դարպասէն.
Ապշեց Հայոց տունն ամէն:
Սանատրուկ հայրն որ լսեց
Յոսկի թախտէն վայր վազեց.
«Սանդո՜ւխտ, սիրուն իմ դստրիկ.
Ուրանա՞ս դու զքո հայրիկ.
Ուրանա՞ս դուն զԱնահիտ,
Պաշտե՞ս զաստուածն Հըրէից:
Աչացըս լո՜յս ոսկեթել,
Աչքս արտասունք դեռ չէր կաթել.
Քեզ համար՝ դո՜ւստր աննըման
Գետեր յաչերս ի վայր գան...
Սանդուխտ, ուզէ՛ ինչ կ՚ուզես,
Արամազդա՜ւ, քեզ տամ ես.
Թէ Հայաստանըս է պըզտիկ՝
Զէնքս ու զօրքերս են հերիք.
Հրամէ՛ դստրիկ իմ աղուոր,
Հայրիկդ լինի քեզ զինուոր.
Առնում աղեղս ու երթամ
Բոլոր աշխարհս քեզ որսամ.
Զխաքանն [3] ուզես թէ զԿեսար [4]
Բռնեմ բերեմ քեզ հաւսար.
Թէ ծովուն մէջն ուզենաս
Բիւրեղ կանգնեմ քեզ դարպաս:

Սանդո՜ւխտ, քու հայր քու գերի,
Լոկ ի Հրէէդ կա՛յ հեռի.
Լըսէ՛ ինձ դուստր իմաստուն
Լոյս իմ աչացս արևուն,
Օտար կըրօնք մի՛ պաշտեր
Քու հօր գլխուն սև մ՚ուզեր.
Սանդուխտ դստրիկ իմ սիրուն
Ողորմէ՛ հօրդ աչերուն»:

Կոյսըն կեցեր լուռ յուշիկ
Հապա հառչեց անուշիկ.
«Հայր, քանց ըզքեզ սիրելի
Չըկայր ոչ ոք ինձ յերկրի.
Բայց երբ զԱստուածն իմ գիտցայ.
Սէր՝ քանց զամէն մեծ ճանչցայ:
Պաշտէ՛ զԱստուած քո քեռուն,
Հապա չերթամ ես հեռուն:
Իսկ թէ ատես դու զՅիսուս
Որ կեանք բերաւ մեր հոգուս,
Թէ զիս չուզես քրիստոնեայ.
Թէ այլ խօսիս զԱնահտայ,
Սանդուխտ այլ չէ քո դստրիկ,
Սանատրուկ չէ իմ հայրիկ.
Յիսուս՝ իմ հայր իմ փեսայ.
Այս իմ վերջին խօսքըն ըլլայ»:

Զայս վերջին խօսքն երբ լըսեց
Սանատրուկ դէմքըն ծածկեց.
Փերթ մի փըրթաւ ի սըրտէն,
Եւ հեռացաւ Սանդըխտէն,
Կանչեց նըման առիւծու,
Երդուաւ լուսնի ու արևու.

Զէտ ըղկայծակ սև ամպուն
Ներնէն փըչեց բօթ մահուն։

Դողաց սարսեց Հայաստան.
Սանդուխտ վազեց ի զընդան.
Կարծըր կոճղերն արաւ գահ.
Զարդերն ամէն փայլեն մահ.
Կուսական քօղըն սևակ
Սիպտակ ճակտին վայլէր թագ.
Նիւրեղ բազկացն ապրանջան
Պողվատ շըղթայք շուրընջան։

Սուրբ առաքեալն Հայոց լայր,
Կապից կուսին պագիկ տայր.
Երկուսն եկած միաբան
Փրկչէն յերկինք փառք կու տան.
Ձայն Սանդըխտին շարժէր սիրտ,
Հայք թողուին զԱնահիտ.
Քընար քըրմին մընայր մունչ,
Լըռուէր սաղմոս հոգեշունչ։
Կուսա՜նք Հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան։

Ահա ելեր կոյսն Հայոց
Փրկչին երթայ հարսն ի ծոց.
Զէտ բարկ արև յարշալոյս
Նեհեզազարդ սուրբըն կոյս
Կանգնէր պայծառ ի դիմաց
Հայոց հազար բիւր զօրաց.
Գետին թընդայր ի հիմանց,
Երկինք շարժէր ի նախանձ։
Կուսա՜նք Հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան։

Սանատըրկոյ սև հրաման
Հնոցի ծըխոյն գայր նըման,
Կըծէր աչաց բարկ արտասունք,
Լային կուսանք և հարսունք.
Ի մօր գըրկին տըղայն լայր,
Մայրն լալով յետ դառնայր.
Կըտրիճ տըղայ միաբան,
Եւ լայր ամէն Հայաստան։
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան։

Ամէնք կանչեն, «Թագուհի՜
Ողորմէ՛ Հայ. աշխարհի.
Քո թագաւոր հօրդ արևուն,
Քո աննըման լուսերուն.
Ապրիր Սանդուխտ, մի՛ մեռնիր,
Մի բերեր մութ մեր երկիր.
Սանդուխտ, ամէնս քեզ գերի
Ողորմէ՛ Հայ աշխարհի»։

Սանդուխտ երկնից լըսէ լոկ
Եւ լացերուն կայ անհօգ։
Լալով զինուորքն յառաջ գան,
Զէնքերն ի յուս կու դողան.
Շատ լարեցան աղեղունք,
Շատ թափեցան դիակունք,
Բայց չըգըտաւ մահ տեղի
Ի գեղեցիկ Սանդըխտի։
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան։

Նըման ծաղկանց կարկտահար,

Երբ նա գլտեց զօրս Հագար
Զիրար զարկած և ընկած
Ու զմահն իրմէ սարսափած,
Շարժեց զճակատըն սիրուն
Ըրտասունք անեց աչերուն,
Եւ հառաչեց առ Յիսուս,
«Տէ՜ր իմ, հրաման տուր հոգուս»:

Երիտասարդ մի յանկարծ
Կայծակնաթափ սուր շողաց.
Ուսկի՞ց արդեօք էր եկեր.
Դահի՞ճ, թէ տաք սիրոյ տէր.
Երկի՞նք՝ թէ հա՞յրն էր ղըրկած.
Ու ոչ գիտէ զայս դիպուած:
Սուրըն շողաց ու զարկաւ...
Շուշան Սանդուխտ՝ վարդ ընկաւ:

Ի ծայր լերին Սանատրուկ[5]
Հրեղէն կառքեր տեսնէ՞ք դուք.
Ընդ երկնաւոր արքայն այն
Ընդ Սանդըխտոյ է փեսայն.
Զօրինորդն հայ աշխարհի
Նախ քան զամէն վկայուհի
Ընտրեց իւր հարսըն կարմիր,
Հանեց թըռուց յերկնուց ծիր:
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան:

Թերթեր ձերմակ ու կարմիր
Ներկեր երկինքն են ու՛ երկիր.
Եկէ՛ք կուսանք ժողվեցէք

Վարդն ու շուշան զուգեցէք.
Դըրէք դալար զայն մարմին
Թաղէի հետ ի շիրմին։
Սանդո՜ւխտ, Հայոց կոյս քընքոյշ
Հանգչէ ի հողս այս անոյշ.
Կուսանք Հայոց, քեզ շուշան
Բերեն ի դաշտ Շաւարշան։

Ո՜հ, թէ քանի՜ երջանիկ
Է Հայաստան հայրենիք՝
Որ հանց բերաւ բոյս կուսան,
Ուսկից հազար կոյսք բուսան։
Երկինք կապուտն երկրի հետ.
Քեզ ի՞նչ երգէ Նահապետ, 6
Սանդո՜ւխտ, անմահ Թագուհի
Իմ Հայաստան աշխարհի։
Կուսանք Հայոց, նոր շուշան
Բերէք ի դաշտ Շաւարշան։

1) Սանիր Պաղեստինոյ, հայրենիք Թաղէի առաքելոյ։ 2) Աբգար Թագաւոր։ 3) Հոնաց Թագաւորն։ 4) Կայսր Հռովմայ։ 5) Լեառն յանուն արքային։ 6) Հայր Ղեւոնդ վարդապետ Ալիշանեան, Վենետկու Մխիթարեան ուխտէն, որ ազգային գրականութեան մշակողների մէջ լուսափայլ աստղներից մինն է։ Սա իւր գրուածոց մէջ իրան «Նահապետ» է կոչում։

ՏՐԴԱՏ ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Տրդատայ հայր Խոսրով Թագաւորը այնպէս էր նեղել և հոգեհան արել Պարսից Արտաշիր Թագաւորին, որ նա յուսահատուած յորդորեց իւր իշխաններին, որ մէկ խորամանկութեամբ սպանեն Խոսրովին, խոստանալով տալ մեծ

պատիւ և իշխանութիւն սպանողին։ Անակը, որ Սուրէն Պահլաւ ցեղէն էր, յանձն առաւ այս չար պաշտօնը, և իբրև թէ փախչելով Արտաշրի ձեռքից՝ եկաւ Հայաստան։ Խոսրովը սիրով ընդունեց նորան և մեծ պատուով պահում էր իւր մօտ Վաղարշապատ քաղաքումը, որտեղ ծնուեցաւ և մեր Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն, Անակայ որդին։ Մի քանի ժամանակից յետոյ Անակը դիպող ժամ գտնելով սպանեց Խոսրովին և կամեցաւ փախչիլ Պարսկաստան. բայց Հայերը վրայ հասնելով Արտաշատ քաղաքի մօտ, Տափերական կամրջից նորան և նորա եղբօրը ջուրը ձգելով խեղդեցին, և Խոսրով Թագաւորի հրամանաւը, մինչդեռ նա կենդանի էր, սրոյ ճարակ տուին նորա բոլոր գերդաստանը, որից միայն Գրիգոր Լուսաւորիչն ազատուեցաւ։ Արտաշիրը հասաւ իւր բաղձանքին և 260 թուին տիրեց Հայաստանը, որ դարձաւ Պարսից մարզպանութիւն։

Երբոր Արտաշիրը տիրեց Հայաստանը, Մանդակունեաց Արտաւազդ իշխանը Խոսրովի որդի Տրդատին փախցրեց Հռովմ, ուր նա սնանում էր Լիկիանոս Կոմսի մօտ, պարարելով իւր միտքը յունական փիլիսոփայութեամբ և մարմինը կազդուրելով զանազան մարզերով։

Եւ երբոր Անակը գետավէժ եղաւ Խոսրով Թագաւորը սպանելոյ համար, Եւթաղ անուամբ մէկ մարդ Անակայ տան կոտորածքից ազատեց երեք տարեկան մէկ տղայ իւր սընտու Սոփիայի հետ և գնաց Կեսարիա, և անդ մկրտել տուաւ նորան ու կոչեց Գրիգոր, որ մեծացաւ քրիստոնէկան հոգւով, սնաւ առաքինութեամբ ու ուսաւ հելլենական դպրութիւն։ Յետոյ ամուսնացաւ Մարիամ անուամբ կնոջ հետ, և նորանից ունեցաւ երկու որդի՝ Վրթանէս և Արիստակէս։ Երեք տարուց յետոյ սոքա միահաւան քակեցին իրեանց ամուսնական կապն, Մարիամն հանդերձ փոքր որդւով

մտաւ կուսանոց, իսկ սուրբն Գրիգոր՝ իւր մեծ որդին թող-նելով դայեակի մօտ, գնաց Հռովմ Տրդատայ մօտ, որ նորան ծառայելով վճարէ իւր հօր պարտքը և ջնջէ նորա յանցանքը։

Սուրբն Գրիգոր մնաց Տրդատի մօտ մինչև որ Թագաւոր եղաւ նա Դիոկղետիանոս կայսեր օգնութեամբ, ու Հռոմէն վերադարձաւ նորա հետ Հայաստան 286 թ. և հասնելով Եկեղեաց գաւառի Երիզա քաղաքը՝ իջան Գայլ գետի ափը։ Տրդատը հրամայեց Ս. Գրիգորին, որ Անահիտ կուռքի գլխին ծաղկէ պսակ դնէ. բայց նա չկատարելով Թագաւորի հրամանը յայտնեց իւր քրիստոնէութիւնը, համարձակ քարոզելով զՔրիստոս, ուստի Տրդատ տանջել տուաւ նորան տասներկու տեսակ տանջանքով։ Երբոր այն սոսկալի չարչարանքներէն ողջ մնաց սուրբն Գրիգոր, ձգել տուաւ նորան Խոր Վիրապի մէջ, որ էր մահապարտներու տեղ Արտաշատ քաղաքում՝ լի օձերով. որի մէջ մնաց տասնևհինգ տարի, կերակրուելով մէկ պառաւ կնոջէն։

Այս ժամանակին՝ այն է 301 թուին, Հռոմայ կայսեր Դիոկղետիանոսի ձեռքէն փախան Հռիփսիմեան կուսանքն, որ կայսրն ուզումէր Հռիփսիմէ կոյսը կին առնուլ իրան, և եկան բնակուեցան Վաղարշապատ քաղաքում մէկ հնձանի մէջ։ Տրդատը իմանալով Դիոկղետիանոսի նամակէն Հռիփսիմէի գեղեցկութիւնը և Հայաստան գալը, գտնել տուաւ նորան ու ինքն էր կամենում պսակուել նորա հետ. բայց նա չհամաձայնեցաւ. վասն որոյ սպանել տուաւ ինչպէս Հռիփսիմէ, նոյնպէս և Գայանէ մայրապետը, և նոցա հետ երեսուն ու հինգ կուսանք։ Այս պատճառաւ Աստուծոյ պատուհաս հասաւ Թագաւորի և Վաղարշապատի բնակիչներու վերայ։ Տրդատ բոլորովին դիւահարեցաւ և կատաղած ընկաւ շամբերի մէջ, իսկ ժողովուրդն մոլեգնեցաւ։ Յետոյ Թագաւորի քոյր Խոսրովիդուխտի տեսիլքով, (որին երազումն

մի քանի անգամ երևեցաւ հրեշտակ Աստուծոյ, հրամայելով հանել սուրբ Գրիգորը Խոր Վիրապէն, որ բժշկէ ամենքը), հանեցին սուրբ Լուսաւորիչը, որ նախ թաղեց կուսանաց մարմինները, և շինեց նոցա վերայ վկայարաններ. ապա 65 օր քարոզելէն յետոյ բժշկեց Թագաւորը և բոլոր ժողովուրդը, և կրկին նորոգեց Քրիստոնէութիւնը Հայոց աշխարհում 302 թ: Այնուհետև Թագաւորն, սուրբն Գրիգոր և նախարարներն սկսեցին պտըտել Հայաստանի քաղաքները և գեղերը, քանդեցին կռատունները և ամեն տեղ կանգնեցին տէրունական Խաչի նշանը, և այսպէս տարածեցաւ Քրիստոնէութիւնն Հայոց աշխարհումը:

Հայաստան աշխարհն թէպէտ և ընկալել էր Քրիստոնէութիւնն, բայց ոչ մկրտուած էին, և ո՛չ էլ ունէին առաջնորդ: Տրդատ Թագաւորն Աստուածային յայտնութեամբ ժողովելով նախարարները և իշխանները՝ ընտրեց սուրբ Գրիգոր Լուսաւորիչը Քահանայապետ և Առաջնորդ Հայոց աշխարհի, և մեծ պատուով ուղարկեց նորան Կեսարիա Կապադովկացւոց քաղաքը Ղեւոնդէս պատրիարքի մօտ, որ Թադէոս առաքեալի յաջորդն էր, որ ձեռնադրէ նորան Քահանայապետ Հայոց աշխարհի համար: Ղեւոնդէս մեծ ուրախութեամբ կատարեց Տրդատի խնդիրը, որով նորոգեցաւ մեծ Հայաստանի մէջ Թադէոս առաքեալի յաջորդութիւնն, և ընծայեց սուրբ Գրիգորին Յովհաննէս Կարապետի և Աթանագինէս եպիսկոպոսի մասունքները:

Սուրբն Գրիգոր վերադառնալով Կեսարիայէն 'ի Հայաստան՝ քանդեց մնացած կռատունները, շինեց Տարօն գաւառում Մուշ քաղաքի մօտ սուրբ Կարապետի վանքը, ուր դրաւ նորա մասունքներէն մէկ մասը, գալով Վաղարշակերտ (Ալաշկերտ) քաղաքը, մկրտեց այն տեղ Եփրատ գետում Տրդատ Թագաւորը իւր ընտանիքով, և նախարարները և զօրքը:

Յետոյ սուրբ Լուսաւորիչն շրջելով Տրդատի հետ Հայաստանի ամենայն կողմերը մկրտեց ամենքը. բացեց ուսումնարաններ, ժողովեց քուրմերու որդիքը, և կարգեց ուսուցիչներ յոյն և ասորի լեզուների. որովհետև դեռ չկար հայերէն գիր. և նոցանից արժանաւորները ձեռնադրեց եպիսկոպոսներ ու կարգեց գաւառների և քաղաքների վերայ տեսուչներ, որոց թիւը հասնումէր մինչև չորս հարիւր. իսկ քահանայից և եկեղեցական պաշտօնէից թիւ չկար, որոց համար սահմանեց ապրուստ ժողովրդէն: Շինեց շատ եկեղեցիք, վանորայք, կուսանոցներ, հիւրանոցներ և սահմանեց տօներ:

Եւ այսպէս բարեկարգելով եկեղեցին՝ առանձնացաւ ապա 331 թուին Սեպուհ սարի վերայ Մանեայ այրի մէջ, ուր և վախճանեցաւ: Նորա սուրբ մարմինը գտան հովիւները, և չճանաչելով թաղեցին այն տեղ. ու ժամանակ անցնելէն յետոյ գտաւ Աստուածային յայտնութեամբ մէկ ճգնաւոր Գառնիկ անուն, և թաղեցին Թորդան գեղում. ապա այն տեղէն տարան 'ի Վաղարշապատ:

Սուրբն Գրիգոր՝ մեր ազգն Քրիստոնէական հաւատով լուսաւորելոյ համար, կոչեցաւ «Լուսաւորիչ»:

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ

Մեծն Ներսէս էր թոռն որդոյ Վրթանիսի, որդւոյ Լուսաւորչի: Սա իւր բոլոր կենաց մէջ միշտ ջանք էր անում որ քրիստոնէութիւնը և քրիստոնէական առաքինութիւնը ամէն տեղ տարածուի և հիմնաւորապէս հաստատուի Հայաստանում: Ներսէս մեծը սնուած լինելով Բիւզանդիայումը և յետոյ Կեսարիայումը, երբ նստեց կա-

թողէկոսութեան աթոռի վերայ՝ տեսաւ որ քրիստոնէութեան դաստիարակութիւնը պակաս է գտնւում ժողովրդի մէջը, և շատ հարկաւորութիւնք կան լրացնելու։ Նա այդ բանի վերայ հոգս քաշեց և շատ դժուարութիւնների յաղթելով կռուեց կռապաշտական մնացորդների հետ, և քրիստոնէութիւնը գործով սկսեց արդիւնաւոր կացուցանել ժողովրդի համար։ Իսկոյն ընդհանուր ժողով կազմելով աշխարհականներից և հոգևորականներից՝ ողորմածութիւն հաստատեց կռապաշտական խիստ սովորութեանց ընդդէմ. որովհետև հեթանոսական օրէնքով բորոտներին, ինչպէս պիղծ մարդկանց, հալածումէին, որոնք անապատ տեղերումնէին իւրեանց համար բնակութիւն հաստատում, և ոչոք չէր մխիթարում նոցա թշուառ վիճակը, անդամալոյծներին չէին խնամում, և անծանօթ հիւրերին և օտարականներին չէին ընդունում։

Այս բոլոր բաները, որոնք այժմ քրիստոնեայ Հայոց մէջ շատ քրիստոնէութեան ընդդէմ բաներ են համարւում, ցոյց են տալի, որ կռապաշտական սովորութիւնները այն ժամանակը տակաւին չէին կորցրել իւրեանց քրիստոնէական հոգւոյն ընդդէմ նշանակութիւնները, և քրիստոնէական մարդասէր օրէնքները տակաւին խոր չէին դրոշմուել նոցա սըրտի մէջ։ Ներսէս մեծը այս կռապաշտական սովորութիւնների դէմ պատերազմելով՝ կարողացաւ նոցանից շատերը ջընջել և նոցա հակառակ Հայոց կոշտ կեանքի մէջը ներս մտցնել քրիստոնէական մարդասէր ուսման գործադրութիւնը։ Նա հրամայեց իւրաքանչիւր գաւառում շինել աղքատանոցներ, որոց վերայ վերակացու կարգեց իւր Խադ սարկաւագին։ Հրամայեց նոյնպէս իւրաքանչիւր գիւղում օտարականների, որբերի, չքաւորների և ծերերի համար կերակրելու տեղեր պատրաստել։ Անապատներումը շինել տուեց եղբայրանոցներ և մենաստաններ։ Այսպէս մեծ Ներսէսի ջանքովը Հայաս-

տանի բարբարոսական կեանքը ստանում է աւելի քրիստոնէական մարդասիրութիւն և բարքերի համեստութիւն։

Մեծին Ներսէսի կեանքը ըստ մեծի մասին անցանելով Արշակ երկրորդի թագաւորութեան ժամանակը, քրիստոնէական խաղաղութիւն ձգելով նախարարների և թագաւորի մէջը՝ ինչքան հնարաւոր էր խաղաղացնում էր աշխարհը, մինչև անգամ իբրև խաղաղութեան դեսպան գնալով Յունաց Վաղէս կայսեր մօտ՝ աքսորուեցաւ և ութ ամիս նաւաբեկութեամբ անմարդաբնակ կղզու մէջ ապրեց։ Թէոդոս կայսեր օրովը աքսորանքիցը վերադառնալով և Արշակի որդի Պապին թագաւորեցնելով կայսեր օգնութեամբ՝ Ներսէսը վերադարձաւ Հայաստան, և ինչքան կարող էր բարեկարգեց նորա վիճակը, որ իւր բացակայութեան միջոցին բաւական աւերուել էր։ Սակայն այսպիսի լուսաւոր ճրագն Հայաստանի Պապ թագաւորի զազրագործ կրքերին զոհ եղաւ և թունալից բաժակը նորա փառաւոր կեանքին վախճան դրեց. որովհետև նա թագաւորին և նախարարներին ցոյց էր տալի, որ պէտք է հաւատոյ համեմատ ունենալ գործք, չզըրկել և չանիրաւել, այլ սիրել։

ՄԵԾՆ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ

Ներսէս մեծի մահուանէն փոքր ինչ յետոյ բացւում է այն լայն մտաւորական ասպարէզը, որտեղ իբրև պարագլուխ հայկական լուսաւորութեան հանդէս են դուրս գալի նորա որդի և ձեռնասուն աշակերտ Սահակ մեծը և իւր լծակից Մեսրոպ Մաշտոցը՝ նոյնպէս Ներսէս մեծի աշակերտը։ Այս երկու անձանց բարոյական բարձրութիւնը և հայրենասիրական ոյժը դնում է Հայաստանի մէջը այն կեն-

դանական սերմերը, որոնք ծլելով և վերաճելով մտաւորական և բարոյական կենդանութիւն են տալի հայկական սերունդին։

Սահակ վերջին Պարթև կաթողիկոսը, Գրիգոր Լուսաւորչի վեցերորդ սերունդը, 390 թուականին նստելով Կաթողիկոսական աթոռի վրայ՝ իսկոյն քննեց իւր ժողովրդի դրութիւնը, տեսաւ և լաւ նկատեց նորա բարոյական ցաւերը, և հմուտ բժշկի պէս վերահասու եղաւ և իմացաւ, որ ազգի տարտամ դրութիւնը ամրացնող և զուարթացնող միայնակ հնարքն է ուսումն և քրիստոնէական դաստիարակութիւնը։ Նա լաւ ճանաչեց, որ մի ազգի բարոյական և մտաւորական զօրութիւն տալու համար, պէտք է ներգործել սրտի և հոգու վերայ. իմացաւ, որ միայն ֆիզիքական կոշտ զօրութիւնը կամ կամքը առանց ներքին համոզմանց շատ դիւրաբեկ է. ներքին համոզմունքներն է, որ կենդանութիւն և ամրութիւն է տալի ֆիզիքական զօրութեանը։ Մեծն Սահակը ազգին բարոյական զօրութիւն տալու համար ընտրեց միակ միջոց ուսումը։

Հայոց գրերը գտնելուց յետոյ՝ Սահակ մեծը ջանք է անում Մեսրոպ վարդապետի հետ թարգմանել սուրբ գիրքը և Վռամշապուհ թագաւորի ձեռնտուութեամբ բանալ ուսումնարաններ և դաստիարակել ազգի մատաղ սերունդը Հայոց գրով և լեզուաւ, և ընդ նմին տնկել և հաստատել նորա սրտի մէջ քրիստոնէական և ազգասիրական վսեմ պարտաւորութիւնները և առաքինութիւնները։ Տեսանելով որ Հայաստանումը չէ կարելի աւանդել աշակերտաց այն վսեմ և բարձր ուսումն և գիտութիւններն, որ աւանդում էին աւելի ծաղկեալ տէրութեանց մայրաքաղաքների մէջ, որպիսի էին Բիւզանդիա, Աթէնք, Աղէքսանդրիա, Եդեսիա և այլն, մեծն Սահակը և Մեսրոպը իբր սուրբ գիրքը և եկեղեցու հայց

թղթերից շատերը արդէն թարգմանած էին, վաթսունի չափ ընդունակ և ուսմանը բաւականի ծանօթացած երիտասարդներ ուղարկեցին վերոյիշեալ քաղաքներն գիտութեանց այլ և այլ բաժինները սովորելու և կատարելագործուելու։

Այսպէս Հայաստանի մեղուները իւրեանց վարդապետների հոգւովը թեւաւորուած դիմում էին դէպի գիտութեան ծաղիկները։ Բիւզանդիայի Մաքսիմիանոս եպիսկոպոսը այնտեղ գտնուող հայ երիտասարդների վերայ մեծ խնամք և սէր ցուցանելով, նոցա հետ ուղարկեց Հայաստան Աստուածաշնչի ստոյգ և հարազատ օրինակը յունաց լեզուաւ։ Սահակ հայրապետը և Մեսրոպը միանգամ թարգմանածը ստիպուած էին երկրորդ անգամ թարգմանել իւրեանց աշակերտների հետ այն ստոյգ օրինակից, որ ուղարկել էր Մաքսիմիանոս եպիսկոպոսը։

Մեծն Սահակ, որ ազգի բարօրութեան և լուսաւորութեան համար նուիրել էր իւր անձը, և որ իբրև արթուն և անխոնջ հովիւ աւետարանական քարոզութիւնը տարածել էր Հայաստանի ամենայն կողմերումը, իւր ծերութեան օրերը անցոյց Արշակունեաց Արտաշէս կամ Արտաշիր վերջին թագաւորի հետ Պարսկաստան բանտի մէջ Հայոց նախարարների ամբաստանութեամբ։ Թէպէտ Հայոց նախարարները վերջապէս միաբան իմանալով իւրեանց սխալանքը, աղաչեցին ծերունի սուրբ Սահակին, երբ որ նա ազատուել էր բանտից և վերադարձել Հայաստան, որ յանձն առնու կաթողիկոսական աթոռը, բայց սուրբն Սահակ մարգարէական նախազգացութեամբ լցուած հրաժարեցաւ այդ առաջարկութիւնից, և փոքր ժամանակից յետոյ կնքեց սուրբ մահուամբ իւր բազմաչարչար և օրհնութիւնաբեր կեանքը 441 թուին՝ լուսաւորութեան սերմերը խոր արմատացնելով Հայաստանի պտղաբեր մատաղ սրտերի մէջը, որոնցից դուրս

են անում Հայկական հինգերորդ դարու գրականութեան ծաղիկները, իւր հզօր հոգւովը կառավարելով կաթողիկոսութեան աթոռը 51 տարի: Նորա պատուական մարմինը նորա հարս Վարդան Մամիկոնեանի կին Դստրիկը տարաւ Տարօնի գաւառը և իւրեանց Աշտիշատ գիւղումը հանգիստ տուաւ: Հայոց եկեղեցին՝ 'ի շարս սրբոց դասելով զՄեծն Սահակ Պարթև, տօնումէ նորա տօնը:

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ (ՏԱՌԵՐԻ) ԳԻՒՏԸ

Սուրբ Մեսրոպ՝ մականուանեալ Մաշտոց, էր Տարօն գաւառի Հացեկաց գիւղէն, աշակերտ մեծին Ներսէսի, և ապա թագաւորաց ատենադպիր: Այլև քաջ գիտելով զինուորական կրթութիւնը՝ սիրելի էր զօրականներուն. այսպիսի ծառայութեանց մէջ անդադար պարապումէր սուրբ գիրքը կարդալով. և այնպէս վառեցաւ հոգևոր մասնի մէջ, որ թողաւ աշխարհը, և մտաւ վանք ձեռնադրուելով աբեղայ. ապա վարեց միայնակեաց կեանք Գողթան գաւառում: Յետոյ Աստուածային ազդեցութեամբ սկսաւ լուսաւորել ազգը. ուստի ժողովեց աշակերտներ, կրթեց, և նոցա հետ շրջելով քարոզումէր զանազան տեղեր. ջնջեց մնացած աղանդները և աւելորդապաշտութիւնը Գողթան գաւառից և Սիւնեաց նահանգից: Այս քարոզութեան մէջ մեծ նեղութիւն էր կրում, որովհետև ինքն էր Աստուածաշունչ գիրք կարդացողը և թարգմանողը. վասն որոյ մտածեց գտանել Հայոց գրերը. և թէպէտ շատ փորձեր արաւ բայց անօգուտ եղան: Ապա իմանալով սուրբ Սահակ հայրապետի բարելաւութեան համբաւը՝ եկաւ նորա մօտ և յայտնեց իւր նպատակը. և տեսաւ որ այդ մի և նոյն գործի գիւտը աւելի է գրաւել

նորա միաքը, որ և ժողով գումարեց Վաղարշապատ քաղաքում 402 Թ. ուր մեր Վռամշապուհ թագաւորն յայտնեց, որ ինքը երբեմն լինելով Միջագետք՝ մէկ Յաբէլ երէց ասել է նորան, թէ Դանիէլ եպիսկոպոսի մօտ կան Հայոց նշանագրերն. որ և բերել տուին. Թէպէտ երկու տարի սկսան ուսուցանել, սակայն 'ի զուր անցին աշխատանքներն, որովհետև պակաս էին բոլոր ձայնաւոր գրերն: Սուրբն Մեսրոպ յանձն առաւ նոր աշխատութիւն աւարտելու սկսածը. և մի քանի աշակերտներով գնաց Միջագետք Դանիէլ եպիսկոպոսի մօտ լրացնելու նշանագրերի պակասութիւնքը. բայց չկարացին, և թողնելով այնտեղ մի քանի աշակերտներ ասորի և յունական ուսման համար, ինքն գնաց երկու աշակերտներով Եդեսիա Պղատոս հռետորի մօտ. այս ևս անօգուտ մնաց. վերջապէս գնաց Սամոսատ Հռոփանոս Փիլիսոփոսի մօտ, այլ ի զուր: Եւ այսպէս մարդկային հնարքներէն ունայն մնալով, ապաւինեցաւ յԱստուած, ընկալաւ ցանկութեան կատարումը տեսլեան մէջ: Այս եղաւ 406 Թ:

Երանելի վարդապետն բանումէ Սամոսատում ուսումնարան, և ինքն թարգմանումէ Յոհան Եկեղեցացու և Յովսէփ Պաղնացու օգնականութեամբ Սողոմոնի Առակաց գիրքը և Նոր Կտակարանը. և երբոր վերադարձաւ ի Վաղարշապատ ընկալան նորան թագաւորն, հայրապետն և ամենայն բազմութիւնն մեծ ուրախութեամբ հանդերձ նորագիւտ նշանագրերով և Հայկական լեզուի թարգմանեալ մատեաններով. և այն օրը կատարեցին տօն ուրախութեան: Բացուեցան ուսումնարաններ, և ծաղկեցաւ հայերէն գրչութիւնն զարմանալի յառաջադիմութեամբ: Ապա հնարեց Վրաց և Աղուանից գրերը: Յետոյ սուրբ Սահակի հետ գնաց Հայաստանի արևմտեան երկիրը, որ Յունաց բաժնումն էր, և սուրբ հայրապետէն դեսպան ուղարկուեցաւ Թէոդոս կայսեր մօտ. և

իւր մեծ գիտութեան համար պատուեցաւ «Էկլեսիաստիկոս» կոչմամբ։ Սա սուրբ Սահակի մահէն յետոյ կառավարեց Հայրապետական աթոռը վեց ամիս, և վախճանեցաւ։ Նորա սուրբ մարմինը Վահան Մամիկոնի իշխանն մեծ յուղարկաւորութեամբ հանգստացըրեց Օշական գիւղումը, և շինեց նորա վերայ եկեղեցի, և գերեզմանն է բեմի տակը։

ՈՎ. ՄԵԾԱՍՔԱՆՉ ԴՈՒ ԼԵԶՈՒ

Ով մեծասքանչ դու լեզու,
Ով հեշտ բարբառ մայրական,
Փափկահնչիւն բառերուդ
Նման արդեօք այլ տեղ կա՞ն։
Դու որ նախ ինձ հնչեցիր,
Նախ սիրոյ, ո՜հ, հեշտ խօսքեր,
Այն նախ զքեզ թոթովելս
Դեռ իմ մտքէն չէ ելեր։

Իմ մայրենի քաղցր լեզու
Կեա՛ց անսասան, կեաց յաւէտ,
Կեաց միշտ լեզուդ հայկարժան,
Կեա՛ց ծաղկալից ծաղկաւէտ։

Լեզու համակ սիրաշարժ,
Քանի՜ ճոխ պերճ ու պայծառ,
Մի՞նչ կը հնչես դուն քեզի,
Սրտերն ամէն գողացար.
Հնչէ՛, հնչէ՛ յաւիտեան
Վեհ՝ գիւցազանց պերճ երգ դու,
Թոթուէ փոշիդ խոր մութէն,
Ե՛ւ երևան պերճ երգ դու։

Իմ մայրենի քաղցր լեզու
Կեա՛ց անսասան, կեաց յաւէտ,
Կեաց միշտ լեզուդ հայկարժան,
Կեաց ծաղկալից ծաղկաւէտ։

Յաւերժական Սուրբ Գրոց մէջ
Կեաց միշտ նորէն ու նորէն,
Աշռեալ անուշ քու տողերդ
Թող ամեն սիրտ արծարծեն,
Շնորհ ունել Արարչէն,
Կամ պէտք լինի աղօթել,
Շրթունքս սրտէ բորբոքած
Աղաղակէ անարգել։

Իմ մայրենի քաղցր լեզու
Կեաց անսասան, կեաց յաւէտ,
Կեաց միշտ լեզուդ հայկարժան,
Կեաց ծաղկալից ծաղկաւէտ։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ ՀԱՅԵՐԸ ԵՒ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄՆ ՀԱՒԱՏՈՅ ՀԱՄԱՐ։

Երբոր Արշակունեաց թագաւորութիւնը վերջացաւ և Հայաստանը Պարսից իշխանութեան տակն ընկաւ, այն ժամանակն Յազկերտ թագաւորն Պարսից կամեցաւ Հայերին ոչնչացնել և նոցա ուժը և կարողութիւնը խորտակել։ Այս նպատակին հասնելոյ համար առաջ կամեցաւ նոցա հաւատը փոխել տալ և եկեղեցիքը քանդել. ուստի իւր իշխանների և մոգպետների խորհրդովը և հաւանութեամբը մի թուղթ գրեց Հայերի վերայ, յայտնելով նորա մէջ իւր հաւատի ճշմարտութիւնը և ասելով. «Եթէ իմ հաւատը կընդունէք,

և ձեր հաւատը և ազգի օրէնքները կթողուք, մեծամեծ պատիւների կհասցնեմ ձեզ և ձեր երկիրը խաղաղ կթողում. ապա թէ ոչ՝ բոլոր ձեր ազգը կոտորել կտամ և ձեր անունը կջնջեմ աշխարհի երեսից»:

Թագաւորի թուղթն երբոր ստացան մեր Հայոց եպիսկոպոսներն և մեծամեծ նախարարներն, իսկոյն իւրեանց հաւատքի և եկեղեցու դաւանութեան սիրովը վառուած՝ մինը միւսին սիրտ տուեցին, քաջալերեցին և հաւաքուելով մէկ տեղ բոլոր ժողովրդի հաւանութեամբ մէկ գեղեցիկ պատասխան գրեցին թագաւորի թղթին և յայտնեցին թէ մենք չե՛նք կարող քո այդ կամքը կատարել, որովհետև մեր հաւատը հազար անգամ լաւ է և ճշմարիտ, քան թէ ձերը: Բայց ուրիշ ինչ թագաւորական ծառայութիւն կամենաք՝ հրամայեցէք. մենք պատրաստ ենք խոնարհութեամբ և ուրախութեամբ կատարելու:

Այս տեսակ համարձակ պատասխանը երբոր ստացաւ թագաւորը, կարդաց իւր մեծամեծների և մոգպետների առաջին և ալեկոծուած ծովի նման սկսաւ տատանիլ: Կատաղեցաւ ինչպէս մի վայրենի գազան, այնպէս որ սարսափ ընկաւ բոլոր մեծամեծների վերայ, և սկսաւ կանչել չարասէր մարդկանցը և նոցա հաւանութեամբը կրկին անգամ հրաման գրեց, որ բոլոր հայոց նախարարները իւր արքունիքը հաւաքուին, և դէմ յանդիման պատասխան տան նորան:

Այս երկրորդ հրամանը Հայաստան հասաւ թէ չէ՛, իսկոյն ամէն նահանգից, ամէն գաւառից և ամէն քաղաքից ժողովուեցան նախարարները և իւրեանց հայրենեացն, ազգականացն և ընտանեացն մնաք բարեաւ ասելով՝ ճանապարհ ընկան: Մնացող Հայերն էլ պատուիրեցին նոցա, որ եթէ իւրեանց հաւատքը ու ազգն ուրանան, ամենևին էլ յետ

չդառնան իւրեանց հայրենիքը, ապա թէ ո՛չ ամէնին միասին կկոտորեն։

Նախարարներն ճանապարհ ընկան, և քանի ժամանակից յետոյ գնացին Թագաւորին ներկայացան, բայց Թագաւորն նոցա այնպէս պատուով չընդունեց ինչպէս առաջ ընդունում էր, որպէս ազգի գլխաւորներ և Թագաւորական ցեղեցից յառաջ եկած անուանի մարդիկներ։ Ընդհակառակն սկսաւ բարկանալ, գոռալ և դղրդացնել բոլոր Թագաւորական պալատն ասելով նախարարներին. «Եթէ մինչև առաւօտ չէք մտածել և չէք ընդունել իմ հաւատը, բոլորիդ այս տեղ դառն տանջանքներով սպանել կտամ և անթիւ անհամար զօրք կուղարկեմ, որ ձեր երկիրը ապականեն, ձեր տները քար ու քանդ անեն և ձեր եկեղեցիքը կրակ տան»։

Նախարարները՝ ինչպէս առաքինի Հայեր, ինչպէս իւրեանց եկեղեցու ամենահարազատ որդիք, և ինչպէս իւրեանց ազգի փառքի և պարծանքի համար անձերը յետ դըրած նահատակներ, պատասխանեցին Թագաւորին, թէ մինչև ցայսօր քեզ այնպէս հաւատարմութեամբ ենք ծառայել, որ քո ազգի մէջ էս այդպիսի հաւատարմութիւն չես տեսած։ Ինչ գործ յանձնել ես, ուրախութեամբ և անխարդախութեամբ կատարել ենք. քո պահանջած հարկը իւր ժամանակին հատուցել ենք. միշտ սրտի մօք և ջերմեռանդութեամբ ենք ծառայել քեզ և ոչ թէ առ երեսս, այնպէս որ ո՛չ միայն դու և քո նախնիքը, այլ և երկինք և երկիր կարող են վկայել մեր հաւատարմութիւնը, և մենք այս հաւատարմութեան մէջ տակաւին հաստատուն ենք։ Բայց այդ որ դու ասում ես մեր հաւատքը փոխելու համար, և մեր եկեղեցին քո իշխանութեան տակ դնելու համար՝ այդ անհնարին բան է։ Մեր եկեղեցին մարդու պարգևած չէ՛ և ո՛չ Թագաւորի, որ մարդու խօսքով նորան ուրանանք։ Մեր

եկեղեցին Աստուծոյ պարգեւ է. Յիսուսի Քրիստոսի մարդասիրական շնորհօքը հիմնուած, առաքեալների քարոզութենով հաստատուած, մարտիրոսների և նահատակների արիւնով ոռոգուած, և հայրապետների ու վարդապետների ջերմեռանդն կարգադրութիւններով ճոխացած, և մեզ իբրև մի երկնային աւանդ պահ տուած: Ինչ պատիւ, ի՛նչ նշանազգեստներ և ո՛րքան պարգևներ մեզ տուել ես, բոլորն մենք կարող ենք մերկանալ և քեզ տալ, բայց մեր եկեղեցին Աստուծոյ է, նորան ենք պարտական, և բոլոր աշխարհիս հետ չենք փոխել: Այս է մեր բովանդակ աշխարհի և մեր պատասխանը: Մենք մեր հայրենի երկրից և հայրենակիցներից պատգամաւոր ենք եկած, որ այսպէս խօսենք քո առաջին և կրկնենք այն՝ ինչ որ գրել էինք քեզ քո թղթի պատասխանի մէջ, թէ «մեզ մեր հաւատից ոչ՛ ոք չէ կարող խախտել, ո՛չ հրեշտակք և ո՛չ մարդիկ, ո՛չ սուր և ո՛չ հուր, ո՛չ ջուր և ո՛չ ամենայն կերպ դառն հարուածք և պատիժք»:

Թագաւորն 'ի լուռ խոցուելով՝ հրամայեց, որ ամենքին հեռացնեն իւր երեսից և զգուշութեամբ պահպանեն: Սկսաւ ծածուկ պարգևներ խոստանալ նախարարներին, որ իւրեանց միտքը փոխեն, և երբոր տեսաւ թէ հնարք չկայ, իւր մեծամեծների հաւանութեամբ խորհուրդ արեց, որ բոլորին կապեն և աքսորեն շատ հեռու երկիրներ, և իրանք արձակ համարձակ մտնեն Հայաստան և իւրեանց հաւատը ու օրէնքները տարածեն:

Այս խորհուրդ անողների մէջից մի ծածուկ քրիստոնեայ մարդ, որ Հայերին սիրում էր իւրեանց սուրբ կրօնասիրութեան պատճառաւ, գիշերն եկաւ յայտնեց Հայոց նախարարներին թագաւորի միտքը և ասաց նոցա, որ առ երեսս ընդունեն մոգութեան օրէնքը և թագաւորին խաբեն՝

նորա կամքը կատարողներ ձեւանալով, և ապա դառնալով իւրեանց երկիրը՝ բոլոր ազգին թիկունք առնուն և ընդդէմ կենան Պարսիկներին։

Նախարարներն մտածեցին և տեսան, որ այս խորհուրդը բաւական հաւանական բան է. նախ՝ որ սրտագէտ Աստուածը ինքը լաւ կտեսնէ, որ նոքա սրտով քրիստոնեայ են և իւրեանց երկիրը դառնալով հազարաւոր վհատուողների քաջալերութեան պատճառ կարող են դառնալ. երկրորդ՝ որ քրիստոնէական նահատակութիւնը նոքա ամէն ժամանակ և ամէն տեղ կարող են կատարել, բայց աւելի լաւ է իւրեանց հայրենի երկրի մէջ, իւրեանց ազգի առաջ, իւրեանց առաքելական եկեղեցւոյ դուռը առնել նոյն սխրագործութիւնը, և իւրեանց հայրենիքը իւրեանց արիւնով նուիրական շինել։ Այսպէս համոզուելով՝ յայտնեցին Թագաւորին, թէ հնազանդ ենք քո հրամանին։

Թագաւորն երբոր լսեց, խաբուեցաւ ինչպէս մէկ մանուկ տղայ, ցածրացաւ իւր կատաղի բարկութիւնից, ընկաւ ուրախանալ և ցնծալ և մեծամեծ պարգևներ ու գանձեր բաժանել նախարարներին, քաղաքներ և գիւղեր ընծայել, դահ ու թագեր խոստանալ։ Հրաման հանեց, որ ժողովէն իւր թագաւորութեան գիտուն մոգերը և իշխանները, կարդացողները և գրողները, զօրապետները և զօրականները, և զանազան պատուէրներով, զանազան ընծաներով և հրամաններով ճանապարհ գձեց դէպի Հայոց աշխարհը, ինքն էլ բաւական տեղ առաջնորդելով, որ գնան ու Հայոց մէջ տարածեն պարսկականութիւնը։

Բայց պէտք է իմացած՝ թէ ինչքան խորամանկութիւններ և սատանայական հնարքներ էր գործ դրել իւր պատուէրների և հրամանների մէջ։
Պատուիրել էր իւր մոգերին և իշխաններին, որ Հայոց մեծա-

մեծներին կաշառքով ու պատուով խաբեն, ռամիկ ժողովրդին սպառնալիքով և վախեցնելով։ Ասել էր, որ Հայոց աղջիկներին շուտով ուսուցանեն պարսից ուսումն, որ մայր դառնալով իրենց զաւակներին մեծացնեն պարսից հոգով։ Հրաման էր տուել, որ Հայոց օրիորդները պսակուեն պարսիկների հետ, և կանանց համար պատուիրել էր, որ պարսից կանանց պէս հագնուեն և նոցա լեզուով խօսեն։ Իմանալով թէ վատ հոգևորականների ձեռքով շուտով կարող է իւր նպատակին հասնել՝ հրամայել էր, որ առատ ռոճիկ սահմանեն քահանայից համար, և մեծամեծ պատիւներ խոստանան իշխաններին, որ նոցա ձեռնտուութեամբ և օգնութեամբ վերջացնեն Հայոց ազգային ծէսերը, տօնախմբութիւնները, եկեղեցական երգեցողութիւնները, և միով բանիւ՝ շուտով վերջացնեն Հայոց ազգութիւնը և եկեղեցին։

Այս կործանիչ պատուէրներով և հրամաններով երբոր Հայաստան էին մտնում Պարսից չարասէր իշխանները և մոգերը և այլ բազմութիւնը՝ համբաւը Հայերին հասաւ, որոնք քնած չէին իրենց կրօնի և եկեղեցու համար, այլ արթուն և զուարթուն՝ որպէս գիտող պահապաններ։ Հայաստանի գաւառների, քաղաքների և գիւղերի մէջ շուտով աղմուկներ և դղրդմունքներ վերկացան։ Հայրենասէր եպիսկոպոսները, վարդապետները և սարկաւագները տարածուեցան ամէն տեղերում, քարոզեցին և յորդորեցին ժողովրդին, որ ամէնքը՝ կին ու մարդ, ծեր ու մանուկ, ազնուական ու շինական, մի հոգով վառուին, մի հաւատոյ զրահ զգենուն և մէկ տեղ հաւաքուելով դէմ կենան պարսիկներին, կամ կոտորեն նոցա, կամ իրանք կոտորուեն հայ և քրիստոնեայ անունն իրենց վերայ պահպանելով։ Գիտէ՞ք, ի՞նչպիսի սըրտաշարժ և հոգի զմայլեցնող տեսարան դարձաւ այս ժամանակ մեր Հայաստանը։ Գործը բոլոր ազգին վերաբերու-

ած գործ էր, և բոլոր ազգը վեր էր կացել: Ծերերը գաւազաններով, պառաւները դողդոջուն ոտքերով, կանայքը՝ հարուստ ու աղքատ խառնուած, որը բոբիկ, որը մերկ, որը երեխաները գրկումը կամ շալակումը, մարդիկները զրահաւորուած հաւաքուեցան, որ պաշտպանեն մեր հաւատքը, մեր եկեղեցին, մեր ազգութիւնը և մեր պապերից աւանդած լեզուն ու արարողութիւնները:

Մանաւանդ երբոր լսեցին, թէ մոգերի հետ եկող Հայ նախարարները խօսք են տուել Թագաւորին նորա կամքը կատարելու՝ աւելի բորբոքուեցան և խօսք կապեցին, որ ուրացածներին ամենևին չխնայեն, մինչև անգամ հայրը իւր ուրացած որդուն, կինը իւր ուրացած մարդուն, եղբայրը իւր ուրացած եղբօրն իւրեանց ձեռքով քարքոծեն և սպանեն: Տակաւին չէին իմանում, թէ Թագաւորին միայն խաբելու համար և իւրեանց ազգի և հայրենեաց սիրու համար՝ նախարարները երեսանց հնազանդել են Թագաւորի կամքին, այս պատճառաւ էլ լացով ու աղաղակաւ սկսան երկինք ու երկիրը դղրդացնել, սար ու ձոր արտասուք շարժել, յառաջ գնալ և յանդիմանել նախարարներին:

Խեղճ նախարարները կամենում էին յառաջ գալ և փարել իւրեանց ազգականներին, իւրեանց կանանցը, գրըկել իւրեանց որդիքը. բայց սոքա կարծելով թէ ուրացել են իւրեանց եկեղեցին, փախչում էին նոցանից ճչալով՝ ինչպէս թշնամի և վնասակար մարդկանցից: Հազիւ կարողացան նախարարները նոցա հասկացնել, թէ չեն ուրացել իւրեանց հաւատը և ներողութիւն խնդրելով ամենքից՝ միացան նոցա հետ և սկսան մոգպետին, մոգերին և այլ պարսիկներին դէմ կենալ: Հոգևորական ու աշխարհական խառնուած, որը խաչը բռնած, որը աւետարանը ձեռքին, որը աղօթք անելով և քարոզ կարդալով ձեռքերը դէպի երկինքը բարձրացրած, որը փայտեր ու զէնքեր ձեռքին, ջարդեցին և դէս

ու դէն փախցրին բոլոր մոգերին և մոգպետին, որոնք արդէն սկսել էին քանդել մեր եկեղեցիքը, առաւել լաւ համարելով գետինը պատռել և իրանց գերեզման շինել, քան թէ կենդանւոյն տեսնել իւրեանց եկեղեցին քանդուած, իւրեանց մէջ պարսից օրէնքներն և ծէսերն հաստատուած, իւրեանց երկիրն ոտնակոխ եղած։

Պարսից մեծամեծ իշխաններն և մոգպետն, երբոր տեսան մեր Հայերի այս համարձակ և անվախ հայրենասիրութիւնը և կրօնասիրութիւնը, սարսափեցան և շուտով թուղթ գրեցին հասկացրին Թագաւորին, թէ որ բովանդակ Պարսից աշխարհի մարդիկը մոգեր դառնան, և ծով ու ցամաք, սուր ու կրակ, երկինք և երկիր՝ վեր կենան, և մեր աստուածներն անգամ գան, չե՛ն կարող Հայերին իւրեանց քրիստոնէական հաւատիցը փոխել։ Սոքա այնպիսի մարդիկ են, որ իւրեանց հաւատը, եկեղեցին և ազգայնութիւնը պահպանելու համար պատրաստ են ամէն բան յանձն առնուլ և ոչ մի բանից չվախենալ։ Սոքա մահը աւելի լաւ են համարում՝ քան թէ կեանքը, միայն թէ իւրեանց հաւատով և հայութեամբ մեռնին։

Սակայն մեր անուանի նախարարներիցը մինը՝ Վասակ անունով, որին Պարսից Թագաւորը մեծամեծ երկիրներ և պարգևներ տալով խոստացել էր առաւել մեծ պատիւների հասցնել, իւր հաւատը ուրացել էր և միշտ ջանահնար էր լինում, որ միւս Հայերին էլ խաբէ և իւր կողմն քաշէ, և այս պատճառաւ էլ սկսաւ պարսիկներին խրատել, որ ուրիշ կերպով վարուին Հայերի հետ, այն է պատուով, քաղցրութեամբ և մանաւանդ իւր թոյլտուութեամբ։ Վասակի հնարքներով հանդարտացրին շատերին մեր Հայերից, որպէս թէ Թագաւորը ներողամիտ է Հայոց վերայ, և սկսան պատիւներ և գանձեր բաժանել մի քանի փառախնդիր հոգևորականների

և աշխարհականների, և գիշեր ու ցերեկ պարելով, խաղալով և երգելով անցկացնել, և շատ մարդկանց իւրեանց կողմն որսալ:

Բայց ի՞նչը կարող էր թուլացնել միւս ջերմեռանդն և բազմաթիւ Հայերին: Այո՛, մի քանիսը փառասիրութեան և շահասիրութեան որոգայթի մէջ բռնուեցան, բայց հասկացողներն այս բաներին նայում էին ինչպէս ազգակործան բաների վերայ: Լաւ իմանում էին, որ մեր Հայոց ազգը այնպիսի ազգ է, որ նորա համար հալածանքը, նեղութիւնը և տառապանքը հազար անգամ աւելի օգտակար է թշնամեաց կողմից՝ քան թէ խորամանկութեամբ, պատիւներով, գանձերով և նշաններով ռամիկ ժողովրդին որսալը: Նոքա լաւ իմանում էին, որ այսպիսի բաներով Պարսիկները աշխատում են Հայերին քնացնել, նոցա ազգային հոգին մեռցնել, և նոցա թմրած ժամանակը՝ յափշտակել և գողանալ նոցանից նոցա ամենամեծ ճոխութիւնը և ամենահարուստ ժառանգութիւնը, այն է նոցա եկեղեցին. այս պատճառաւ էլ պատուի ետևից ընկած վասակներին համարեցին իւրեանց առաջին և ամենավտանգաւոր թշնամի, և իւրեանց ուխտին հաստատ մնալով՝ սկսան մեր Հայերը մնացեալ մոգերին ևս գտնել և ջարդել, նոցա հիմնած կրակատուններն այրել և քարուքանդ անել:

Այս համբաւները երբոր Պարսկաստան հասան՝ շուտով այն տեղից բազմաթիւ զօրքեր եկան Հայաստան, որ կատաղաբար կործանեն բոլոր երկիրը: Մեր անմահ Հայերը իւրեանց տուն ու տեղը թողած, ծառայ և ազատ մի հոգւով վառուած, իւրեանց համար սպարապետ և զօրագլուխներ ջոկեցին, և կանայք ու մարդիկ բոլորը զէնք վերառան, որ իւրեանց Եկեղեցին պաշտպանեն: Զօրականները, եպիսկոպոսները և քահանայքը այնպիսի յորդորանքներ, այնպիսի ճառեր, այնպիսի քարոզներ և հայրենասիրական քաջալերու-

թիւններ խօսեցին հաւաքուած Հայ բազմութեան առաջ, որ քարասիրտ մարդու հոգին անգամ վառում է, երբոր կարդում է Եղիշէի պատմութեան մէջ։ Մանաւանդ ամենից մեծ և սպարապետ Վարդան Մամիկոնեանի ճառը և Ղևոնդ երէցինը՝ այն ջերմեռանդ հոգւով, այն քրիստոնէական պերճախօսութեամբ և այն սրտաշարժ ազդեցութեամբ են ասած, որ կարդացողը յափշտակւում է և զմայլում։ Մեր Հայերը բոլորը հոգևորուած էին իրեանց եկեղեցու ազատութեան համար՝ բայց արիասիրտ սպարապետի և Ղևոնդ երէցի ճառերով կատարեալ նահատակներ և մարտիրոսներ դարձան։

Հոգեգալստեան տօնի գիշերն էր. ամենքն էլ խոստովանուեցան, չմկրտուածները մկրտուեցան, սեղան ուղղելով պատարագ մատուցին, և ամենքը հաղորդուելով սուրբ և առաքինի հոգւով լցուեցան, որ սուրբ և անարատ հաւատով մեռնեն իրեանց հայրենեաց և եկեղեցւոյ համար։ Ո՞վ է տեսած այսպիսի ջերմեռանդն հայրենասիրութիւն և աստուածսիրութիւն։ Ո՞վ է տեսած որ մի ամբողջ ազգ, այրու կին, ծեր ու մանուկ հաղորդուած լինին Քրիստոսի սուրբ մարմնոյն և արեանը այն մտքով և այն խորհրդով, որ մեռնին իրեանց հաւատքի և եկեղեցւոյ համար. բայց հինգերորդ դարու մեր Հայերը այս բանն արեցին, ասելով այս խօսքերն. «Աստուա՛ծ, ընդունի՛ր մեր անձն իբրև պատարագ, և մի՛ տար մեր եկեղեցին այլոց ձեռքն»։

Հայերի այս միաբանութիւնը և ոգևորութիւնը երբոր տեսաւ Պարսիկների գլխաւոր զօրապետն, խրախուսեց իւրաններին։ Ամենասաստիկ պատերազմ բացուեցաւ Հայերի և Պարսիկների մէջ, այնպէս՝ որ սար ու ձոր թնդում էր։ Վիրաւորուածների աղաղակ ու ճիչն, նետերի շաչիւն ու շառաչիւնը, և վահանների կոփիւնը օդը սասանեցնում էին և քարափները դղրդեցնում։ Երկինք ու գետին որոտում էին ահա-

գին բազմութեան աղաղակներից։ Գարնան ժամանակ էր. ծաղկաւէտ դաշտերն արեան ծով էին դառել, և յորդահոս գետը կարմիր էր ներկուել. և ո՞վ կարէ պատմել բոլորն միասին։ Միայն այսքանը յայտնուեցաւ, որ Պարսիկներից ընկան այս ահեղ պատերազմումը երեք հազար հինգ հարիւր քառասուն և չորս անձինք մեծ և փոքր, իսկ Հայերից հազար երեսուն և վեց, որոց մէջ քաջ հայրենասէր և առաքինի սպարապետն Հայոց Վարդան, որոյ անունով և բոլոր նահատակուածներն Վարդանանք կոչուեցան։ Մինչև ցայսօր մեր Եկեղեցին տօնում է այս փառաւոր նահատակներին, իբրև իւր ամենահարազատ որդւոց։

Ա՜խ, ո՞րքան քաղցր և անմահ գործ է հայրենական եկեղեցւոյ և ազգի համար նահատակուիլը։ Ո՞րքան ջատագովութեան և յաւիտենական յիշատակաց արժանի արարմունք է մեռնիլ սուրբ մահուամբ՝ Քրիստոսի և ազգի անունով։ Այն նահատակութեան օրից մինչև ցայսօր քանի՞ հազար Հայեր մեռած կլինին, բայց նոցա որի՞ անունն է տօնւում, որի՞ անունն է գրքերի նիւթ ու յիշատակաց պարծանք, ինչպէս Վարդանանց նահատակների անուններն և այլ քանի մի անհատների, որոնք զանազան դարերում իւրեանց գլուխը զոհել են իւրեանց ազգի և Եկեղեցւոյ փրկութեան և յարատևութեան համար։ Եկեղեցին շատ լաւ է իմացել վարձատրել իւր սիրողներին։ Նա նոցա անունն անմահացրել է ոչ միայն դպրութեան կեանքում, այլ նաև այս դիւրափոփոխ և յեղյեղուկ աշխարհիս վերայ։ Նա չէ՛ մոռացել և չէ՛ մոռանալ բնաւ իւր հարազատ որդւոցը, միայն թէ որդիքը չմոռանան նորան։

Այսպէս ահա՛ վերջացաւ այս պատերազմն, բայց ո՛չ Պարսիկներն դադարեցան իւրեանց չարութենից և բարբարոսութենից, և ո՛չ Հայերը իւրեանց առաքինասիրութիւնից։ Պարսիկները իւրեանց բազմաթիւ մեռածներն տեսան և կա-

տաղեցան, ուստի երդուան որ հիմնայատակ անեն մեր Հայոց աշխարհը. Հայերն իւրեանց քաջ նահատակներն տեսան ու սրտապնդեցան, որ իւրեանց մահն էլ նոցա մահուան հետ խառնեն: Պարսիկներն դարձան արիւնարբու գազաններ, Հայերն դարձան անվեհեր և արիասիրտ մարտիրոսներ: Նոքա ջան 'ի գործ եդան մահով սոցա վախացնել, սոքա իւրեանց պարանոցն սրի առաջ մեկնելով, սարսափեցրին նոցա: Պարսիկների սրերը բթացան, բայց Հայերի պարանոցներն չձանձրացան:

Անցան ամիսներ, անցան տարիներ, բայց ինչպէս ասացի, Պարսիկները չդադարեցան իւրեանց նախանձից և գազանութիւնից. սկսան տեղտեղ մեր եկեղեցիները քանդել, նախարարներից շատերին օտար երկիրներ աքսոր քշել, եպիսկոպոսներին, երէցներին և քահանաներին կրկին կանչել և տանջանքներով ու սպառնալիքներով հարցուխնդիր լինել, շատերին բանտերն անել և քաղցած ու ծարաւ գետնախշտի չարչարել, բայց անհնարին եղաւ հաւատքից ուրացնելը: Ընդհակառակն բանտարկեալների ձեռքով զանազան հրաշքներ կատարուեցան և Պարսից պահապաններից ոմանք քրիստոնէացան՝ տեսիլներ տեսնելով: Եպիսկոպոսները և երէցները տանջանքից այնքան չվախեցան, ինչքան թագաւորը և իւր մեծամեծներն նոցա պատասխաններից: Որքան տանջանքներն և չարչարանքներն սաստկացրին, այնքան նոքա զօրացան և թագաւորին սարսափեցրին: Վերջապէս շատերը մեռան այո՛, և անապատներումը թռչունների կերակուր դարձան, բայց նոցա փոշուցը ծաղկեցան և բողբոջեցան նոր նահատակներ և նոր մարտիրոսներ: Նոքա իւրեանց մահովն ծնեցին հազարաւոր որդիք և իւրեանց մահովն կենդանի պահեցին իւրեանց եկեղեցին: Որպիսի զարմանալի սխրագործութիւն, մահով անմեռութիւն և մեռելութեամբ կենդանութիւն:

Այս, նահատակուածներն նահատակուեցան, բայց կեն-դանի մնացածներն եւս առաւել դառն վշտերի և տառապանք-ների պատահեցան։ Պարսիկներն որ առաջ սկսան բռնանալ և վրէժխնդրութեան դառն բաժակներն թափել մեր խեղճ ազգի վերայ. այրել, քանդել գիւղերը և քաղաքները, ոտնա-կոխ անել արտերը և անդաստանները, և ջանալ վերջացնել խեղճ Հայերին աշխարհի երեսից։ Քարացան այս ժամա-նակ բոլոր քրիստոնեայ զօրեղ ազգերն, ո՛չ մէկն օգնութիւն չհասաւ Հայերին։ Միայնակ Հայերին թողին ընդդիմանալ Պարսից անգթութեանց և հարստահարութեանց, բայց և միայն մեր Հայերն անմահացրին իւրեանց անունն իբրև քրիստոնէական նահատակներ, այսպէս պահելով ո՛չ միայն իւրեանց եկեղեցին, այլ և Վրաց և Աղուանից և այլոց։

Քաղաքական կեանքից զրկուած՝ Հայերը իւրեանց հայրենասիրութիւնը ամփոփեցին հաւատոյ ոգևորութեան մէջ։ Տեսնելով իւրեանց երկիրն ճարակ դարձած կրակի և սրի՝ քաշուեցան անապատները, ամրացան անառիկ տեղերումն, թաք-կացան անտառներումն, և խստաբարոյ կեանքով անցուցանում էին իւրեանց օրերն։ Ամէն մէկը թողեց իւր գիւղը և տունը, իւր ագարակները և գեղեցկաշէն տները։ Նորահարսներն դուրս եկան իւրեանց առագաստներից և փեսաներն իւրեանց սենեակներից։ Վեր կացան ծերունիքը իւրեանց թախտերից և մանուկներն իւրեանց մօր գրկիցը։ Երիտասարդներն և կու-սանքներն առ հասարակ սուրբ ջերմեռանդութեամբ լցուած՝ սփռեցան Հայաստանի լեռներումը, լաւ համարելով հայ-րենի Աստուածպաշտութեամբ տառապելի կեանք վարել, քան թէ ուրացութեամբ փափկանալ իւրեանց տներումն։ Զրկուե-ցան քաղաքներից և քաղաքացի դարձան Եկեղեցւոյն։ Հաւա-տոյ հայրենիքը գերապանց համարեցին՝ քան բնութեան հայ-րենիքը։ Այս բաները անում էին ո՛չ թէ միայն հասարակ

կարգի մարդիկն և կանայքն, այլ և իշխանազունքն, իշխանազնուհիքն և փափկասուն տիկնայքն, իրանց միայնակ ուրախութիւն համարելով սուրբ գրքի ընթերցուածներն և իւրեանց Հայրապետների գրուածներն։

Այսքան նեղութիւններն քաշեցին, բայց միանգամայն և պահպանեցին մեր կրօնը, մեր ազգը, մեր աւանդութիւնները, մեր ազգայնութիւնը, մեր եկեղեցւոյ անկախութիւնը, և այս ամէնը արիւնով ներկած, տանջանքներով դրոշմած և սուրբ արտասուօք լուացած աւանդեցին իւրեանց յետագաններին։ Փոխուեցան տարիներ, շատ ազգեր անցան, շատերն նոր ծընուեցան, բայց մեր Հայրենի աւանդները անկորուստ մեզ հասան, և ահա՛ այս օրուան օրս նոցա շնորհքն է, որ մենք փայլելում ենք և համարձակւում ենք ասել, թէ մենք էլ ազգ ենք ու Եկեղեցի։ Ուրեմն, որքան պարտական ենք Աստուծոյ և մարդկան առաջին, որ սիրենք, պաշտենք և անարատ պահպանենք այսպիսի առաքելական և մարտիրոսական Եկեղեցին մինչև յաւիտենականութեան գալուստը, որ յանձնենք մարդասէր Յիսուսին, որից ստացել ենք իբրև անենամեծ պարգև աշխարհիս երեսին։

ՎԱՐԴ ԵՒ ԴԵՂԱԳՈՐԾ

Գարնան սիրուն մէկ օրով
Դեղագործին մէկն իւր պարտէզն իջնելով՝
Աստէն մէկ խոտ կը կորզէր
Անդէն տերև կը կտրէր,
Ու մախաղին մէջ կը շարէր կարգ ըստ կարգ.
Իրեն համար չէր չոր արմատն էլ անարգ։
Վարդին էլ մօտ որ հասաւ

Սիրուն բացուեր էր տեսաւ.
Ծիլ ծիլ կարմիր տերեւներ
Յօղապածոյծ տարածեր,
Օրիորդի պէս քնքուշ
Նազէր հոտովն իր անոյշ։
Երբ դանակին շողիւնը խեղճ վարդը տեսաւ
Գլուխը կրքեց, «ա՜հ, ասաւ,
Իմ էլ վախճանս հասաւ......
Խնայէ, պարոն, խնայէ՛ յիս
Գթա՛ ծաղիկ հասակիս»
Ու մարգարտէ արտասունքներ
Տերեւներէն կը թափէր։
«Մի՛, մի՛ տրտմիր, ո՛վ գեղաշուք, ազնիւ վարդ,
Պատասխանեց իրեն մարդ.
Այս է բարեաց ճակատագիր, չըգիտե՞ս.
Ամէն լաւ բան քեզի պէս
Ուրիշներու բարօրութեանն է համար.
Թէ որ քու կեանք չէ երկար,
Բայց ուրիշի օգտին համար գոհես՝
Երկարագոյն զայն կանես.
Մէկի աչքին դեղ կը դառնաս,
Միւսին անոյշ հոտովըդ սիրտ կը բանաս.
Տերեւներովըդ էլ փափկիկ
Լինիս դու դեղ ու քաղցրահամ ուտելիք։

Վարդի բախտէն սովորեցէք
Ով որ ազգին կամ ընկերաց օգուտ կանէք.
Օ՜հ լինելու ծըներ էք......
Բայց ո՞վ չուզեր թողուլ վարդին պէս անուշ
Անուն մի սաստ ու յիշատակ քաղցրայուշ։

ՔԱՋ ՍՊԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ ՃԱՌԸ

Վարդան սպարապետը Աւարայրի դաշտումը պատերազմից առաջ՝ նախարարների միաբանութեամբ սկսեց այսպէս խօսել։

«Ես և դուք միասին շատ պատերազմ ենք տուել, երբեմն մենք ենք քաջութեամբ յաղթել թշնամեաց, իսկ երբեմն նոքա են յաղթել մեզ, և շատ անգամ յաղթել ենք՝ քան թէ յաղթուել։ Բայց այն բոլոր յաղթութիւնները մարմնոյ պարծանք էին, որովհետև անցաւոր թագաւորի հրամանովն էինք պատերազմում։ Նա՝ որ պատերազմից փախչում էր, վատամարդի էր երևում աշխարհումը, և անողորմ մահ էր ստանում թագաւորից. իսկ նա՝ որ քաջութեամբ յառաջ էր գնում, քաջ անուն էր ժառանգում և մեծամեծ պարգևներ էր ստանում անցաւոր և մահկանացու թագաւորից։ Եւ ամէն մինը մեզանից ունի իւր մարմնու վերայ շատ վէրքեր և սպիք, որոց համար ստացել է մեծամեծ պարգևներ։ Այս բոլոր քաջութիւնները անարգ և անօգուտ եմ համարում, և բոլոր պարգևները ունայն բաներ, որովհետև ամենը անցաւոր են։»

«Ուրեմն եթէ մահկանացու թագաւորի համար այնպիսի քաջութիւններ էինք գործում, ո՛րքան աւելի պէտք է գործենք մեր անմահ թագաւորի համար, որ տէր է կենդանեաց և մեռելոց և դատելու է ամէն մարդոյ իւր գործքերին համեմատ։ Եթէ մենք խոր ծերութեան եւս հասնենք, այնուամենայնիւ մահու բաժին պէտք է լինինք։ Ուրեմն շտապենք կենդանի Աստուծոյ մօտ, որից բոլորովին չ՚ենք բաժանուիլ։»

«Այժմ աղաչում եմ ձեզ, ո՛վ իմ քաջ նիզակակիցներ, մանաւանդ որ ձեզանից շատերը քաջութեամբ առաւել էք ինձանից և ազգաւ երևելի՝ քան ես, բայց որովհետև դուք

ձեր յօժար կամքովը ինձ ընտրեցիք ձեզ առաջնորդ և զօրագլուխ, վասն որոյ մեծամեծներդ և փոքրներդ քաղցրութեամբ լսեցէ՛ք իմ խօսքերը։ Չ՚երկնչի՛նք հեթանոսների շատութենիցը և չ՚դարձնենք մեր թիկունքը մահկանացու մարդոյ սրի առաջև։ Եթէ Աստուած մեզ յաղթութիւն տայ, ջարդենք նոցա զօրութիւնը, որ բարձրանայ ճշմարտութեան կողմը, իսկ եթէ հասել է ժամանակը սրբութեամբ մեռնելու այս պատերազմի մէջ, ընդունենք սրտի ուրախութեամբ, բայց միայն մեր առաքինի քաջութեան մէջ վատութիւն չ՚խառնենք։»

«Մանաւանդ որ ես տակաւին չե՛մ մոռացել իմ և ձեր ամենց գործքը, որ անօրէն իշխանին խաբեցինք՝ ինչպէս մի անպիտան տղայի, նորա ամբարշտութեան կամքը առ երեսս կատարեցինք, բայց Տէրն ինքը իմանում է, թէ մեր սրտումը ի՛նչպէս նորանից անքակտելի էինք մնացել։»

«Այս բանը ձեզ ինքներիդ յայտնի է, որ մենք հընարք էինք գտնում մեր սիրելիները մեծ նեղութենիցը ազատելու, որ նոցա հետ միասին կռուենք անօրէն իշխանի հետ, մեր հայրենական աստուածատուր օրէնքի համար, բայց երբ նոցա չ՚կարողանանք օգնել, անկարելի է որ մարմնաւոր սիրոյ համար՝ Աստուծուն մարդկանց հետ փոխենք։»

«Երկու և երեք կռուի մէջ Տէրը ինքը մեծ զօրութեամբ օգնեց մեզ, այնպէս որ քաջութեան անուն ստացանք, թագաւորի զօրքը ջարդուփշուր արինք, մոգերին անողորմ սատակեցրինք, կռապաշտութեան պղծութիւնը զանազան տեղերից սրբեցինք, թագաւորի անօրէն հրամանը անարգեցինք, ծովի կատաղութիւնը հանդարտացրինք, տարացած ալիքները ցած իջան, բարձրադէզ փրփուրը անհետացաւ, գազանական կատաղութիւնը դադարեց։ Նա՝ որ ամպերի վերայ էր գոռում, ցած իջանելով աւելի քան սովորական ընտելութիւնը, խոնարհեցաւ մեզ հետ խօսելու։ Նա՝ որ կամենում էր իր

հրամանի զօրութեամբը կատարել իւր չարութիւնը եկեղեցու դէմ, այժմ աղեղով, նիզակով և սրով է կռւում։ Նա՝ որ կարծում էր, թէ մենք շուտ պէտ ենք թողել քրիստոնէութիւնը, այժմ՝ ինչպէս մեր մարմնոյ գոյնը, չէ կարողանում փոխել և չէ կարող մինչև վերջը, որովհետև սրա հիմը դրած է անշարժ քարի վերայ, ո՛չ թէ երկրումը, այլ վերև երկնքումը, ուր ոչ անձրև է գալի և ո՛չ քամիներ են փչում և ոչ հեղեղներ են յարուցանում։ Մենք եւս թէպէտ մարմնով երկրումն ենք, բայց հաւատով երկնքումն ենք հաստատուած, որտեղ ոչ ոք չէ կարող հանել Քրիստոսի անձեռագործ շինուածքին։»

«Հաստատ կացէ՛ք մեր ճշմարիտ զօրավարի վերայ, որ երբէ՛ք չի մոռանալ ձեր նահատակութեան գործը։ Ո՜վ քաջեր, այս մի մեծ ողորմութիւն է Աստուածանից, որ նա ցոյց է տալի իւր զօրութիւնը մեզ։ Եթէ այլոց կատարելով Աստուածային օրէնքի համար, մեծ պարծանք ստացանք և մեր ազգատոհմի քաջ անունը թողինք եկեղեցու մէջ, և վարձատրութիւնը Աստուածանից է, որ նա պահում է մեր իւրաքանչիւրի համար, մեր սրտի յօժարութեան և գործքերի արժանաւորութեան համեմատ, ինչքան [illegible], եթէ մենք ինքներս մեռանենք մեր Տէր Յիսուս Քրիստոսի վկայութեան համար, որին երկնաւորների անթիւ [illegible], եթէ հնար լինէր։ Այս պարգևները [illegible] համար չէ նշանակած, այլ ում կամենում է բարերար Տէրը. և այս պարգևները ո՛չ թէ մեր արդար գործքերի վարձն է, այլ աննախանձ Աստուծոյ բարութեանցը, ինչպէս գրած է սուրբ կտակարանումը «Որտեղ շատացան մեղքերը, այնտեղ շատացաւ նոյնպէս Աստուծոյ ողորմութիւնը»։

«Այս բանը շատ յարմարութիւն ունի մեզ հետ. ինչպէս մենք մարդկանց առաջև երևեցանք ամբարիշտներ, նոյնպէս

կրկնապատիկ կերեւանք արդար՝ մարդկանց, հրեշտակների և ամենից Հօր առաջև։ Որովհետև երբ լսեցին մարդիկ, թէ ուրացել ենք մեր կրօնը, շատ արտասուք թափեցին մեր վերայ, մանաւանդ մեր սիրելիքը. նաև մեր ընկերները բարկացած, սրերով էին սպառնում մեզ և կամենում էին դառը մահուան բաժակը մեզ խմացնել, և մեր ծառայքը մեզանից օտարացած՝ յետ էին փախչում։ Իսկ օտարները, որոնք լսել էին մեր քրիստոնէութեան անունը, որովհետև չ'էին իմանում մեր ներքին խորհուրդը, ողբալով լաց էին լինում մեզ վերայ և չ'իմանալով՝ շատ հայհոյում էին մեզ։ Բայց աւելի մեծն ասեմ, ո՛չ միայն մարդիկ երկրումը, այլ նոյն իսկ հրեշտակները երկընքումը իւրեանց երեսները դարձրեցին մեզանից, որ տխուր դէմքով չ'նայեն մեզ վերայ։»

«Այժմ ահա՛, եկաւ հասաւ ժամանակը, որ մեր անուան կեղտը հեռացնենք մեզանից։ Այն ժամանակը ինչպէս նեղացած սգաւոր՝ հոգւով և մարմնով էինք տրտմած, այսօր զուարթ հոգւով և մարմնով ենք պայծառացած, որովհետև տեսնում ենք բարերար Աստծուն, որ առաջնորդում է մեզ. մեր զօրավարը մարդ չէ՛, այլ բոլոր մարտիրոսների զօրագլուխը։ Երկիւղը թերահաւատութեան նշան է, մենք վաղ ենք հեռացրել մեզանից թերահաւատութիւնը. նորա հետ և երկիւղը կ'հեռանայ և կանհետանայ մեր մտքերից և խորհուրդներիցը։»

ԲԼԲՈՒԼՆ ԱՒԱՐԱՅՐԻ

Ո՛նց դաս իմ լուսնակ հեզիկ ու հանդարտ
Համասփիւռ լուսովդ ի լեռ, ձոր և արտ,
Եւ ի Նահապետս, որ մրտօք մոլար
Գիշերաժամիկ ժուռ գամ յԱւարայր,

Ուր քաջ ու աննըման իմ հարք հայկազունք
Ընկան զէտ հըսկայ, ելան զէտ զուարթունք.
Միթէ գա՞ս սըփռել ոսկերաց սըրբոց
Ձիւնափայլ ամպէդ ոսկեթել ծաղկոց,
Թէ ձներմակ ճակտիդ՝ թէպէտ և պայծառ
Քաջացս արենէն ուզես կարմիր վառ.
Թէ լըռիկ մընջիկ ափշիս տակաւին
Թէ ի՞նչպէս ընկաւ Վարդանն ահագին,
Մահու սև ըստուերն ի սիրտ թըշնամեաց,
Ու հոգին ձըգելով յերկին առ Աստուած:

Դու այլ ո՛վ Տըղմուտ տրտում ու արիւնոտ,
Որ գաս կամկար լաս ի մէջ շամբերուտ.
Եւ հովիկդ, որ գաս ի Մակուայ քարէն
Կամ ի ծեր Մասեաց սըրբազան սարէն,
Դու այլ ինձ նըման դողդող և երեր
Թող թեւօք անցնիս սարեր ու ձորեր,
Անտառէ անտառ, տերևէ տերև,
Կոծկոծելով գաս ի դաշտիս վերև,
Ու այս մաշած շընչիս վերջին հառաչանք
Ձըգել ի Հայոց սըրտից արձագանգք:

ՈՀ դու բարեկամ այրած սըրտերու,
Խօսնակ գիշերոյ, հոգեակ վարդերու,
Երգէ բլբուլիկդ երգէ ի սարէդ,
Ու անմահ քաջքն Հայոց երգէ հոգւոյս հետ.
Թադէի վանուց ձէնիկդ ինձ դիպաւ,
Սըրտիկս՝ որ ի խաչն էր կից՝ թունտ առաւ.
Ի խաչին թևէն թըռայ ու հասայ
Գըտայ զքեզ ի դաշտ քաջին Վարդանայ:
Բլբուլ քեզ համար մեր հարքն ասացին
Թէ չէ հաւ՝ բլբուլ մեր Աւարայրին,

Եղիշեայ հոգեակն է քաղցրաղըուցիկ,
Որ զՎարդան ի վարդըն տեսնու կարմրիկ.
Ջրմեռն յանապատ կու գնայ կայ ի լաց,
ՅԱրտազ գայ զգարունն ի Թուփ վարդենեաց,
Երգել ու կանչել յԵղիշէին ձայն
Թէ պատասխանիկ մ'արդեօք տայ Վարդան։

Կանչէ՛ բըլբուլիկ, կանչէ՛ յԱւարայր,
Որ Վարդան հայի յերկնուց այլ ի վայր,
Յիշէ զՀայաստան ըզսիրելին վայր,
Հայաստան յիշէ զՎարդան իւր յամայր։

ՂԵՒՈՆԴ ԵՐԷՑԻ ՃԱՌԸ

Երանելի Ղեւոնդ երէցը հրաման ստանալով իւր սուրբ ընկերներիցը, Յովսէփ մեծ եպիսկոպոսիցը, բոլոր իշխաններիցը, քահանաներից և զօրավարներիցը, բացեց իւր բերանը և բարձր ձայնով այս հետևեալ քարոզը կարդաց բոլոր զօրքի առաջև։

«Ձեր միտը բերէ՛ք ամենաքեանդ այն նախահարքը, որոնք կային զանազան ժամանակներում՝ Աստուծոյ Որդու աշխարհ գալուց յառաջ։ Երբ չար սատանան հանեց, հեռացրեց մեզ աստուածատուրնկ դըրախտիցը, մենք ընկանք ողորմ դատաստանի տակ, մեր մեղքի համար, որ մեր ազատ կամքովը անարժանութեամբ գործեցինք և Աստուծոյ արարչական զօրութիւնը շարժեցինք մեր վերայ բարկութեամբ. և ողորմած դատաւորին ստիպեցինք վրէժխնդիր լինել արարածներիցս, մինչև որ հրաման տուեց երկնային ծովին Թափուելու մեր վերայ, և երկրի պինդ յատակը ծակոտելով դուրս Թափեց իւր ծոցից հեղեղներ։ Այսպէս երկրային ջրերը մեզ համար տան-

ջանքի գործիք դարձան՝ մեղանից վրէժ առնլու առանց բարեխօսի։»

«Միայն արդարն Նոյ կատարեալ գտնուեցաւ մարդկային ազգի մէջ, որ մեղմացրեց տէրունական բարկութեան սաստկութիւնը և դարձաւ նոր սկիզբն մարդկային ազգի բազմանալուն։ Նմանապէս Աբրահամը իւր փորձութեան մէջ առաքինի երևեցաւ, և Աստըծուց ընդունած պարգևը կրկին իւր ձեռքովը Աստըծոյն նուիրեց. սորանով Աստուած նշան տուեց Քրիստոսի համար, որովհետև նորա մէջ տպաւորուած տեսնում էր Աստուծոյ որդւոյ աներևոյթ գալուստը, անըմբռնուելու ըմբռնուիլը և անմահի զենուիլը, որ իւր մահովը խափանեց մահուան իշխանութիւնը։ Եթէ մահը մեռնում է մահով, ուրեմն չվախենք մասնակից լինելու Քրիստոսի մահին, որովհետև ում հետ մեռնինք՝ նորա հետ և կ՚կենդանանանք։»

«Քաջե՛ր, ձեր միտը բերէ՛ք մեծ Մովսէսին, որ տակաւին չ՚հասած այրութեան հասակին, նահատակութեան սուրբ խորհուրդը երևեցաւ նորա տղայական հասակին մէջ։ Եգիպտացւոց Թագաւորի տունը ծառայում էր նորան և ակամայ դայեկութեամբ մեծացնում էր նորան։ Նա ժողովուրդը նեղութենից փրկելու ժամանակը միջնորդ դարձաւ երկնքի և երկրի մէջ, նաև Եգիպտացւոց Աստուած անուանեցաւ։ Որովհետև երբ զօրանում էր սուրբ խորհուրդը, նա իւր ձեռովը վրէժխնդիր էր լինում Եգիպտացիներից, իսկ երբ աստուածային յայտնութիւնը երևում էր նորա վերայ՝ նա իւր գաւազանով մեծամեծ հրաշքներ էր գործում։ Եւ սուրբ նախանձից շարժուելով՝ սպանեց Եգիպտացին և աւազի մէջը թաղեց. այս պատճառով Աստուած նորան մեծ անուն էր տալի և կարգում էր ժողովրդի առաջնորդ։ Բայց զարմանալին այն է, որ արիւն թափելով արդարացաւ և անուանե-

ցաւ մեծ քան բոլոր մարգարէքը, ո՛չ միայն արտաքին թըշնամիները կոտորելով, այլ իւր ազգատոհմը ևս, որոնք անապատում Աստըծուն փոխեցին հորթի հետ։»

«Եթէ Մովսէսը այնքան հեռու ժամանակից այնպէս վրէժխնդիր էր լինում Աստուծոյ Որդու գալըստեան համար, մենք, որ աչքով տեսանք և վայելեցինք նորա երկնաւոր առատ պարգևները, աւելի պէտք է վրէժխնդիր լինինք այս մօտակայ Ճշմարտութեան համար, որ իւր անձը մահով զոհեց մեր մեղքերի պատճառով և արդարացրեց մեզ անտանելի դատապարտութիւնից, ուրեմն մենք ևս մահով զոհենք մեր անձը անմահ զօրութեան համար, որ առաջուայ վրէժխնդրողներից պակաս չ՛գտնուինք։»

«Ձեր միտը բերէ՛ք Փենեհէզ մեծ քահանան, որ իւր եղբայրները սպանելով՝ սրբեց պղծութիւնը պատերազմի ժամանակ, և երդումով հաստատեց քահանայութիւնը յազգէ յազգ։ Մի մոռանաք և Եղիաս սուրբ մարգարէն, որ չ՛կարողանալով հանդարտութեամբ նայել Աքաբի կռապաշտութեան վերայ՝ արդար նախանձովը վառուած ութ հարիւր մարդ սպանեց իւր սեփական ձեռքովը. իսկ հարիւրին անշէջ կրակի կերակուր շինեց։ Այսպէս աստուածային վրէժը պահանջելով՝ անըմբռնելի հրեղէն կառքովը երկրից երկինք վերացաւ։ Բայց ձեզ համար աւելի մեծ երանութիւն է պատրաստուած, ձեզ համար Աստուած կառք չէ ուղարկում երկինքը վերանալու. այլ նոյն իսկ ինքը կառքերի և ձիերի Տէրը իւր հզօր զօրութիւնովը և սուրբ հրեշտակներովը ձեր առաջ գալով՝ ամենիդ համար թևեր է բուսուցանում որ ճանապարհորդակից և քաղաքակից լինինք նորան։»

«Ուրեմն էլ ի՞նչ միւս անգամ կրկնեմ ձեր քաջ նահատակութեան առաջև, զի դուք ինձանից աւելի տեղեակ և հմուտ էք աստուածային գրքերին։ Դաւիթը իւր մանկութեան ժա-

մանակ քարով կործանեց մեղէն մեծ բլուրը և բոլորովին չ՛վախեց հաստանդամ Գողիաթի ահագին սրից։ Ցրեց Թըշնամեաց բանակը, ազատեց Իսրայէլացւոց զօրքը մահից և ժողովուրդը գերութենից, դարձաւ Իսրայելացւոց թագաւորների մեծը և անուանեցաւ Աստուծոյ Որդւոյ Հայր։ Քրիստոս Դաւթի որդի անուանեցաւ այն ժամանակի պիտոյքին համեմատ, բայց դուք ճշմարտապէս ծնուելով սուրբ Հոգուցը՝ Աստուծոյ որդիք էք և Քրիստոսի ժառանգակիցներ։ Ո՛չ ոք ձեր ժառանգութեան բաժինը թո՛ղ չխլէ ձեզանից, և ձեզ օտար և խորթ շինելով՝ անբաժին թողու։»

«Ձեր միտը բերէ՛ք Իսրայէլացւոց առաջուայ բոլոր զօրավարներին, Յեսուին, Գեդէոնին, Եփթային և միւս բոլորին, որոնք ճշմարիտ հաւատով կոտորեցին հեթանոսների զօրքերը և երկիրը մաքրեցին պիղծ կռապաշտութենից։ Նոցա հաստատ արդարագործութեան համար, որ ամենեւին երկմտութիւն չ՛ցոյց տուին իւրեանց խորհուրդների մէջ, արեգակը և լուսինը առանց ականջի լսեցին և կատարեցին նոցա հրամանը։ Ծովը և գետերը բնութեան կարգերից դուրս ճանապարհ բացարին նոցա առաջ։ Երիքով քաղաքի բարձր պարիսպները լոկ ձայնով քանդուեցան և կործանուեցան արդար օրէնքների վրէժխնդրութեան համար։ Եւ միւս բոլոր մարդիկը, որոնք հաւատի համար քաջագործութիւններ արին զանազան ժամանակներում, գովութիւն ստացան մարդկանցից և արդարացան Աստուածանից։»

«Մ՚ի և նոյն տէրն է, որ սկզբից մինչև այսօր կայ, և պէտք է լինի ապագայումը մինչև յաւիտեան և յաւիտենից առաւել։ Նա չէ նորոգւում, որովհետև չէ հնանում. չէ մանկանում, որովհետև չէ ծերանում. նորա անփոփոխելի բնութիւնը չէ փոխւում, ինչպէս ինքը ասում էր սուրբ մարգարէից բերանովը։ «Ես եմ, ես նոյն եմ սկզբից մինչև յաւի-

տեան, իմ փառքը ուրիշի չ՚եմ տալ, և ո՛չ իմ քաջութիւնը՝ կուռքերին:

«Տղե՛րք, այս բաները իմանալով, թուլութեամբ չ՚վհատինք, այլ պինդ սրտով և հաստատ հաւատով, յօժարութեամբ յարձակուինք թշնամեաց վերայ, որ վէր են կացել մեզ վերայ: Մեր յոյսը կրկնապատիկ է, եթէ մեռնենք կեանք է մեզ համար, եթէ մեռցնենք նոյնպէս կեանք է սպասում մեզ: Մեր միտը բերենք Առաքելոյ այն խօսքը, որ ասում է. «Այն ուրախութեան փոխանակ, որ պատրաստած էր նորա համար, յանձն առաւ մահուան համբերութիւնը և խաչի չարչարանքը. այս պատճառով Աստուած նորան աւելի բարձրացրեց և տուեց նորան այնպիսի անուն, որ բարձր է քան զամէն անուն, որովհետև Յիսուսի Քրիստոսի անուանովն են ծունր կրկնում բոլոր երկնաւորները, երկրաւորները, և սանդարամետականները:»

«Նա՝ որ ճշմարտութեամբ միացել է Աստուծոյ որդւոյ հետ՝ հոգու աչքով տեսնում է իմանալի արեգական ճառագայթների աներևոյթ մաքուր լոյսը, որ ամէն ժամանակ և ամէն օր իւր բարձրութեան մէջ ծագելով՝ երևում է ամենին և դէպի ինքըն է ձգում մաքուր, սրբատեսիլ, անպղտոր դէմքերը, և բարձրանալով երկնքից՝ մօտեցնում է անմերձենալի լուսին, որ երկրպագութիւն մատուցանեն միացած զօրութեան երրորդութեանը: Ով որ բարձրացել է մաքով աստուածեղէն սանդուղքների վերայ, հասել է նորա արքայութեան մէջ և տեսել է նորա բոլոր մեծութիւնը, նա միայն կ՚ժառանգէ անանցանելի ուրախութիւնը և անպատմելի մխիթարութիւնը:

«Այն տեղ է մեր փրկութեան առաջնորդը, որ այս տեղ քաջութեամբ նահատակուեց և սովորցրեց իւր բոլոր գործակից Առաքեալներին իւրեան նմանելու, որից և դուք էք այսօր յառաջ գալի օրհնուած հաւատով աներևոյթ թշնամու

դէմ և պատենազէն զրահներով՝ սատանայի գործակիցների դէմ։ Թէ այսպէս և թէ այնպէս, երկու կողմն էլ յաղթում էք, ինչպէս ինքը Տէրը յաղթեց աշխարհին, թուեցաւ թէ նա մեռաւ, բայց նա նոյն ժամանակը տարաւ առաքինի նահատակութեան կատարեալ յաղթութիւնը. ախոյեանին վայր ձգեց, պատերազմ տուեց, թշնամեացը ցրեց, աւարները ժողովեց, գերիները յետ դարձրեց, և պարգևներ ընծայեց իւր ամենասիրելիներին իւրեանց առաքինութեան համեմատ։

«Ձեզ բոլորիդ յայտնի է, որ առաջուայ ժամանակները, երբ պատերազմ էիք դուրս գալի, սովորութիւն ունէիք քահանաներ վերցնել բանակի մէջ և կռուի միջոցին մի պինդ տեղ թողուլ նոցա՝ ձեզ համար աղօթելու, բայց այսօր եպիսկոպոսները և սարկաւագները, սաղմոսերգուները և դպիրքը ամենը իւր տեղը կանոնով կարգուած՝ ինչպէս զրահաւորուած և պատրաստուած զինուորական մարդիկ, կամենում են ձեզ հետ միասին յարձակուիլ և ջարդել ճշմարտութեան թշնամիներին. եթէ նոցանից ոմանց մահ էլ հասանի, նոքա բոլորովին չեն վախելու, որովհետև աւելի լաւ են համարում մեռնիլ, քան մեռցնել։

«Նոքա մտաւորական և մարմնաւոր աչքեր ունելով՝ կամենում են հաւատոյ աչքով մարգարէից քարկոծուիլը տեսնել, իսկ մարմնոյ աչքով ձեր նահատակութեան քաջութիւնը։ Մանաւանդ թէ մենք երկուսն էլ միասին տեսնում ենք ձեր մէջ, որովհետև դուք էլ հոգւոյ աչքով տեսանում էք սուրբ Առաքեալների չարչարանքները և բոլոր մարտիրոսների սպանումը, որոց մահովը հաստատուեցաւ սուրբ եկեղեցին, և նոցա արիւնի թափուիլը պարծանք դարձաւ երկնայինների համար։ Եւ այսպէս մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը նոյն նահատակութիւնները պէտք է կատարուին առաքինի և ընտրեալ նահատակների չարչարանքներովը, որոց մէջ և դուք այսօր հանդէս էք դուրս եկել, և հրաւիրուել էք ձեր սուրբ

լուսաւորիչներիցը մտնելու նոյա գնդի մէջ, և ժառանգորդ լինելու Յիսուսի Քրիստոսի խոստացած անանց բարութիւններին, որ օրհնուած է յաւիտեանըս յաւիտենից։»

Սուրբ Ղեւոնդ երէցը այսքան խօսելից յետոյ փառք տուեց և վերջացրեց իւր ճառը ասելով Ամէն։ Յետոյ սեղան կազմելով ամենասուրբ խորհուրդը կատարեցին. շինեցին նմանապէս աւազան, և եթէ զօրքի բազմութեան մէջ առանց մկրտուելու մարդ կար, բոլոր գիշերը մկրտեցին նոցա. առաւօտը լոյսը բացուելիս հաղորդեցան և այնպէս լուսազգեստ դարձան, ինչպէս տէրունական մեծ զատկին։

Բոլոր զօրքը ուրախութեամբ և զուարճութեամբ ձայն տուեց։ «Թո՛ղ հաւասարէ Աստուած մեր մահը արդարների մահուան հետ, և մեր արեան թափուիլը՝ մարտիրոսների արեան հետ. թող հաճոյ թուի մեր կամաւոր պատարագը Աստուծոյն, որ չըտայ իւր եկեղեցին հեթանոսների ձեռքը։»

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Քաջ Վարդանը իւր իշխանների խորհրդակցութեամբ և միաբանութեամբ բոլոր զօրքի վերայ զօրագլուխներ կարգեց։ Առաջի զօրաբաժինը յանձնեց Արծրունեաց իշխանին, և նորան նշանակեց օգնական Մոկաց մեծ իշխանին, և նոցա հետ միւս բոլոր նախարարներին իւրեանց զօրքերովը։ Նոցա երկու թևը ամրացրեց միւս զօրքերով։ Երկրորդ զօրաբաժինը յանձնեց Խորխոռունեաց իշխան Խորէնին, և նորան օգնական նշանակեց Ընծայնին և Ներսէհ Քաջբերունին։ Երրորդ զօրաբաժինը յանձնեց Թաթուլ Վանանդեցուն, և նորան օգնական տուեց Տաճատ Գնթունին, և միւս շատ քաջ մարդկանցով նոցա զօրքի թևերը պնդացրեց։ Չորրորդ զօրաբաժինը վերցրեց ինքը և իւրեան օգնական նշանակեց քաջ Ար-

շարքին և իւր հարազատ եղբայր Համազասպեանին։ Այսպէս կարգեց և կազմեց բոլոր զօրքը դաշտի վերայ, պարսից զօրքի հանդէպը Տղմուտ գետի ափումը։

Երբ որ այսպէս պատրաստուեցան՝ երկու կողմիցն ևս մեծ բարկութեամբ սաստկացան և դաժանական զօրութեամբ յարձակուեցան միմեանց վերայ, երկու կողմի աղաղակների կոչումը նմանում էր կայծակի, որ խառնուած ամպերի մէջը ճայթմունքներ է գործում. իսկ ձայների հնչիւնը շարժում էր սարերի այրերը։ Բազմաթիւ սաղաւարտների և պսպղուն զրահների փայլմունքները տարածւում էին, ինչպէս արեգական ճառագայթների նշոյլներ։ Բազմաթիւ սրերի շողշողալը, բազմախումբ նիզակների շարժուիլը ներկայացնում էին մի երկնային ահագին հրաձգութիւն։ Ո՞վ է կարող պատմել ահաւոր ձայների սրտապատառ սարսափները, ուր վահանների միմեանց դիպչելու կոփիւնները, աղեղնաւորների ձայները, ահասարակ բոլորի ականջները խլացնում էին։

Երկու կողմիցն ևս յանդուգն յարձակմամբ միմեանց ջարդելով՝ ներկայացնում էին մեծ սրտադողութեան և անչափ տարակուսութեան կսկիծ. որովհետև թանձրամիտները սարսափում էին, թուլասիրտները դողում, քաջերը յառաջ էին վազում, իսկ նահատակները ձայն տալի։ Եւ բոլոր բազմութիւնը միասին ժողովուելով գետի երկու կողմը շարուեցան։ Պարսից զօրքը գետը անցկենալու դժուարութենիցը վախելով՝ տեղնուտեղը շփոթուեցաւ ու դէս ու դէն ընկաւ։ Հայոց զօրաբաժինը մօտենալով գետին՝ ձիաւորուած անցկացաւ և մեծ սաստկութեամբ յարձակուեց նոցա վերայ։ Սաստկութեամբ միմեանց դիպչելով, երկու կողմիցը ևս շատ վիրաւորներ դիաթաւալ փռուեցան գետնի վերայ։

Այն մեծասարսափ միջոցին վերև նայեց քաջ Վարդանը և տեսնելով որ Պարսից զօրքի ընտիր և քաջ նահատակ-

նելը Հայոց զօրքի ձախ կողմը շարժեցին՝ սաստիկ քաջու-
թեամբ յարձակուելով Նոյա վերայ, և Պարսից զօրքի աջ թեւը
ջարդուփշուր անելով՝ փախցրեց փղերի քանակը, և կոտո-
րելով հասաւ մինչև նոյն տեղը։ Այնպիսի սարսափ ձգեց
Նոյա վերայ, մինչև Մատեան զունդը ցրուելով հեռացաւ
իւր ամէն պատրաստութեան տեղերն, և դեռ ևս չյաղթու-
ած զօրքա 'ի փախուստ։

Մուշկան Նիւսալաւուրտը տեսնելով, որ ամէնք ան-
ջատուելով Հայոց զօրքերից՝ յետ էին մնացել դաշտերումը,
բարձր ձայնով քաջալերեց իւր զօրքերին, որոնք միութեամբ
կանգնած էին Վարդանի զօրավարի հանդէպը։ Երկու կող-
մի ևս իրեանց յաղթուած էին համարում. սպանուած մար-
մինները իրեանց շատութիւնից երևում էին ինչպէս քարա-
կոյտներ։ Երբ Մուշկան Նիւսալաւուրտը տեսաւ այս բանը,
սպասում էր փղերի գալուն առաջնորդութեամբ Արտաշիրի,
որ նստած էր Նոյա վերայ, ինչպէս բարձր զիտանոցի մէջ
կամ ինչպէս քաղաքաբերդի, և պատերազմական մեծ փղերի
ձայնովը քաջալերում էր իւր զինքերը. նա իւր առաջնամար-
տիկ զօրքերովը շրջապատեց Հայոց զօրավարին, բայց քաջ
Վարդանը իւր քաջ ընկերներովը մեծ կոտորածք անելով՝
արժանացաւ նոյն տեղումը ընդունելու կատարեալ նահա-
տակութիւնն։

Պատերազմը տևեց մինչև երեկոյ, գիշերը վերայ հասա-
նելով վախճան դրեց կռուին։ Շատերը իրեանց կեանքը
վայր դրեցին. Դիակները միմեանց մօտ խիտ առ խիտ վայր
թափած՝ նմանում էին անտառի կտրատած ծառերին։

Այն տեղ տեսանում էին կտրատուած նիզակներ, և
ջարդուփշուր եղած աղեղներ. սպանուածների մարմինները
երկու կողմից ևս այնպիսի առատ և վերայ էին եղած, որ նո-
քա չէին կարողանում ճշգութեամբ ճանաչել երանելեաց սուրբ

մարմինները։ Իսկ կենդանի մնացածները ամուր ձորերի և սարալանջերի մէջ ցրուած, երբ միմեանց պատահում էին կրկին անգամ խիստ ջարդւում էին։ Նոյնպէս դառը պատերազմը անդադար շարունակւում էր մինչև արեգակի մայր մտնելը։

Այդ որովհետև գարնանային ժամանակ էր, ծաղկալից դաշտերը ներկւում էին յորդահոս արիւններով։ Մարդու սիրտը կտրւում էր և աչքերը արտասւում էին, երբ տեսնում էր անթիւ դիակները փռուած, երբ լսում էր խոցուածների ճիչալը, ջարդուածների մնչիւնը, երբ տեսնում էր վիրաւորների թաւալգլոր շարժումը և սողալը, փախստների փախչելը, սրտապատառների թաղկենալը, տկար մարդկանց սրտի բաբախումը, թռչների ճչալը, սիրելեաց ողբալը, ազգականների լացը, բարեկամների վայ ու կոծը։ Այդ որովհետև ոչ թէ մի կողմի յաղթելը, իսկ միւս կողմի յաղթուելը, այլ քաջերը քաջերին պատահելով՝ երկու կողմն ևս պարտութիւն խատախանեց։

Այդ որովհետև Հայոց զօրավարը պատերազմի սաստիկ ժամանակը սպանուել էր, այս պատճառով ոչ ոք գլխաւոր չըկար, որի ձեռ ժողովէին Հայոց ճակատի զօրքերը։ Այդ թէպէտ ողջ մնացածները սպանուածներից շատ էին, սակայն ցան և ցիր լինելով՝ մնան աշխարհի զանազան ամուր տեղերը և տիրեցին շատ գաւառների և բերդերի, որոց թշնամին չէր կարողանում առնել։

Ահա՛ այն քաջ նախարարների անունները, որոնք այս պատերազմում իրենց կեանքը վայր դրին։

Մամիկոնեան ազգից քաջ Վարդանը հարիւր երեսուն և երեք մարդով, Խորխոռունեաց ազգից կորովի Խորէնը տասն և ինն մարդով, Պալունեաց ազգից քաջ Արտակը յիսուն և ութը մարդով, Գնթունեաց ազգից զարմանալի

Տաճատը տասն և ինն մարդով, Դիմաքսենեաց ազգից իմաստուն Հմայեակը քսան և երկու մարդով, Քաջբերունեաց ազգից հրաշակերտ Ներսէհը եօթը մարդով, Գնունեաց ազգից Վահան մանուկը երեք մարդով, Ընծայնոց ազգից արդար Արսէնը եօթը մարդով, Սրուանձտայ ազգից յառաջադէմ Գարեգինը երկու հարազատ եղբայրներով և տասն ու ութ մարդով։

Այս երկու հարիւր ութսուն և եօթը նահատակները ինն մեծամեծ նախարարների հետ միասին այն տեղ վայր դրեցին իւրեանց կեանքը։ Բացի այս երկու հարիւր ութսուն և եօթը մարդը, այս մի և նոյն օրը մեծ պատերազմի մէջ իւրեանց անունները գրեցին արքայութեան մատեանումը այլ ևս եօթը հարիւր քառասուն մարդ Արծրունեաց, Թագաւորական և միւս նախարարների ցեղերը։ Բոլոր նահատակների թիւը միասին լինում է հազար երեսուն և վեց։

Ուրացեալների կողմից այն օրը սպանուեցան երեք հազար հինգ հարիւր քառասուն և չորս մարդ։ Նոցանից ինն հոգի մեծ և պատուաւոր մարդկանցից էին, այս պատճառով շատ սաստիկ վշտացաւ Մուշկան Նիւսալաւուրտ սիրտը, մանաւանդ երբ տեսաւ, որ իւր զօրքերից եօթնապատիկ աւելի են ջարդուել այս մեծ պատերազմի մէջ քան Հայոց զօրքերից՝ նորա զօրութեան սիրտ հատաւ, սիրտը չէր հանգստանում, որովհետև պատերազմը այնպէս չվերջացաւ ինչպէս նա էր կարծում։ Երբ նա տեսնում էր իւր կողմից սպանուածների բազմութիւնը, հաշիւ էր անում և իմանալով, որ իւր զօրքի սպանուածները աւելի շատ են, քան թէ Հայոց զօրքի, մեծ սրտնեղութեան մէջ էր ընկնում, մանաւանդ այն երևելի մարդկանց համար, որոց թագաւորը անուն անուն ճանաչում էր։ Նա վախենում էր այս բոլորը գրել և թագաւորին յայտնել. իսկ ծածկել չէր կարող, որովհետև այնպիսի մեծ կռիւը չէր ծածկուիլ։

ՔԱՋ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ ՄԱՀԸ. (ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ)։

Նախերգանք

1

Ո՜վ լուսին լուսին, էլ քանի եղել ես
Դալկացած, տրտմագոյն, տխուր երես.
Այդ թըխպոտ ամպե՞րն քեզ զարհուրեցրի՞ն,
Բոցոտ կայծակնե՞րն քեզ այլայլեցին.
Երկնից կամարի գեղը դու ես լոկ,
Աստեղց մէջ չկայ քեզ նման ոչ ոք.
Մի՞թէ նախանձից թափիլ ես գոյնդ,
Չէ՛, ուրիշ գաղտնիք ունիս սրտումդ։
Ասա՛ ինձ, լուսի՛ն, ասա՛ սրտաբաց,
Ինչո՞ւ է, ինչո՞ւ դէմքդ այլայլած.
Երբ մենք սև օրուան ունինք կարեկից,
Ասում են, կէսն է պակսում մեր ցաւից.
Թշուառին թշուառն է միշտ մխիթար,
Ո՞րտեղ կըգտնես դու քան զիս թշուառ.
Քեզ պէս մտատանջ, քեզ պէս անտերունչ,
Սրտումս գաղտնիք, բայց լուռ, անմըռունչ
Անցնում եմ օրերս, փա՜կ գլուխս տալով,
Մարդկանց մէջ ուրախ, միայնակ լալով.
Լալիս եմ, լալիս, արցունքս յորդոր
Ցօղում, փակում են աչքիցս ամեն օր.
Չեն, չեն պակասում հառաչանք ինձնից,
Ես այս սև օրուան չունիմ կարեկից.
Ամեն շնչաւոր ունի մի ընկեր,
Միմիայն ինձնի՞ց պիտի պակսի սէր.
Եթէ դու էլ ես թշուառ ինձ նման,
Իմ քաղցր խօսքը կ՚լինի քեզ դարման.

Սրտիդ խորհուրդը բաց ինձ անկասկած,
Ինչո՞ւ է, ինչո՞ւ դէմքդ այլայլած

2

Լուսինը գող գող ամպեր ճեղքելով,
Ինձ պատասխանեց լալագին ձայնով.
«Լսէ՛, Սուսային պարկեշտ որդեկիր,
(Թէ գիտես անցքին ես հետաքրքիր),
Շատ դար դէս ու դէն ունայն շրջելով,
Քեզ միայն գտայ ընդգայուն հոգւով.
Բայց մինչև այսօր չը գտայ ո՛չ ոք,
Որ իմ տխրութեան տանէր քիչ մի հոգ.
Ոչ ոք չը խլեց դարդը իմ սրտից,
Շատ դար ինձ ոչ ոք չեղաւ կարեկից.
Շատ դար եմ պահել մայրագութ խնամով,
Օտարի գաղտնիս սրտիս մէջ. բայց ո՞վ
Մի օր բարձրացուց աչքերը երկին
Ու կարեկցաբար հարցուց, ո՞վ լուսին,
Ինչո՞ւ ես տխուր, գունաթափ դիմօք,
Ի՞նչ ցաւ է սրտումդ, ի՞նչ վիշտ, ի՞նչ մորմոք։
Գո՛հ եմ, գոհ քեզնից, պարկեշտ բանաստեղծ,
Ինձ սփոփեցին քու խօսքերն անկեղծ.
Ինձ՝ որ համ աշխարհ կարծում է անբան,
Միայն քեզ համար կ'բացուի 'մ բերան,
Քու անոյշ խօսքին և ես փոխարէն
Կ'պատմեմ, ինչոր անցաւ իմ գլխէն.
Դու այն կ'պատմես բանիւ նկարաշնակ,
Յետնորդք կը հիւսեն քեզ դափնեայ պսակ.
Թո՛ղ քեզ խուժանը տայ, անարգէ,
Նաև այդ անուան քու շուք ու փառք է.

Ի՞նչ սէր ես խնդրում մարդկութեան ցեղից,
Ե՞րբ վարդ է քաղուել տատասկոտ տեղից,
Սէրը նրանից պէտք է պահանջել։

Լուսնի պատմութիւնը

3

Դէ՜հ, լսէ։ Մի օր կապուտակ կամարն
Ողջ ծածկել էին ամպեր անհամար,
Ես էլ հարսի պէս նոցա մէջ փռուած,
Հանդարտ գնում էի դէմքըս քօղ առած։
Անցայ լողալով ծովը Պոնտոսի,
Անցայ քերելով կատարք Կովկասի.
Տեսայ երեսս Գեղամայ ջրումը,
Զովացայ փոքր ինչ ձիւնոտ Կանումը,
Խոյս տալով անցայ շատ սարեր, դաշտեր,
Ուր խոր լռութիւն, հանգիստ պատել էր.
Անխոնջ մշակը հողի վրայ պառկած,
Զովութիւն խնդրում էր մարմինն յոգնած,
Եզն ու գրաստը նոյնպէս վաստակած,
Խաղաղ դաշտի մէջ էին տարածած.
Հայո՜ց աշխարհիկ բերկրութեան տեղեք,
Հայո՜ց բընութիւն, ա՜խ, Հայ մանկըտիք,
Գեղորէ՛ք, սա՛նք, դաշտք ու արտորա՛յք,
Քաղա՛քք մարդաշատք, շէ՛նք ու վանորա՛յք,
Ո՞ւր էք, ո՞ւր հիմի, ինչո՞ւ շուտ կորաք,
Ո՞վ ձեզ կործանեց, ո՞ր ձեռը վայրագ.
Այն գիշերը երեւել էր Հայոց երկրին,
Աստղերն էլ երկնից նորան փառք տուին.
Ու ես անցնելով նորա վերայից,
Չէի կշտանում վերան նայելից։

4

Ուղիղ չորս շաբաթ այն օրից անցան,
Կատարեցի ես դարձեալ մի նշան.
Շտապով անցայ քաղաքներ, գեղեր,
Լեռներ, ծովակներ ու շատ շատ տեղեր,
Կարօտով մտայ Հայաստան աշխարհ,
Դարձեալ գիշեր էր. մռայլ ու խաւար
Տիրել էր Հայոց առատ դաշտերը,
Բայց, ա՜խ, ո՞ւր էին հունձ ու արտերը,
Ո՞ւր էր այն Հայոց անխոնջ գեղջուկը,
Ո՞ւր էր հաստավիզ նորա գոմշուկը,
Ո՞ւր էին խեղճի արօրն ու սամիք
Կամ ո՞ւր մշակի պարտէզն ու այգիք.
Եւ ծուխ էր պատել Հայոց երկինքին,
Գեղեր, քաղաքներ տուած կըրակին,
Անողորմ էրվում, տոչորվում էին
Բոցեղէն լեզուքն հասնում ամպերին,
Դժոխք էր տեսիլն խեղճ Հայոց երկրին.....

5

Տեսայ Արարատ սարսափած ահից,
Անթիւ զօրք նորան տիրել էր Պարսից,
Հայոց գնդիկն էլ համարձակ ու քաջ
Քըմծիծաղ դէմքով կանգնած էր առաջ։
Ծագեց արեւը. կատարք շողշողուն
Երեւան եկան Հայոց սարերուն,
Անօսր ամպերը կարմիր ծիրանի
Գոյներով ներկած՝ զարդ էին երկնի.
Աւետիս կարդաց նորեկ արեւուն
Քաղցր տաղերով արտուտն արտերուն.

Տղմուտը հեռուանց անոյշ խոխոջով
Բերում էր ափերն փտուած վարդերով.
Հանդէս էր բնութեան. միմիայն մարդը
Այնօր չէր կազմում բնութեան զարդը.
Ուրիշ մըտածմունք էր նորա հոգում,
Չար ոխ, չար նախանձ ու ատելութիւն.
Ճակատ ճակատի կանգնած անվեհեր,
Հայոց քաջորայք, Պարսից կորիճներ,
Պատրաստ էին չափել ուժերը բազկին,
Արեամբ կշտացնել ծայրը նիզակին.
Սանձակոծ ձիանք, անճոռնի փղեր
Հողն էին փորում ոտով անհամբեր......
Յանկարծ բանակից դուրս եկաւ Վարդան
Ու ահեղ զօրքին տուեց նա նշան։

6

Թընդաց սարերը արի Հայերուն,
Սանձերը թողած նըժոյգ ձիերուն,
Աջ ձեռքին թրեր, ձախերին վահան,
Քա՛ջ քա՛ջ վազ տուին Պարսից յանդիման.
Գրոհն էր ահեղ սրտոտ Հայերուն,
Գետերի նըման թափեցին արիւն.
Մահը անփախուստ էր նոցա աչքին,
Խիստ թանգ ծախեցին մահերը Պարսկին.
Երկար չըտեւեց այն անգամ կռիւը,
Շատ շուտ քիչացաւ Հայերու թիւը,
Մընացորդք քաջաց նախանձ բերելով,
Ընկան կոտորած Պարսից թրերով.
Մընաց լոկ Վարդան իր բուռ քաջաց հետ,
Նորա առաջ գունդք Պարսից անհեթեթ.

Զըստարսեց նորա վեհանձն հոգին,
Տեսնելով անշուշտ վըտանգ առաջին,
Սըրբեց պեխերը, նայեց աջ ու ձախ,
Իւր քաջերուն ասաց դէմ ծիծաղ.
«Տըղե՛րք, ահա՛ մեզ մի կարճ ճանապարհ,
«Որով այս երկրից կերթանք նոր աշխարհ,
«Ուր մեր քաջ նախնիք կան մեզ անհամբեր
«Փառաց պըսակով շատ ու շատ դարեր.
«Տանք վերջին բարեւ աշխարհին Հայոց,
«Որ սընուց գըթով մեզ տըղայ տիոց.
«Առանց հայրենեաց մեզ մութ է աշխարհ,
«Հայաստանն է մեր միակ մըխիթար.
«Կորաւ Հայաստան, էլ ի՞նչ յոյս մընաց,
«Մե՛ր կեանքն ի՞նչ է, թէ ոչ սուգ ու լաց.
«Այո՛, տանն ունինք ծնողք, ընտանիք,
«Թո՛ղ կորչին, երբոր կորաւ հայրենիք.
«Գո՛նէ մեր յետնորդք կ՚ասեն մեզ համար,
«Արցունք թափելով աչքից անդադար,
«Երանի՜ է ձեզ, ո՜վ որդիք փառաց,
«Որ դուք չըտեսաք կորուստն հայրենեաց,
«Ձեր կեանքն էր ազնիւ՝ ազնիւ մահ առիք,
«Ձեզմով կըպանծայ յաւէտ հայրենիք,
«Ձեր կեանքն կ՚լինի յետնոց օրինակ,
«Ինչպէս մեռնելը ձեզնից սովրեցանք.
«Ինչ որ ունէիք՝ Ազգին տուիք զոհ,
«Ազգն յաւիտեան կըմնայ ձեզ գոհ.
«Քընից յառնելիս կամ քուն մըտնելիս
«Միշտ ձեզ կըյիշենք մենք աղօթելիս.
«Մեր անմեղ մանկանց տըխուր օրօրով
«Ձեր գըլխու անցքը կըպատմենք երգով.
«Ձեր անկման տեղը կրօնասէր մարդիկ

«Արդարձնեն անշուշտ աղօթոյ տեղիք,
«Ձեր մարմինն ամեն մի Հայի համար
«Արդառնան մասունք որբոց փրկակար.
«Հանգէ՛ք, դիւցազունք, հանգէ՛ք յաւիտեան,
«Ձեզ միշտ կը յիշէ ձեր մայր Հայաստան»։
Ասաց ու լռեց։ Երկու աչերից
Ցօղացին արցունք ինչպէս ցօղ երկնից.
Ուժգին ախ քաշեց անվեհեր սրտէն,
Բայց այդ ախը չէր թշնամու ահէն։

7

Մօտ էր արեւը իր մօրը մտնին,
Խիտ խիտ նետում էր ճաճանչն իր յետին,
Տեսնողը կ՚ասէր՝ այս անգամ արեւն
Տալիս էր երկրին իր վերջին բարեւն.
Վերջինն էր, այո՛, բայց ո՛չ ամենուն,
Վերջինն էր այն խեղճ, կտրիճ Հայերուն.
Նորա շողի հետ նոցա վեհ հոգին
Պիտի սլանար դէպ պայծառ երկին։
Դարձեալ գրոհ տուին Հայք ուժգին ուժգին,
Թնդացրին շարքերն թշնամեաց զօրքին,
Ապշած մնացին Պարսիկք տեղերը,
Թովէչ կարծեցին Հայոց խեղճերը։
Մեծ էր կոտորածն Հայոց քաջերուն,
Ցոյց տուին Պարսից ոյժը ձեռներուն,
Աւարայր դարձաւ արեան ճապաղիք,
Դաշտը դէշերով լցուցին Պարսիկք։
Մարդ, փիղ, ձի, կառք, զէնք մէկ մէկով էին,
Ո՞վ կը խիզախէր դէմ կենալ Հային։
Ինչպէս լեռ ալիք ծովին՝ անարգել

Ուզում են քարէ եզերք խորտակել,
Վազում են առաջ ահեղ գոռալով,
Դժոխքի վայել երգ յօրինելով,
Ժայռոտ ափերին գալիս են հասնում,
Խփում են, 'ի զո՜ւր, ու յետ են վազում.
Այդպէս և Պարսից ձիգն էր ունայն,
Երբ նոցա առաջ պինդ կանգնած էր Հայն.
Բայց չի կար արգելք խիզախ, քաջ Հայերն,
Ո՛չ թուր, և ո՛չ նետ, ո՛չ շարք փղերին,
Նա որդեկորոյս առիւծի նման
Արգելք չէր տեսնում աչաց յանդիման.
Բիրաձև փղեր գլորում էր գետնին,
Մըժեղ էր թըւում նորան այրուձին,
Այն քաջ այրուձին, որից որ Հելլեն
Ծակամուտ եղաւ միմիայն ահէն:

8

Օրն էր տարաժամ. մարդիկք դադարած
Փողը հնչեցին՝ մարտին կատարած.
Մութը տարածուեց. աստեղք ցոլացին.
Երկնից ցօղն իջաւ արնալից գետնին.
Մթնասէր թռչունք ձայներով խռպոտ
Գուշակում էին մարդկանց սուգ ու բօթ.
Յետ դարձան Պարսիկք իրանց բանակը,
Նորից նոր սրբել սուրն ու դանակը,
Որ այգուց կանուխ, լոյսը չի ծագած
Վրայ յարձակուին Հայոց՝ կատաղած:
Բայց այլ տեսարան էր Հայոց միջին,
Վշտոված, տխուր էր նոցա հոգին,
Ոչինչ չէր լսում, թէ ոչ սուգ ու լաց,

Մեծ կորուստ արին, կորուստն էր անդարձ—
Վարդան չի դարձաւ դէպ իր քաջերուն.
Ո՞վ գիտէ ո՛ւր էր նա այն իրիկուն,
Գերի՞ է տարել նորան թշնամին,
Թէ՞ մահ է ստացել նա դաշտի միջին—
Ոչ ոք չըգիտէ: Տըխուր ու տրտում
Ամեն տեղ նորան են Հայք պըտրտում,
Հոգւոց հանելով, վայ գլխուն տալով,
Աչքերից աղի արտասունք թափելով:
Աւարայրի դաշտը տակն ու վրայ արին,
Աւա՜ղ, յայտ չեկաւ դիւցազն արին,
Պինդ պինդ ձայն տուին «Ո՞ւր ես, ո՞ւր Վարդան».
Արձագանքն կրկնեց Վարդա՜ն ու Վարդա՜ն:
Որբերի աչքին քունը չի մօտում,
Քունը ի՞նչ սփոփանք, թէ դարդ կայ սրտում,
Թէ լինի գիշերն մեզ քիչ մըխիթար,
Առաւօտն, աւա՛ղ, կուլինի վատթար:
Արթուն մնացին, չի մըտան բանակ,
Մինչև որ խօսեց երեք հետ խօսնակ:

9

Յանկարծ լսեցին ձիան տրոփ հեռուանց,
«Այս ո՛վ է, տըղե՛րք», ասին Հայք միմեանց.
Գիշերուայ ժամի՞ն ուղեց թշնամին,
Վրէժխնդիր լինել ցերեկուայ անցքին.
Բայց չէ՛, վա՛յ նոցա, վատթար տեսարան
Ապշած աչքերուն եկաւ յանդիման.
Չէր արթուն Հայոց անկոչ այցելուն
Սարսած թշնամին տարաժամ պահուն.
Վարդանն էր, որին յուսահատ, տրտում

Որբացած Հայերն էին պըտըտում,
Վարդանն էր.....բայց ի՜նչ վըճակի հասած,
Արիւնաթաթաւ, սրտին նետ ցըցուած,
Աչքերը մըթնած, երեսը տժգոյն,
Վէրքիցը ծործոր կաթում էր արիւն.
Երկու մանկլաւիկ բըռնած ձեռնից
Կիսամահ քաջին իջուցին ձիից,
Բայց այն սուրբ աչերն, դէմքը հրաշալի
Չէին կըրում յետք մահուն երկիւղի.
Նորա թուլացած բազկից այն ժամին
Չար մահ կստանար նորա թշնամին,
Թէ որ խիզախէր գալ նորա առաջ,—
Այսպէս մօտ մահուն նա միշտ մընաց քաջ։
«Տղերք, ասաց նա ձայնով դողդոջուն,
«Ուզացի ձեզ տալ իմ յետին ողջոյն,
«Ձեզ հետ գրկախառն, ձեզ համբոյր տալիս,
«Հանգիստ աւանդել այս շունչը վերջին։
«Ժամ է, ժամ թողնել աւեր Հայաստան,
«Ուր քար չի մընաց պինդ քարի վըրան,
«Մենք էլ հետեւողք նախնեաց աւանդին,
«Ստրուկ չենք լինիլ երբէք օտարին.
«Լաւ է մեր կեանքը կարճանայ սըրով,
«Քանց հաշուի, մաշուի թշնամու լըծով,
«(Իմ հինգ տարեկան հասակէս ի վեր
«Այսպէս տալիս էր ծնողն իմ պատուէր),
«Ցաւում է սիրտս, ոչ նետի խոցից,
«Ցաւում է, որ շուտ գնում եմ ձեզնից,
«Որ չեմ կարենում ձեզ հետ միասին
«Արեան դաշտի մէջ փչել իմ հոգին.
«Վա՜յ թէ դուք մենակ վըհատիք մահից,
«Դողաք սարսափիք վերահաս մահից,

Թուրն ու ասպարը մի կողմը գլորէք,
«Պարսկին կամաւոր ձեզ գերել թողնէք.
«Ա՜խ, քա՛ջ իմացէք, ես, թէ՛և թաղած,
«Պիտի վեր կենամ հողից կատաղած,
«Նորից նոր առնում ձեռքըս թուր ու տէգ
«Ու ձեզ անողորմ խողխողեմ մէկ մէկ.
«Անէծք եմ թողնում ես այն վատ Հային,
«Որ ո՛չ ոխ, այլ սէր ցոյց տայ դու Պարսկին.
«Ազգ անհաշտ ոխը հիմկուց ցեղէ ցեղ
«Պիտի տարածեն Հայքն ամեն տեղ.
«Թո՛ղ կորչին ազգեր երկրի երեսից,
«Հայը միշտ անհաշտ պիտ՝ մնայ Պարսից.
«Սուսերս երբէք չի մընալ անգործ:
«Այս թշուառ դաշտում կը շրջի մոլոր,
«Մինչև այն ժամը, ժամ օրհասական,
«Երբ Պարսիկն կամ Հայն կլինի կործան
«Արեան դաշտի մէջ՝ մորթելով իրար.
«Լոկ այն ժամանակ կառնում ես դադար:
«Դէհ, մնա՛ք բարև: Տէ՛ր ա՛ռ իմ հոգին:
«Կամ ազատ կեանք կամ մահ ազնիւ տո՛ւր Հային»:
Լըռեց, ու իսկոյն նետը մահաբեր
Հանեց աներկիւղ կողից կարեվէր:

10

Առ ժամ մի որբիկ տարաբաղդ Հայերն
Ապշած, զարհուրած մընացին տեղերն,
Չիմացան՝ տեսի՞լք է այս, թէ անուրջ:
Մեռած Դիւցազին խուռն կանգնած շուրջ՝
Ո՛չ լալիս էին, ո՛չ սգալ կարում,

Իրանց աչքերին չէին հաւատում,
Ինչպէ՛ս հաւատան իրանց աչքերին,
Երեկ չէ՞ր, որ պինդ կար հըսկայ կաղնին,
Որ քանի դարեր հարուածը հողմին
Զեփիւռ էր կարծում փըչած մեղմագին.
Այսօր միջաբեկ ու թաւալագըլոր
Կար նոցա առաջ աչքերով մոլոր.
Տեսնում են Քաջին գետնին տարածած,
Գըլոր ձեռները ցամքած կարկամած,
Կէսխուփ աչքերը չունին առաջուան
Ո՛չ բոցը, փայլը՝ ջուխտ աստեղց նըման։
Դէմքը գունաթափ, գիծքը անմեկին,
Ո՛չ ոխի նշան, ոչ սիրոյ՝ ունին,
Տեսած կա՞ս մէկ օր, երբ բոցոտ շանթը
Երկնուց ցած իջնէ մինչ խաղաղ դաշտը,
Ահեղ որոտմամբ, փայլ արձակելով՝
Արթուն հովիւին զարնէ, տայ գետնով.
Անմեղ գառնուկներն որբիկ մընացած,
Ապաստան չունին, անտէր են թողած.
Ահից վազում են թուլիկ ոտերով,
Հովուին սուգ կարդում տըխուր ձէներով.
Ո՞վ է նոցա տէրն, ո՞վ խընամողը,
(Որբերի սփոփիչն է լոկ սև հողը),
Մա՜հ, մա՜հ խնդրեցին Հայերն միաբան,
Քաջից յետ չի կար էլ յոյս փրկութեան,

11

Խուռնէ կան հայերը մի փոսի առաջ,
Որտից անդադար հանում են թառանչ,
Դառն արտասունքն նոցա աչքերին
Հոսում են առատ ամպի գետնին.

Դասք քահանայից դաշտումը չի կան,
Որ սուրբ աղօթքով հողին հողը տան,
Կնդրուկ ու զըմուռս նախնեաց աւանդով,
Այդ անշուք թաղման չի խընկում ոչով.
Լալական կանայք կուրծքին ծեծելով՝
Ողբի չեն շարժում դառն հեծելով.
Լուռ են հայերը, աչքերը պղտոր,
Դէմքերը անշարժ, մըտքերը մոլոր.
Հազիւ հազ նոցա շըթունքը դեղնած
Շարժելով՝ տալիս են նըշան կենաց.
Արդեօք աղօ՞թք է, որ նոքա կարդում,
Թէ՞ արեան վըրիժու տալիս են երդում
Իրանց Դիւցազի դիակի առաջ,
Որին խոստացան մեռնիլ քաջաքաջ.
Կարգէ կարգ, լուռիկ, մինը յետ միւսին
Վերջին համբոյրը տուին Դիւցազին.
Եւ երբ որ փայլեց առաջին շողը,
Քաջին մարմինը կլլեց սև հողը։

12

Կորաւ Դիւցազը, կորաւ Հայաստան,
Զի Հայոց միակ յոյսն էր Քաջ Վարդան.
Թշուառ Հայ ազգին նորա վեհ սիրով
Էլ այնուհետև չըսիրեց ոչով.
Դարք ետև ետև գնացին, անցան.
Յիշատակ Քաջին իւրքը մոռացան,
Հեշտութեան կենաց և գանձի մոլար
Ազնիւ նըպատակն մոռացան իսպառ.
Իրանց սրբազան տեղիք պարծանաց
Թողին, մատնեցին խուժադուժ ազգաց,

Եւ հողը, գրնած գնով սուրբ արեան
Հարանց արին չար թշնամիք կոխան.
Մոռացան վըրէժն այն նուիրական,
Որ աւանդել էր նոցա Քաջ Վարդան,
Եւ ատելութեան փոխանակ՝ Պարսկին
Ցոյց տուին միշտ սէր և յարգանք խորին,
Ծըռեցին վիզերն Պարսից լծի տակ,
Դիւրութեամբ դարձան հըլու հըպատակ,
Հայը հետամուտ չէր ազնիւ մահուն,
Որ յետնոց թողնէր պանծալի անուն.
Վասակաց թիւը շատցաւ դարէդար,
Զուտ ազնիւ հոգիք չերևցան իսպառ.
Գործի եղեռան դարձան օտարաց,
Ոչ ոք դարմանիչ չէր ազգին չարեաց. . . .
Թո՛ղ լռեմ, լռեմ, ազնիւ պատանի,
Այս թըշուառ անցքէն միտքս սասանի,
Քանի կը յիշեմ՝ սիրտըս խոցոտի,
Ու ճմլած հոգիս վըրժու բոցոտի:
Մոլեկրօն Պարսը կայ մինչև այսօր,
Ունի թագ ու գահ շըքեղ փառաւոր,
Ունի նա լեզու ու անուն փառաց,
Քաղաքք բարեշէն, տէր է շատ ազգաց,
Իսկ Հա՞յը . . . վա՜յ նորա դառը օրերուն,
Ի՞նչ ունի, բայց թէ լոկ և եթ անուն,
Որը և յաճախ ինքը ամօթից
Զըզուած մերժում է իրա վրայից:

Վերջարան

13

Լըռեց: Ամպերը եկան ծածկեցին

Երկինքն ու լուսինն աչքէս խըլեցին.
Մընացի մենակ՝ հոգիս վըդոված,
Ձեռներըս ծոցիս, գլուխս քարշ արած,
Եւ այնուհետեւ ամէն իրիկուն
Մընում եմ լուսնի խաղաղ ծագելուն.
Նորա տըխրամած դէմքը նայելիս՝
Յիշում եմ թշուառ վիճակը ազգիս։
Ո՜վ, ցոլա՛, փայլէ՛, տխրադէմ լուսին,
Գուցէ՛ քու փայլից փայլ տաս և Հային,
Պատմէ՛ շատերուն Վարդանի մահը,
Կամ՝ ի՞նչպէս նորա Հայ ազգի գահը,
Կամ ի՞նչ վեհ սիրով սիրում էր Վարդան
Մայրենի հողը՝ աշխարհն Հայաստան։

ՏԻԿՆԱՅՔ ՀԱՅՈՑ

Ես չեմ կարող հաշուել բոլոր Հայոց երանելի առաքինեաց, կապեալների և պատերազմի մէջ սպանուածների բոլոր կանանցը, որովհետև ինձ անծանօթները աւելի շատ են, քան թէ ծանօթները։ Հինգ հարիւրի չափ անձամբ ճանաչում եմ, ոչ միայն մեծամեծներից, այլև աւելի փոքրերից շատերին։ Նոքա ամենը միասին երկնաւոր Նախանձով վառուած, ոչինչով պակաս չմնացին նոցանից, որոնք աշխարհ չէին մտել։ Որովհետև մեծերը և փոքրերը մի հաւատոյ առաքինութեամբ զինաւորուեցան, նոքա ամենեքին չյիշեցին մայրենի ազատութեան փափկութիւնը, այլ ինչպէս գիւղացի մարդիկ, որոնք սովոր են փոքր հասակից չարչարանքներ և տանջանքներ կրելով անցկացնել իւրեանց կեանքը, նոյնպէս և նոքա յանձն առան նոցանից աւելի ևս համբերութեամբ դիմանալ ցաւերին։

Նոքա ոչ միայն իւրեանց հոգւոյ մէջ մխիթարւում էին յաւիտենական աներևոյթ յուսովը, այլև մարմնոյ նեղութիւններովը աւելի ևս բարձին ծանրութեան բեռը: Թէպէտ նոցանից իւրաքանչիւրը ունէր ձեռնասուն սպասաւորներ, բայց բոլորովին չէր կարելի նշմարել, թէ ո՞րն է տիկինը և ո՞րը աղախինը. բոլորի շորերը մի և նոյն էին, երկուսն ևս միասին միապէս պառկում էին չոր խոտի վերայ:

Չկային նոցա համար առանձին խոհարարներ անոյշ կերակուր պատրաստելու, և ոչ որոշած հացաթուխներ ազատների սովորութեանց համեմատ, այլ ամենի ուտելիքը մին էր: Շաբաթամուտը անց էին կացնում այն միայնակեաց մարդկանց պէս, որոնք բնակում են անապատներումը: Ոչ ոք միւսի ձեռին ջուր չէր ածում և փոքրերը մեծերին երեսսրբիչ չէին մատուցանում: Սապոն չդիպաւ փափկասուն կանանց ձեռներին, և հոտաւէտ իւղ չգործ դրուեց նոցա զուարթութեան համար: Նոցա առաջևը չդրուեցան մաքուր ամաններ և գործ չդրուեցան ուրախութեան բաժակակալներ. ոչ ոք չկանգնեց նոցա դռանը հիւրեր ընդունելու, և նոցա հոյակապ տների դռները չբացուեցան պատուական հիւրերի առաջև. ոչ ոք նոցանից չյիշեց թէ ունեցել է մի ժամանակ բազկասնունդ դայեակներ կամ սիրելի հարազատներ:

Փոշոտուեցան և ծխոտուեցան նորահասների սենեակները և վարագոյրները, և սարդի ոստայն ձգուեցաւ նոցա հարսանիքի սենեակների մէջ: Կործանուեցան նոցա տները զարդարող աթոռները, և փչացան նոցա սեղանները զարդարող ամանները, կործանուեցան և քանդուեցան նոցա հոյակապ տները, և փուլ եկան աւերուեցան նոցա ապահովութեան ամրոցները: Չորացան, աղանձուեցան նոցա ծաղկոցների բուրաստանները, և արմատախիլ եղան այգիների գինեբեր վազերը: Նոքա իւրեանց աչքովը տեսան իւրեանց կայքի յափշտակու-

թիւնը, և իւրեանց ականջովը լսեցին իւրեանց սիրելեաց ցաւալից չարչարանքների հառաչանքները. նոցա գանձերը թագաւորական արեցին, և երեսների զարդարանքները յափշտակեցին նոցանից:

Հայոց աշխարհի փափուկ մեծացած տիկինները, որոնք գրգուած և գգուած էին եղել իւրաքանչիւր բաստեռունների և գահաւորականների մէջ, միշտ բոբիկ և ոտով գնում էին եկեղեցի, ուրախութեամբ խնդրելով, որ կարողանան համբերել այն մեծ նեղութեանը: Նոքա՝ որ իւրեանց մանկութենից մեծացել էին հորթերի ուղեղներովը և էրէների փափուկ մսերովը, վայրենիների պէս մեծ ուրախութեամբ ուտում էին խոտեղէն կերակուրները, և բոլորովին չէին յիշում իւրեանց սովորական փափկութիւնը: Սև գոյնով ներկուեցաւ նոցա մարմնի մորթը, որովհետև ցերեկը արևախորով էին լինում, իսկ գիշերը գետնի վերայ պառկում: Սաղմոսներն էին նոցա ամենօրուայ ընթերցուածները և երգերը, և մարգարէից գրուածներն էին նոցա կատարեալ մխիթարութիւնները: Նոքա երկու երկու միաբանուեցան, իբրև համահաւասար ջուխտ լծակիցներ ուղիղ տանելով արքայութեան ակօսը, որ առանց սխալուելու հասանեն խաղաղութեան նաւահանգիստը:

Նոքա մոռացան կանացի տկարութիւնը և առաքինի տղամարդիկ դարձան հոգևոր պատերազմի մէջ, սաստկութեամբ կռուեցան մեղքերի դէմ, կտրեցին, ջարդեցին և մի կողմ ձգեցին նորա մահաբեր արմատները: Միամտութեամբ յաղթեցին խորամանկութեանը և սուրբ սիրով լուացին նախանձի կապոյտ ներկերը. կտրեցին ագահութեան արմատները, չորացրին նոցա ճիւղերի մահաբեր պտուղները: Խոնարհութեամբ ջարդեցին ամբարտաւանութիւնը և նոյն խոնարհութեամբը հասան երկնաւոր բարձրութեանը: Իւրեանց աղօթքներով բաց արին երկնքի փակուած դռները, և սուրբ խըն-

դրուածքներովը իջեցրեցին հրեշտակներին փրկութեան համար։ Բարի համբաւ լսեցին հեռուից և փառաւորեցին Աստծոյն երկնքումը։

Նոցա մէջը եղած այրի կանայքը կրկին առաքինութեան հարսներ դարձան, և մերժեցին իւրեանցից այրիութեան նախատինքը։ Կապեալների կանայքը յօժարութեամբ կապեցին իւրեանց մարմնաւոր ցանկութիւնները՝ մասնակից լինելով սուրբ կապեալների չարչարանքներին։ Նոքա իւրեանց կեանքովը նմանեցան քաջ մահուամբ նահատակուածներին, և հեռուից մխիթարիչ վարդապետներ դարձան բանտարկուածների համար։ Իւրեանց ձեռներովը աշխատեցին և կերակրուեցան՝ իւրեանց նշանակուած ռոճիկները տարէց-տարի ուղարկելով կապուածների մխիթարութեան համար։ Նոքա նմանեցան անարիւն ճպուռներին, որոնք քաղցրութեամբ երգելով ապրում են առանց կերակուրի, և կենդանի են մնում միայն օդ ծծելով, անմարմիններին նմանելով։

Շատ ձմեռների սառուցները հալուեցան, հասաւ գարունը, եկան նոր ծիծեռնակները, կենցաղասէր մարդիկը տեսան նոցա և ուրախացան, բայց նոքա երբէք չկարողացան տեսնել իւրեանց սիրելիներին։ Գարնանային ծաղիկները Հայոց կանանց միտը բերեցին նոցա ծաղկազարդ ամուսիններին, բայց նոցա աչքերը կարօտացան տեսնելու նոցա երեսի ցանկալի գեղեցկութիւնը։ Վերջացան որսի բարակները (շները) և դադարեցին որսորդների արշաւանքները։ Բնագիրներով յիշատակուեցան նոքա, և ոչ մի տարեկան տօն չբերեց նոցա հեռու երկրից. նոցա սեղանատան վերայ նայեցին և արտասուք թափեցին, և ամեն ատեանի մէջ յիշեցին նոցա անունները։ Շատ արձաններ կանգնեցրին նոցա անուններովը, և նոցա իւրաքանչիւրի անունը նշանակեցին նոցա վերայ։

Երբ այնպէս ամեն կողմից նոցա մտքերը ալեկոծուում

էին, այն ժամանակը նոքա բոլորովին չէին թուլանում և չէին հեռանում երկնաւոր առաքինութիւնիցը: Դրսեւիցը նոքա երեւում էին ինչպէս սգաւոր և չարչարուած այրիք, իսկ հոգւով երեւում էին զարդարուած և մխիթարուած երկնաւոր սիրովը: Աւելի չէին հարցանում հեռաւոր տեղերից եկածներին, թէ ե՞րբ կարող ենք տեսանել մեր սիրելիներին, այլ նոցա առ Աստուած աղօթելու գլխաւոր նպատակն այն էր, որ ինչպէս սկսեցին, նոյնպէս երկնաւոր սիրով լցուած՝ քաջութեամբ մեռանին:

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Արշակունեաց թագաւորութիւնը վերջանալուց յետոյ բոլոր Հայաստան տանակոխ եղաւ Պարսիկներից. շատ նախարարներ պատուոյ համար ուրացան իւրեանց հաւատն ու շատ տեղ կրակատուններ էին շինում և կրակ էին պաշտում. իսկ բարեպաշտ մարդիկ մեծ հալածանաց մէջ էին: Պարսիկներն ուրացողների վատութիւնը տեսնելով բոլոր Հայոց ազգը ատում էին, և նախատանօք վարուելով նոցա հետ՝ ամեն ազգից անարգ էին համարում Հայերին:

Այս ժամանակը սուրբ Վարդանայ եղբօր որդին քաջն Վահան տեսնելով սուրբ հաւատքի հալածանքն ու ազգի խեղճութիւնը՝ վառուեցաւ ազգասիրութեամբ և աստուածպաշտութեամբ. ուստի միաբանեց իւր հետ ամեն բարեպաշտ նախարարներն ու կեանքը դնելով հաւատի և ազգի համար, սկսաւ քաջութեամբ հալածել Հայաստանից կրակապաշտ Պարսիկներն և ուրացողները: Թէպէտ սկզբից նոքա շատ սակաւաթիւ էին, բայց Աստուծոյ զօրութեամբն այնչափ զօրացան, որ հազարաւոր Պարսիկներ ցիրուցան արին ու ջարդեցին զարմանալի քաջութեամբ, այնպէս որ միայն Վահանայ անունը լսելով բոլորեքեան դողումէին:

Պերոզ Պարսից թագաւորը լսելով Վահանայ գործքերը՝ անհամար զօրք ուղարկեց նորա վերայ, որ ջնջէ նորան. բայց նա աստուածպաշտութեան և ազգասիրութեան հոգւով այնպէս էր վառուած, որ ոչ միայն չվախեցաւ, այլև աներկիւղ և քաջութեամբ մտաւ զօրքի մէջ իւր քաջերովը, և սոսկալի ջարդ տալով միւս կողմից դուրս եկաւ և խորտակեց Պարսից զօրութիւնը։ Գրեթէ ամեն պատերազմի մէջ այսպիսի քաջութեամբ ցիրուցան արաւ թշնամիները։ Բայց նորա վերջի մեծ յաղթութիւնն այն եղաւ, երբոր երեսուն քաջով մտաւ բիւրաւոր Պարսից բանակն, ու կայծակի նման նոցա հալածելով միւս կողմից դուրս եկաւ, մինչև անհաւատ թշնամիները վկայեցին թէ Վահանայ օգնական մի աներևոյթ զօրութիւն կայ, ուստի չէին համարձակում նորան նայելու, թէպէտ նա նոցա մարդու տեղ չդնելով անվախ համարձակ նոցա կողմից անց էր կենում։

Պերոզի մահից յետոյ Պարսից թագաւոր նստաւ Վաղարշը, որ լսելով Վահանայ անպարտելի քաջագործութիւնները զարմացած մնաց. զի քաջին դէմ պատերազմող զօրապետները վկայումէին թէ այսպիսի զօրաւոր մեծ մարդ չէ տեսնուած, որ ազգասիրութեամբ մահը աչքի տակն առած օր ըստ օրէ զօրանումէ։ Վաղարշ թագաւորը սէր կապեց Վահանայ հետ, ու հրովարտակ ուղարկեց նորան որ հնազանդի հաշտուելով հետը։ Վահան հաւանեցաւ, եթէ որ նա այս երեք խնդիրքը կատարէ. Նախ՝ թող տայ նոցա որ ամեն տեղ քրիստոնէական կրօնքը պաշտեն փառաւորապէս. Հայ մարդ չուրացընեն, և կրակատուններն Հայաստանից վերցընեն։ Երկրորդ՝ թող գիտենան լաւն ու գէշն ընտրելու, բարի և քաջ մարդիկ սիրեն ու պատուեն. իսկ անարգ ուրացող մարդիկ չպատուեն կրակապաշտ դառնալու համար։ Երրորդ՝ թագաւորն իր աչքովը նայէ և ականջովը լսէ ամեն մարդու գործքն ու քաջութիւնը. և չհաւատայ ստասաց զրպարտողներուն։

Վաղարշ թագաւորը տեսաւ որ արդար էին Վահանայ խնդիրքը, ոչ միայն կատարեց գովելով նորա ազգասիրութիւնը, որ բոլոր ջանքն ազգին լաւութեանը համար էր, այլ և հրամայեց որ իւր մօտ գայ քաջն Վահան ու փառաւորի պատուով անմահ քաջութեանը համար: Ուստի երբոր Վահան բարեպաշտ նախարարներով գնաց ներկայացաւ թագաւորին, ու խօսեցաւ ատենի մէջ զարմանալի ատենախօսութեամբ, ամենքը մեծապէս հաճեցան, և գովեցին նորա խոհեմութիւնը: Ապա տուաւ թագաւորը մեծ պատիւներ Վահանայ, նաև սպարապետութիւն ազգին վրայ. նոյնպէս տուաւ ուխտապահ քաջ նախարարներին իւրեանց պատիւը, և մեծապանծ փառօք ուղարկեց նոցա Հայաստան: Երբոր Վահան հասաւ Հայաստան՝ մեծ հայրապետն Յովհան Մանդակունի գնաց նորա առաջ սուրբ խաչով և սուրբ նշխարքով Լուսաւորչայ՝ օրհնեց նորան ու տարաւ եկեղեցին բոլոր ժողովրդով, գովեցին և փառաւորեցին զԱստուած, որ փառաւորեց իւր փառաւորիչը:

Սորանից յետոյ Վաղարշ թագաւորը տեսնելով Վահանայ հաւատարմութիւնն ու խոհեմութիւնը ուղարկեց նորան մարզպանութիւն, և նա եղաւ տէր և գլուխ ազգին: Բոլոր Հայաստան ցնծութեամբ և ուրախութեամբ լցուեցաւ, որ այնպիսի փառաւոր և ազգասէր իշխանը տէր դարձաւ ազգին ու հայրաբար խնամք էր տանում ամենեցուն: Իսկ մեծ հայրապետը նորից օրհնելով իւր քաջ իշխանը, խօսեցաւ մի գեղեցիկ ճառ սքանչելի ատենաբանութեամբ. Նախ՝ գովելով և փառաբանելով զԱստուած. երկրորդ՝ մեծարելով Վահանայ քաջութիւնը, ազգասիրութիւնը և բարեպաշտութիւնը. երրորդ՝ օրհնելով ամենքը, որ այսպէս զօրացան փառաւորապէս: Իսկ Վահան խոնարհելով առաջի Աստուծոյ շնորհակալ եղաւ, և նորանից յետոյ մինչև ցմահ

նոյն բարեպաշտութեամբ և ազգասիրութեամբ կառավարեց ազգը խոհեմապէս, և օր ըստ օրէ պայծառացրեց թէ՛ քրիստոնեայ ժողովուրդը, և թէ Քրիստոսի սուրբ հաւատը. և այս բարեպաշտ ազգասիրութիւնը և իշխանութիւնը երեսուն տարի շարունակուելով շատ բարօրութիւններ տեսաւ ազգը, և միշտ պատուեցաւ փառաւոր անունը քաջին Աահանայ։

ԱՇՈՏ ՈՂՈՐՄԱԾ

Բագրատունեաց ազգից Աշոտ երրորդ անունով թագաւորը յայտնի էր ամենեցուն իւր քաջութեամբ և գթառատութեամբ։ Սա բոլոր թշնամիներին Հայաստանից դուրս արաւ և աշխատում էր մեր երկիրը խաղաղութեան մէջ պահել։ Օտար ազգերն այնպէս վախենում էին սորանից, որ մեծամեծ պարգևներ ուղարկելով ցոյց տուին նորան իւրեանց սէրը։ 961 թուին Անի քաղաքի մէջ Աշոտը թագաւոր օծուեցաւ. այդ հանդէսի համար մեր կաթողիկոսը և իշխանները հրաւիրեցին Աղուանից Փիլիպպոս թագաւորին ու նոցա Յովհաննէս կաթողիկոսին և 40-ից աւելի Հայոց եպիսկոպոսներ։ Այնուհետև Անի քաղաքը արքայական աթոռանիստ քաղաք դարձաւ։ Աշոտն ամեն կերպ աշխատում էր, որ ժողովուրդը խեղճութենից դուրս գայ, և թշնամիներից նոցա ապահովացնելու համար շատ բերդեր շինեց։ Անի մայրաքաղաքն էլ պարսպով պատեց ու մէջը նոր բերդ շինեց։ Այս ժամանակները մեր Անի մայրաքաղաքը շատ ծաղկեցաւ ու մեծացաւ, այնպէս որ ասումեն մէջը մէկ միլիոն բնակիչ է եղել և հազար ու մէկ եկեղեցի։

Աշոտ թագաւորն մեծ խնամք է տանում եկեղեցւոյ պայծառութեան, և իւր մարդասիրական խնամքներով առա-

ուել հայր է համդիսանում Հայաստանին՝ քան թէ թագաւոր։ Սփոփում է ազգի տառապեալներին և կարօտեալներին և իւր բոլոր արքայական հարստութիւնը և գանձը ազգի կարօտելոց և աղքատաց համար է գործ դնում։ Սեղանակից է անում իրան կաղերին, կոյրերին, ցաւադարներին և շատ անգամ ինքն է նոցա սպասաւորում։ Շատ քաղաքներում աղքատանոցներ է շինել տալի և այդ աստուածահաճոյ շինութիւնների համար ռոճիկ է կարգում, ու ինքը միշտ այցելութիւն է գնում։ Այսպիսի մարդասիրութեան, խնամոց և գթութեան համար մեր ազգն էլ նորան արժանաւոր պատուանուն տուաւ Ողորմած անուանելով։

Աշոտի նման ողորմած էր և նորա կին Խոսրովանոյշ թագուհին, որ Սեւորդեաց աշխարհի մէջ կառուցանել տուաւ Հաղբատ և Սանահին հոյակապ վանքերն, որոնք մինչև ցայսօր կանգուն կան։ Խոսրովանոյշը գթած մայր է համդիսանում բոլոր ազգին և արժանաւոր թագուհի Արարատեան թագաւորութեան։

ԼԵՒՈՆ Զ· ՀԱՅՈՑ ՎԵՐՋԻՆ ԹԱԳԱՒՈՐԸ։

Հայոց վերջին թագաւորը Լեւոն վեցերորդն էր, որ ընտրեցաւ 1365 թուին։ Այս վերջին թագաւորը թէ և բնութեամբ քաղցր էր և ամենի հետ լաւ էր վարւում, այսու ամենայնիւ հասած էր Կիլիկիական թագաւորութեան վերջին ժամը, զի զօրութիւն չունէր, զօրեղ իշխանները և զինուորներն արդէն գաղթել էին, մնացածներն էլ միմեանց հակառակ էին թէ՛ հասկացողութեամբ, թէ՛ կրօնիւ և թէ՛ արիւնով։

Եգիպտացի Մամելուկները 1367 թուին հարուած կրե-

լով Կիպրոսի ծովային զօրութիւնից, որոց ձեռնամուխ պէտք է եղել էր և մեր Լևոնը, կառավարութեամբ Կիլիկիայի վերայ յարձակուեցան։ Լևոնը քիչ ընդդիմանալուց յետոյ, ամուր տեղեր ապաստանեցաւ, և մէկ քանի ժամանակ աներևոյթ եղաւ։ Կիլիկեցւոց բախտից Մամելուկները յետ քաշուեցան, բայց թագաւորը դեռ չէր երևում, և կարծելով թէ արդէն վախճանած է՝ Մարիամ Թագուհին մտքում դրաւ մէկ այլ իշխանի հետ ամուսնանալ։ Արդէն Հայոց Յովհաննէս արքեպիսկոպոսն Տարէնտոնի Փիլիպպոս իշխանին և Գրիգոր ԺԱ. պապին յայտնել էր ամենայն եղելութիւնները և նոքա Բրիւնսվիկոյ Գերմանացի Օթոն իշխանին էին փեսայ ընտրում, երբոր Լևոնը յանկարծ երևեցաւ 'ի խնդութիւն բոլոր Կիլիկեցւոց։

1374 թուին Մելիք-Էլ-Էշրէֆ Շաբան Սուլթանը Եգիպտոսի լսելով Եւրոպացւոց դիտաւորութիւնները 'ի մասին նոր փեսայի, և կարծելով միանգամայն թէ վերջը վտանգաւոր է՝ իւր եղբօրն ահագին զինուորութեամբ Կիլիկիա ուղարկեց, որ միանգամայն վերջացնէ այդ տէրութիւնը։ Թագաւորն անտէր՝ անօգնական մնացած, հազիւ հազ կարողացաւ իւր ընտանիքը մահիցն ազատել և նոցա հետ միասին Կապան ամուր դղեակումն ամրանալ։ Մամելուկների առաջին բաց էր բոլոր Կիլիկիան, մի առ մի առան Մամեստիայ, Ադանա, Տարսոն, Սիս և ուրիշ երևելի քաղաքները, քանդեցին, կործանեցին, որի ճարակ տուին առհասարակ ամենայն բան։ Այն ինչ մէկ զօրեղ խումբ էլ սկսեց պաշարել Կապանը՝ բերդը ամուր էր և ինն ամիս ոչինչ չը կարողացան առնել, բայց հաղորդակցութիւնը արգելելոյ և պաշարը սպառելոյ պատճառաւ հարկադրուեցաւ Թագաւորը իւր ընտանիքովն անձնատուր լինել։

1375 թուին Կիլիկիայի վերջին Թագաւորը ամրակուռ շղթայիւ կապուելով գերուեցաւ, նորա երկիրն ապականուե-

ցաւ, քաղաքներն ամայացան, ժողովրդի շատերը սրի ճարակ եղան, մնացածները մօտ 60,000 հոգի մի ժամանակում թողին Կիլիկիան և ցրուեցան զանազան կողմեր, դէպի Վրաստան, Աղուանք և փոքր Ասիա: Ամայացաւ միանգամայն Ռուբէնեանց տուն և հայկական պետութեան կարմիր արիւնով ներկուած Կիլիկիան. և Պօղոս կաթողիկոսն, իբրև մէկ նոր Երեմիա, պէտք է կոծէր և ողբար իւր անբախտ որդւոց վերայ՝ որոնք իւրեանց կրօնի ազատութեան համար միշտ մահմետականաց ձեռից հալածանաց մէջ էին, ինչպէս երբեմն Իսրայէլացիք: Հայաստան աշխարհի հովիւը երկար ժամանակ այդ տեղ մնաց, և այդ տեղից սկսեց իրան աչքը դարձուցանել իւր տարագրեալ և որբացեալ որդւոց վերայ, և Սիս քաղաքումն էր կատարում միւռոնի օրհնութեան և եպիսկոպոսական ձեռնադրութեան հանդէսը:

Իսկ Լևոնը եօթն ամ բանտումը մնալուց յետոյ՝ վերջապէս 1382 թուին Կաստիլիոյ Յովհաննէս թագաւորի զանձովը և թախանձանօքն ազատուեցաւ իւր գերութիւնից, և գնալով Սպանիա իրան ազատողին իւր երախտագիտութիւնը ցոյց տուեց, և ապա գնաց Գաղղիա և Անգլիա Կարոլոս Զ. Գաղղիացւոց և Ռիչարդոս Բ. Անգլիացւոց թագաւորների ժամանակը, և շատ աշխատեցաւ այն երկու միմեանց ոսոխ ազգերին հաշտեցնել, որ նոցա օգնութեամբը կարողանայ իւր կորցրած թագը ձեռք բերել. բայց նորա ջանքն 'ի զուր և ունայն անցկացաւ, 1393 թուին մեռաւ Փարիզումը և թաղուեցաւ Կելեստինեաց վանքումը: Այսպիսի վախճան ունեցաւ Ռուբէնեան վերջին թագաւորը և նորանով միանգամայն բարձաւ Հայոց թագաւորութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅԺՄԵԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԸ

Մեր թագաւորութիւնը վերջանալուց յետոյ շատ դա-

ւալի գրութեան մէջն էր Հայաստանը։ Այն վայրենի ազգերը, որ Ասիայի խոր տեղերիցն եկան ու տակըն ու վերև արին Եւրոպան, բոլորն էլ համարեա թէ Հայաստանի միջով անց կացան, որովհետև մեր երկիրը Ասիայից Եւրոպայ անցկենալու դուռն է։ Ով եկաւ քանդեց ու աւերակ դարձրուց մեր մեծ մեծ քաղաքները, ով եկաւ արիւնով ներկեց մեր դաշտերը ու հազարաւոր գերիներ տարաւ ոչնչացրուց, ու մէկ ժամանակուայ քսան միլիոն ժողովուրդը քիչ մնաց՝ որ բոլորովին անհետանայ աշխարհի երեսից։ Հայերի տեղն ուրիշ ազգ լինէր այնքան նեղութիւնները կրելուց յետոյ այժմ վաղուց կորած կըլինէր։ Բայց Հայերը դեռ ևս կան կենդանի որովհետև չընայելով իւրեանց դառը վիճակին ու հաւատի համար կրած նեղութիւններին՝ նոքա հաստատ մնացին իւրեանց սուրբ հաւատին ու լեզուին։ Հայերը ստիպուած էին իւրեանց կեանքը գոնեա ազատելու համար տուն ու տեղը թողուլ ու գնալ ուրիշ երկիրներ, որ տեղ իւրեանց հաւատի հալածողներից ազատ մնային։ Այսպէս Հայերը այժմ տարածուած են աշխարհի ամեն կողմերը, բայց գըլխաւորապէս երեք մեծ տէրութիւնների ձեռի տակն են՝ Օսմանցւոց, Ռուսաց և Պարսից։ Եւ ըստ այսմ Հայաստանն ևս երեք մասն բաժանուած գտնուում է այս տէրութեանց ձեռքի տակն։

Հայերի այժմեան թիւը հասնում է մինչև չորս միլիոնի, որոց մօտ երկու միլիոնը գտնուում է Օսմանցւոց տէրութեան մէջ, ուր Հայերը պարապում են գլխաւորապէս վաճառականութեամբ և երկրագործութեամբ, և բնակում են զանազան քաղաքներումը՝ այն է Կոստանդնուպոլիս, Զմիւռնիա, Արզրում (Կարին), Վան և այլն։ Նոքա իւրեանց ազգային գործերն կառավարելու համար ունին Սուլթանից պարգևած Սահմանադրութիւն, որոյ հիման վերայ դատաստանական և միւս ազգային վարչութեան վերաբերեալ

գործքերն իւրեանց ձեռքովն են կատարում։ Տաճկաստանի Հայերը այժմ համարեա թէ չունեին այն նեղութիւնները և հալածանքը, որ յառաջ կրում էին Օսմանցւոց ձեռքից. միմիայն Վանայ կողմերը դեռ ևս Հայերն միշտ նեղութիւն և հալածանք են կրում Տաճկաց և առաւելապէս Քուրդերի ձեռքից։

Հայերի միւս մեծ մասը, որ մօտ մէկ միլիոն է Ռուսաց մեծ կայսրութեան ձեռի տակն է։ Ռուսաց կայսրը իւր բոլոր հպատակների հետ հաւասար սիրումէ մեզ, ու պարգևել է այն ամէն իրաւունքներն, ինչ որ վայելումէ իւր ազգը։ Այժմ հազարաւոր Հայեր Տէրութեան ծառայութեան մէջն են, ու շատերն յայտնի են իւրեանց խելքովն ու քաջութեամբն։ Մօտիկ ժամանակներս Ռուսաց Թագաւոր Աղէքսանդր երկրորդն, իբրև ամենաբարի և ողորմած հայր իւր հպատակաց, ազատութիւն պարգևեց իւր տէրութեան մէջ եղած բոլոր ստրուկներին (ճորտերին), որով ազատութիւն ստացան և Վրաստանի մէջ եղած հայերը, որք թէպէտ և քիչ էին թւով։ Ռուսաստանի Հայերը պարապումեն վաճառականութնամբ, երկրագործութեամբ և այգեպանութեամբ, և բնակումեն մեծ բազմութեամբ Տփխիս, Երևան, Շուշի, Հին և Նոր Նախիջևան, Ախալցխայ, Աղէքսանդրապօլ, Կզլար և այլն։

Հայերի միւս մասն էլ, որ մէկ քանի հարիւր հազար հոգի կըլինի, Պարսից Թագաւորութեան ձեռի տակն է։ Բայց որովհետև Պարսից տէրութիւնը դեռ չէ լուսաւորուած ու իւր ազգն էլ խեղճ դրութեան մէջ է, այդ պատճառով այնտեղի Հայերն ևս յետ են մնացած Ռուսաստանի ու Օսմանցւոց Հայերից։

Բաց 'ի այդ երեք տէրութիւններից, Եւրոպայի, Ասիայի, Աֆրիկայի և մինչև անգամ Ամերիկայի զանազան

մեծ քաղաքներումը կան բաւական Հայեր, որոնք վաճառականութենով են պարապում։ Հայերը ուր և լինին՝ միշտ մնումեն հաստատ իւրեանց հաւատին ու լեզուին։

Մեր ազգն իւր իշխանութիւնը կորցնելուց յետոյ, Էջմիածնումը նստող Կաթողիկոսին ճանաչում է իբրև հոգևոր գլուխ Հայոց ազգի։

ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՆՔԸ

Մայր Արաքսի ափերով
Քայլամոլոր գնում եմ,
Հին հին դարուց յիշատակ
Ալեաց մէջը պտրում եմ։

Բայց նոքա միշտ յեղյեղուկ
Պղտոր ջրով եղերքին
Դարիւ դարիւ խփելով
Փախչում էին լալագին։

«Արա՛քս՝ ինչո՞ւ ձկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չի հասած
Սգաւոր ես ինձ նման։

Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քու սէգ՝ հըպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից։
Մի՛ պղտորիլ յատակըդ
Հանդարտ հոսէ՛ խայտալով,
Մանկութիւնը քու կարճ է,
Շուտ կըհասնիս դէպի ծով։

Վարդի թուփեր թո՛ղ բուսնին
Քու հիւրընկալ ափի մօտ,
Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչև առաւօտ։

Աշտադալար ուռիներ
Սառ ծոցի մէջ քու ջրին
Երկուն ոստըն ու տերև
Թո՛ղ թաց անեն տապ օրին։

Ափերիդ մօտ երգելու
Հովիւք թո՛ղ գան համարձակ,
Գառն ու ուլը քու վըճիտ
Ջուրը մտնեն միշտ արձակ։»

Մէջքը ուռցուց Արաքսը,
Փրփուր հանեց իր տակից,
Ամպի նման գոռալով
Էսպէս խօսեց յատակից։

«Խիզա՛խ, անմի՛տ պատանի,
Նիրհըս ինչո՞ւ դարևոր
Վըրդովում ես նորոգում
Իմ ցաւերը բիւրաւոր։

«Սիրելի մահից յետ
Ե՞րբ ես տեսել, որ այրին
Ոտքից գըլուխ պըճնուի
Իր զարդերով թանգագին։

«Որի՞ համար զարդարուիմ,
Որի՞ աչքը հրապուրեմ,
Տէրերն ինձ են ատելի,
Տէրերին ես օտար եմ։

«Կար ժամանակ, որ ես էլ
Շքեղազարդ հարսի պէս
Հազար ու բիւր պըչրանքով
Փախչում էի ափերէս

«Յատակս պարզ ու վըճիտ,
Կոհակներըս ոլորուն,
Լուսաբերը մինչև այգ
Ջըրիս միջին էր լողում։

«Ի՞նչըս մընաց այն օրից,
Ո՞ր ջըրամօտ գեղերըս,
Ո՞րը իմ՝ շէն քաղաքից,
Ո՞ր բերկրալի տեղերըս։

«Տուրքը ջըրի ամէն օր
Իր սուրբ ծոցէն Արարատ
Մայրախընամ ինձ սընունդ
Պարգևում է լիառատ։

«Բայց ես այն սուրբ ջըրերով
Սուրբ Ակոբի աղբիւրին
Պիտի ցողեմ արտորա՞յք
Իմ աւելի օտարին։

«Մինչ իմ որդիք—ո՞վ գիտէ—
Ծարաւ, նօթի, անտէրունչ
Օտար աշխարհ յածում են
Թոյլ ոտքերով կիսաշունչ....

«Հեռո՛ւ հեռո՛ւ քըշեցին
Բընիկ ազգը իմ Հայկեան,
Նորա տեղը ինձ տուին
Ազգ անկըրօն, մոլեկան։

«Դոցա՞ համար զարդարեմ
Իմ հիւրընկալ ափերը,
Եւ կամ՝ դոցա՞ հրապուրեմ
Ճըպուռտ, պըղշած աչերը։

«Բանի որ իմ զաւակունք
Այսպէս կու մընան պանդուխտ՝
Ինձ միշտ սգաւոր կըտեսնէք,
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ։»

Էլ չի խօսեց Արաքսը,
Յորձանք տուեց ահագին
Օղակ օղակ օձի պէս
Առաջ սողաց մոլեգին։

ՎԵՐՋ

Գինն է 40 կոպէկ:

Վաճառւում է պ. Վարդանեանցի եւ ընկերութեան գրավաճառանոցումը
եւ յօրինողի մօտ:

ՀՀ Ազգային գրադարան
NL0349793